«Ա՛խտո՞ս կանչեցին նրան և ընդհատվեց մեր զրույցը, ափսո՛ս...» Յերիտասարդ աղջիկը կանգ առավ ջրերի մոտ: Նրա աչքերը, անուրջներով լի աչքերը նայում էին հեռո՛ւ–հեռո՛ւն:

Հորիզոնի վրա չքեղորեն դծագրվում եր ծովը, ինչպես կապտավուն սկավառակ:

3.

Հանգստյան որը լրատանավը զանդաղորեն սահում եր ջրերի վրա, դեպի չինանյութեր մատակարարող նավամատույցը:

Ամպոտ եր յերկինքը: Արևը մերթ դուրս եր հանում իր պռունկը և հուրհրում վոսկու պես, մերթ պահվում եր ամպերի տակ, վորոնք բամբակի գուլաններն պես ծածկել էին յերկինքի զեմքը: Հաճելի յեր զգալ հեզհեզուկ մերձեցող ծովի պոյտունքը:

Սպիտակ շրջազգեստ հագած Սալոմեն նստել եր լրատանավի տախտակյա հենակալին, իսկ կողքին զլխաբաց կանգնել եր Մինասյանը: Վերջինս իրեն հատուկ կենդանի շարժումներով զարձյալ խոսում եր իրենց աշխատանքների և փայլուն հեռանկարների մասին:

— Ի՛նչ սքանչելի զիտություն և ճարտարապետություն: Դա միայն զղում է նա, ով կարողանում է խորապես ծանոթանալ, ուսումնասիրել այդ զիտությունը: Ճարտարապետությունը միայն զիտություն չէ, այլ արվեստ է, տեխնիկա: Նա սերտորեն կապված է բնության և մարդկային կյանքի յերևույթների հետ: Նա կոչված է բարեկարգելու յերկիրը, նոր ձև ու տեսք տալու նրան, զեղեցկորեն վոճավորելու: Նա կոչված է բնության յերևույթները լավագույն կերպով ոգտագործելու մարդկության համար, նրա կուլտուրական վերելքի, բարօրության ու յերջանկության համար...

Սալոմեն տարվել եր և մեծ վոգևորությամբ լսում եր ճարտարապետի զրույցը: Նրա աչքերը լրատանավի շուրջը զոզացող ջրերից բարձրացել և կենտրոնացել էին յերիտասարդի ձյրա և հիացմունքով զիտում էին նրան: Մինասյանի բարձր հասակը, սև զանգուր մազերը, բարեձև ճակատը, կլորիկ ձեռքն այնպես էին հրապուրել աղջկան, վոր թվում եր, թե նրա նմանը հազիվ թե ճարվեր աշխարհում և Սալոմեյի ծանոթ մարդկանցից լավագույնը Մինասյանն է...

Մինչ նրանք տարվել էին իրենց համար հետաքրքիր զրույցով, յերբ հեզհեզուկ մոտեցվեց յերկնքի զեմքը, մոտակա ծովից ուժգնորեն փչեց քամին և սկսեց անձրևել: Շրջակայքը մառախուղով ծածկվեց, կարծես մթնում եր: Ցավ ինչ–վոր բանից խռոված ու զրգռված՝ ջրերը զարձան անհանգիստ ու ընդոստ:

Սալոմեյի մազերը թրջվեցին, թրջվեց նաև նրա բարակ շրջազգեստը: Պաշտպանվելու հնարավորություն չկար: Լրատանավն ամեն կողմից բաց եր և մարդկանց պատսպարելու հարմարություններից զուրկ: Միայն ուղևորները, վորոնք նավամատույցի բանվորներից էին, իրենց զլուխն ու մարմինը ծածկեցին պարկերի մեջ:

Սալոմեյի արամադրությունն ընկավ և թրջված թռչունի պես կծկվեց:

— Ինչ անտանելի յեղանակ,— ասաց նա ընդմիջած ձայնով:

— Մեղ մոտ հաճախ է այսպես պատահում, զարմանալի չէ: Ցավում եմ, որ նախապես չզգուշացրի, որ վերարկու կամ ուրիշ վերնազգեստ վերցնելիք ձեզ հետ,— պատասխանեց Մինասյանը և իր պլջակը հանելով տվեց աղջկան:

Վերջինս պլջակը քաշեց ղլխին և կոլոլվեց նրա մեջ:

— Իսկ դո՞ւք, դուք մնացիք վերնաշապիկով. եղ յեղա՞վ հապա,— ասաց Սալոմեն չնորհակալության ժպիտը դեմքին:

— Ձեռ մեր անձրևներին վարժվել եմ արդեն, չեմ վախենում...

Պլջակի արանքից պատկերվում էին յերախտապիտության արտահայտող աղջկա սևորակ աչքերը:

Հետզհետե նատանանում էր անձրևը: Նրա ջրալի կաթիլները թափվում էին հեղեղի պես: Անձրևաջրով վողողված լաստանավը սերևի նման դողդողում էր կատաղած ալիքների գրկում: Ծովը փոթորկվել էր և ալիքներն ուժգնորեն մոնչում էին:

Լաստանավը չարժող մեքենան դղրդում էր թափով և նրա ծխանից ցայտող ծուխը մուր էր մաղում ուղևորների վրա: Մի քանի րոպե էլ մեքենան խուլ ձայնով հռնդաց, կարծես հոգևարքի վերջին չունչն էր արձակում, և դադարեց աշխատելուց:

Լաստանավը մնաց գաղտած ալիքների քմահաճույքին...

Մի յանց գարնվելով վորոտում էին ամպերը, անձրևահեղեղ թափում, ահեղաձայն մոնչում էր ծովը, իսկ լաստանավը ճոճվում էր ջրերի անդունդում:

Թեև նրանք դեռ չէին հասել նավամատույց, բայց մառախուղի միջից արդեն նշմարվում էր յերկրքը: Նավավարը խրախուս ղղեց, վորպեսզի քամին չքշի նավը դեպի բաց ծովը, վորտեղ ջրերի հորձանուտում նա կարող էր չարդուփշուր լինել:

Վերահաս վտանգից չփոթված՝ ուղեվորները վախեցած աչքերով հետևում էին բնության տարերքի ահավոր ընթացքին և տաչեղի նման որորվող լաստանավի չարժումներին: Մեքենավարն ու նավավարն ամեն կերպ աշխատում էին լարել, չարժման մեջ դնել մեքենան, բայց այդ նրանց չեր հաջողվում:

Սալոմեն կ,կվել–կպել եր ափխատակե թաց հենակին: Պլջակի միջից նշմարվող նրա աչքերը խուճապային արտահայտություն ունեյին: Ճարտարապետի ղլխից և ուսերից վազում եր անձրևաջուրը: Նրա վիճակն ավելի յեր ընկճում Սալոմեյի տրամադրությունը:

— Ինչպես յերևում է, մենք ստիպված կլինենք դիշերն անցկացնել հորձանքված ջրերի վրա: Ոչ դիտե, դուցե չկարողանանք ազատվել ալիքների հախուռն թափից, քշվենք դնանք ծովի խորքերը և կերակուր դառնանք ձկներին,— ասում եր աղջիկը:

— Կարիք չկա այդպես լքվել, հուսահատվել: Դա վաղաժամ է: Լավատեսությունը լավագույն հատկություններից մեկն է մարդուս: Ասած՝ և՝ «Բոլշևիկների համար վոչ մի խոչընդոտ կամ դժվարություն գոյություն չունի» Հիանալի յե ասված և յես ամբողջ հետևում եմ այդ սկզբունքին: Դա պետք է կիրառել և կյանքում, և՛ բնության ուժերի դեմ պայքարելիս: Համառ և անդիջում պայքարով միայն կհասնենք մեր նպատակին:

Մինասյանի յուրաքանչյուր խոսքն ուշադրությամբ լսում եր Սալոմեն: Զգիտես ինչու, նա զղում եր, վոր այդ դժվարին, կրիտիկական մոմենտը կարող է վճռական դեր խաղալ նրանց արտերի և զղացմունքների էլ ավելի մերձեցման և ամրապնդման համար: Այդ նախապատրաստեց նրան ավելի համարձակ ու խիզախ ցույց տալ իրեն:

— Աենք յերբեմն լավ է փորձել բնության տարերքը: Վոչ միայն լավ է, այլև հետաքրքիր: Հաճելի ու հետաքրքիր չէ՞ միթե տեսնել ծովի փոթորիկը, լսել հորձանքված ջրերի մռնչյունը, հոսքերի չառաչը, ամպերի ամեհի բաղխումը: Զգալ անկման ու կործանման մոտալուտ վտանգը և կռվել փրկության համար: Ձեվ վորքան լավ է, յերբ վտանգի ու պայքարի պահին մարդը մենակ չէ...

Սալոմեյի այս համարձակ ժեստը զարմացրեց և անսպասելի եվաց Մինասյանին: Աչքերին, ականջներին չեր հավատում: Մի պահ առաջ հուսալքված տրամադրություն ուներ նա, վո՞նց վոխվեց, ո՞վ տվեց նրան այդ համարձակությունն ու խիզախությունը...

Ձեվ նա վորոշեց ստուգել աղջկան:

— Կարող է դժբախտություն պատահել, լաստանավը ջրասույզ լինի և մենք կուլ դնանք փոթորկված ալիքներին...

— Ի՞նչ արած: Ցերթե մեզ այդ է վիճակվել, յես պատրաստ եմ ձեզ հետ միասին ըմպել դատության բաժակը: Բայց յես ուզում եմ ապրել, վայելել կյանքը, աշխատել, ուրախանալ: Ձե՞

ւ՛որ դեռ չահել եմ, այնքան չահել, իսկ կյանքը նոր է բացել իր հրաշալի արշալույսն ինձ համար...

Մինասյանին շատ դուր յեկան նրա խոսքերը:

«Ինչ խոհուն մտքեր...» մտածեց նա և ղեկավարության ծպիտով չողացին նրա աչքերը:

— Մենք կհպարծահարենք բնության տարերքը, վորքան էլ նա վտանգավոր լինի ու սպառնական: Ինձ շատ ուրախացրեց և վոգևորեց ձեր վճիռը՝ ինձ հետ միասին ըմպել դառնության բաժակը... Բայց յես վստահ եմ, վոր մենք չենք ըմպի դառնության բաժակը, այլ մենք կդնանք կյանքի հետ, նա կժպտա մեզ չնչին ծաղիկը ծաղկանոցում, ինչպես վոսկեփայլ արևն յերկնքում: Իսկ վորքան լավ է կյանքը, յերջանիկ, ուրախ և վորքան լավ է ապրել, վայելել մեր սքանչելի աշխարհը...

4.

Մեքենավարն ու նավապետը ամեն չանք ու հնար գործ դրին չարժման մեջ դնելու համար մեքենան, բայց դա նրանց չհաջողվեց: Իսկ ծովածոցում ուրիշ նավակներ չկային, վոր գային ղնդության: Մնում էր վերկության ուրիշ յելք գտնել կամ կուլ դնալ մրրկածուփ ջրերին:

Նավապետն ու բանվորները լաստանավից պոկեցին վոչ այնքան կարևոր տախտակները և թիեր գործած՝ սկսեցին ճղփվել ջուրը, նավը հրել դեպի ափը: Մինասյանն էլ մասնակցեց այդ աշխատանքին: Ժամեր շարունակ նրանք չարչարվում էին: Սակայն լաստանավն ավելի հակամետ էր ջրերի և քամու հոսանքով գնալ դեպի բաց ծովը, քան չարժվել դեպի ափը:

Յեվ վորերիկ լաստանավի վրա տեղի յեր ունենում որհասության դժվարին պայքար բնության ու մարդկային ուժերի միջև, վերկության յելք գտնելու ճակատագրական պայքար...

Թեև անձրևը քիչ դադարեց, բայց ուժգնորեն մռնչում ու սուլում էր քամին: Արդեն մթնում էր: Թանձր աղջամուղջն իջել էր ջրերի վրա: Անհանգստությունն ու կասկածը կրծում էր ուղևորների սիրտը: Նրանց աչքերի մեջ նշմարվում էր անկման և հուսահատության սարսուռը...

Ամենքը սրտատրոփ սպասում էին վնչ-վոր ահավոր բանի...

Նավապետը գործ դրեց բազմաթիվ տարիների իր փորձն ու հմտությունը և, թեև շատ դանդաղ, բայց հնարավոր յեղավ լաստանավը մոտեցնել ափին: Փրկության արևը չողաց ուղեվորների դեմքին: Նրանք ուրախացան, աչխուժացան:

Յերկար տախտակ դցելով դեպի ափ, նավապետը նրա վրայով անցավ և թոկերի ողնությամբ լաստանավի քիթը մոտեցրեց յեզերքին: Ուղևորները և նրանց հետ նաև Սալոմեն ու Մինասյանն իջան ցամաք: Դա թփուտներով ծածկված ճահճոտ հարթավայր եր: Նրանք տախտված էին բավական յերկար ճանապարհ կտրել նավամատույց հասնելու համար:

Թաց ու տղմոտ հողի մեջ հաղիվ եր քայլում Սալոմեն: Շրա կոշիկները կեխտավել էին, ծանրացել:

Մինասյանին թևանցուկ յեղած և նրա ողնությամբ նա մի կերպ առաջ եր չարժվում: Ճարատարապետը շատ եր ճամբորդել այդ վայրերում, դրա համար էլ այդ ծանծաղուտները ծանոթ էին նրան և կարողանում եր համեմատաբար անվտանգ տեղերից քայլել:

— Յեթե դուք չլինեյիք, յես յերբեք չպիտի կարողանայի դուրս գալ այս ճահիճներից,— ասում եր Սալոմեն կոթնելով Մինասյանի ամրակուռ թևերին, վորոնք նրա թրջված մարմնին ախորժալի ջերմություն էին հաղորդում:

— Յես կաշխատեմ այսուհետև էլ նման դժվար րոպեներին ձեզ հետ լինել, ձեր կողքին...

— Միայն դժվար րոպեների՞ն,— բացականչեց Սալոմեն ուրախ ձայնով:

— Մարդկանց կարելի յե սառուցել ու ճանաչել դլխավորապես դժվար րոպեներին:...

Բայց Մինասյանի խոսքը կիսատ մնաց: Նրանց ճանապարհը կտրեց դեպի ծովը վազող պղտոր, հորդառատ վտակը: Հարկավոր եր անցնել այդ ջուրը: Այնքան մթնել եր շուրջը, վոր մի քայլ հեռու վոչինչ չեր նշմարվում և այդ պատճառով հնարավոր չեղավ իմանալ, թե ինչպես կարելի յե անցնել ջուրը: Իսկ լաստանավի մարդիկ վազուց հեռացել էին և նրանց հետքն անդամ չեր յերևում: Մինասյանը կոչնին ու դուլպան հանելով մտավ ջուրը և Սալոմեին դրված անցկացրեց մյուս ափը:

— Ո՛հ, ինչ սոսկալի ճանապարհ, վորքան նեղություն ու պլխացավանք եմ պատճառում ձեզ,— դանդատվում եր Սալոմեն դղրդված ձայնով:

— Դա ինձ ավելի չատ հաճույք պատճառեց, քան պլիացավանք...

Նրանք բարձրաձայն ծիծաղեցին: Մինասյանը կրկին հպավ դուլպան ու կոշիկը, և նրանք շարունակեցին ճանապարհը:

Սատիկ թրջված ու հոգնած՝ նրանք հասան ամրոցակից յերկու-յերեք չենքից բաղկացած նավամատույցը: Այդ դիշեր հետ դառնալու կամ առաջ գնալու հնարավորություն ու փոխադրական միջոց չկար, և նրանք ապաստան գտան բանվորական փոքրիկ ճաշարանում:

Ճաշարանի սպասարկուն խոհանոցում կրակ պատրաստեց, վորի վրա նրանք չորացրին իրենց շորերը: Հետո թեյեցին, վոր նրանց մեծ հաճույք պատճառեց:

Նրանք դիշեցին անցկացրին համարյա անքուն, ճաշասենյակի անթիկունք նստարանների վրա, վորովհետև ուրիշ հնարավորություններ չկային: Ճարտարապետ ամրակուռ առողջություն ունենալով՝ իրեն լավ եր զգում, բայց աղջիկը դժգունել եր, հոգնած եր յերևում, մրսած:

— Դուք անշուշտ ինձ կներեք, ընկեր Սալոմե, վոր ձեզ դժեցի նման փորձանքի մեջ: Ջե՞ վոր դա մեզ մեծ նեղություն պատճառեց,— ասում եր Մինասյանը ախորժակով ընթրելով:

— Ախր մենք միասին ընկանք փորձանքի մեջ, միասին անհանգստացանք ու ահնջվեցինք, եվ ինչո՞ւ պիտի նեղանամ ես: Յերբեմն-յերբեմն նույնիսկ անհրաժեշտ է յենթարկվել նման փորձություններին, ավելի ու ավելի մարզվելու ու կոփվելու համար:

Աղջկա խոսքերը չատ դուր յեկան Մինասյանին և նա պատրաստ եր ջերմորեն դղվել, համբուրել նրան, յեթե դա հարմար լիներ: Թեև նա զսպեց իրեն, բայց նրա աչքերի մեջ պատկերվեց հոգեկան խռովքը:

— Ցնա ուզում եմ, վոր դուք մնաք և աշխատեք մեր բանվորների շրջանում: Մենք ցանկանում ենք մեր կառույցող բանվորների յերեխաներին լավ դաստիարակել՝ նրանց խորհրդային լավագույն քաղաքացիներ պատրաստելու համար: Իսկ դրա համար կուլտուրական լավ ուժեր են պետք, բարձրագույն կրթություն ունեցող մանկավարժներ: Դժբախտաբար դրանցից քիչ կան մեր կառույցողական տեղամասում: Անշուշտ կլինան, ջերմախառնավ հիվանդանալու յերկյուղը, ամայությունն ու տաղտուկը չատերին հետու յեն պահում այստեղից, իսկ մեր կառույցող բանվորները պահանջում են կուլտուրական լայն պայմաններ ստեղծել իրենց յերեխաների համար: Մենք աշխատում ենք ըստ ամենայնի ընդառաջ գնալ այդ պահանջներին, պարտավոր ենք անել այդ:

— Ցնա սիրով կմնամ ձեզ մոտ աշխատելու, յեթե պահանջ լինի և համապատասխան պայմաններ ստեղծվեն,—հայտարարեց Սալոմեն:

— Միանգամայն անհոդ յեղեք: Ձեզ համար լավագույն հարմարություններ կստեղծենք: Մանավանդ վոր յես միտք ունեմ խախտել իմ մենակությունը և խնդրել ձեզ...

Մինասյանն իր խոսքը կիսատ թողեց: Նրա ձայնը դողդողաց, այլևս չկարողացավ ավարտել միտքը: Վեր յեկավ և փոքրիկ լամպի ազոտ լույսով հպիվ լուսավորված սենյակում քայլեց հետ ու առաջ, հետո կանգ առավ և պայծառ աչքերով նայեց Սալոմեին: Վերջինս աչքերը խոնարհեց, հուզմունքից կարմրեցին նրա այտերը, մատներով ջղայնորեն խաղում եր սեղանի հետ

— Ցնա ձեզ լավ չհասկացա: Ջեր վերջին խոսքերը կիսատ մնացին,— ասաց աղջիկը կամացուկ, դրեթե չշնջալով:

Ճաշասենյակում միայն նրանք եյին: Սպասարկուն դնացել եր հանդստանալու: Այնպես վոր նրանք կարող եյին ազատորեն խոսել: Մինասյանը մոտեցավ աղջկան այնքան մոտ, վոր զգացվում եր նրա շնչառությունը:

—Ցնա ուզում եմ պարզել միտքս: Ցնա... յես ցանկանում եմ, վոր դուք դառնաք իմ կյանքի, վոչ միայն իմ կյանքի, այլև աշխատանքի ու մտքերի ընկերը, հասկանո՞ւմ եք... Ինձ թվում է, թե դուք եք հենց այն միակ ու լավագույն ընկերը, վորին յես այնպես փնտռում եյի և ձգտում եյի ունենալ, հասկանո՞ւմ եք...

Աչքերը խոնարհած և յերջանիկ ու բերկրալի դողով բռնված աղջիկն զգաց, թե ինչպես Մինասյանի այրող շրթունքները իջան և ախորժելի շոյանքով ջերմացրին իր ճակատը: Նա զլուխը նպանդով թեքեց, իսկ թավշանման մազերը մի պահ քնքշորեն շոյվեցին յերիտասարդի ձեռքում: Այս նա մեղմորեն ասաց

— Ջեր զղացմունքները չատ են դժվելի և հուզիչ: Զգացված եմ: Բայց նրանք չափազանցություն չե՞ն արդյոք կամ հետևանք

չե՞ն վայրկենական վաղեմության և վաղանցուկ տրամադրությունները...

— Ձեզ չառլատան չեմ, վոր ղրաղվեմ սնամեջ չաղակրատությամբ, վոչ·եվ եմպրեսիոնիստ, վոր ապրեմ անցողիկ տպավորություններով: Ձեզ սիրում եմ, ձերը մարդիկ խորապես կըշռադատում են և ոտք դործում: Ձեզ ռեալիստ-մատերիալիստ եմ և ռեալիզմի ակնոցով եմ նայում կյանքի բոլոր հարցերին...

Ճարտարապետի խոսքերին աղջիկը չպատասխանեց: Նա ընկել եր վոսկեվառ յերազների և անուրջների սքանչելի չրջագծում: Նա լողում եր անուշ հույզերի և ապրումների կախարդական լճակում:

Իսկ Մինասյանը նստեց նրա կողքին և չարունակեց խոսել:

— Անցյալում դառնաղետ որեր յես չատ եմ տեսել: Սչքս բացել եմ ծայրահեղ աղքատության և թշվառության մեջ: Մայրս չուտ և մահացել: Դեռ հինգ տարիս չբոլորած նա հեռացել և աշխարքից: Հայրս ներկարար եր, բայց հարբեցող և իսկի ուշադրություն չի դարձրել յերեխաներին: Ձեզ ու քույրս մեծացանք համարյա առանց խնամքի, մեծ կարիքի մեջ, մոտ աղքատկանների ողորմությամբ: Հայրս զոհ գնաց մոլի հարբեցողության և մենք մնացինք բոլորովին վորբ... Բախտի քմահաճույքներին հանձնված՝ մի կերպ մեծացանք: Քույրս տարիքով ավելի մեծ եր, չուտ ամուսնացավ, տեղավորվեց: Պետք և ասել, վոր քույրս բախտավոր կյանք ստեղծեց իրեն համար: Ինքը կյանքի ծանր զրկանքների և դժվարությունների բովից անցած խելոք կին, կարողացավ ընտանեկան նախանձելի ջերմ ստեղծել, յուր ամուսնին ունի և արդեն դարձել է յերկու յերեխայի մայր: Նրա պնդությամբ յես ավարտեցի միջնակարգ դպրոց, ընդունվեցի կոմյերիտմիության շարքերը: Ինձ ուղարկեցին Մոսկվա՝ ճարտարապետական բարձրագույն կրթություն ստանալու և ստեղծվեցին մեծ հնարավորություններ: Պետական թոշակ եյի ստանում և լավ եյի սովորում, ընդունակ եյի, հմուտ, կանասեր... Զկարծեք, վոր ղրաղվում եմ ինքնագովությամբ: Ինչ առաջ չնչահեցի, վոր յես ռեալիստ եմ և իրերն ու յերևույթները պատկերացնում եմ այնպես, ինչպես վոր նրանք կան և վոչ թե այնպես, ինչպես յես եմ ուզում պատկերացնել, փքած, ուռեցրած... Այդ հիպերբոլիզմը խորթ է իմ բնավորության գծերին, նկատի չեմ վոր յես հպարտությամբ համարում եմ ինձ անող

ու դասախոսող կոմունիստական կուսակցության հաջողատ գործակը... Դրա համար եմ յես ուզեցի— ամենայն անկեղծությամբ բանալ իմ սիրտը, վոր դուք հասկանաք ինձ, ծանոթանաք իմ անցյալին և կյանքի մանրամասնություններին, վորպեսզի պարզորոշ իմանաք, թե յես ով եմ, ում հետ գործ ունեք, վորպեսզի կարողանաք անկաշկանդ վճռել կյանքի ամենակնճռոտ հարցը կամ հարցերից մեկը: Իմ կարծիքով, պետք է լուրջ, չատ լուրջ մոտենալ այդ հարցին: Մեզ մոտ վաղուց վերացել են ամուսնական խնդրում արևելյան սոցիալիզմությունը և արեվմտյան «քաղաքակրթված» կեղծ որենքը: Մեզ մոտ, խորհուրդների յերկրում, ամուսնությունը հիմնավորված է ազատ ընտրության ամենաղեմոկրատ սկզբունքի վրա և այդ պայմաններում միայն կարելի յե ստեղծել ընտանեկան յերջանիկ կենակցություն...

— Դուք մի փոքր չեղվեցիք իսկական նյութից, կիսատ թողիք ձեր ինքնակենսագրությունը,— միջամտեց Սալոմեն.

Պարզ է, վոր նրան խիստ հետաքրքրում եյին Մինասյանի կյանքի մանրամասնությունները:

— Հա, յես մի փոքր չեղվեցի: Բայց այդ չեղումն, իմ կարծիքով, իսկի չեր վնասի բուն նյութին,— յեռանդով չարունակեց ճարտարապետը,— վեց տարի սովորեցի: Ամբողջովին կլանված նյի գիտության և տեխնիկայի ուսումնասիրությամբ: Ձեզ ասանձնապես խորացա հարտարապետության կառուցողական բաժնում և դարձա ճարտարապետ կառուցող... Ավարտելուց հետո ինձ ուղարկեցին Դնեպրոստրոյ: Ձերկու տարի մնացի այդ խոշոր շինարարության մեջ: Հետո ինձ տեղափոխեցին այստեղ և ահա յերկու տարի յե աշխատում եմ: Բոլոր իմ ուժերն ու կարողությունները, իմ բովանդակ գիտությունը նվիրել եմ կառուցողական գործին, վորպեսզի ամեն ինչ լավ լինի, վորքան հնարելի յե լավ կառուցենք, իսկ այժմ արդեն ժամանակն է մոտծել նաև տեխնիկական կյանքի մասին, ընտանիք կազմելու, յերեխաներ ունենալու և նրանց լավագույն կերպով դաստիարակելու մասին: Սրանք կարևոր, խիստ կարևոր հարցեր են, վորոնց մասին վերջերս, մանավանդ յես, շատ եմ մտածել: Այժմ ձեր այստեղ գալով և մեր կարճժամանակյա ծանոթությամբ ավելի սրբվեցին ու հրատապ դարձան այդ հարցերը: Ձես կարծում եմ,

վոր մենք կարող ենք արժանավոր կյանք ստեղծել մեզ համար: Ցւ՞ վոր բոլոր հնարավորությունները կան այդ անելու...

Ամառային գիշերը շուտ հալվեց: Յերկինքի գեմքը բացվում եր շուշանի թերթի պես: Ամպերը ցրվել էլին և այնպես պայծառ եր բացվում առավոտը: Նորածագ արևի հուրհրան ճառագայթները լուսամուտից առատորեն ներս թափվեցին:

Յերբ սեղանի վրա ղլուխը հենած և նստած տեղը ննջող Սալոմեն զարթնեց, նրա վրա ընկած արևի վոսկեծամ շողերը պայծառորեն ժպտում էլին: Նա վեր կեցավ: Մինասյանը ճաշարանի դռանը լվացվում եր:

— Տեսնո՞ւմ եք վորքան զվարթ ու ջինջ որ է: Մենք հանգիստ կարող ենք վերադառնալ տուն,— ասաց ճարտարապետը կենսուրախ ժպիտով:

Սալոմեն էլ լվացվեց, թարմացավ, հարդարեց մազերը, նախաճաշեցին: Յերբ նրանք լիքան ծովափ, այնտեղ սպասում եր լաստանավը, վորի մեքենան կարգի յեր բերված և պատրաստ եր ճամբա ընկնելու:

Նրանք տեղավորվեցին լաստանավի վրա, վորը մեղմորեն առաջ ընթացավ ծովածոցի յերկայնքն ի վեր:

Ջրերն այնքան պարզ էլին, այնքան խաղաղ: Իսկի չեյիր կարծում, վոր այդ ջինջ, հայելատիպ ջրերը յերբեմնից կարող են վրդովվել ու դառնալ կատաղի, անդուռդ...

Առավոտյան թարմ ոդը շոյում եր յերիտասարդ ուղևորների դեմքը: Նրանք արդեն մոռացել էլին յերեկվա մղձավանջը: Նրանց սրտերում վառվում եր նոր բացվող կյանքի կենարար բաղձանքը:

Յեվ նրանք ժպտում էլին վոսկեշող արևի և արծաթափայլ ջրերի պես...

5·

Մանկական հասակում Սալոմեն հիվանդացել եր ջերմախտով և բժշկվել: Այժմ կրկին սրտահատվեց նրա մարմնի մեջ թաղնված այդ հիվանդությունը, ջերմատաքնանը մեկեն բարձրացավ և նրան դրեց անկողին:

Ծովածոցում պատահած դիպվածն իր հետևանքը թողեց...

Աղջկա սրտամաշությունը խիստ ընկավ: Նրան տանջում եր այն միտքը, վոր պատկել և այդ հետավոր առանձնացած վայրում, թեև քրոջ մոտն էր և քույրն ուշադիր խնամում էր նրան:

Վերջին որերի ընթացքում վորքա՜ն դեպքեր պատահեցին, ծանոթացավ Մինասյանի հետ, հրապուրվեց նրանով, մեծին պրոնեցին և վորքա՜ն խոսեցին բազմաթիվ հարցերի մասին, հետո ծովածոցը, լաստանավը, անձրևն ու փոթորիկը, ուրախությունը ծանծաղուտներում, ճաշարանի դիշերը, Մինասյանի առաջարկությունը... իսկ այժմ հիվանդացած, անկողնում...

«Ինչպես շուտ է անցնում կյանքը, համբիչի հատիկների պես արագ ղլորվում են որերը: Մեծ մասամբ նրանք ատհասանցնում են միալար, միօրինակ: Բայց պատահում է մի այնպիսի ժամ, այնպիսի վայրկյան, վոր մի ամբողջ կյանք արժե...»

Անկողնում Սալոմեն չարունակ մտածում եր վերջին որերի դեպքերի մասին, վորոնք շատ խոր ու անջնջելի կերպով դրոշմվել եյին նրա ուղեղում: Այնպե՜ս եր ուզում կրկին տեսնել Մինասյանին, զրուցել նրա հետ, լսել նրա զրավիչ, հանդարտ ձայնը, դիտել նրա յեռանդուն շարժումները: Իր կյանքում յերբեք նրա աչքերի նման պայծառ, խոհուն աչքեր չեր տեսել... նրա դեմքի ապավորիչ արտահայտության նմանը չեր տեսել: Ի՜նչ հիանալի, անզուգական ընկեր: Կարծես թե բնությունն ստեղծել եր նրան հենց Սալոմեյի համար... Այնպե՜ս կարոտել եր նրան...

Մինասյանին իրենց հիմնարկը կատուցումների հետ կապված կարևոր գործով գործուղեց Թրիլիսի, և նա ստիպված եր վորոշ ժամանակ մնալ այնտեղ:

Սալոմեն մանրամասն պատմել եր Մարիամին ծովածոցում պատահած դիպվածի և Մինասյանի հետ ունեցած խոսակցության մասին:

Մարիամը շատ եր հարդում ու գովում ճարտարապետին:

— Նրանից հարմար ամուսին չես ճարի,— ասում եր նա չարունակ:

Մարիամը շատ եր ուզում, վոր ղլուխ գա նրանց ամուսնությունը: Նա նրանց շատ հարմար զույգ եր համարում: Բացի դ այդ, Սալոմեն ամուսնանալով կմնար այնտեղ և ինքն այլևս միայնակ չեր լինի և այդպիսով ավելի ուրախ կանցներ նրա կյանքը: Սհա թե ինչու նա չհապդրդված եր և ամեն կերպ նպաստում եր այդ գործին:

— Ա՛յ աղջի, ես թաղս ժամանա՞կը պիտի հիվանդանայիր, երբը բախտդ եր վորոշվում: Բա նման հանդիսավոր մոմենտին կհիվանդանա՞ն, անաքանդ: Շուտով առողջացիր, վեր կաց, քեզ պատկենք, ուրախանանք...

Սալոմեն ցավագնորեն շարժում եր գլուխը և չեր իմանում ինչ պատասխաներ:

Փոքրիկ տախտակաշեն սենյակ եր Մարիամի բնակարանը՝ պատկեպատ լուսամուտով: Այդ վայրում գտնվող տները բարակների պես թեթև կառուցված չինքեր եյին ժամանակավոր բնակության համար: Կառուցումներն ավարտելուց հետո հաղիվ թե մարդիկ բնակվելին սկսնեղ: Շատ հաճախ ցեխոտ եր լինում չլսկատյքը և մարդիկ ստիպված եյին փայտե կամրջակների վրայից քայլել:

Սալոմեյի ջերմությունը չեր լքնում: Նա սաստիկ քրտնում եր, լեզուն չորանում, յերբեմն էլ սրսռում եր, դողացնում: Հայելու մեջ նայելով նա սարսափով եր նկատում, վոր հեղհեղաբար նիհարում է, դժդունում: Այրվող պարզ յերևում եյին այտերի վոսկորները, աչքերի տակը կապտել եր: Ներան թվում եր, թե բոլորովին փոխվել, այլակերպվել է...

«Ա՛խ, բախտ չունեմ, բախտ: Յեթե բախտ ունենայի, այսպես չեյի դունատվի, մաշվի...» դանդատվում եր նա ինքնիրեն և դառնությամբ լցվում եր սիրտը:

Ներան սարսափեցնում եր այն մտքը, վոր այսպես Թալիանալով ու մաշվելով՝ կարող է խախտվել իր կյանքի յերջանկությունը, վորի համար այնպես է դողում նա, ինչպես ծաղիկն արևի համար:

«Յեթե եսպես չարունակվեց, չարունակ եսպես նիհարեմ ու մաշվեմ, ել նրա ինչի՞ն եմ պետք: Ել չի հավանի ինձ, կփոշմանի, յես կվերցնի իր խոսքը: Իսկ դա բոլորովին ել մի դժվար բան չի... ե՛խ, ե՛խ, ինչ որի ընկա, ի՛նչ...»

— Աղջի, շատ կեր, եղբան մի մատի, վոր շուտ կաղդուրվես, ուժերդ հավաքիր, մի ընկճվի,— չարունակ հորդորում եր Մարիամը:

Բայց ինչ կարող եր անել Սալոմեն: Մի՞թե նա չեր ցանկանում վաբշտի կարելի յե շուտ ապաքինվել, վեր կենալ, կրկին գտնել նախկին կենսուրախ աղջիկը:

Նորը հուզմունքից արցունքները թափվում եյին աչքերից: Լալիս եր Սալոմեն անիծելով իր սև բախտը...

6.

Մի յերեկո Մարիամը դնդակի պես նետս ընկավ:

— Սալոմե, նշանածդ վերադարձել է, քեզ եր հարցնում:

— Հեսո՞,—բացականչեց Սալոմեն՝ տաքությունից պղտորված աչքերը լայն-լայն բանալով և նստելով անկողնի մեջ:

— Ցես նրան հայտնեցի, վոր դու հիվանդացել ես, դողացնում ես... Նա զարմացավ, տխրեց: Ուզում է գալ քեզ տեսության:

Սալոմեն չգիտեր ուրախանա՞ր, թե տխրեր: Անշուտա նա ուրախ եր, վոր վերադարձել է Մինասյանը: Բայց յեթե Մինասյանը նրան տեսնի այդ վիճակում, այդպես մաշված, դառնացած, ի՞նչ պիտի ասի սրտյոք... ել ինչ խոսք ամուսնության մասին: Ով գիտե, ինչքան ժամանակ պիտի անցնի մինչև իր առողջանալը: Իսկ մինչ այդ վորքան ջրեր պիտի հոսեն...

«Ես, ե՛ս, ինչ դժբախտ եմ յեղել, ե՛ս...» հառաչեց նա խո՛ր, սրտաբեկ և արտասուքը վազեց աչքերից:

— Վահ, Սալոմե, ինչի՞ յես արտասվում, այ ջան: Ինչ վոր պատահել—պատահել է: Ընդհակառակը, պետք է սիրտդ ջան պահես արամադրությունդ բարձրացնես, վոր ուրախ դիմավորես նրան. թե չե՝ քուրս, քո արածը բանի նման չի,— խրատում եր Մարիամը:

— Ես, Մարո ջան, բախտ չունեմ: Հենց ես ժամանակը պիտի հիվանդանայի՞: Մի տես ինչի՞ նման եմ, ինչ եմ դառել, ել նա ինձ չի առնի, չե,— արտասուք թափելով ասում եր Սալոմեն:

Մարիամը նստեց նրա անկողնի վրա, գորովանքով վայելեց նրա մազերը և խնդրեց, վոր նա զսպի իրեն, ուրախ ձևացնի, վորպեսզի Մինասյանի արամադրությունը չընկնի:

— Հիմա նա կարող է ներս մտնել, պետք է զսպես քեզ, արամադրվես...

Բայց այդ յերեկո Մինասյանը խիստ կարևոր խորհրդակցություն ունենալու պատճառով չկարողացավ այցելել Ներանց: Դա ավելի ջղայնացրեց Սալոմեյին: Հազար տեսակ մտքեր ան-

յան–դարձան ու տանջեցին նրա ուղեղը: Գիշերը նա համարյա չքնեց: Շարունակ մտածում էր այն մասին, թե ինչո՞ւ նա չհիվանդացավ:

«Գուցե իմացել է իմ դրության մասին, խուսափում է, չի ուզում յերևալ: Գուցե Թբիլիսիում նոր ծանոթություններ է հաստատել, ավելի հարմար, ավելի դեղեցիկ աղջիկ է գտել: Ո՞վ գիտե, յերևատարդ, հետաքրքիր մարդ, լավ մանուկետ, ո՞վ նրան չի առնի, հը, ասացեք խնդրեմ: Ախր դա ի՞նչ ասի, ի՞նչ ուրախանալու բան կա, վոր դա տեսնի, ուրախանա, ինչի պիտի դա վոր...»

Ամբողջ գիշերը Սալոմեն այսպես մտածում էր և սաստիկ անհանգստությունից չուռ ու մուռ էր գալիս անկողնում:

Մինասյանը յեկավ հետևյալ որը, ճաշից հետո: Նա ավելի լավ էր հագնվել: Ամբողջովին սպիտակ, լավ արդուկած շորերով: Նրան սազում էր այդ հագուստը:

— Եղ ի՞նչ եք դարձել, Սալոմե: Եղբան էլ նիհարե՞ն, մաշվե՞ն. բոլորովին անճանաչելի յեք,— բացականչեց նա զարմացած, աչքերին չհավատալով:

Սալոմեյի աչքերի մեջ արտասուքի չիթեր պսպղացին: Փոխարենը Մարիամը պատասխանեց.

— Ջերմում է խեղճը: Ծովածոցում ձեր կատարած ճամբորդության հետևանքն է: Նրան կյանքում իսկի ևս տեսակ վորդանք չէր պատահել: Ցեթե ջերմությունը բոլորովին իջնի, կլավանա, վոչինչ...

Մինասյանը գլուխը չարժեց, մնաց լուռ, մտածկոտ: Ցերակ է սա, թե՞ իրականություն: Բարձի վրա ընկել էր անուշիկ Սալոմեյի մաշված, վոսկրացած գլուխը...

— Բժիշկն ի՞նչ է ասում հապա,—հարցրեց նա կամացուկ, կարծես թե քաշվում, վախենում էր վորևե մեկից:

— Բժիշկը խորհուրդ է տալիս հիվանդին ուղարկել լեռնային առողջ ող ունեցող վայր: Խորհուրդը լավ է, բայց կատարելն է դժվար: Դրա համար միջոցներ ու հարմարություններ են պետք. իսկ դա ո՞վ կանի,—պատասխանեց Մարիամը յեռանդով:

Մինասյանը լուռ նստեց աթոռին և խորասուզվեց խոր, չատ խոր մաքերի մեջ: Մի լուրջ, չափազանց լուրջ ու դժվարին խնդիր էր վճռում կարծես: Թվում է, թե նա կտրվել է շրջապատից, հեռացել ինչ–վոր տեղ՝ միայնակ մտածելու և վորոշելու այդ

կարևոր խնդիրը: Նա զլուխը խոնարհել էր, աչքերը թևեռել հատակին, մի կետի...

Մի պահ տիրեց սպասողական տանջալի դրություն: Սալոմեյի համար այդ պահը մի ամբողջ ժամանակաշրջան էր, հավիտենականություն: Վերմակի ճոթը մոտեցրել էր դեմքին, սիրտն ուժգնորեն բաբախում էր: Կարծես ինչ վոր վճռական դեպք պիտի տեղի ունենա, վոր պիտի վորոշեր նրա լինել չլինելու հարցը: Նարծես իր կյանքի յերջանկության միակ յելքը կախված էր այդ ճակատագրական վայրկյանից: Ինչպես դիրքերը պաշտպանող գինվորը սրտատրոփ սպասում է թշնամու առաջին կրակոցին, այնպես էլ Սալոմեն, նրա հետ նաև Մարիամը, սրտաղող սպասում էին, թե ինչ պիտի ասի Մինասյանը, ինչ վերաբերմունք պիտի ցույց տա այդ նոր իրադրության:

Վերջապես Մինասյանը վեր յեկավ, մոտիկ ու լուռ մի քանի անգամ զնաց–յեկավ, ապա կանգ առավ, աչքերը ժպտացին, դեմքը մեկեն բացվեց, պայծառացավ, նստեց հիվանդին չատ մոտ, սիրատար հայացքով նայեց նրան և հանդիսավոր կերպով ասաց.

— Դու բոլորովին մի՛ մտածի, Սալոմե, տրամադրությունդ բարձր պահիր: Ցես այնպիսի մի բոցեր ձեռք կառնեմ, վոր վորքան հնարավոր և չուտ բժշկվես և բոլորովին առողջանաս, բոլորովին մի՛ մտածի...

Սալոմեն գլուխը թեքեց և աչքերից հոսեցին արտասուքի կաթիլները:

— Իսկ յես կարծում եյի, վոր դու... դու կհիասթափվես, կիփոշմանես ու կմոռանաս ինձ,— ատամների արանքից, դեթե չչնջալով պատասխանեց աղջիկը և դառնորեն հեկեկաց...

— Մի՞թե ինձ եղբան Թուլամորթ, անխիղճ, անհոգի մարդ ես կարծում, Սալոմե...

Սալոմեն գլուխն էլ ավելի թեքեց և անհամաձայնության բազմանքով պղաց, թե ինչպես իր չքմեղքներն հավիտենի Մինասյանի չքմեղքներին:

— Ցես իմ խոսքի տերն եմ, Սալոմե, և յերբեք չեմ դավաճանի նրան: Ընկերությունը միայն լավ որերի համար չի տված: Մի քանի որից յես արձակուրդ կառանամ և քեզ կառնեմ բժշկելու: Հետո, յես վստահ եմ, վոր ամեն ինչ կարդի կընկնի և մենք յերջանիկ կապրենք...

Ցերբ Սալոմեն ապատվեց Մինասյանի դրկից, նկատեց, թե ինչպես քիչ հեռու նստած Մարիամի աչքերն ուրախությունից շողում էլին:

Ցերեկանությունից հարբած Սալոմեն թևերն արձակեց և խնդրեց, վոր չորերը տան հաղնի...

ԲԼԴԱՆ ՋՈՒՐԸ

Ցերբ մենք ճամբա ընկանք դեպի Բլդան ջուրը, արևը դեռ նոր եր իր ճառագայթները թափել լեռների գլատարներին:

Դիլիջանից դեպի Կիրովական ձգվող խճուղին անցնում է կանաչ ձորամիջով: Ներքևը՝ սաղարթախիտ ծառերի արանքում հոսում է գետակը, վերևը լեռներն են բարձրանում, կարծես իրենց ուսերին պահելով յերկնքի կապտամշուշ կամարը:

Հիանալի յեղանակ է, ոդը՝ վճիտ, մի թեթև դուրեկան քամի իր անուշ թևերով զովացնում է մեր դեմքերը, չոյում է ծառերի տերևները, վորոնք սոսափում են մեղմաձայն:

Ահա դեպի ալ բացվեց մի չքեղ հովիտ: Մենք թողինք խճուղին և փոքրիկ ճանապարհով մտանք այդ հովիտը:

— Շուտով կհասնենք,— ասաց ուղեկից ընկերս և ցույց տալով հովտի կանաչ լանջին յերևացող հատ ու կենտ տները, ավելացրեց,— այստեղ չատ վաղուց չե, վոր մարդիկ են բնակվում: Գոմեր կոչվող այս մի քանի տնից բաղկացած գյուղը ապագային ընդառաջվում է, մեծանում և դառնում խիտ հետաքրքրքիր վայր: Բնությունը վոչինչ չի խնայել, իր բոլոր չքեղություններով պճնել-զարդարել է այստեղ:

Հիրավի մեր առաջ կամաց-կամաց բացվում են գրավիչ տեսարաններ: Լեռների լանջերին կանաչ գորգերի պես անտառներ են փռվում, նրանց փեշերին սպիտակ ծաղիկների նման նստած տներ կան, իսկ ներքևը մեղմ խոխոջում և մի փոքրիկ վտակ:

— Հրաշալի վայր է այստեղ, հիանալի ոդ կա, դեղեցիկ անտառներ և սառն, առողջարար ջուր,— գովաբանում է չարունակ ընկերս, վոր այս վայրերին քաջ ծանոթ է, իսկ յես լար-

Երևանի Ժողպետհրատ—4

ված հետաքրքրությամբ և զմայլանքով չարունակ շուրջս եմ դիտում:

Դանդաղեցնում ենք քայլերը, վորպեսզի ավելի լավ դիտենք շրջակայքը: Նեղլիկ ճանապարհը սողոսկում է անտառի միջով: Մերթ մի կանաչ մարգագետին է բացվում և նրա վրա փոքրիկ չինություն, ապա ծառերը չարք առ չարք, կամ խառնիխուռն, հպարտ գլուխները բարձր պահած՝ կարծես հսկում են խորհրդավոր պահակների պես:

Ճանապարհը վերել է ձգվում, զառիթափ է:

Տների չարքը շուտով վերջանում է, ծառերն ավելի ու ավելի յեն խտանում:

Հաճախ ճանապարհից չեղվում ենք, մտնում անտառի խորքը յելակ գաղելու: Փարթամ խոտերի արանքում բուսած բնության այդ անմահական պտուղն իր անուշ համով թարմացնում է մեզ:

Կոշիկներս թրջվում են ցողից, բայց հոգ չէ, մենք անվախ մտնում ենք անտառի խորքերը: Այստեղ այնպես խաղաղ է, այնպես անդորը: Բնությունն առանձնացել է ինքն իր հետ, կղզիացել է ու իր չքեղությունները պահել միայն իր համար: Ցեվ առավոտ հոգսերից հոդնած մարդը կարող է այստեղ հանգիստ գտնել, վայելել այս հաճելի անդորրությունը, դույների ու ձևերի այս նկարչագեղ վայրում: Խորհրդավոր լռություն է մեր շուրջը: Միայն մեկ-մեկ ծառից պոկված մի վոստ և շրշյունով ներքև ընկնում, խոտերի վրա չորացած տերևները են խշրտում կամ ինչ-վոր թռչուն է ծլծլում ո՞վ գիտե վո՛ր ծառի վրա: Այդ ծլծլոցը չարունակ հետևում է մեզ և խիստ դժվար է վորոշել թռչունի տեղը:

Ընկերս իր սուր աչքերով նկատում է թռչունը, վորսորդական հրացանով նշան բռնում, բայց նա թռչում է, խուսափում ուղիս, պահվում տերևների արանքը:

— Անպիտանը չատ ճարպիկն է, չարունակ հետևում է մեզ, փոխում է տեղը, խաբս տալիս,— արանքում է անհաջողության մատնված ընկերս:

Ճանապարհն այս անգամ անտառի մեջից դուրս է գալիս և իջնում դեպի առվակը: Քարերի արանքում չհնչեցող ջուրն ինձ յեռանդ ու կորով է ներշնչում և յես պատանու աշխուժությամբ վերեվից ցատկում եմ դեպի ջուրը:

— Լավ ես ցատկում, խոսք չկա,— բացականչում է ընկերս ուրախ քրքիջով:

— Մի պահ վերհիշեցի պատանեկությանս թռուցան օրերը, ա՛հ, ինչ լավ է պատանեկությունը կամ նրա պես անհոգ ու կայտառ կյանքը...

Սակայն հոգեկան զեղումների ժամանակը չէ:

Լեռնային վտակն իր ջինջ ու բյուրեղ ալիքներով զրավում է ինձ, ժպտում կենսուրախ, թևերը չափ-չափ խփում իրար, ծեծում քարերի ու ժայռերի մեջքն ու քրքջալով, խըշխըշալով վազում առաջ: Վորքան քաղցր է այս արագահոս ջրի ներդաշնակ համերգը, նրա արծաթափայլ ալիքների հավերժական չչունչը:

— Մի լամանա, ինչպիսի համեղ ձկներ ունի այս ջուրը,— բացականչում է ընկերս նույնպես ներքև ցատկելով:

Բարձրանում ենք վտակի հոսանքն ի վեր: Նրա ափին մի նոր ճանապարհ են կառուցել: Մարդկային հուժկու ձեռքը քարկոտել ու քանդել է լեռան ապառաժ կողերը և ճամբա հարթել դեպի զառիվերը:

Ժայռոտ ափերին փոխադրվում են վոքրիկ հողաբլրակները, վորոնց փխրուն լանջերին խլեզներն են վազվզում իրենց անճոռնի մարմիններով ծռմռելով, վազվզում են և արագորեն պահվում փոսիկների մեջ:

Ընկերս աչխուժորեն առաջ է անցնում և մի քարքարոտ տեղ ցույց տալիս- վոսկեգույն հողի մի պարածություն:

— Ահա կենարար հեղուկը, Բլղան ջուրը,— բացականչում է նա դվարթ ձայնով:

Վտակի կողքին, քարերի կուրծքը պատռելով և պղպջալով դուրս է ցայտում հանքային աղբյուրը, կամքատակուն յերանգով ներկում ջուրը, կորած ուղին ու խառնվում վտակին: Նստում ենք աղբյուրի ափին, վորի չուրջը ավազան են կառուցել և ջրերն ամփոփել այնտեղ:

Ընկերս լցնում է բաժակը և առաջարկում ինձ խմել:

— Հիանալի ջուր է, առողջարար ու մարսարար: Ասում են, վոր բավականին յերկարի է պարունակում մեջը: Մինչև հիմա այս ջուրը հոսում էր զուր տեղը, այժմ արդեն սկսում են ոգտագործել, գնահատում են նրա բուժական արժեքը, վորոշել են այստեղ բուժարան կառուցել և զարձնել կուրորտ... Ի՛նչ աքանչելի ծրագիր,—ասում է ընկերս խանդավառությամբ:

«Հիրավի սքանչելի ծրագիր, այսպիսի հրաշալի բնության գրկում բուժարան...» մտածում եմ յես և վոչնվորվում այդ գաղափարով:

Թմում եմ այդ ջուրը. մետաղի սուր համից կծվծում է բերանս, թթվաչ է և այնքան էլ սառը չէ:

Ուտելիքի պայուսակը բաց ենք անում ու դուրս բերում հաց, խորոված միս, պանիր և սկսում ուտել:

— Այս ջուրը ախորժակ է բանում անկերջ, նա չատ է ոգնում, այսպես ասած մեր մարսողության— գովում է ընկերս կատակելով և ուտում է չարունակ, լցնում է բաժակը ջրով:

Ջրերը կարկաչում, պղպջում են, խշխշում մեր չուրջը, ալիքները թռչկոտում են արծաթափրփուր: Իսկ մենք հանգըստանում ենք այդ զովաչունչ վայրում, ջրերի մեջ:

Վոլքան ենք հանդստանում, ո՞վ գիտե, ո՞վ և մտածում ժամի ու ժամանակի մասին ջրերի այդ դյութական յերաժշտության մեջ:

Սակայն ուղում ենք դիտել չրջակայքը: Վտակի հոսանքն ի վեր մեկը մյուսի հետևից հանդիպում ենք մի քանի հանքային աղբյուրների, թեև առաջինից ավելի սակավաթիւ: Գուցե ավելի հետևանքը դարձյալ հանդիպենք նման հանքային ջրերի, բայց չեղում ենք մեր ճանապարհը, դուրս յելնում վտակի հոսանքի ուղղությունից ու բարձրանում կողքի բլուրը:

Թեև դժվարին է վերելքը, բայց հաճելի: Անտառն իր գիրկն է առնում մեզ դարձյալ: Բարձրահասակ ծառերը թիվ-թիվ տված տակերում են ճամբան:

Բավական բարձրանալուց հետո մեր առաջ բացվում է մի կանաչ բացատ, վորտեղ հասատաբուն և լայնաճյուղ ծառերի տակ յերևում են յերկու դրչ, կիսավեր չենքեր:

— Ահա և Ջուխտակ վանքը, վոր ուղում էի քեղ ցույց տալ,— ասում է ընկերս, ցույց տալով այդ քանդված չենքերը:

Վանքերից մեկն ավելի մեծ եր, պատերը՝ պարսպի նման: Շողածածկ կտուրին բուսել էին սեղեր, մացառներ և բազուկի հաստությամբ մի ծառ: Մի մուրթ խորշ եր բացվում, կիսաքանդ լուսամուտներն ստորերկրյա անցքերի նման էին: Լուսամուտներից մեկի հողածածկ դռդին յես նկատեցի կենդանու մի անչարժ գլուխ: Հետևից նա թվում եր մի փոքրիկ մոտյ արձան, մի սխուր տեսիլք, բայց յերբ ավելի մոտ յեկա, ինձ դիմավորեցին ապակեփայլ յերկու աչքեր, վորոնք հիմարորեն նայում էին ինչ վոր անորոշ տեղ...

Աբճանացած գլուխը բարձրացավ մի պահ, վինչաց, ուսերից փրփուր ցայտեց, ապա նորից անշարժացավ, իսկ բերանն սկսեց մեղմ վորոճալ: Լուսամուտ—խորշից նայեցի, դա մի կով եր, վոր հանդստանում եր վանքի ներսում, մուրթը լուսամուտի դռդին դրած:

Վանքի ներսը կիսամուրթ մի տարածություն եր, գետինը՝ փորփրած, վեյլոտա, չորացած խոտի ծղոտներով ու վայրի կտրվներով ծածկված: Այս ու այն կողմ նստել հանդստանում էին մի քանի կով: Նրանք մեզ վրա ուշադրություն չդարձրին, չանհանդստացան, միչտ նույն դիրքում, աչքերը կիսախուփ վայելում էին այդ հինավուրց տաճարի անդորրությունը:

— Հը՛մ, տես, թե մարդիկ ինչպես թողել էին կյանքը, յեկել այդքան հետու տեղ, բնության չքեղ գրկում, ապրել ուրիշների հաշվին և աղոթել ո՞ւմ և ինչո՞ւ համար,— խորհրդածեց ընկերս, յերբ վանքից դուրս յեկանք:

Նա հրացանն ուսից ցած բերեց և գայլերն ուղղեց անտառի խորքը, մինչ յես պնացի դիտելու մյուս վանքը, վոր ավելի փոքր եր, մեծ մասով քանդված, հողաթմբի նման:

Քանդված չինության խոշոր բեկորներն այս ու այն կողմն էին թափված, վորոնցից մեկի մոտ, կանաչ մարդի վրա, թեք դիրքի տակ դրած քնել եր մի չահել տավարած: Ընկղմվել եր խոր քնի մեջ, կողքին ել իր հաստ մահակը:

Անտառի խորքում լսվեց հրացանի խուլ թնդյունը, դունչը լուսամուտի դռդին հենած կովը մի խոր թառանչ արձակեց, իսկ տավարածը գլուխը բարձրացրեց և կասկածոտ աչքերով նայեց ինձ:

— Այ տղա, ի՞նչ ես այդպես խորունկ քնել, բա չե՞ս վախենում, վոր կովերը կորչեն,—հարցրի յես:

— Դե կովերն ես տեղերին ճանաչ են, չեն կորչի,—պատասխանեց նա, նստելով և տրորելով քնաթաթախ աչքերը:

Այդ պահին ընկերս յեկավ՝ ձեռքին արյունաթաթախ վայրի աղավնի:

— Ծառի ճյուղին նստել՝ իր համար քեֆ եր քաչում, մի հարվածով ցած բերի,—ինքնաբավական ժպիտով ասաց ընկերս:

Նա ինձ կարգադրեց վեհարել Թռչունը, տավարածին՝ կրակ պատրաստել՝ խորովելու համար, իսկ ինքը կրկին դնաց վորսի:

Տավարածը յեռանդով գործի անցավ — քարերի արանքում մի փոքրիկ աջախ պատրաստեց և հավաքած չոր ճյուղերն ու տերևները սկսեցին ճըթճըթալ, շուտով վերածվելով թեժ կրակի:

Ընկերս էլի յերկու Թռչուն խփեց և խորովեցինք կրակի վրա: Խորոված Թռչուններից և մեր ունեցած հացից մի պատկառելի բաժին տվինք տավարածին և հրաժեշտ տալով նրան, իջանք դեպի Բլդան Ջուրը՝ ճաշելու:

Զառիվայրով իջանք և նստեցինք աղբյուրի մոտ: Արդեն քաղցել եյինք: Յեվ իրոք՝ հանքային ջուրն ոգնել եր:

Արևն իջնում եր սարերի հետևը և իր վոսկեզույն վեչերը հավաքում հովտից:

Անտառի մոտյալ ամպերն արդեն սկսել եր ծածկել հովիտը, և աղոտանում եյին հեռուհեռու դույներն ու ձևերը—լույսի և սավրի խաղ:

Մենք Թողինք վոսկեփրփուր ու քաղցրահոտ Բլդան Ջուրը և սկսեցինք իջնել նրա հոտանքով:

Մեզ դիմավորեցին դարձյալ վերջալույսի սյոսափով բռնված հանդիպեղեց ծառերը, որոնցից մեր արահետ չատ մոտ մթնչաղով պարուրված անտառի խորհրդավոր հևքն եր:

Յեվ յերբ դուրս յեկանք այդ պմայլելի հավից, դիմացի լեռան կատարին առկայծին պսպղում եյին մայր ծածող արևի վերջին ցոլքերը:

ՔԱՐԱՓԻ ՄԱՐԴԻԿ

1

Այն բարձր քարաժայռի գլխին նստած դյուղումն եր մեծացել Գուրգենը: Մանկության տարիներին նա սովորեց դյուղի առաջին աստիճանի դպրոցում, իսկ հետո, յերբ նա թեւակոխեց պատանեկության հասակը, սիրված յեղավ Թողնել ուսումը և դառնալ տավարած:

Բազմանդամ եր նրանց ընտանիքը, ուտողների թիվը չատ: Աշխատող միակ ձեռքը հայրն եր՝ ուղեպատ Սարգիսը, վոր ամեն որ քարաժայռից իջնում եր ձորը՝ այնտեղից անցնող յերկաթուղու դծերը պահպանելու: Նրա վրին եր ծանրացել ինը հոգուց բաղկացած ընտանիքի հոգսը— հինդ յերեխա, Սարգիսն ու իր կինը, ծերացած հայրն ու մայրը: Այդ բոլորին հագցնել, կերակրել եր պետք: Յեվ նրա անդրանիկ վորդին՝ Գուրգենը տավարած դարձավ, վորպեսզի կարողանա ոգնել հորը և մի քիչ թեթևացնել տան հոգսը:

Այսեն առավոտ, լուսաբացին, յերբ նախրապան Յեղոյի հետ կովերը քշում եյին լեռան լանջն ի վեր արոտ, քարաժայռի յեղերքից անցնելիս Գուրգենը նայում եր անդնդախոր ձորը, վորի մեջից դեռ նոր եր ցրվում թանձր մառախուղը և առաջիները հազիվ եյին վորոշվում այնտեղ: Ցերը ձորամիջում պսպղում եյին արևի ճառագայթները և մառախուղը բոլորովին ցրվում եր, անդնդախոր ձորում արծաթե ժապավենի պես պլպլղում եր վորոր մորոր ընթացող գետակը: Գետակից վերև սարալանջի վեչերին կառուցված չենքերի ծխնելույզներից ծուխը բարձրանում եր չարունակ և ամպի պես ծածկում չրջակայքը:

Հանդիպակաց լեռան բարձունքը ծածկվում էր ձորից յկնող ծխի մշուշով:

Ծխի այդ թանձր զուլաները դրավում էին պատանու ուշադրությունը: Քարաժայռի գլխից նա դիտում էր ձորի խորքը, ձորի մի ծայից սև վիշապի պես վոլորվում էր գնացքը: Նա պատկերացնում էր յերկաթգծերի ուղղությամբ բահը ձեռքին անցնող իր սիրելի հորը: Բայց սա յերբեք չէր նշմարվի անդնդախոր ձորի վոլորաններում: Ցեվ պատանու պատկերացումը մնում էր վորպես սոսկ յերևակայություն:

Նախիրը համրաքայլ բարձրանում էր լեռան լանջին իվեր: Այնտեղ, վերևում, ընտրում էին հարմար արոտատեղ և կովերը դրվում էին արածելու գալար խոտը: Պատանին իր հաստ մահակին հենված՝ չարունակում էր ուշադրությամբ դիտել ձորը և նրան ինչ վոր բան միշտ գրավում, կանչում էր այնտեղ...

Մի քանի անգամ պատանին իջել էր ձորը, կայարանը, լցացել էր գետակի զով ջրերում, բրջել էր յերկաթգծի արանքով, անցել չենքերի շրջանը և մոտիկից, շատ մոտիկից, դիտել հնոցներում վառվող հսկայական կրակը...

Հետո վերցրել էր պղնձահանքի փոքրիկ սպպղուն կտորները, շուռ ու մուռ տվել ձեռքում, բայց լավ չէր ըմբռնել գործի էությունը: Գիտեր միայն, վոր գետնի տակից պղինձ են հանում և հալում են այդ հսկայական հնոցների մեջ...

Տեսել էր նաև, թե ինչպես կյանքը յեռում է այնտեղ աղմուկով ու խանդով և իսկի նման չէ բարձրադիր քարաժայռի վրա նստած գյուղի կյանքին: Այստեղ, վերևում, վորքան խաղաղ է կյանքը, խաղաղ ու անդորը... Այնտեղ, ներքևում, մարդիկ միշտ չտապում են, մրոտ է նրանց դեմքը, մրոտ են նրանց ձեռները, բայց և նրանց սիրտը բաբախում է ծխի զուլաներ արձակող ծխանների հևքի պես:

Յերկար-յերկար է նայում պատանին խոր ձորին, հետո հոգնում է, պառկում մի կանաչ տեղ, թևը վորպես բարձ դնում գլխի տակ և աչքերը կապույտ յերկնքին հառած՝ յերազում է...

2

Ցերը մութը խառնվում էր լույսին և մթնշաղով ծածկվում էր չրջակայքը, Գուրգենի պապը՝ Ոհան ապերը, գնում էր մոտակա վանքի ընդարձակ բակը, նստում մարմարե գերեզմանաքարերից մեկի վրա:

Ցերը Գուրգենը դեռ շատ փոքր էր, միշտ ուղեկցում էր Ոհան պապին, նստում էր նրա կողքին գերեզմանաքարի վրա և դիտում սավերախիտ չրջակայքը: Այնտեղ ամեն ինչ այնպես տխուր էր, այնպես խորհրդավոր... Իրար կողքի կառուցված յեկեղեցիները, մեկը մյուսից խոշոր ու հաղթահասակ, իրենց դարչ, խունացած տեսքով նման էին մռայլ ուրվականների: Խորհրդավոր լռության մեջ ապրում էր իր ուրախնամյա պապը: Ի՞նչ էին մրմնջում արդյոք նրա շրթունքները և ինչո՞ւ համար էին դողդողում նրա ձեռները: Ցերեխան չդիտեր, և հարկ էլ, և ինչ-վոր սարսուռով ու անորոշ վախով լցվում էր նրա հոգին...

Բայց նա ձանձրանում էր այնտեղ յերկար նստելուց այդ սև պատերի և խաչարձանների մեջ: Ամեն ինչ մռայլ և տխուր էր այնտեղ. գերեզմանաքարերն ուրվականների պես մութ աչքերով նայում էին ամեն կողմից...

Ցեվ հաճախ նա ասում էր պապին.

— Պապի՛, գնանք տուն, ուշ է արդեն:

— Թո՛ղ մի քիչ էլ աղոթեմ, բալա ջան,— պատասխանում էր Ոհան ապերը՝ թոռան դանդրահեր գլուխը չոյելով:

— Գնանք, պապի ջան, հոտեղ շատ տխուր է, մեռելներից հետ ի՞նչ գործ ունես, թող նրանք հանգիստ մնան իրենց տեղը: Վե՛ր կաց, պապի ջան,— պնդում էր Գուրգենը և պինդ քաշում Ոհան ապոր թևից:

Պապը որորում էր ձյունահեր գլուխը և դողդոջուն վոտներով հետևում Գուրգենին: Ցերը նրանք դուրս էին գալիս վանքի տխուր չրջանակից, կարծես մի թեթևություն էր իջնում Գուրգենի վրա և նրա թմրած մարմինը կրկին աշխուժանում, կայտառանում էր: Նրա հոգուց չքանում էին թախիծն ու տրրտմությունը և նա լցվում էր մանկական կենսուրախ հույսերով:

— Պապի ջան, էլ չգնանք եղ մեռելատունը: Ենտեղ շատ տխուր է:

Ոհան ապերը զգում էր թոռան ներքին ապրումները և վոչինչ չէր ասում:

Գյուղում ամենքն էլ կամաց-կամաց յերեսը չրջում էին այդ

հինավուրց վանքից և հեռվհեռու նվագում էր աղոթողների թիվը: Գյուղում կյանքն արագորեն փոխվում էր, վերանում էին հին ադաթները, խորտ չքանում հնադարյան որենքները, փոխվում էին մարդիկ, նրանց պարելակերպն ու փոխհարաբերությունները: Այդ տեսնում և զղում էր Ծերունին ու չէր դադմանում, վոր Թոռը ճանճրանում է յեկեղեցու բակում յերկար նստելուց:

Ոհան ապերն այդ բանը հասկանում էր և այնուհետև էլ չէր թախանձում, վոր Թոռն ուղեկցի իրեն: Այլևս մենակ էր այցելում վանքը: Հետո կամաց-կամաց ինքն էլ դադարեց գնալ այնտեղ...

Առաջվա աշխուժությամբ Ծերունին այլևս չէր պատմում և նույնիսկ զգուշանում էր խոսել վանքի, նրա անցյալի, գյուղի հին կյանքի և անց ու դարձի մասին: Այդ բոլորը նա համարում էր մի անհետացրբելի պատմություն Թոռների համար:

Նա տեսնում էր, թե ինչպես Թոռներն ամբողջ որը զբոսնում են և տարվել են ուսումով:

«Մենք վո՞նց անուսում մնացինք, աշխարքից բեխաբաշ: Վոնց մեր կյանքն անցավ լավար ու սխալ: Անասունի պես ապրեցինք ու մնծացանք, և մեր հոգինները մնացին մութ: Հիմի տես, ե՛, սրանք, ևս կաճնակեր երեխերը գլխք, լրագիր են կարդում: Ճանաչում են աշխարքի չարն ու բարին և առաջ են գնում իրենց ճանապարհով...»

Այսպես էր խորհրդածում Ծերունի Ոհանը քնքշությամբ նայելով գրքի ու տետրակի վրա կռացած Թոռների գլուխներին:

3.

Գյուղից վերև չղթայաձև ձգվում է ալպիական արոտավայրերով հարուստ լեռների շարքը: Այնպիսի թարմ արուտ կար այնտեղ, վոր անասուններն արածում էին անհագ ախորժակով:

Իսկ կանաչների վրա նստած Ցեղոն ու Գուրգենը հանգըստանում էին ու զրուցում միմյանց հետ:

Գառան մորթուց պատրաստած վահանը դրված էր Ցեղոն աչքերով, կարճլիկ մարդ էր Ցեղոն: Մաչված արխալուղ ուներ հագին, իսկ չալվարի ծայրերը հավաքել էր բրդե դուլպանների մեջ: Տրեխ էր հագնում և, յերբ նստում էր հանգստանալու, քանդում, թուլացնում էր նրա կապերը, վորպեսզի մի պահ դինջանան վոտները: Հաճախ չվի յեր ածում, կլկլացնելով այս կամ այն յերգը: Շվի ածելիս խորհրդավոր արտահայտություն էր առանում նրա դեմքը, իսկ աչքերը փայլփլում էին վախվախ առկից: Նրա շվին մեղմորեն յերգում էր լեռնցու մելամաղձոտ մեղեդիներ: Ինչ հետու, խոտերի վրա պառկած՝ Գուրգենը մեծ հետաքրքրությամբ ականջ էր դնում այդ թախծալի յերգերին և ընկնում անուշ յերազների գիրկը: Հետո ինքն էլ սովորեց շվի ածելը և կլկլացնել հովվական յերգեր:

Գուրգենին առանձնապես հետաքրքրում էին այն պատմությունները, վոր պատմում էր Ցեղոն: Հիանալի պրոյցներ էր Ցեղոն: Նա մոտ հիսուն տարեկան, թխադեմ մարդ էր: Ցերեկին ու ծնոտին առատորեն բուսած մազերն ավելի էին մռայլում նրա դեմքը: Ո՞վ դիտե, քանի՛ ամիս կամ տարի այդ մազերն առանց սափրվելու համառում էին նստած մնալ այնտեղ:

Մեջքն ապառաժին տված, ձեռները ծնկներին՝ Ցեղոն պատմում էր յեռանդով:

Ցեթե տխուր բան էր պատմում, մի ձեռքը հենում էր յերեսին, աչքերը գարձնում կիսախուփ և պատմում էր վշվշալով, խորը թառամիչ արձակելով: Նրա պատմությունները գլխավորապես հին կյանքից էին, անցյալի վշտալի հուշերից:

Ցերեսուն տարուց ավել էր, ինչ Ցեղոն նախրապան էր գյուղում: Լավ էր ճանաչում անասուններին և ուսումնասիրել էր նրանց զանազան առանձնահատկություններ: Ստուգ դիտեր, թե յերբ կովերը պիտի ցլան, ծնեն կամ առերջ մնան, վո՞ր կովն ինչ ցեղից է, ինչպիսի՞ ախորժակ ունի և վորքան է կաթ տալիս...

Ցեղոյին լավ հայտնի էին իրենց գյուղի հին կյանքն ու անցուդարձը: Նա սիրով էր այդ բոլորը Գուրգենին պատմում:

— Մեր գեղի արտերի և արոտների մեծ մասը վանքին էր պատկանում: Ամենալավ ցորենն ու խոտը վանքինն էին: Այնտեղ բուն դրած մի քանի սևազգեստ վարդապետներ և աբեղաներ կառավարում էին վանքի կալվածները և լեն ու բոլ ապրում, վայելում էին կյանքը: Վորքան հող էր մշակվում, կով ու վոչխար էր կթվում, ցորեն, պանիր ու յուղ ստացվում— չափ ու սահման չկար: Վանքի հողերի վրա բանում էր մեր խեղճ գյուղացին, մալ-տավար էր պահում, պահպանում և փոխարենն

ատանում չնչին վարձ: Մեր վանքում շատ տարիներ առաջ մի վանահայր կար, Գեղամ վարդապետը, որը վանքի մեծն եր, վանահայրը: Նա մի բարձրահասակ, լայնաթիկունք, սև ու խիտ կար մորուքով ամրակազմ մարդ եր: Նրա ձենն ենքան ուժեղ եր, որ թնդում եր վանքում, յերբ նա յերդում եր պատարագին: Եղ ձենից վախում, զարդանդում եյին բոլորը: Մեր գեղացիք մանավանդ շատ եյին վախում նրանից: Ում ասես չի բանեցրել, չի տանջել ու տրորել եղ տնաքանդը: Նրա մոտ միշտ անպակաս եյին հյուրերը, չորջանից թե քաղաքից: Իսկ պրիստավն ու քյոխվեն միշտ անպակաս եյին նրա սեղանից: Դրա համար էլ պրիստավը քամակ եր անում և Գեղամ վարդապետի խոսքը կտրուն եր: Ինչ ուզեր՝ կաներ: Ում ուխը որ նրան դուր չեր գալիս, վայ նրա որին, տատանի բաժին եր դառնում, վոտով-ղլխով կորչում: Ի՞նչ տանջանք ասես մեր աղամարդիկն ու կնանիքը չտեսան նրա ձեռքից:

Հենց քո պապը, Ոհան ապերը, նրա մոտ ռանչպար եր, որն իքուն բանում եր և մի կտոր հացի կարոտ մնում: Եղպես անքուն եր քո պապն են անատավածի ճանկում: Ցես էլ վանքի նախրապան եմ յեղել եղ տնաքանդի ժամանակը: Մի անգամ քնած եյի, թե ինչ, տարում գելերը վրա տվին և յերեք հորթ վախցրին ու կերան: Հոդիս դուրս յեկավ, մինչև որ ազատվեցի եղ անատավածի ձեռքից: Մի թունդ բղավեց վրես, ճիպոտով դաղեց մարմինս, հայհոյեց և յերկու ամիս վարձ չտվեց: Աչխատածս բոնեց գելերի ուխն ընկած հորթերի տեղակ...Իսկ յես քաղցից չդիտեյի ինչ անել, մաշվեցի, երեխեքս էլ հալից ընկան... Գլուխս առի ու փախա քաղաք, մշակություն սրի, որ հացի փող ճարեմ, ուղարկեմ յերեխաներիս—սովից չկտտորվեն: Քաղաքում յերկար չարչարվեցի՝ մեջքս ծուռ, ձեռքս կարճ, աչքս ջուր դառած: Գլուխ դնելու տեղ չունեյի: Սրա ու նրա չեմքին եյի: Կնկաս ու երեխոցս կարոտն էլ մաշում եր սիրտս: Եղպես երվեցի-խորովվեցի, մինչև որ աչխարքի կարգը փոխվեց: Են ժամանակը, ախպեր ջան, թե դյուղում ազա կար, թե քաղքում, թե հատեղ եր վիզդ ծուռ, թե՝ հնաեղ: Հատեղ էլ մեջքդ փալան եր դարձել, հնաեղ էլ...Յերկու տեղն էլ կրակ ու բոց դցել ջանդ վառում եյին, խորովում: Հենց որ քաղաքը վորը թախթիցն ընկավ, որենքները փոխվեցին, մեր վանքի կարգն էլ փոխվեց: Եղ անորեն Գեղամ վարդապետը մի դիչեր

փախավ: Ասում եյին, թե հնկա չորով ե փախել... Ո՞ւր ե դնացել, որ ծակը մտել, չիմացանք, ախպեր: Ատամ կըրճըտացնողները շատ կային, գալված սրտերը շատ, ուզում եյին նրա հախիցը դան, արդար դատաստանը տեսնեն: Մեկն էլ նրանցից՝ յես: Ցեթե ձեռքս ընկներ, պոպոզը դլխին պատառ-պատառ կանեյի, իսկ մորուքը թել-թել կպոկեյի: Բայց ի՞նչ արած, ձեռքիցս թռավ: Հիմի վո՞րտեղ ե, ով դիտե, իղն ու թողն խպատ չկա, կորել ե: Վանքի հողը մնաց դյուղացոց: Վարդապետները ցիր ու ցան յեղան, մեծ մասը նրանցից հոդի տակ մտավ և վանքը մնաց անտեր, մենակ... Հիմի նա դառել ե հին պատմություն: Վորպես հնություն էլ պահում են նրան, ձեռք չեն տալիս: Իսկ դյուղացին էլ չի հիշում նրան: Ցեթե հիշում ե, անիծում ե իր սև անցյալը, իր ծանր ղրկանքները... Եսպիսի բաներ...

Վերջացնելով իր պատմությունը՝ նախրապան Ցեղոն վեր յելավ ու վաղեց դեպի քարաժայռի Թիկունքը, վորտեղ կովերից մեկն իջել եր ու չիոթվել-մնացել կիսաճամբին: Իսկ ճանապարհն այնտեղ այնքան քարքարոտ եր ու թեք, որ յեթե կովը ոտքաթաքեր, կղահավիժեր անդնդախոր ձորը: Ցեղոն ու Գուրդենը մեծ դժվարությամբ կարողացան ճամբամոլոր կովը բարձրացնել վերեվ: Խեղճ անասունը վինչում եր հեվասպառ:

— Եսպես բան շատ քիչ ե պատահում: Կովերն ենքան էլ հիմար չեն, վորքան մենք կարծում ենք: Նրանք լավ դիտեն իրենց ճամբան: Աչխատում են չբաժանվել իրենց խմբից, վորպեսզի յետ չմնան կամ չկորցնեն ճամբան: Վորքան տանջվում ե հիվանդ կովը, յերբ ստիպված ե լինում նախրից յետ ընկնել: Նա ննջես ե անքում, թառանչում, իսկ աչքերից թափվում են արցունքները: Վատնդի դեպքում, գելի կամ ուրիշ դաղանի հարձակման ժամանակ, նրանք խիստ իրար ձեն են տալիս, հավաքվում են մի տեղ, դլուխներն առաջ են պահում, իսկ յետևը դարձնում են մեմյանց և պոդերը պատրաստած սպասում են մինչև վոր վատնդն անցնի: Նրանք ճանաչում են իրար, մտերմանում են, բարեկամանում: Ջուր խմելիս անգամ, յերբ սատկիկ ծարավ են լինում, մեմյանց դիջում են, չեն խանդարում: Նրանք ճանաչում են առարկաները, տեղերը, դիտեն իրենց տան ճամբան և վորտեղ պետք է դիչերեն: Նրանք ավելի հանդիստ են դդում իրենց և ավելի առատ կաթ տալիս, յեթե սիրոլ ծանոթ ձեռքն է փայփայում ուկթում: Եսպիսի բաներ...

Գուրգենը պառկել էր խոտերի վրա, հայացքը կապուտակ յերկնքին: Նրա կոպերը կամաց-կամաց ծանրացան, և նա քնեց: Իսկ լեռներից փչող զովաշունչ զեփյուռը մեղմորեն շոյում էր նրա դեմքը:

Յերեկոյան, յերբ նախիրը վերադարձավ գյուղը, պատանին ուշադիր նայեց պատի տակ նստած Ոհան պապին և ասաց.

— Պապի ջան, են անհոգի Գեղամ վարպետը քեզ էլ էր տանջո՞ւմ...

Պապը զարմացած նայեց Գուրգենին և պատասխանեց.

— Եղ ո՞վ քեզ պատմեց, բալա ջան: Եղ խոմ չատ վաղուց-վա պատմություն է:

— Էլ ինչի՞ էյիք վանք գնում և աղոթք անում, յերբ նա անիծվածները տանջում, չարչարում էյին քեզ և քեզ նման խեղճ մարդկանց: Ինչո՞ւ,—բացականչեց Թոռը և համառորեն սպասեց պատասխանի:

Բայց պատասխան չստացվեց: Պապն ընկավ խոր մտքերի մեջ, վերհիշեց տխուր անցյալը և մոայլվեց: Նա չկարողացավ պատասխանել: Զարհուրելի Թոռը նրան կպցրել էր պատին...

Հետևյալ որը, յերբ Թոռները գնացք ու լրագիր էյին կարդում, Ոհան պապը նստեց նրանց կողքին, սպասակամազ գլուխը խոնարհեց և մեղմ ձայնով ասաց.

— Ա՛յ անուշ բալիք, ձեր կանաչ աբևին մատաղ, չի լինի, վոր ինձ էլ գրել-կարդալ սովրեցնեք: Յես կարողանամ սևն ասլիտակից ջոկել և իմանալ աշխարքի բանը: Ա՛յ ձեղ մատաղ...

Թոռները զարմանքով նայեցին իրենց ալեվոր պապին և ուրախությունից ժպտացին: Նրանցից մեկը, տասներեքամյա Թհահեր, խոհուն աչքերով Անուշը նստեց պապի կողքին և սկսեց այբուբենը ցույց տալ նրան:

Յեվ այնուհետև ամեն որ Անուշը նստում էր Ոհան պապի կողքին և գիր էր սովրեցնում: Ոհան պապը չարժում էր իր անատամ բերանը, զողդոջուն մատը դնում տառերի վրա և կարդում էր: Կարդում էր այնպես դանդաղ, ինչպես քարքարոտ հողը հերկող դուքանը:

Յեվ որերը սահում էյին այդպես: Ոհան պապը ժամ դնալու և աղոթելու փոխարեն այբուբեն էր սովորում և գրատախտակ դառնում...

Յերբ Գուրգենն ավելի մեծացավ, ավելի հաճախ էր իջնում ձորը և այցելում պղնձաձուլման գործարանները: Նա տեսնում էր, թե ինչպես Ալավերդին արագորեն փոխվում է, նոր-նոր չինքեր էյին կառուցվում, մեկը մյուսից մեծ, գեղեցիկ չինքեր:

Նա ժամերով կանգնում էր հնոցի դիմաց և դիտում այնտեղ բոցավառված հսկայական կրակը: Այդ կրակը նրան գրավում էր, քաշում դեպի իրեն...

Նա այնքան էր տարվում այդ կրակով և նրա չուրջը յեռացող աշխատանքով, վոր կարծես ինչ-վոր բան մեխում էր նրան այնտեղ և չէր թողնում, վոր հեռանա:

Իրիկնապահին, յերբ նա բարձրանում էր քարաժայռի գագաթը, կարծես թե վոտները դժկամակում էյին, դժվարանում առաջ չարժվել:

— Հայրիկ ջան, յես ուզում եմ աշխատել պղնձարդյունաբերության մեջ: Ծանոթներ չատ ունես, միջնորդիր, թող ինձ մի գործ տան այնտեղ,—ասաց մի անգամ Գուրգենը:

Հայրն ուշադրությամբ նայեց վորդուն և պատասխանեց.

— Ի՞նչ գործ ունես են ծխի ու մխի մեջ: Ամառը չոր, ոդը՝ կանգնած: Ջո գործն ավելի լավ է, ավելի հանգիստ, տավարի հետ, սարի մաքուր ոդում քեզ համար հանգիստ ման կեկ: Ջմեռն էլ ազատ ես,—պատասխանեց հայրը՝ ուղեպատ Սարգիսը:

Այս խոսակցությունը տեղի ունեցավ յերկաթգծի մոտ, յերբ հայրը բահով խճերից և ավելորդ իրերից մաքրում էր գծերի արանքը:

— Ջե, հայրիկ ջան, յես ուզում եմ մտնել արտադրության մեջ և լավ աշխատել: Հետո ինձ կուղարկեն ուսումի և կամաց-կամաց առաջ կգնամ ու մի մարդ էլ յես կդառնամ,— պնդեց Գուրգենը

Հայրը զիջեց վորդու խնդրանքին և նրա հետ միասին գնացին պղնձարդյունաբերության գրասենյակը: Նա այնտեղ կարող էր վորդուն համապատասխան գործ ճարել: Այդպես էլ յեղավ:

Գուրգենը աշխատանք ստացավ և դարձավ կրտսեր հնոցավար:

Այն հնոցավարը, վորի ղեկավարության տակ աշխատում

եր Գուրգենը, յերկար տարինների փորձ ուներ և համակրանքով եր վերաբերվում պատանուն:

— Ա՛յ, թե ինչ հրաշքներ և դործում կրակը,— ասում եր նա ուշադրությամբ հետևելով վառվող կրակի ընթացքին, հաճախ ստուգելով ջերմաստիճանը: Նա սովորեցնում եր Գուրգենին, թե ի՛նչ աստիճան ջերմության մեջ և այրվում պղնձաքարը և հալվում, հեղուկ դառնում:

Իսկ կրակի հրեղեն լեզվակի նմանող այդ հեղուկը հոսում եր հրակայուն հողից կառուցված խողովակների միջով և թափվում հատուկ ավազանների մեջ՝ տարբալուծվելու համար: Ծանծաքմբային, կրային և ուրիշ նյութերից աղտոտված պղնձահեղուկը սառչում եր, ամրապնդվում:

Պատանին հենց սկզբից սիրեց այն բոցավառ կրակը, որ հրեղեն աչքերով յերևում եր չրջափակված հնոցի փոքրիկ լուսամուտներից: Նա սիրեց կրակի հնչյունը և վայրենի հոնդյունը:

Ցեվ նա աշխատում եր համառ, ոչնում հնոցավարին, կրակին ընթացք տալիս և հետևում աստիճանացույցին: Ճաշում եր բանվորական ճաշարանում, իսկ դործից հետո բարձրանում քաթաժարի ճանապարհով: Գնում եր տուն, վորպեսզի հետևյալ առավոտ լուսաբացին դարձյալ իշնի կրակի մոտ...

5.

Ցերեք տարի հետո Գուրգենին ուղարկեցին տեխնիկական կուրսեր, վորպեսզի ավելի վորակավորվի: Մայրաքաղաքում յերկու տարի Գուրգենը սովորեց այդ կուրսերում: Նա վերադարձավ արդեն կատարյալ յերիտասարդ, վերին չրմունքը սևացած, մազերը դեմքին խնամքով սանրած, նոր և ավելի լավ շորեր հագած, վորոնք նրան վայելուչ տեսք եյին տալիս:

Նա այժմ աշխատում եր պղնձաարդյունաբերության մեջ վորպես տեխնիկ, վորպես կրասեր մասնագետ: Նորակառույց բնակարանների հարկերից մեկում նրան սենյակ ավին, վորի յերկու խոշոր լուսամուտները նայում եյին ձորի խշխշացող դետակի վրա:

Հետդհետ Գուրգենը կարդի բերեց և կահավորեց իր սենյակը: Այնտեղ արդեն յերկաթյա մահճակալ կար, հանդստանալու համար՝ առանձին թախտ, սեղանի չուրջը դեղեցիկ աթոռներ կային, իսկ անկյունում դրված եր պահարանը:

Գուրգենը կարողանում եր ոգնել նաև իր ծնողներին: Հայրը, Սարգիս ապերը, հաճախ եր գալիս նրա մոտ հանդստանալու կամ դիշերելու: Գյուղից իջնում եյին նաև ընտանիքի մյուս անդամները՝ մայրը, քույրերը:

Սակայն նա առանձնապես ուրախացավ, յերբ դողդոջուն վոտներով և ձեռնափայտի ոգնությամբ քարաժայռից ներքև իջավ Ոհան պապը և այցելեց իրեն:

Սիմոի ծայրին նստած և գավազանին հենված՝ Ոհան պապն ապշած չուրջն եր նայում: Նրան զարմացնում եր իր թոռի տեղածած վայելուչ կյանքը:

— Հը՛, պապի ջան, սենյակս հավանում ե՞ս,—հարցրեց Գուրգենը:

— Շատ լավն է, հալալ լինի քեզ,— պատասխանեց Ոհան պապը հիացմունքով:

Յերբ պապը բավական հանդստացավ, նախաճաշեց, Գուրգենը նրան տարավ պղնձաձուլման դործարանները ցույց տալու: Այդ որը Գուրգենն ազատ եր և կարող եր ամբողջովին նվիրվել իր սիրելի պապին:

Ոհան պապը մեծ հիացմունքով և ուշադրությամբ դիտեց պղնձաձուլման դործարանները, նորակառույց հնոցը: Ցերբ նա հետաքրքրությամբ դիտում եր հսկայական հնոցի մեջ վառվող կրակը, նրա դեմքը բացվեց և աչքերի մեջ վայելեց խնդության ժպիտը...

— Հ՛ը, պապի ջան, տեսնո՞ւմ ես ինչպես է վառվում կրակը, այրվում, հալվում և պղինձը, չարժվում, ադմկում և կյանք: Տեսնո՞ւմ ես: Սա իսկի կենդանի՞ մեր մոտալ ու տխուր վանքին, նրա լուռ ու անկյանք չրջակայքին,—ասաց Գուրգենը յեռանդով:

— Դրուստ է, ախպեր: Հենց ես է, վոր կա կյանքը, վոր եռվում, վառվում, ստեղծվում է: Ցես էլ վանք չեմ դնում, բալա ջան: Դրա համար էլ յեկա ետսեղ քեզ մոտ, վորպեսզի նոր կյանք ու աշխատանք տեսնեմ և փառք ու յերանի տամ ձեզ, վոր ստեղծում եք ես փառավոր աշխարքը...

———

ՅԵՐՋԱՆԻԿ ՂԱՀՐԱՄԱՆԸ

Ղահրամանին այնքան էլ հեշտ չէր պահել իր բազմանդամ ընտանիքը: Հանաք բան չէր հագցնել ու կերակրել ութ հոգուց բաղկացած ընտանիքը, բոլորն էլ ուտող, մեկը մյուսից աշխատող ձեռք:

Անցյալում Թավաղի ճանկից հալումաշ յեղած մենդրելական մայրենի դյուղը սակավահող էր, չէր կարող իր բնակիչներին լինչպես հարկն է կերակրել: Ղահրամանն անեծքով էր հիշում անհետ գնացած սև որերը: Նա դեռ չէր մոռացել իր մեջքն այրող Թավաղի ճիպոտը և ամեն տարի մղձավանջի պես նրա ուռերը ճմռող կոռն ու բեղյարը...

Գյուղացիք նոր էլին աչք բացել և աշխատում էին բարվոքել իրենց կյանքը: Գյուղի ծայրին գտնվող Ղահրամանի տնակին իր անշուք տեսքով, խունացած կտուրով, փոքրիկ մութ յուսամուտներով արդեն մատնանշում էր պետեղ ապրողների կյանքի սղությունը:

Ղահրամանը վեց յերեխա ուներ՝ յերկու տղա, չորս աղջիկ: Մեկը մյուսի հետևից շարել էր և «բախտը» հանձնել իր ամուր կռներին...Անչափ սիրում էր նա յերեխաներին, վորոնք իրենց ուրախ կանչերով ու աղմուկով աշխուժացնում էին նրա փոքրիկ, անշուք տունը: Կինը՝ Մարթան, շատ խոնարհ էր: Մարդն ու կինը հենց իրար պահել էին և շատ հարմար էին մեկմյանց: Յերկուսն էլ սուս ու փուս, բանող-գործող: Մեկը դուրսը, մյուսը՝ ներսը: Իսկ ներսի ընտանիքի գործերը կարծում էք քի՞չ են: Հազար մենակ վեց յերեխա պահի, մեծացրու, տունը մաքրի, հալաքի, կերակուր յեփի, շոր կարի, կարկատի, կով կթի, կթակրի... Ի՛նչ խոսնաս, հազար ու մի բան: Ցեվ Մարթան միշտ պարզերես դուրս էր գալիս այդ հոգսերից: Ինչպես ասում են՝ ձեռքը գիպուկ էր, ուր կպչեր— կկանաչեր, հասնում էր ամեն գործի:

Յերեխաներից մեծերն աղջիկ էին՝ Մարուսյա, Թինա, Նինա... Մարուսյան արդեն գլորել էր տասնվեց գարուն և հասնում էր պայծառատես խնձորի պես: Աղջիկները սովորում էին դպրոցում և լավ էին սովորում: Այսպես կյանքն առաջ էր ընթանում և Ղահրամանին ներշնչում էր ավելի բարեկեցիկ կյանք ստեղծել:

Տունը նեղվածք էր: Փոքրիկ սենյակը չէր բավարարում հետզհետե բազմացող ընտանիքին: Յերեխաները մեծանում էին, իսկ նրանց պահանջները կրկնապատկվում: Պետք էր ընդառաջ գնալ չարունակ աճող այդ պահանջներին: Հե՞շտ է ասել՝ ընդառաջ գնալ... Բայց ի՞նչպես: Գյուղը սակավահող, բնությունն աղքատ: Հողերի մեծ մասը ճղվում էր ժայռոտ բլուրներն ի վեր և քիչ էր բերք տալիս:

Այս խնդիրներով էր մտահոգված Ղահրամանը, յերբ նրան մի չարք գյուղացիների հետ հրավիրեցին շրջխորհուրդ և առաջարկեցին տեղափոխվել Կոլխիդա...

Պետությունը նրանց խոստանում էր ընդարձակ հողամաս, ձրի շինանյութ՝ նոր, լավ տուն կառուցելու համար, և ուրիշ հարմարություններ:

Հիանալի հեռանկարներ...

Սակայն միանգամից դժվար էր վճռել այդ հարցը: Հե՞շտ բան է լքել տուն ու տեղը, ընտանիքը վերցնել ու գնալ ինչ-վոր անծանոթ, ամայի տեղ:

Ղահրամանը մի քանի անգամ գործով գնացել էր Փոթի և Ճանապարհին տեսել էր Կոլխիդայի լայնածավալ ճահիճները, նրանց տխուր ու մռայլ տեսքը, ամայությունը...

***

Մեծ իրարանցում ընկավ տանը, յերբ Ղահրամանը հայտնեց Կոլխիդա տեղափոխվելու մասին:

Մարթան վճռականապես արտահայտվեց այդ առաջարկի դեմ:

— Ինչ խելքս չե՞մ կորցրել, որ յերեխաներիս վերցնեմ ու գնամ եղ անտեր տեղը, ծանոթներից, բարեկամներից, աչքից ու մտքից հեռու,—հայտարարեց նա ղեպչացած:

— Այնտեղ նոր, ընդարձակ ու գեղեցիկ տուն կկառուցենք մեզ համար: Այդի կանկենք, բանջարանոց կմշակենք և ավելի լավ ապրուստ կստեղծենք,— համոզում էր Ղահրամանը:

Բայց Մարթան վոչ մի կերպ չէր համոզվում:

Ղահրամանն ականջ չդրեց կնոջ բողոքներին և հանգստյան ոչխարը գնաց իրենց հատկացված նոր հողամասը տեսնելու: Նրա հետ գնաց նաև Մարթան: Յերբ նրանք լքյան փոթիի և ճալաղիդու միջեվ ընկած կիսակայանը, չրջակայքի ամայի ու մռայլ պատկերը ճնշող ազդեցություն թողնց նրանց վրա:

— Յես եստեղ չեմ դա, յերեխաներիս ես սարսափելի տեղը չեմ բերի,— հայտարարեց Մարթան վճռական, և ծանր տպավորություններով վերադարձան տուն:

Սակայն Ղահրամանը հաստատ առաջ տարավ իր վորոշումը, յերբ լմացավ, վոր ուրիշ ընտանիքները արդեն պատրաստվում են տեղափոխվել Կոլխիդա: Յեռանդով համոզում էր Մարթային: Յերկար և սուր վիճեցին: Դեռ յերբեք նրանց ընտանիքում այդքան դժգոհություն ու դժտություն չէր յեղել: Միշտ նրանք համերաշխ ու խաղաղ էին ապրել, զրկանքի ու նեղության ամենածանր րոպեին անգամ:

Նրանց ամուսնական քաղցրությունն ու ներդաշնակությունը յերբեք չէր խախտվել:

Մարթան ամուսնուն չատ համոզեց, վոր թողնի այդ սրիկա-ծալի մխոքը, վորի հեռանկարները խիստ մշուշապատ ու վտանգավոր էին թվում նրան:

Դրա համար էլ նա սաստիկ տխրել էր և չարունակ հառաչում էր:

— Այ մարդ, դու պիտի քայքայես, խորտակես մեր կյանքը, ընտանիքը,— դանդաղվում էր նա արտասուքն աչքերին:

Բայց Ղահրամանը չլսեց նրան և մենակ գնաց Կոլխիդա...

***

Հսկայական դեղին ժապավենի պես սահում են Ռիոնի ջրերը: Մեղմահոս ու խաղաղ են նրանք, չրջակայքի նման անդորրը

ու միապաղաղ: Ջեն աղմկում, չեն չաղաղում, վոչ մի հոգս չունեն կարծես: Ինչ-վոր բանից հմայված՝ քարացել-մնացել են նույն վայրում:

Կարծես նրանք միտք են անում, խո՛րը, անլուծելի միտք...

Յերբեմն-յերբեմն կնճռոտվում է նրանց դեմքը, փոքրիկ ալյակներ են զոյանում այնտեղ: Գուցե ծովից սուրացող զեփյուռն է վրդովում նրանց հանդիստը: Իսկ ծովն այնքան էլ հեռու չէ: Հրեն, հորիզոնի վրա նշմարվում է նրա կապտամոխրագույն ուրվագիծը:

Գետի և ծովի արանքում ընկած ճահճահարթի վրա բավական տարածությամբ խճուղի չեն կառուցել: Նրա յերկու կողմից մեծ ու փոքր ջրանցքներ են ձգվում, վորոնց միջից հոսում է ճահիճների պղտոր ու տղմոտ ջուրը: Շատով յամաքեցնում են ճահիճները:

Ահա այդ վայրում, դեռ թաց հողաշերտի վրա յերեվաց մի բարձրահասակ մարդ, ղլխին կարմիր թաշկինակ փաթաթած, չալվարի ծայրերը մոխրագույն գուլպաների մեջ ամփոփած, սեվ ու թավ բեխերով, թուխ դեմքով, խոշոր, արտահայտիչ աչքերով:

Նա չտապով հասա ցցեր էր ամրացնում թաց հողի մեջ և դեռնի յերեսին ինչ վոր պայմանական նշաններ էր ակոսում:

Ահա բեռնատար ավտոն խճուղու վրա հռնդաց և հեվհեվով յեկավ կանգնեց չատ մոտիկ: Ավտոն բեռնված էր բազմաթիվ գերաններով ու տախտակներով:

Կարմիր թաշկինակը ղլխին մարդն առաջ վազեց:

— Ես քեզ համար ենք բերել, Ղահրաման, վոր քեզ համար նոր տուն կառուցես,—բացականչեցին ավտոյից նեղքեվ ցատկող վարպետները:

— Ա՛յ, Ջան, թող մի չտա վառ մնա ձեր անուշ արեվը, գենացվալե,—պատասխանեց Ղահրամանը մեծ վոգեվորությամբ և վարպետների հետ միասին բեռնաթափեց ավտոն:

Շուտով չրջապատի համատարած խաղաղության մեջ լսվեցին ուրագի և սղոցի ճայներն ու կառուցող վարպետների զվարթ յերգերը:

Արագորեն կառուցվում էր Ղահրամանի տախտակաչեն տունը:

***

— Ես լինչ լավ տուն եմ կառուցել, այ մարդ,—բացականչեց Մարթան, յերբ մի քանի ամսից հետո Ղահրամանն իր ընտանիքը տեղափոխեց իր նոր տունը:

Ամուսնու բացակայության ժամանակ կինը բավական կտաքրվել եր: Բացի այդ, ուրախ լուրեր եյին գալիս Կալխիդայի արագ չինարարության և ճահիճների չորացման մասին: Մանավանդ, վոր ամուսինն ամենավառ դույներով նկարագրեց իրենց նոր տունը, հետզհետե բարեկարգվող շրջակայքը, բուսականության արագ աճը:

Ցերեկ սենյակից եր բաղկացած նրա տունը՝ լուսավոր, ընդարձակ, խոշոր լուսամուտներով, մաքուր... Տան առաջ, գեպի խճուղին բացվում եր ընդարձակ պատշգամբը: Շենքը նստել եր ութ հաստարուն հենակների վրա, վորոնք իրրեվ հիմք եյին ծառայում նրան:

Ցերեխաներն ուրախ-ուրախ վազվզում եյին մեկ սենյակից մյուսը և ցնծագին ձայներով լցրել եյին տունը:

Գյուղի իր փոքրիկ տունը վաճառելով—Ղահրամանը անային իրեր և կահկարասիք գնեց, նրա սենյակները կոկիկ ու հաճելի տեսք ստացան: Առաջին սենյակում, ընդունարանում դրված եյին նոր աթոռներ, ճաշասեղան, պահարան, ծաղիկների թաղարներ: Մյուս սենյակներում յերկաթյա մահճակալներն եյին մաքուր անկողիններով: Լուսամուտներին նուրբ ասեղնագործվածք վարագույրներ յերևացին:

— Հիմի իմ տունը լայն և իմ սրտի պես,—ասում եր Ղահրամանը ժպտալով և խանդաղատանքով վայելում, համբուրում եր յերեխաներին:

***

Վեց տարի հետո...

Ղահրամանի բարեկամներից մեկը, Աբչիլ Թեվզաձեն, մի որ վորոշեց այցելել նրան:

Նա վաղուց եր յեղել Կալխիդայում և ախուր ապավորություններով հեռացել այնտեղից:

Աչքերին չեր հավատում Թեվզանձեն, զարմանքով չորս կողմն եր նայում ապահորեն: Ի՜նչ հսկայական փոփոխություններ,

ծուլորեն ընթացող Ռիոնի այս ափամերձում: Վորքա՜ն նոր տներ, ճաշուղիներ, կուլտուրական ոջախներ, իսկ տների չուրջը՝ բազմաթիվ այգիներ, վորոնք իրենց կանաչ ցանցով ծածկել են չրջակայքը:

Ու յերազ եր թվում Թեվզաձեյին, թե վոնց տղմոտ ու ճահճոտ այս խուլ վայրերն այսքան շուտ կերպարանափոխվեցին:

Կանաչազեղ այգիներով ու բանջարանոցով եր չրջապատված իր բարեկամ Ղահրամանի տունը: Փոքրիկ ծառերի վրա ժպտում եյին անուշահոտ նարինջն ու պայծառատես կիտրոնը:

—Այ դու բարո՛վ, հազա՛ր բարով յեկար, լի՛մ սիրելի Աբչիլ: Եղ վո՞ր քամին քեզ բերեց մեր կողմերը: Կարոտել եյի քեզ,— բացականչեց պատշգամբում կանգնած Ղահրամանը, ուրախությամբ ընդառաջելով իր բարեկամին:

— Ցեկա, վոր տեսնեմ՝ վո՛նց ես ապրում, ինչպիսի՛ կյանք ես ստեղծել քեզ համար: Ով դիտի, ախպեր, դուցե յես էլ տեղափոխվեմ ես կողմերը,— պատասխանեց Աբչիլը, և նրանք պինդ համբուրվեցին:

— Աբի, ախպեր, չես փոշմանի: Կալխիդան ենպես բարերար ու բեղուն հող ունի, վոր կարծես վոսկու դանձեր կան թաղված նրա խորքերում: Տարին յերկու բերք ենք ստանում յեղիպատացրենից: Են էլ լինչ առատ բերք: Նարինջն ու մանդարինը խոտ հասնում են ու հասնում: Ուզում ես բրինձ մշակիր, թեյ, ծխախոտ ու լինչ մշակես բոլ-բոլ կստանաս...

Ղահրամանը բարեկամին թևանցուկ տարավ ընդունարան և ներկայացրեց կնոջը:

— Ես էլ մեր Մարթան, պատռվել ե կարծեմ, չե՞:

— Ցերևակայիր, վոր չե: Ընդհակառակն, ավելի յե չաղացել, թարմացել,— պատասխանեց Աբչիլը սեղմելով Մարթայի ձեռքը:

— Եղ լավ ասացիր, ախպեր: Սրանից հետո էլ ավելի պիտի սիրեմ ու պատվեմ Մարթային,—բացականչեց Ղահրամանը, ժպլիսը յերեսին նայելով կնոջը:

— Ելի են խելառն ես,—պատասխանեց Մարթան մեղմ բոթելով ամուսնուն:

Աբչիլը ծիծաղեց ուրախ և հարցրեց.

— Հիմա քանի՞ յերեխա ունես, Ղահրաման:

— Վեցն են դլխից ունեյինք: Յերկու տղա ել Կոլխիդան պարգևեց... Շեն մնա թող ու միչա եսպես կանաչի, ծաղկի մեջ յերկիրը: Յեթե ելի ունենամ, չաս գոհ կլինեմ: Արդեն տեղը բացվում է: Մեծ աղջիկս մարդու գնաց և ապրում է մեր դեմ առ դեմը: Մյուս աղջիկս ել շուտով կամուսնանա մեր դպրոցի ուսուցչի հետ: Մեծ տղես սովորում է Փոթիի մանկավարժական տեխնիկումում: Մյուսները դեռ փոքր են, ուսում են ու կարդում: Իսկ յես ու կնիկս մեջք-մեջքի տված բանում-դասում ենք ու պահում նրանց: Կոլխիդան մեզ միչա պարգևներս կպահի: Հը՛, ինչ ես ասում, Աբչի՛լ...

Աբչիլը բառեր չեր գտնում իր հիացմունքն արտահայտելու:

ՆԱԽՇՈՒՆ

Լեռնաղաչաի վրա պայծառորեն իջնում է գարունը: Արևի յերմ շողերի տակ հողը բերկրում է, նրա կուծքում բարախում է կյանքը կենսալից: Լեռան բարձունքներն իվեր ձգվող ձյունի չերտերն արագորեն հալվում են ու ջրերը, կարկաչուն ջրերը հոսում են զառիվար, դեպի ներքևում ընթացող վտակը:

Ժպտում է բնությունն այստեղ և յեռում է գարնանային կյանքը դյուղի:

Ժպտում է նաև Նախշունը, վոր Փերմայի ախոռի մեծ դուռը բացել, կանգնել է նրա չեմքին ու տաքանում է արեվի տակ: Արևի վոսկեպայծառ շողերով վողողվել է նա, խնդմնդում է հաստած խնճորի պես լուսերես նրա դեմքը: Կանաչ գլխաչոր է դցել գլխին, վորի տակ փայլփլում են նրա խոշոր սև աչքերը, իսկ մարմինը գծագրվում է իր հասակի գծերով:

Նորակառույց ընդարձակ ախոռն ել ավելի յե լուսավորվում բաց դռնից ներս ընկնող արևի ճառագայթներից: Ամբողջ ձմեռը մսուրի մոտ վորոճացող հաղթամարմին կովերը վինչում են և մեկը մյուսի հետևից գլուխները դարձրած՝ նայում են դուրս, կարծես նրանք ել են ուրախ և գարնանային գլարթ որը նրանց ձգում է դեպի իր զովաշունչ գիրկը:

— Ողորմի հորդ հոգուն, Մուշեղ, հլը աչե թե ինչդ անասունները կարոտ աչքերով դուրս կաչեն, արևին ծիկ կենեն: Կըտես թե բան մը կհասկնան ու դուրս երթալ կուզեն,— ձայնում է ախոռ վերապարձող Նախշունը:

Կովերի արանքից կովապան Մուշեղը բարձրացնում է իր ոճ գլուխը, ժպտում է, ընկուզանման դեմքին բազմաթիվ ակռաներ գոյացնելով և պատասխանում.

— Գազան է, չա՜... Գարունն ամենքին կյանք կբերե՝ ինձ-նին, հայվնին, յերկնի հավքին, ծառին ու ծաղկին: Մորմոնքն անդամ դուրս կելնե իր վորջեն և ուրախ-ուրախ կվազե հոդին վրա: Եսիկ դարնան քաղցր չունչն է, Նախշուն քույրիկ, արևուդ մատաղ, Նախշուն ես էլ Նախշուն եղ կմնաս:

— Ջա, ելի ախպե՛ր հանաքներդ. ելի են դալի-դալին ես, անդարդ ու անհոգս:

— Իսոկց տանըտխոը տարի առաջ, ճիշտ է, դարդերս չատ էյին: Ջունքի դլուխ դնելու, վոտքս յերկարելու տեղ չունեյի: Նման եյի Թախտառևան հավքի՝ անտուն ու անբուն: Մեյքոն բիձի քովը բանեյի կը, ենոր տավարը քշեյի կը արոտ: Ենոր սուլերի փշրանքներուն կաշեյի ու ջուրը բերնես կերթար կը... Հիմա լավ է, վոչ ադա կա, վոչ քյոխվա: Յերկուսն եղ դուռբաղդու յեղան: Ճակտես քրտինքովը կապրիմ, քուրս, ու հլա չուռ ըսող կամ աչքիդ վերևը հոնք ունես ըսողը չե յեղե: Հաշխվե վերցրու. ես տարի չորս հարյուր աշխոր եմ վաստակել: Հլը տես՝ ինչ արևան-Թառևան կովեր կմեծացնեմ, հլը փորներուն ա-չե, դռներուն աչե, յուղի մեջ Թաղլին՝կը, պա՛հ-պա՛հ:

Ցեվ Մուշեղը հպարտությամբ վաղաքչում է կողքին կանգ-նած չինակարմիր կովի մեջքը:

— Ցես քեզեն պակաս աշխոր ունի՞մ որ... Խոպես Թեզ տաքնաս կը ու ինքզ քեզի կղովես, Թող վոր ուրիշները քեզի դովեն: Ցես միշտ նորմաներս կատարեմ կը ու դերակատարեմ կը, բայց ինձի դովելու հետ սովորություն չունիմ,— համեստո-րեն հայտարարում է Նախշունը:

— Դուն վոր կաս, Նախշուն ես, քեզի հասնող չկա...

— Եդ քաղցր խոսքերդ ուրիշ անդամվա պահե, հիմի ժամա-նակ չունեմ...

Գառին կախված ժամացույցն աղղանշան է տալիս: Նախշու-նի բրիգադի կին-վարները՝ Մարանը, Պայծառը, Բարթողն ու Շու-շանն անցնում են կովերի արանքը, և ախոռում սկսվում է հան-դիսավոր արարողությունը: Անկյունում չարքով կանգնած նորա-ծին հորթերն անհանգստանում են: Ներանցից ամեն մեկն ախոռի ընդարձակ տարածության մեջ կարոտով փնտռում է իր մորը և բառաչում:

Նախշունը դարձյալ իր տարերքում է: Կովկիթը ձեռքին

մտնենում է Ծիրանին և մի քանի անդամ չորում նրա մարմինը: Մատուրի միջից Ծիրանը հանում է մռութը և քաղցրորեն նայում իրեն խնամող ու փայփայող կնոջը:

Նախշունը նստում է փոքրիկ աթոռակի վրա, նրա վարժ ձեռները չարժվում են վեր ու վար և դալջ հեղուկը Թըռ-Թըռ ծորում է տանկի մեջ: Ինչ ախորժելի յերաժշտություն այդ յեռանդալից դեղջկուհու համար և քանի-քանիերորդ անդամն է, վոր նա հաճույքով ականջ է դնում այդ միապաղաղ համեր-պին...

***

— Ապրե՛ս, Նախշուն, արևդ վառ ու պայծառ մնա, ձեռքդ եղ միշտ եսպես լի ու լի,— ասաց պահեստապետ Մանուկը, յերբ իրիկնադեմին Նախշունից ընդունեց կաթը:

— Ցեթե լավ աշխատենք, հարամուԹյուն չանենք, մեր կե-րած-խմածը հալալ կեղնի,— պատասխանեց Նախշունը և համես-տորեն ժպտաց:

Նա միշտ այդպես եր ասում ու հավատարիմ եր մնում այդ սկզբունքին: Դրա համար եղ միշտ պարզերես եր...

— Դե գրե, ախպերս, հաշվեգրքին մեջ որվա վաստակս գրե...

— Կգրեմ, Նախշուն, քուրս: Դուն վոր կաս մեր գեղի վառքն ես: Ցող ուրիշ կանայք գեղնեն որինակ վերցնեն, գեղ պես գո-հաղ լինեն: Իդոր համար ե, որ անունդ գազեթի մեջ գրել, նկարդ տպել են, կարդացի՞ր...

— Գազեթի՞ մեջ,— զարմացած բացականչեց Նախշունը:

Նա դեռ չեր կարդացել այդ որվա Թերթը: Մանուկը հանդի-սավոր ու խորհրդավոր դեմք ընդունելով, դրասեղանի վրայից վերցրեց Թերթը, բաց արեց նրա յերրորդ եջը և տվեց Նախ-չունին:

— Ըհը, աչե, ես դուն ես, քո նկարդ. ես ել քո մասին ե գրած:

Ցեվ պահեստապետը բարձրաձայն կարդաց հետևյալ տողերը.

«Զակ գյուղի կովաբուծական ֆերմայի անվանի կթվոր Նախ-շուն Սարգսյան»:

Սաստիկ հուզմունքից Նախշունի ձեռները դողացին և մի

պահ չփոթվեց, չկկվեց: Աչքերին չէր հավատում, վորտեղից վորտեղ:

— Ինչի՞ կղարմանաս որ, լավ, աղնիվ աչխատավորին մեր յերկրի մեջ առաջ կքաշեն, կդովեն ու գաղեթի մեջ էլ կդովրանեն...

Բայց Նախշունը չլսեց այլևս պահեստապետի խոսքերը: Նա չտապեց տուն, վորպեսզի ամուսնուն ցույց տա թերթը:

«Տաննեմ մարդս Թող աչե, իմանա, Թող ուրախանա, վհռռավորվի...»:

***

Գյուղն արդեն ծածկվել է լինող երիկվա կապույտ մշուշով: Սուրալով անցնում է զովաշունչ զեփյուռը: Իսկ կապույտ յերկնակամարին այնքան մարդարիտ կա չաղ ուված, վոր հաչվել էի լինի:

Գյուղի տները նստել են բլրակների տակ կամ թիկնել են քարաթմբերին: Ցերդիկներից յերկինքն ի վեր բարձրանում է ծուխը և հալվում մշուշի մեջ:

Նախշունի տունը գյուղի մյուս ծայրումն է: Դեռ մի քանի տարի առաջ դա մի կիսամուրհ հյուղակ եր՝ մինչև մեջքը հողի տակ Թաղված: Այժմ այդ հյուղակի կողքին նոր քարաչեն սենյակ է բարձրացել լեռնադաչտի վրա բացվող յերկու ապակեպատ լուսամուտով: Վերջերս է կառուցել Նախշունն այդ սենյակը, վորի մեջ արդեն յերկաթյա մահճակալ կա, սպիտակ սիրտոցով պեղան, լուսամուտներին ասեղնագործ վարագույրներ...

Ցերեք յերեխա ունի Նախշունը՝ Սիրան, Տիրան, Լիան: Նրանք տավորում են գյուղի դպրոցում և յերեքն էլ լավ են տավորում: Ամուսինը՝ Արմենակն աչխատում է դաչտավարական բրիգադում:

Մարդն ու կինը ակտիվ կոլտնտեսականներ են: Նախշունը գյուղխորհրդի անդամ է, իսկ Արմենակը՝ կոլտնտեսության վարչության: Վերջերս նրանք վերացրին իրենց անդրագիտությունը և այժմ Գերագույն Խորհրդի ընտրության կանոնադրությունն են ուսումնասիրում: Ինչ դժվարություններ քաչեց Նախշունը, մինչև վոր գրագետ դարձավ: Հիմա նա կարող է Թերթ կարդալ, ազդանունը գրել: Հիմա էլ չի ամաչում իր յերեխաների մոտ, վորոնք վարժ են գրել-կարդալու մեջ:

Սենյակում լամպը վառել եյին: Ցերեխաները հավաքվել սեղանի շուրջը իրենց դասերն եյին տավորում, իսկ Արմենակը նոր վերադարձել աչխատանքից, նստել հանդստանում եր Թախտի վրա:

Գնդակի արագությամբ Նախշունը ներս ընկավ քրանաթոր ու հևաստաց... Ուրախությունից լեզուն կապվել եր, չեր կարողանում խոսել, աչքերը չորում եյին, իսկ հուզմունքից կարմրած դեմքը ժպտում եր:

— Եղ ի՞նչ ե պատահե, այ Կնիկ, ինչո՞ւ Եդպես կխնդմընդաս,— հարցրեց Արմենակը զարմացած:

Նախշունը Թերթը դրեց սեղանին և բացականչեց.

— Արևդ սիրեմ, հլա, մոտիկ ածի աչե...

Ամուսինը մոտեցավ սեղանին և յերեխաների հետ նայեցին Թերթին:

— Վա՛հ, մամա ջան, ախր խիկ դուն ես, քո մասին ե դրած,— բացականչեց մեծ աղջիկը:

— Իսկ և իսկ մեր մաման ե,— ավելացրեց Տիրանը:

— Ցա՛,— ձայնեց Արմենակ և զարմանքից կիսաբաց մնաց բերանը:

— Տեսա՞ր, այ մարդ, տեսա՞ր ինչդ կնիկդ գաղեթի մեջ ընկավ, անվանի մարդ դարձավ: Հիմա ամբողջ աչխարքը կկարդա, կզարմանա:

— Կնկթիքն ընձի յերանի կուտան, տղամարդիկ՝ քեզի,— ասում եր Նախշունը հաղթանակ տարած մարդու հպարտությամբ:

Ամբողջ ընտանիքը խիստ ուրախացած ու վոգևորված՝ յերկար-յերկար նայում եր նկարին: Ցերեխաները վաֆաթվեցին Նախշունի վրալ և պինդ-պինդ համբուրեցին նրան:

Իսկ Արմենակը վոգևորված ասում եր.

— Միչա եդպես Նախշուն մնաս, այ կնիկ ... աղիղ արևուդ ժեռնիմ:

———

ՆՐԱՆՑ ԿԱՄՔԸ

Վաչտը հանգստանում էր կանաչազեղ լեռան փեշերին: Գեղեցիկ էր բնությունն այնտեղ—լայնանիստ ձորը, արծաթե ժապավենի պես ձգվող խչխչան վտակը, յերկինքի կապտաչող լանջին պառկերվող բարձրաբերձ լեռների կատարները:

Իսկ այդ բոլորի վրա բացվում էր ամառային գով առավոտը:

Նրանց ջոկատն արդեն կազմ ու պատրաստ դանվում էր հանդիպակաց լեռան լանջին, մի ընդարձակ սարահարթում, վորտեղ կարմիր ռազմիկները զինավարժվում էին—հրացաններից ու դնդացիրներից կրակում: Հիանալի խաղ էր նրանց համար այդ կրակոցը: Ֆարակուտերի կամ հողաթմբերի արանքում պառկած ռազմիկները կրակում էին թնդացնելով ձորը: Նրանց արևահանձ դեմքին լարված արտահայտություն կար, ուշադրության կենտրոնացում:

Լսվեց դնդացրի չընդհատվող տրիթկիկոցը: Նշանառահ կարմիր բանակայինը հեռվից կանչեց.

— Կպա՛վ...

Գնդացրորդ Փայլակի աչքերն ուրախությունից չողացին:

— Կեցցե՛ Փայլակը: Նրա դնդակները չեն վրիպում,—ասաց Ջոկի հրամանատարը:

—Յերթե կովի վախան էլ չվրիպեյին, լավ կեղներ,— կատակեց կարմիր բանակային Սմբատը:

— Ենպես կկպցնեմ, վոր իղն ու թողը չմնա, իղն ու թողը,— հպարտությամբ ձայնեց Փայլակը:

— Նեցցե՛ս,— լսվեց Ջոկի հրամանատարի խրախուսանքի ձայնը:

Հողաթմբի յերկայնքն ի վար հրացաններն ու դնդացիրները

ճարճատում էին: Իսկ կապտամչուշ յերկինքն այնպես ջինջ էր, այնպե՛ս պայծառ: Արևն էլ ինչպես վոսկեկուռ չահ բարձրանում էր լեռան լանջին ի վեր, բարձրանում էր լուսապայծառ չողերով:

***

Վրանի բացվածքից պատկերվում էր լեռան կանաչ փեշը: Այնտեղից զովաչունչ հովիկը խոտերն ու ծաղիկները չոյելով ներս էր ընկնում, իսկ ներսում, թախտի վրա պառկել «մեռյալ» ժամ էր անցկացնում Փայլակը: Յերբ զարթնելու աղաղակները տրվեց, նա վեր յելավ, լվացվեց, թարմացավ ու գնաց ակումբ: Շատ էր ուզում կարդալ ոբվա լրագրերը:

Գրագետ էր Փայլակը: Ավարտել էր գյուղի յոթնամյակը: Կոմյերիտ էր և կոլտնտեսության գաշտավարական բրիգադի ակտիվ անդամը: Սիրում էր աշխատանքը, հնոտուհաստ էր: Նրա համար ամենաթանդ բանն աշխարհում մեր սոցիալիստական մեծ հայրենիքն էր: Յեվ զղրահավաքին նա ամենից շուտ ներկայացավ, նրան տեղավորեցին № վաշտի ջոկերից մեկում: Ֆիզիկապես կռիվեց և քաղաքականապես ավելի ամրապնդվեց, թրծվեց կարմիր բանակի հրավառ քուրայում ու դարձավ առաջավոր մարտիկ...

Փայլակը տեղավորվեց կարմիր մահուդով ծածկված սեղանի մոտ և սկսեց կարդալ ոբվա թերթերը:

Ամենից ավելի նրան հետաքրքրում էին Իսպանիայի դեպքերը: Հանրապետականների չտեսնված հերոսամարտը Մադրիդի տակ չափազանց վոգևորում և ուրախացնում էր նրան:

«Այ թե ինքն էլ այնտեղ լիներ, ազատության համար կռվող իսպանացիների շարքում...» մտմտում էր ինքնիրեն, կարդալով կռվի որագիրը:

Իսպանիայի ռազմական տեղեկատուից հետո Փայլակը կարդաց հետևյալ հաղորդագրությունը:

«Հեռավոր Արևելքի մեր սահմանապծում, № ուղեմասում, սահմանապահ կարմիր բանակային Իվան Կուզնեցովը պիչերային հավաքի մեջ նշմարեց յերկու մարդ, վորոնք անցել էին սահմանը և պղուչությամբ սողում էին. արահետով: Կուզնեցովը չկորցրեց իրեն, թաղնվելով անծանոթների տեսողությունից՝ քարերի արանքից կամացուկ չրջան գործեց և կտրեց սահման

խոխոռների ճանապարհը: Նա թաղնվեց քարի հետևում և թույլ ավեց, որ անծանոթները մոտենան: Ալարփի մեջ հանկարծ հնչեց կարմիր բանակայինի ազդու ձայնը՝ «կանգնի՛ր»... Ցավ նրա սիրտը չորաց սահմանը խախտողների դեմքին: Վերջիններին վոչինչ չէր մնում անել, յեթե վոչ անձնատուր լինել և Կուզնեցովի առաջն ընկած դնալ մոտակա պահակատեղը... Այսպիսով կարմիր բանակային Կուզնեցովը բռնեց յերկու թշնամու, որոնք փորձում էին անցնել սահմանը՝ մեր յերկրում լրտեսական-դիվերսիոն աշխատանքներ կատարելու նպատակով...»:

Այս փոքրիկ հաղորդագրությունն այնպես հուզեց Փայլակին, որ նրա դեմքին չորաց ուրախ ժպիտ: Նրա կուրծքը թրնգաց, հպարտությամբ չարժեց ղլուխը: Կարծես ինքը լիներ Իվան Կուզնեցովը, այնքան հպարտացել ու վոգևորվել եր Փայլակը...

— Եղ ի՞նչ ե յեղել, Փայլակ, ելի խնդմնդում ես,— հարցրեց Սմբատը, որ մի քիչ հետու ինչ-որ պերք եր թղթատում:

Փայլակը մոտեցավ նրան և թերթը ավեց, որ կարդա: Յերբ Սմբատը կարդաց հաղորդագրությունը և ուրախությունից փայլփլեցին նրա աչքերը, Փայլակն ասաց.

— կեցցե տղան, մի հոդով յերկու լրտես ե բռնել...

— Այ թե ինչպես պետք ե կպցնել: Իդիթ տղա յես յեղել եղ Կուզնեցովը,—հայտարարեց Սմբատը:

Նրանց մոտեցավ ջոկի հրամանատարը և ինքն էլ խմացավ բանի եյությունը:

— Ա՛խ, յերանի յես էլ մի եղպիսի գործ կատարեյի, ինչպես Կուզնեցովը, նրա հոգուն մատաղ,— ասաց Փայլակը:

Շրջակայքը հետզհետե կապտեց: Ձորի վրա իջավ ամառային զով յերեկոն: Լեռներից սուրաց և ախորժելի չոյանք պատճառեց դեկյուռը: Վորքա՜ն պայծառ չողային ադամանդակուռ առագերը յերկնքում: Հեռաձիգ խճուղու վրա աշխուժություն եր տիրում, յեռուզեռ: Կարմիր բանակայիններն դբոսնում էին: Հանգստի ու զվարճանքի պահն եր: Նրանց հզոր կրծքերից հընչում եր ուրախ յերգը: Լսվում էին չարաճճի ձայներ, զվարճախոսություն, սրամիտ կատակներ: Վորքան անհոգ և ուրախ եր անցնում ռազմիկների հանգստի ժամը:

Փայլակն ու Սմբատը մեղմաքայլ զբոսնում էին խճուղու

յերկայնքով: Դեմառդեմ պատկերվում էին լեռների մշուշածածկ գագաթները, վորոնք վիթխարի սավերների նման ձգվում էին չղթայաձև: Մի կողմից վտակն եր խշխշում, քարերին ու ժայռերին կպչելով աղմկում չարունակ: Վորքա՜ն քաղցր եր հնչում ջրերի յերգն իրիկվա խաղաղության մեջ:

— Յեթե Կուզնեցովի նման բռնես լրտեսին ու դիվերսանտին, ինչպե՞ս պիտի վարվես,—լռությունը խզեց Փայլակը՝ իր ամրակուռ ձեռքը դնելով ընկերոջ ուսին:

—Սվինս կխրեմ փորը, տեղն ու տեղը կխորովեմ,—պատասխանեց Սմբատը՝ մթան մեջ փայլեցնելով աչքը...

— Ա՛յ, ապրես,—բացականչեց Փայլակն ուրախ-ուրախ և մի փոքր լռելուց հետո չարունակեց,—չե, լավ կլինի կենդանի թողնել, վորպեսզի բացվի գաղտնիքը, թշնամու գաղտնիքը:

Ապա ընդհատվեց խոսակցությունը և նրանցից ամեն մեկն ընկավ իր մտքերի գիրկը:

Քնելու ազդանշանը տրվեց և կարմիր բանակայինների լրենց վրանները մտան: Սակայն Փայլակը սովորականի պես չուտով չքնեց: Նրա ուղեղը չդադարեցրեց տանջում էին բազմաթիվ մտքեր, իսկ նրանց կենտրոնակետը Կուզնեցովն եր:

Կեցցե տղան, հալալ լինի նրա կերած կաթը... Ա՛յ թե ինչպես պետք և պահպանել մեր մեծ, հարազատ հայրենիքի սահմանները:

Նրան մեկ-մեկ պատկերացան իր հայրենի գյուղը, մայրենի ջրհորը, գյուղական ընկերներն ու կենսուրախ աղջիկները, դեղձածիծաղ արտերը, բարձրաբերձ լեռները, կոլտնտեսությունը...

«Հիմի տղերքը հնձում են արտերը, հնձում են ու զվարթաձայն յերգում: Ինչ ուրախ ե հիմի մեր հանդերում...»:

Ու մի պահ նրան տիրեց աշխատանքի ու ջահելության անդիմադրելի յեռանդը...

Անցավ այդ յերջանիկ պահը, և կրկին պատկերվեց Կուզնեցովը: Այնպիսի բուռն սիրով լցվեց դեպի աչալուրջ սահմանապահը և այնպես բաղձաց լինել նրա կողքին, նրա հետ, իր ամուր կրծքով պաշտպանել հայրենիքի սահմանները, դարձնել անձեռնմխելի ու անպարտելի պատնեշ...

***

Մի տարի անց սահմանադիծի № ուղեմասի պահպանությունը հանձնվեց իրենց ջոկատին: Արշավահոս դետակը գծում էր պետական սահմանը:

Մութ, մառախլապատ մի գիշեր Փայլակը պահակ կանգնեց: Անշշուկ մոտեցավ նա դետակին, նայեց նրա փրփրալից ջրերին և հայացքն ուղղեց դետակից այն կողմը, հեռու-հեռուն... Այնպես թանձր մառախուղ էր, որ ոչինչ չէր նշմարվում այնտեղ:

Հետո քայլեց դետակի յեղերքով, չարունակ դիտելով չուրջը: Նա հիշեց Իվան Կուզնեցովին... և նրա ուշադրությունը կրկնապատկվեց:

Նրան այնպես թվաց, որ մոտակա քարքարուտների տրանքում ստվերներ են չարժվում: Սկզնական հրացանի փողը պինդ բռնած առաջ չարժվեց Փայլակը՝ պատրաստ ամեն անակնկալի:

«Պատա-պատա կանեմ, տեղն ու տեղը կխորովեմ, մի թող գան...», մտմտաց նա հատուստակամ ու ամրապինդ, ուշադիր դիտելով ամեն մի քարաթումբ, յուրաքանչյուր թփուտ:

Բայց նրան թվացել էր միայն: Ոչ ոք չկար այնտեղ:

Ամպերի քողը պատռելով լուսնյակն արծաթի պես պսպղաց հանդիպակաց լեռան կողից: Նրա վախ ցոլքերի տակ պատկերվեց ընդարձակ հարթավայրը: Փիչ հեռու խոտի դեղերն էլին գաչոում յերևում: Ավելի հեռուն կոլտնտեսային հանդերն էլին վոսկեծավալ հասկերով հարձանք տալիս ծովի պես: Լեռան հեռավոր փեչին մի գյուղ էր ծվարել թանձր մառախուղով ծածկված: Այնտեղ բաբախում էր լայնածավալ հայրենիքի կյանքի մի քեկորը...

Կասկյա մշուշով պարուրված Փայլակի դեմքը ժպտաց ջերմորեն, իսկ աչքերի խորքում հպարտության ու անվհերության կայծերը վայլկեցին:

Նրա ամրակուռ ձեռքում չարժվեց հրացանի փողը և լուսնյակի արծաթավառ չողերի տակ պսպղաց սվինը, վորպես մի ահեղ, անպարտելի աղղանշան...

ԽՆԴԱԼԻՑ ՈՐԵՐ

1.

Ամառվա ամիսներին վաղդենը հյուր յեղավ իր քեռու մոտ, վոր Վարդանլվի խորհտնտեսության մեջ մեղվապահ էր:

Այդ յերեք ամիսը նրա կյանքում մնաց վորպես մի աքանչելի, անջնջելի հիշողություն և նա չարունակ մեծ հաճույքով էր հիշում այդ յերջանիկ որերը:

Կանաչազեղ ընդարձակ ձորումն է տեղավորված խորհտնտեսությունը՝ չրջապատված անտառածածկ լեռներով: Հանդիպակաց լեռան լանջին յերևում է դեպի Դիլիջան ձգվող խճուղին: Ներքևը, ծառազարդ ձորում, վտակն է արագընթաց հոսում: Ջախ կողմից մի ուրիչ չքեղ հովիտ է բացվում անտառներով ծածկված, վոր ձգվում-դնում է դեպի Մայմեխ լեռան խորքերը: Այդ հովտից դլխապտուցյա արագությամբ մի առվակ է վազում և գալիս միանում է դլխավոր ձորից հոսող վտակին: Ահա այդ չքեղ հովտում և արշավահոս առվակի յեղերքին էր անցկացնում վաղդենն իր ժամանակի մեծ մասը: Խորհտնտեսության մեջ ապրող իր հասակակից յերկու ընկերոջ՝ Սուրենի ու Վահրամի հետ հաճախ իջնում էր անտառածածկ հովիտը և բարձրանում նրա կողերը: Ներանք իրենց համար պատրաստել էին լողանալու համար տեղ, և յերբ կեսորվա արևն այրում էր յերկինքից, գալիս զովանում էին ջրի մեջ: Իսկ վորքան ջինջ էր ու զուլալ լեռնային այդ վտակի ջուրը, հստակ, ինչպես բյուրեղ, ախորժելի ու համային: Վաղդենն իր ընկերներով լողանում էին և տաքանում առվակի յեղերքին, ամպավա արևի ջերմ չողերի տակ:

Վորքա՜ն խինդ ու ծիծաղ, չարաճճի կատակներ և պատահական կենսուրախ խաղեր այդ ղուլալ ջրերի ղրկում։

2.

Խորհտնտեսությունից քիչ հեռու, մի ավազոտ վայրում, մի-մյանց մոտիկ տեղավորած էին չորսհարյուր փեթակ։ Շուրջը կանաչ մարգագետնին՝ առվույտով և կապույտ ու դեղնավուն ծաղիկներով։ Իսկ առվույտի ու յերեքնուկի փոքրիկ տերևների վրա ամեն առավոտ արծաթի պես պսպղում եր ցողը։ Այնտեղ մի ընդարձակ վայտաչեն չենք կար զանազան մասերից բաղկացած, ուր տեղավորված էին պահակի փոքրիկ սենյակը՝ փեթակների վրա նայող ապակեպատ լուսամուտներով, մեղրի պահեստը՝ կարասներով և թիթեղե սափորներով, ու դրասենյակը։

Այդտեղ եր ահա լինում Վաղդենի քեռին՝ փեթակապահակ Գարեգին Ավետիսյանը։ Նա բարձրահասակ, նիհար, մի-չա լուրջ դեմքով, մոտ հիսուն տարեկան մարդ եր, զբաղվում եր մեղվաբուծությամբ և սաստիկ սիրում եր այդ գործը։ Ընդամենը տասհասարակ սակավախոս լինելուն՝ նա մեծ հաճույքով ու վոգևորությամբ Վաղդենին պատմում եր մեղրի, փեթակների ու մեղուների մասին։

—Ո՛՛, չափազանց հետաքրքիր կյանք են վարում մեղուները։ Նրանք փեթակում այնպես են ապրում, ինչպես յուրաքանչյուր ընտանիք կամ ցեղ մասնակային հասարակության մեջ։ Ավելի ճիշտ կլինի ասել, նրանց կյանքը փեթակում շատ նման է գործարանային կյանքին։ Ինչպես վոր գործարանում աշխատանքը բաժանված է բանվորների ու վարպետների մեջ և նրանցից ամեն մեկը պատասխանատու յե իր գործին, այնպես էլ մեղուները՝ փեթակում։ Ամբողջ որը նրանք զբաղված են ծաղիկների հյութ հավաքելով և մեղր պատրաստելով։ Վոչ վոք նրանցից չի ծուլանում կամ դասալիք դառնում։ Ծույլերն ու գործ չքողները արժանանում են աշխատավոր մեղուների ղայրությին, վոչնչացվում ու դուրս են շպրտվում։ Նրանք սիրում են յոնջան ու մանավանդ կապույտ ծաղիկները, վորոնցից շատ կա և մենք էլ աշխատում ենք աճեցնել այս չրջանում։

Վաղդենի քեռին մի չարք հետաքրքիր նորություններ պատմեց մեղուների կյանքից և պատանուն տարավ պահեստատուն, վորտեղ կարասների մեջ լցրել էին թարմ մեղրը։ Նա փայտե պղալը տվեց Վաղդենին և առաջարկեց ճաշակել այդ քաղցրահամ հյութը։

Պատանին սկսեց ծծել անուշահամ մեղրը։

—Այս տարի մենք հավղող բերք ունեցանք, մոտ հինգ հազար կիլոգրամ մեղր ե տալու մեր խորհտնտեսությունը։ Յերևի Հայաստանի մեղվաբուծական չրջանների իրար հետ մրցման փոխանցիկ դրոշակը մենք կվերցնենք։ Յեվ յես վստահ եմ, վոր այդ դրոշակը կծածանվի մեր խորհտնտեսության մեջ վորպես պլանների հավղող կատարման և հաղթության նշան,— ասաց Ավետիսյանը, ժպտաց և աչքերն ուրախությունից փայլեցին։

Նրա ուրախությունն ու վոգևորությունը հաղորդվեցին նաև Վաղդենին և վերջինս դեմքն էլ պայծառացավ ու ժպտաց։

Կարծես թե Վաղդենն էլ եր մասնակցում այդ մրցումին ու հաղթանակին։

Սակայն պատանին չատ չկարողացավ ճաշակել թարմ մեղրը— ծանր եր և խիստ քաղցր։ Կարծես թե այրում եր նրա կոկորդն ու կուրծքը։

Նա ժամերով կանգնում եր փեթակների մոտ և դիտում, թե ինչպես քեռին ձեռներն ու դեմքը չորով կապած մոտենում եր ու բաց անելով այս կամ այն փեթակը՝ մեղրաբլիթներ եր հանում կամ ինչ վոր բան դասավորում այնտեղ։ Իսկ մեղուները չարունակ չրջում էին իրենց միորինակ ու միալար յերդով։ Ինքնության այդ դով, հրապուրիչ զրկում իր քեռու աշխատանքը, նրա հոգատարությունն ու սերը մեղուների հանդեպ, այնքան վոգևորում ու հիացնում էին պատանուն։

3.

Խորհտնտեսությունից դեպի Համազիման ձգվող լեռան լանջին մի քանի կիլոմետր հեռավորության վրա զանազան տեսակի խնձորի մատղաշ ծառեր էին տնկում։

Մի չարք տեղերում խնձորենիները արդեն մեծացել, զարձել էին բազմաճյուղ և բազմատերև ծառեր։ Նրանց վրա ժպտում էին արդեն հասունացող պտուղները, վորոնց պայծառ դեմքերը նմանվում էին տերևների արանքից։

Վաղդենն իր ընկերների՝ Սուրենի և Վահրամի հետ յեր-

բեմն–յերբեմն զբոսնում եր այդ վայրերում և դիտում, թե ինչ–պես այգեգործ Մխրաքյանը մի չարք աշխատակիցների հետ աշ–խատում եր խորհտնտեսության այգեմշակման այդ չրջանում:

Համառ աշխատող եր Մխրաքյանը և կենսուրախ մարդ: Նա ախրում եր կատակել Վազգենի ու նրա ընկերների հետ, սրախո–սել և ծիծաղել: Բարձրաձայն եր ծիծաղում նա, լիաթոք ու պրնդուն և իր ուրախությամբ վարակում եր չրջապատողներին:

—Տասնվեց հաղար հեկտար հողամաս ենք հատկացրել այս չրջանում այգեգործությունը զարգացնելու համար: Շուտով մեր մշակած ծառերը կհասնեն ու հազարավոր փթթերով խնձոր և ուրիչ պտուղներ կարտահանենք այստեղից: Են ել ի՛նչ խնձոր՝ քաղցր–համ շամարկենի, թթվաշ լիմոնի, կարմրաթուշ բելֆլյորը և այլն,— ասում եր նա վոգեվորված և վազգենին ու իր ընկերնե–րին հրավիրում հասած խնձորենու մոտ, թափ եր տալիս ծառը և հյուրասիրում նրանց խոշոր, քաղցրահամ խնձորով:

— Կերե՛ք, անո՛ւշ արեք, բալամ, թող հալալ լինի ձեզ: Խորհտնտեսության բարիքները վայելեցեք...

Տղաներին հյուրասիրելուց հետո Մխրաքյանը նրանց առաջ–նորդում եր նորատունկ ծառերի չրջանը: Ծառերը դեռ մատղաշ եյին և իրարից բավական հեռու կանդնած:

— Ուզում խոլանարդ մեռը պետք է նրանք հեռու լինեն իրա–րից, վորպեսզի մեմյանց չխանգարեն և կարողանան ավելի աղատ ու արագ աճել: Մենք ընտրել և աճեցնում ենք ամենա–ազնիվ տեսակի ծառեր և շատ ժամանակ չի անցնի, յերբ մենք կկարողանանք պտուղների առատ բերք տալ յերկրին...

Լավատես այգեգործի խոսքերից վոգեվորված պատանիները մեծ չնորհակալությամբ բաժանվում եյին նրանից և իշնում ձորը՝ իրենց սովորական լոգանքը կատարելու:

4.

Բլրի գագաթին ընդարձակ հարթավայրի վրա քառակուսի չրջան կազմած նստել են խորհտնտեսության սպիտակ չենքերը՝ դրասենյակը և ծառայողների ու բանվորների յերկչարք բնակա–րաններն ու հանրակացարանները: Հանդիպակաց կողմը ճաշա–րանն է, պահեստատունը, ընդարձակ դոմն ու ախոռը:

Մեղվապահ Ավետիսյանը յերկու սենյակ ունի, նրանից մեկի լուսամուտը նայում է դեպի կանաչախիտ ձորը: Ահա այդ սե–նյակումն է քնում Վազգենը և ամեն առավոտ լուսաբացին զարթնելիս լսում է ծառերի վրա ճվվողող թռչունների անուշ յերգը: Սարյակներն են այնտեղ ճվվողում, ծիտն է ծլվլում կամ արտուտն է արևի յելքը վողջունում: Յերբեմն–յերբեմն ձորում բուսած վարդի թփերի միջից լսվում է սոխակի զեղգե–ղանքը:

Մեծ համույքով է ականջ դնում պատանին թռչունների այդ քաղցրախոս ձայներին և ծծում կիսաբաց լուսամուտից ներս թափվող թարմ, զովաշունչ ողը:

« Յերանի թե դանդաղ, չատ դանդաղ անցներ ամառը և Վազգենը յերկար մնար այդ սքանչելի վայրում...» մտմտում եր ինքնիրեն և ընկնում քաղցր յերազների գիրկը:

Նախաճաշից հետո ընկերների հետ գնում եյին մոտակա անտառը մոռ ու մոչ քաղելու: Այնտեղ բավական տարածու–թյան վրա տնկել եյին և մշակել մեծ քանակությամբ մոռի և մոչի թփեր:

Յեվ ամբողջ չրջապատը կարմրին ու սևին եր տալիս...

Ի՛նչ դեղեցիկ տեսարան և ի՛նչպիսի անուշահամ պտուղներ: Վայելիր բնության այդ հրաշալի բարիքը... Թվատում եր չուրջ ամեն ինչ....

Վազգենն ու իր ընկերները ժամերով պատկում եյին այդ թփերի արանքում, ճաշակում քաղցրահյութ մոռը, նայում կա–պուտակ յերկնքին, վորի վրա սպիտակ ամպերը սահում եյին վոքրիկ չարքերով:

Հետո իջնում եյին հովիտ, վորտեղ Կիրովականի միջնակարգ դպրոցի դասատու Սիսակյանը վտակում ձուկ եր վորսում: Սու–րենն ու Վահրամը մեծ հարգանքով վողջունում եյին իրենց ու–սուցչին: Նրանք ապրում ու սովորում եյին Կիրովականում, իսկ ամառները դալիս եյին խորհտնտեսության մեջ աշխատող իրենց ծնողների մոտ: Նույնպիսի հարգանքով վազգենն եր վողջունում, վոր արդեն ծանոթացել եր Սիսակյանի հետ:

— Տղանե՛ր, յեկեք միասին ձուկ բռնենք: Այս լեռնային վտակի մեջ վոքրիկ, բայց համով ձկներ կան, կարմրախայտ տեսակից: Դրանք չատ համեղ են և առողջարար՝ ստամոքսի և աղիքների մի չարք հիվանդությունները բուժելու համար:

Տղաներն, ինչ խոսք, սիրով ընդունեցին Սիսակյանի

առաջարկը: Նա միջահասակ, բավական յերիտասարդ, թուխ, համակրելի դեմքով մարդ եր՝ ամառային սպիտակ բանկոնակը հագին:

Նրա ձեռքին փոքրիկ ուռկան կար: Բայց դեռ ձուկ չեր բռնել, վորովհետև հենց նոր եր յեկել այնտեղ:

Տղաները սկսեցին կամաց-կամաց բարձրանալ ջրի հոսանքով և ուշադրությամբ դիտել նրա խորքերը: Սակայն իզուր անցավ նրանց աշխատանքը, չկարողացան իրենց նպատակին հասնել:

— Ընկեր Սիսակյան,—դիմեց Վահրամը դասատուին,—յեկեք վորոշ տարածությամբ չորացնենք ջրի հունը, ջրի ընթացքը փոխենք ուրիշ ուղղությամբ: Այդ ձևով գուցե կարողանանք հասնել մեր նպատակին:

Սիսակյանը հավանություն տվեց այդ առաջարկին և տղաները մեծ աշխուժությամբ անցան գործի: Նրանք բավական չարչարվեցին, մինչև վոր կարողացան փոխել ջրի ընթացքը: Իսկ վորոշ տարածությամբ նախկին հունի ջուրը կանդնած մնաց: Այնտեղ մնացած ձկները, վորոնք սովոր եյին չարունակ ընթանալ ջրի ընթացքի հետ, մնացին արգելափակված և թպրտում եյին ցամաքող ջրի մեջ:

— Հրես յես մինը բռնեցի,— ուրախ ձայնով բացականչեց Վազգենը և ձեռքում ցույց տվեց արդեն չնչահեղձ դարձած կարմրախայտը:

— Ցես ել բռնեցի,— ասաց Սուրենը:

Ցեվ բոլորի դեմքին փայլեց հպարտության ուրախ ժպիտ:

Սիսակյանի ուռկանում բավական ձուկ հավաքվեց և նա առաջարկեց ընկերներին ոջախ պատրաստել, խորովել ձկները և միասին ճաշել այդ գեղեցիկ վայրում: Ինչ խոսք, վոր այդ առաջարկը սիրով ընդունվեց բոլորի կողմից: Տղաները չատ ուրախացան, վոր ճաշելու յեն իրենց սերելի դասախոսի հետ:

Վահրամն ու Սուրենը դնացին խորհանոեության հաց բերելու: Սիսակյանը վտակի ափին քարերից ոջախ պատրաստեց, իսկ Վազգենը մոտակա անտառից չոր փայտ ու տերև հավաքեց ու բերեց:

Շուտով ոջախում վառվեց կրակը, և Սիսակյանն ոջախի վրա դարսած ձկներն իրար հետևից խորովվեց: Խորովվող ձկների անուշ բուրմունքն ախորժակ եր գրգռում:

Սուրենն ու Վահրամը հաց բերին, կանաչ խոտերի վրա սեղան պատրաստեցին և նրանք խոտերի վրա նստած սկսեցին ճաշել:

— Այ թե ինչպիսի համեղ ճաշ ունեցանք և այս գեղեցիկ վայրում ճաշում ենք,— ասում եր Սիսակյանը, կտրտելով ձուկը և բաժանելով տղաներին:

Վերջինները չատ գոհ եյին, ուրախ ու յերջանիկ: Նրանք լրջեք չմոռացան այդ ճաշը և այդ յերջանիկ պահը ընդմիշտ դրկում:

———

ԼՈՌԵՑՈՆՑ ԱՅԳՈՒՄ

Մի որ յես հյուր յեղա Լոռեցոնց Սահակ բիձու մոտ։ Նա մի փոքրիկ այդի ունի դյուղից բավական հեռու, ձորի խորքում։

Այդին լինում է մինչև դետակ։ Իսկ մյուս կողմից քարաբաղիր լեռն է նստած լերկ ապառաժոտ գագաթով և չղթայի պես ձգվում է ձորն ի վեր։ Գետակի հանդիպակաց կողմը լեռան կանաչ լանջից անցնում է յերկաթգիծը։

Փոքր է այդին և հաղիվ է տեղավորված նեղ ձորում։ Ընձոր և ընկուզի մի քանի բազմաճյուղ ծառեր, մի քանի սալորենի ու տանձենի, իսկ նրանց չուրջը՝ վշատերև թփեր ու մացառներ։ Այդու կողքին բանջարանոց էլ կա, վորտեղ Սահակ բիձան դետնախնձոր, սոխ և ուրիշ բանջարեղեն է մշակում։

Այդու անկյունում ապառաժին կպած է մի փոքրիկ հողաչեն տնակ, վորտեղ ապրում է Սահակ բիձան։

Մենակ է նա, ընտանիք չունի, յեղբոր ընտանիքն ապրում է դյուղում։

Շարունակ յեղբոր յերեխաները գալիս են նրա այդին, ամբողջ որը մնում, իրիկնադեմին կրկին վերադառնում դյուղը։

Հինգնհինդ տարեկան մի ջահաստակ մարդ է Սահակ բիձան՝ մաղատատ դեմքով, ծնոտին մի փոքրիկ մորուք, վորի թելերը նոր-նոր են սկսում ճերմակել։

Ամրակազմ է նա, առույգ ու ժիր, մոխրագույն բաճկոնակով, չալվարի ծայրերը հավաքած բրդե գուլպանների մեջ, վոտներին այծի կաշուց կարած սոլ։ Վաղուց է մահացել նրա կինը, իսկ վորդին սպանվել պատերազմի դաշտում։ Աղջիկն էլ ամուսնացել, բնակվում է քաղաքում։

Նա ապրում է կրտսեր յեղբոր հետ, վոր բազմանդամ ընտանիք ունի՝ կին և վեց յերեխա։ Վերջին տարիներս յեղբայրը տառապում է վոսկրացավով և դժվարությամբ է աշխատում։ Համարյա թե Սահակ բիձան է պահում յեղբոր ընտանիքը։ Ծուրտ յեղանակներին Սահակ բիձան ապրում է դյուղում՝ յեղբոր մոտ, իսկ մնացած ժամանակ նա գալիս է այստեղ, մշակում է բանջարանոցն ու այդին և մի քանի այծ է պահում։

Շրջելով այդ դեղատեսիլ ձորում, յես հասա Սահակ բիձու այդին։ Սահակ բիձան բահը ձեռքին աշխատում եր բանջարանոցում, դետնախնձորի արմատների չուրջը հող եր կուտում։ Նա սիրով ընդունեց իմ վողջույնը և մի պահ աշխատանքը թողած՝ կանգնեց ինձ հետ դրուցի։ Ամբողջ որն աշխատելուց հոգնել եր և քրտնել նրա ճակատը։

— Ցերեկի յես ձեզ խանդարեցի,—ասացի յես։

Բիձան ժպտաց և պատասխանեց.

— Չե, չխանդարեցիք։ Արդեն բեզարել եմ, հանգստանալ և պետք։

Նա ինձ հրավիրեց իր այդին և առաջարկեց նստել բազմաճյուղ խնձորենու տակ՝ կանաչ խոտերի վրա։

Ծառերի արանքում խաղում էյին յերկու տղա և մի աղջիկ։ Տասնհինգ, տասներեք և տաս տարեկան։ Ամենափոքրն աղջիկն եր։ Ինձ տեսնելով՝ նրանք թողին իրենց խաղը, յեկան կանգնեցին մի քիչ հեռու և համառորեն նայում էյին ինձ։

— Ցեղբորս յերեխաներն են։ Նրանց չանչին մատաղ, շատ լավն են։ Աչքիս լուսի պես սիրում եմ,— հայտարարեց Սահակ բիձան և մոտենալով յերեխաներին, սկսեց մեծ սիրով ու դրոշմանքով չոյել նրանց դլուխը։

Ապա նրանց բերեց նստեցրեց իր չուրջը, դրկեց և խանդաղատանքով համբուրեց։ Ինձ վրա չափազանց խորը տպավորություն թողեց մենավոր կյանք վարող այդ մարդու անսահման սերն ու դուրդուրանքը։

— Դե, Ավո չան, բարձրացիր այդ ծառը և թափ տուր։ Թող մեր սիրուն այս խնձորից անուշ անի,—առաջարկեց բիձան յեղբոր մեծ տղին։

Վերջինս արևաչալ դեմքով, դանդուր մազերով ամրակազմ տղա, կարծես հենց նրա հրամանին եր սպասում, վոր-

պեղի ակյուռի արագությամբ ծառն ի վեր բարձրանա: Ցերեխաներն այնքան եյին սիրում ու հարգում Սահակ բիձուն, որ առանց նրա կարդադրության ձեռք չեյին տալիս պտուղներին, ինչքան էլ որ ախորժակ ունենային ուտելու:

Ցավ, ինչպես յես նկատեցի, նրանք չափազանց կապված եյին իրենց հորեղբոր հետ և աշխատում եյին միշտ լսել և կատարել նրա խրատները:

Ինձորենու տերևների միջից չողչողում ու ժպտում եյին արդեն հասած խոշոր պտուղները: Ցավ նրանցից չատերը ներքև թռան, յերբ Ավոն մեծ ուժով ցնցեց ճյուղերը:

— Վա՛յ, հորեղբայր, դլուխս,— բացականչեց փոքրիկ Սաթոն և ձեռքով բռնեց սևամազ դլուխը:

— Հը, բալիկ ջան, ինձորը դլխիդ կպա՞վ, եղ անուշ աչքերիդ մատաղ,— ասաց Սահակ բիձան և չոլելով նրա դլուխը, խանդաղատանքով համբուրեց:

Փոքրիկ Սաթոն հորեղբոր դժվանքներից աչխուժացավ և սկսեց խոտերի միջից հավաքել խնձորները: Լուսերես աղջիկ եր նա, մատղաչ, հավաքած խնձորների պես պայծառ:

Ցես մեծ ախորժակով ճաշակեցի փոքրիկ Սաթոյի բերած խնձորը: Քաղցրահյութ եր նա, ջրալի, կարմրաքաչ կճեպով: Դրան անվանում եյին չաքարկենի:

Միջնեկ տղան, Շավարշը, նուչնպես յեռանդով հավաքում եր խնձորը և հյուրասիրում ինձ:

Ցերբ իմ հետաքրքրությունը հայտնեցի բիձուն նրա յեղբոր յերեխաների մասին, նա չատ ուրախությամբ, ղգացվեց և վոգեվորված հայտարարեց.

— Ցես բախտավոր եմ յեղբոր յերեխաներով: Աչքիս լուսի պես սիրում եմ նրանց: Միտա անհանդստանում եմ, յերբ նրանց մի բան է պատահում կամ հիվանդանում են: Դե, յեղբայրս չի կարողանում այնքան աչխատել, հիվանդությունք խեղճի մեջքը ծռել է: Վեց յերեխա ունի: Հեչտ բան չի դրանց պահելը: Մեծ տղան Ավոն է, հետո Շավարշը, հետո Սաթոս... (և նա մեկ-մեկ թվեց յեղբոր յերեխաների անունները):

— Այս յերեքը սովորում են դյուղի տասնամյա դպրոցում. Ավոն արդեն յոթերորդ դասարանումն է, Շավարշը վոսկադըրվում է հինգերորդ, իսկ Սաթոս՝ չորրորդը: Մեկն էլ սովորում է առաջին դասարանում, մյուսները դեռ փոքր են:

Ես ամբողջ տնտեսությունը յես ստեղծել եմ իմ ես ազիզ բալիկներիս համար: Իմ մասին հեչ չեմ մտածում, ինչպես վոր է յոլա կդնամ, կապրեմ մի կերպ:

Իմ մխակ ու դլխավոր հոդսը սրանք են: Թող ապրեն, սովսում առնան, առաջ դնան և աչխարքին ոդուտակար լինեն, կյանքում պարզերես մնան: Ես է, ախպերս, իմ մխակ ցանկությունը...

Նրա խոսքերը չատ հուզեցին ինձ և յես մեծ հաճույքով ականջ եյի դնում և ճաչակում անուչահամ չաքարկենին:

Ավևն իջավ լեռների կռնակը և նրա վերջին չողերն եյին միայն պսպղում լեռների դագաթներին:

Սահակ բիձան յերեխաներին առաջարկեց վերադառնալ տուն: Նա մնացած խնձորը լցրեց տոպրակի մեջ և Ավոյին հանձնելով ասաց.

— Ավո ջան, ես խնձորը կտանես մյուս բալեքիս համար: Թող անուչ անեն:

Ցերեխաներն այծերին հավաքեցին և քչելով բարձրացան մոտակա խճուղին ու չարժվեցին դեպի դյուղ,

Ավոն կխտաճամբին հետ դարձավ և կանչեց.

— Վաղը քեզ համար ի՞նչ բերեմ, հորեղբայր:

Բիձան ներքևից դոռալով պատասխանեց.

— Հայ ունեմ, կբավականացնի: Մածուն բերեք, մածուն... Չառիվերից Շավարշն ու Սաթոն կանչեցին.

— Գիշեր բարի, հորեղբայր...

Սահակ բիձան յերջանկորեն ժպտաց և պատասխանեց.

— Այ, յես ձեր ապիզ արևին մատաղ, բարո՛վ դնաք, հաջող բարո՛վ...

Այնուհետև էլ վոչինչ չլսվեց և յերեխաներն այծերի հետ միասին անցան մոտակա քարաժայռի հետևը:

— Դուք հիմա այդպես սիրով և հոդատարությամբ փայփայում ու պահում եք նրանց, ձեր աչխատանքն ու կյանքը չեք խնայում, այդքան ջերմ սիրով կապված եք նրանց. տեսնենք, յերբ մեծանան, հասակն առնեն, ձեր պատիվը պիտի պահե՞ն,

քե չե,— հարցրի յես հիացմունքով հետևելով այդ մենավոր մարդու անսահման դուրդուրանքին:

— Ցնես իմ պարտքը կկատարեմ, կոդնեմ, կմեծացնեմ նրանց: Ամեն կերպ կաշխատեմ քարձր ուսում առանան, յերջանիկ կյանք ստեղծեն իրենց համար: Նրանից դենը իրենց գործն ե, իրենք գիտեն,— պատասխանեց բիձան ժպտալով:

Ցնես լուռ մնացի: Նրա լավատեսությունն սպառում եր հարցը:

Շնորհակալություն հայտնեցի և պատրաստվեցի չարունակել ճանապարհը: Բայց Սահակ բիձան չթողեց:

— Ո՞ւր պիտի գնաք: Արդեն մութն ընկնում ե: Գիշերը մնացեք ինձ մոտ, կզրուցենք, կհանգստանաք: Իսկ վաղը կղնաք ձեր ճամբով,— առաջարկեց նա վճռական ձայնով:

Հիրավի, արդեն մառախուղով ծածկվում եր ձորը, և յես վորոշեցի ընդունել նրա հրավերը:

Սահակ բիձան վերջացրեց իր գործերը, ապա միասին իջանք գետակի յեղերքը, նստեցինք քարերին: Իրիկունը մեղմիվ իջնում եր: Ձորն ամայի յեր և, բացի մեղանից, վոչվոք չկար այնտեղ: Գետակի ջրերը խշխշալով անցնում էյին, զարնվում եյին քարերին ու ժայռերին և իրիկվա անդորրության մեջ նրանց ձայնը զառնում եր ավելի ուժեղ ու համայիչ: Հանդիպակաց լեռան լանջին դղրդաց գնացքը և մեծ թափով յիկավ ու անցավ: Հետո գնացքի աղմուկը մարեց ձորի վոլորապտույտ խորքերում:

Զով եր յեղանակը: Մեղմ սահում եր զովաշունչ զեփյուռը: Իսկ լեռներին իջած յերկնքի լանջին պսպղում եյին աստղերը՝ ադամանդների պես լուսաչող:

— Ինչպե՞ս եք գիշերները մենակ անցկացնում այս խուլ ամայի ձորում,— հարցրի յես:

— Արդեն սովորել եմ: Տասնևհինգ տարուց ավել ե, վոր եսպես եմ ապրում, ես այդտեղ, մենակ... Վերջին տարիներս Ամեն յերբեմն-յերբեմն գիշերը մնում ե ինձ մոտ: Ցերբեմն եկ Շավարշ ե մնում: Արդեն մեծացել ե Շավարշս, կարող ե ընկերության անել: Բայց յես սիրում եմ մենակությունը: Ամեն, ամբողջ որը պրպղված եմ աշխատանքով, իսկ գիշերը հոգնած ընկնում եմ ու քնում,—պատասխանեց բիձան:

— Բա գողերը չեն մտնո՞ւմ այդպես կամ գազանները չե՞ն գալիս տրորում, վոչնչացնում բանջարանոցը:

— Եղպես բան շատ քիչ ե պատահում: Դե, ձեր չրջանում բոլորը ճանաչում են ինձ: Գողություն համարյա քե չի լինում: Յերեկը յես չարունակ այդտում եմ, յերեխաներն էլ ինձ հետ: Իսկ գիշերն ամեն մի չչուվկից կամ աղմուկից անմիջապես զարթնում եմ ու ձեն տալիս...

— Համենայն դեպս դժվար ե, ախպեր, ձեր գործը:

Լուսնյակը լեռան թիկունքից լուսեղեն չերտով պսպղաց և նրա չողերից ջրերը զարձան արծաթավայլ: Կարծես արծաթե վոշի ցանեցին ծառերի ու տերևների վրա: Իսկ գետակի չուրջն ընկած քարերն ավելի ճերմակեցին:

Կարծես թե մենակության մտահոգությունը մի քիչ փոքացավեց լուսնյակի յերեվալով:

Սահակ բիձան առաջարկեց գնալ ընթրիքի: Մենք ընթրեցինք բայոթյա: Խոտերի վրա կարպետ փռեցինք և նստեցինք:

Բիձան գյուղական ախորժահամ հաց բերեց, պանիր ու գանձիլ և մենք սկսեցինք ուտել: Ընթրիքին առանձին գրավչություն եր տալիս նաև անուշահոտ չաքարկենին:

Ցես յերբեք այդքան ախորժակով չեյի ընթրել, ինչպես այդ խուլ ձորում, ծառերի և կանաչների զով գրկում:

— Բայց յես շատ եմ կարոտում իմ բալեքիս: Ցերբ նրանք մոտս են լինում, յես ավելի ախորժակով եմ ուտում,—ասաց բիձան կտրտելով հացը:

Ընթրիքի ժամանակ և նրանից հետո մենք շատ հարցերի մասին խոսեցինք: Բիձան ամեն մի հարցին լուրջ մոտեցում ուներ և կարողանում եր քիչ քե շատ վերլուծել: Նա բավական զրագետ եր և սիրում եր ազատ ժամերին կարդալ, մանավանդ այնպիսի գրքեր, վորոնք տալիս եյին ճանապարհորդական կամ պատմական նկարագրություններ: Նրա տնակում յես տեսա մի քանի գրքեր, ինչպես որինակ՝ «Որբինզոն Կրուզոն», «Թոմմաս Հեղրոր տնակը», Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունները, «Ինչպես եր կռիվում պողպատը» և այլն:

— Այս գրքերը դուք կարդա՞ում եք,— հարցրի յես հետաքրքրվելով:

— Սրանք իմ Սվոն ու Շավարշն են կարդում: Տվին ինձ, վոր յես էլ կարդամ: Ո՛, նրանք չատ են սիրում կարդալ: Ամբողջ որը ծառերի տակ կամ դետափին նստած կարդում են: Դե, հիմիկվա յերեխեքն ընթերցասեր են, սիրում են պիտությունը, գրականությունը: Նրանք հին ժամանակվա մեր մարդկանց պես խավարամիտ ու հետամնաց չեն: Մենք, դե, խավարի մեջ աչք բացինք ու մեծացանք և մեր հոգին մնաց մութ: Դրա համար էլ լավ որ ու արև չտեսանք...

Լուսնյակն յեկավ ու կախ ընկավ ձորի վրա: Ու այնպես պայծառ ու սիրալի վերևից նայում եր մեզ:

Ծառերի տերևները մեղմիվ խշխշում եյին սլսլացող զեփյուռից:

— Բացորյա քնե՞նք, թե՞ խրճիթում պատրաստեմ անկողինը,—հարցրեց իմ հյուրընկալը:

Ցես մի վայրկյան մնացի մտածկոտ, չփոթված:

— Վախենալու վոչինչ չկա: Բացորյա ավելի լավ կքննենք, յեթե մնայն չենք մրսի և սիրում եք յերկնքի տակ քնել—, ասաց Սահակ բիձան:

«Մրսելը՝ չեմ մրսի, բայց ինչպե՞ս կարելի յե բացորյա քնել այս խուլ, ամայի ձորում...» Մտածում եյի, սակայն քաշվում եյի իմ միտքը հայտնել նրան:

Սահակ բիձան իմ լուռությունը համարեց վորպես համաձայնության նշան և խրճիթից դուրս բերելով անկողինը, դասավորեց խնձորի ծառի տակ փռած կարպետի վրա: Ինձ համար ավելի տաք անկողին պատրաստեց, վորպեսզի չմրսեմ: Նրա անկողինը, վոր ինձնից մի քիչ հեռու յեր, համեմատաբար ավելի թեթև եր պատրաստած:

Ցես չորերս հանեցի և մտա տաք վերմակի տակ: Խնճորենին ինձ հովանի յեր դարձած և նրա ճյուղերի արանքից պսպղում եր լուսնյակը, վոր սահելով յերկնքի կապուտակ ծովում, գնում եր դեպի հանդիպակաց լեռը:

Շատ չանցած, նա ծածկվեց լեռան կռնակը, և ձորում կուտակվեց մռայլ աղջամուղջը:

Մոտակա անկողնից լսվեց Սահակ բիձու խղմղվող խոմփոցը: Նա արդեն քնել եր:

Բայց յես բավական յերկար ժամանակ մնացի արթուն:

Ինձ տարօրինակ եր թվում այդ նոր միջավայրը, խչխչացող ջրերը, տերևների սրսփուրը, ձորում կուտակված խավարը...

Մի անորոշ, անբացատրելի վախ եր տիրել սրտիս: Լռությունս լարած հետևում եյի ամեն մի փոքրիկ ձայնի: Ինձ վրա կոպացած ծառից մի բան պոկվեց և ընկավ վերմակի վրա, վոտներիս:

Ձեռքով չոշափեցի և դուս ծառից ընկած անուշահոտ չաքարկենին... Ինձ չատ դուր յեկավ այդ քաղցրաբույր խնձորը, բայց սիրտ չարի ուտել: Տեղավորեցի բարձիս տակ...

Շարունակ լսում եյի դետակի ջրերի աղմուկը: Դրանք յերդում եյին անհոգ, և անսպառ եր, վերջ չուներ այդ յերգը: Ցես զարմանում եյի ու չեյի հասկանում, թե ինչ անսպառ յերաժշտություն և դա, վոր չարունակ հորինվում և ու յերգվում...

Քունս չեր տանում: Կարծես թե Լուռեցոնց այդու պատպանությունն ինձ եր հանձնված: Կարծես թե յես պարտավոր եյի արթուն պահակի պես հսկել այդ մռայլ դիշերին, ամայի ձորում...

Շատ բան անցավ-դարձավ մտքովս: Շատ բան հիշեցի ու վերհիշեցի: Լավ-լավ բաներ ցանկացա, վոր լինեն: Չարմանում եյի, վոր յես պանվում եմ այս վայրում և դա համարում եյի մի անսպասելի, անահնկալ դեպք իմ կյանքում...

«Գուցե հետո, չատ հետո վերհիշեմ և ափսոսամ այս հրաշալի վայրը ու զարմանալի դիշերը, յերբ դու պանվում ես թնության գրկում, նրա կրծքին, նրա ընչին մոտ...»

Վ՞րքա՜ն հուզեր ու մտքեր յեկան ու անցան անհամար ու անհաշիվ: Բայց... Ցես հորանջեցի մի քանի անգամ, աչքերս ծանրացան և հետո էլ վոչինչ չզգացի:

— Բարի լո՛ւյս, հորեղբայր,—կանչեցին ձայներ:

— Այ բարե՛վ, իմ ազիզ բալեք: Լուսը ձեր արևին լինի բոզ,— կանչեց Սահակ բիձան:

Ցես աչքերս բացի և ձորից բարձրացող արևի չողերի տակ տեսա՝ Սվոն, Շավարշը, Սաթոն թռչունների պես ուրախ ելլալուկ լեռան լանջից վազելով իջան և փաթաթվելին արդեն վեր յեկած ու հագնված հորեղբորը:

Մինչ նրանք վողջունում եյին մեմյանց, և բիձան մեծ սիրով համբուրում ու դուրդուրում եր յերեխաներին, յես ինձ

վրա ղզայի արևի ջերմառատ շողերը, վորոնք փայփայում էին լինճ, և յես մեծ հաճույք ղգացի ղիշերվա սառն ոդից հետո այդ ջերմ, ախորժելի ղդվանքից:

Վեր յելա անկողնից, չորերս հագա և լինքս էլ սիրալիր վողջունեցի յերեխաներին:

Նրանք խուրջինով մեզ համար թարմ հաց, պանիր ու սեր էին բերել:

Շատ չանցած, յերկու փոքրիկ յերեխայի ձեռքից բռնած և ամենափոքր յերեխան ղրկած յեկավ նաև Սահակ բիձու յեղբոր կինը՝ Շուշան հարսը:

Նրա բերած յերեխաները մեկը մյուսից լավ էին և բիձան մեծ դուրդուրանքով նրանց հերթով ղրկեց ու համբուրեց:

Լսելով, վոր հյուր կա իրենց այդտեղ, Շուշան հարսը յեկավ անձամբ հյուրասիրելու և պատվելու նրան:

Մինչ բիձան ղբաղված եր յերեխաներին դուրդուրելով ու ղրուցելով նրանց հետ, Շուշան հարսը անկողինն եր հավաքում ու տանում խրճիթ: Յես իմ դետակը և լվացվեցի: Անկողինը տեղավորելուց հետո Շուշան հարսը կրակ վառեց և թեյ պատրաստեց: Մենք բոլորվեցինք խնձորենու տակ պատրաստած սեղանի չուրջը և սկսեցինք նախաճաշել: Իննը հոգի էինք— վեց յերեխա, նրանց մայրը, բիձան և յես:

Բիձան չարունակ կատակում եր յերեխաների հետ: Մի ծնկանը փոքրիկ՝ յերկու տարեկան Մարոն եր նստած, մյուսին՝ չորսամյա Սաքոն, մի կողքին յոթնամյա սևահեր Շողիկն եր, իսկ մյուսին՝ չարաճճի Շավարշը, հետո Սաքոն և Ավոն: Շուշան հարսը չարունակ սպասարկում եր մեզ: Սպիտակ չըրջազգեստով, արևավառ դեմքով, լիքը կրծքով, մոտ քառասուն տարեկան կին եր նա, առողջ ու ժիր: Նրա դեմքին փայլում եր ամոթխածությունն ու համեստությունը:

Իսկ բիձան իր տարերքում եր, ուրախությունից չգիտեր ինչ աներ. այնքան տարված եր յերեխաներով: Մերթ սրան եր ներակրում, մերթ մյուսին, կատակում եր չարունակ ու խընդմընդում:

Թվում եր, թե դա մի կաղնի յե՝ չրջապատված դալար վոստերով:

Իսկ յես դեմ առ դեմ նստած, հիացմունքով դիտում էի

վեց առողջ ու ժիր յերեխաներով չրջապատված այդ սքանչելի մարդուն...

—Ախոռս, վոր ախպերս չկա, ախպերս,—հայտարարեց Սահակ բիձան, նայելով յեղբոր կնոջը:

Շուշան հարսը ղլուխը համեստորեն խոնարհեց և կամացուկ պատասխանեց.

—Ախպերդ քիչ դործ ուներ, չկարողացավ դալ:

Խոտերի վրա դարսված էին նոր թխած հացեր, պանիր ու սեր, առատ խնձոր ու սալոր:

Շուշան հարսը չորս բաժակ եր բերել և ամեն մեկին հերթով հյուրասիրում եր թեյով:

— Դե կերեք, անուշ արեք, իմ աղի՛ղ բալեք, ձեր արևին, ջանին մատաղ: Կերեք, ղորացեք, բոյ քաշեցեք ու վայելեցեք մեր լավ աշխարքը,— ասում եր բիձան յերեխաներին հյուրասիրելով ու դուրդուրելով:

Իսկ արևը բարձրանում եր ճորն ի վեր և իր պայծառ շողերով ջերմացնում մեզ:

———

ԱՌՈՐՅԱՆ

1.

Հոկտեմբերյան հնոցում բռնկվել է հրդեհը և մոնչում է վառարակում արկելափակված ամեհի գազանի պես: Կրակի հրեղեն լեզվահյուսները վիշապների նման գալարվում են վար ու վեր, ամեն կողմից փաթաթվում են հնոցի վրա կախված պողպատյա ծանրամարմին կավարիչին, կապույտ ու կանաչ ծուխ արձակում:

Հնոցում ճրթճրթալով այրվում են վերևից թափվող կիրն ու կոքսը և նրանց միավորումից կազմվում է մի նոր տարր— կարբիդը:

Դեմ առ դեմ ընդարձակ, կիսամութ տարածության վրա, կրակից արտացոլող լույսերի մեջ պատկերվում են ավագ հնոցավար Վահանը և կրտսեր հնոցավարներ՝ Մուշեղը, Կարապետն ու Սրտակը:

Բարձրահասակ, լայնաթիկունք մարդ է Վահանը՝ խոշոր խաժ աչքերով: Սև բամկոնակ ունի հագին, իսկ ձեռքերն ու վոտքերը պաշտպանված են թավիթե թանձր թաղմաններով: Կրտսեր հնոցավարներն էլ համարյա թե Վահանի պես են հագնված: Իր կարճ բոյով նրանց մեջ աչքի չի ընկնում Կարապետը՝ «թիզ ու կես», չարժուն, վոքրիկ, պողպատե աչքերով, մրոտ-թաղիքե մարդը: Շարունակ ժպիտ կա նրա մաղոտ դեմքին, չերը նայում է կրակին, դիտում է նրա հրեղեն ալիքները, ահալի ճայթումն ու ճարճատումը:

Նրանք բոլորն էլ յերկաթյա յերկար չգեր ունեն ձեռներին, ուշադիր հետևում են կրակի ընթացքին, մերթ ընդ մերթ մոտենում են, չգերով դասավորում հնոցի մեջ կիզվող նյութերը, վերևում արագ ու լավ այրվեն, և կրակի սոսկալի համբույրին չդիմանալով՝ հետ վախչում: Նրանց աչքերի մեջ թափանցել է կրակը և բոսորային ճաճանչով պլպլում: Դեմքերից քրտինք է կաթում, մերկ կրծքերն այրվում են կարծես:

Կրակը մոնչալով դուրս է սողոսկում հնոցից և ոճապատույտ չարժվում առաջ, ճայթում է և վոքրիկ հրեղեն գնդիկների վերածվելով՝ ցրվում է հատակին, առկայծում ու մարում կամ սատղաձև կայծեր դառնալով ճախրում ողի մեջ: Ցնորքամն նրանք ընկնում են հետ նահանջող հնոցավարների թիկունքին, ուսերին, թևերին, հրկիզում հագուստի այս ու այն մասը և թեթև ցավեր պատճառում մարմնին:

—Ո՛ւյ,—ճայնում է կարապետը, տրորելով այրվող ուսն ու թևը,—ասեղի պես ծակեց, չատ անհոդին է, չատ...

Ընկերները ծիծաղում են նայելով վողնու պես կոլոլված և վոքրիկ դունդ դարձած կարապետին: Կրակի հարձակման դեպքում նրանք կարողանում են զսպել իրենց կամ նախազգուշական միջոցներ ձեռք առնել:

—Հըմ, կարապետ, կրակը խայթե՞ց քեզ:—չռացականչում է Վահանը ուրախ ժպտուն:

— Ախպեր, եդիկ չատ զուլումն եր, կարիճի պես կծեց, կմոմոա,— պատասխանում է կարապետը և մի պահ կսկծալուց հետո կրկին առաջ չարժվում դեպի կրակը և աչխատում է ընկերներից հետ չմնալ:

Նրանց մարմինը հրակայուն աղյուսների պես կարծես վարժվել է կրակին, չուտ են անցնում այրուցքի պատճառած ցավերը:

Սաստիկ չոգ է, արևադարձային դոտուց էլ չոգ: Շարունակ քրտինք է ծորում այնտեղ աչխատող մարդկանց մարմնից: Բրանել ու խաչած խեցգետնի պես կարմրել է նաև հանդիպակաց պատի տակ արթուն պահակի պես չարունակ հսկող հրդեհաչեջ Մեխակը, վորի դիմի դեղնավուն սաղավարտը կրակի արտացոլումից պսպղում է վոսկու պես:

Բայց ահա վերից ինչ վոր պատճառով դադարում է կրի անկումը հնոցի մեջ: Կրակը վայրենի մոլուցքով սկսում է հեվալ...

— Կարապե՛տ, վերև բարձրացիր, տես ի՛նչ է պատահել այնտեղ,— կարգադրում է ավագ հնոցավարը:

Ու Կարապետն ակյուռի պես մաղլցում է քիչ հեռու դանվող ֆերիաթյա սանդուխքով:

Պարսպանման վիթխարի պատեր ունի կաթրիդի ցեխը, բարձր առաստաղ, բաղմաթիվ խոշոր սյուներ, վորոնց վրա հանդչում են պատշգամբները, անիվները, փոկեր և յերկաթալաբեր:

Հնոցի վերևի պատշգամբում խողովակների միջով կիր առաջ մղող մեքենան ինչ վոր պատճառով կանգ է առել: Մի-ջին հասակի, քառասնամյա, ծաղկահար դեմքով, ամբողջովին ըրնություն դարձած մի բանվոր բռնել է մեքենայի պտուտակը և ծանրորեն չարժում և աջ ու ձախ:

—Փոլա՛տ, եղ ի՞նչ է յեղել, մաշինեն ընչի՞ չի բանե,—ձայնում է Կարապետը, մոտենալով պտուտակը դարձնող բանվորին:

— Սատանա յե ընկել փորը, թարսվել է,—չղայնորեն մըռմըռում է քիմի տակ Փոլատը:

Կարապետի ողնությամբ նա քանդում է խանդարված մեքենայի մասերը և վերասարքավորում: Մեքենան սկսում է չըխչըխալ և սահնակով կիրն առաջ չարժել դեպի հնոցը: Փոլատը սուղվում է փոկերի և անիվների արանքում, իսկ Կարապետը մոտենում և վերևից կախված հսկայական ծանրոցին, վոր չարունակ զոլում և կրակի թափը, չըշխարհում նրան հնոցի մեջ, վորպեսզի չծավալվի և վառնդ չսպառնա: Այդ ահռելի տարողության վրա նայող Կարապետի փոքրիկ դեմքը հանգարտվում է և նա սիրվում է հետ նահանջել ու իջնել իր տեղը:

— Մաշինեն ինսան եր արե, Փոլատի հետ լեղուն հասկացանք, սիրան առինք և հիմա կրկին կաշխատե,— դեկուցում է Կարապետը իր կոտրված լեզվով:

Վահանը մանրմասրար չոյում է նրա ուսը և ուրախ է, վոր նրա պես յեռանդուն աշխատակիցներ ունի և իր բրիգադը կարող է բաց ճակատով մրցել մյուս հնոցի բրիգադի հետ՝ պլանների կատարման գործում: Նրա պղնձաձույլ դեմքը ժպտում է, յերակներից հոսում է արյունը հորդ ուժգ ու կորովի, ինչպես վառնների տակ, գործարանի հատակից անցնող լարերը, վորոնց միջով Զորագետն իր էներգիայի մի մասն ուղարկում է այստեղ: Այդ էներգիան լարում և ուժանակ կոչվող մեքենան և առաջ բերում հսկայական կրակը: Ցեվ այսպես՝ բնության ուժերը միախառնվում են, փոխանցվում, նորանոր յերևույթներ առաջ բերում: Ջուրը դառնում է ուժ, իսկ վերջինս՝ կրակ... Ցեվ Վահանն ուշադիր հետևում է կրակին, սիրում է նրա հրաբորբ փայլը, ոճապուռյա լեզուները, ճարճատյունը, աստղաձև կայծերը և այն վայրենի յերաժշտությունը, վոր չարունակ լսվում և հնոցում:

Նոր նյութը վերևից լինող պողպատակուռ վաղոնիկով յեղնում է բարձր, առաստաղն ի վեր, սյուների ուսերին հանգստացող յերկաթյա դծերի վրայով մեզմ սահում է, յեղնում է բակը, դիմում հանդիպակաց ցեխը, լինում ներքև և նչեռքի վրա չափում իր ծանրությունը, ապա թափում է վերցրած բեռը հատուկ ընդունարանի մեջ, վորպեսզի կամաց-կամաց սառչի տակավին հրաբորբ նոր նյութը և ինքը թռչունի պես դարձյալ վերև և յեղնում, հետ դառնում:

Վահանը զալիս նայում է կչռացույց սյունին և հանձնում մեկ տոն յերեսուն կիլոգրամ կաթրիդ...Ցեվ ի մի դումարելով այդ որվա ընթացքում իրենց արտադրանքը, համեմատում է մյուս հնոցի արտադրանքի հետ և ուրախ-ուրախ վերադառնում ընկերների մոտ:

— Տղե՛րք, այսոր մենք հարյուր կիլոգրամ ավել ենք կաթրիդ արտադրել,—ասում է նա վոգեվորված:

— Ինչպես յերևում է, մենք սոցմրցման պայմանագիրը կըկրենք,— միջամտում է Մուշեղը:

—Կկրենք, անպատճառ կկրենք և Կարապետին պատվիռն կտան ընծա,—ձայնում է Արտակը կատակով:

— Վայ, բերանդ չաքար դառնա թող, ինչ յավ կեղնի, յեթե ինձի վաթիֆոն տան, չալե, չալե ու յես ել ականջ դնեմ, չա՛թ,—խնդմնդում է Կարապետը կողքը քորելով:

2.

Մի ամիս առաջ Վահանին ու Փոլատին բնակարան տվին նորակառույց չենքերից մեկում: Այժմ մի սենյակ ել հատկացրին Կարապետին: Իսկ Մուշեղն ու Արտակն ամուսնացած չլինելով՝ այնքան սուր կարիք չեյին զդում առանձին բնակարանի և ապրում եյին բանվորական հանրակացարանում:

Կարապետի սենյակը յերկրորդ հարկումն եր, խոշոր լուսամուտը ձորի վրա, լույսով ու արևով առատ: Շարունակ կիսա-

Մուքի նկուղներում կյանք մաշած այդ փոքրիկ մարդու խնդությանը չափ չկար: Վերջապես հնարավորություն եր առանում քաղաքից տեղափոխել կնոջն ու յերեխային, վորոնք ահա յերեք ամսվի չե, ինչ իրենից հեռու չեն ապրում:

Իսկ կարո՞ղ հապա, կնոջ ու յերեխայի սրտմաշուկ կարոտը... Ահա թե ինչո՛ւ Կարապետը յերջանկության մեջ լողացող մարդու պես ժպտում եր, խնդմնդում:

— Կարապետ, սենյակ ստացար՝ փափադդ կատարվեց, հիմի կնիկդ կգա մեջդ կտաքցնի,— ասում եր վահանը մտերմաբար բռթելով նրան:

—Լավ յեղավ չատ. չեն մնա մեր յերկիրը: Փառավոր սենյակ տվին ինձի: Եղ տեսակ սենյակի մեջ յես հեչ չեյի ապրել, հեչ...

— Հիմի կնիկդ քեղ ավելի թունդ կսիրի,—միջամտեց հրդեհաշեջ Մեխակը, ուղղելով իր պսպղուն սաղավարտը:

— Ինչի՞ պիտի չսիրի վոր, Կարապետի լինչն և պակաս վոր,— հայտարարեց Մուշեղը:

— Խե, խե, խե,—ծիծաղեց Կարապետը:

Նրա աչքերը վառվում եյին կրակի պես: Բրտինքը կաթկըթում եր յերեսից, կրծքից:

3.

Մի ամիս կլինի, ինչ Կարապետն սպասում է կնոջը, նամակ և դրել, հեռագիր տվել... Բայց պատասխանը չկա... Ի՞նչ պատահեց յարաբ: Անհանգստությունը կրծում եր նրա սիրտը: Ամեն որ կայարան եր գնում և ժամերով ճամբա պահում:

Իսկ ընկերները չարունակ հետաքրքրվում եյին:

—Հը, Կարապետ, վո՞նց ես, կնիկդ յեկա՞վ:

— Ինչ կվերարերե ինձի, յես աղեկ եմ, չնորհակալ եմ, բայց Մարոս չեկա՛վ...

Ցավ տխրության ամպը մշուշում եր նրա մաղոտ դեմ ու ֆիս դեմքը:

— Այ մարդ, կնիկդ մոտացել է քեզ, ել չի դա,—Ղազինաշում և նրան Մուշեղը, քթի տակ խնդալով:

— Գուցե ուրիշ մարդ է ճարել, ի՞նչ դիտես,—ճանչում և մյուս կողմից Արտակը և չարաճճի կերպով աչքով անում ընկերներին:

Ամենքն այնպես ձեռացրին, վոր իրը մի խորհրդավոր պատմիք դիտեն և չեն ուզում ասել:

Կարապետի ջանը դող ընկավ, ձեռները թուլացան: Կասկածն ընկավ սիրտը և տրորեց նրան:

«Ով գիտե, ախպեր, աչխարքի բան: Կարող է մի բան պատահած լինի, մենակ կնիկ, ոտար քաղաքում, ինչեր ասես չի լինի...» մտմտաց Կարապետը և ճմեռնվա յերկնքի պես թմրվեց, մռայլվեց: Նրա աչքերը պղտորվեցին, լցվեցին տագնապով և հուսահատությամբ: Ցավ այնքան տարված եր այս մտքերով, վոր չիմացավ, թե ինչպես սովորականից ավելի մոտեցել հնոցին, խառնում եր այնտեղ ճարճատող կիրն անտանելի ջնմտության մեջ: Ահա մեծ ուժով հևաց կրակը, ոճային լեզուները հնոցից վոլորվեցին դուրս, ճայթեցին ողի մեջ և աստղաճն հրեղեն դնդիկները վերև թռան:

— Փախիր, Կարապետ, յետ քաչվիր,—բացականչեց Վահանը և իր յերկաթյա ձեռներով նրան յետ հրեց:

Կարապետը թեև փախավ, բայց դնդիկներից յերկուսը վառեցին նրա հագուստի դանդաղ մասերը և խայթեցին թեն ու վոտը: Ընկերները խկուն հանգցրին կրակը, և տրորեցին այրված տեղերը: Անմիջապես բժշկական ողնություն ցույց տվին նրան, առաջնորդելով տուն՝ պառկեցրին անկողին:

— Կնիկն ուչացավ, խնդճի խելքը թռավ գլխից,—ասում եյին ընկերները ղուխները չարժելով:

4.

Կարապետը չորս որ պառկած մնաց անկողնում և տնքաց ցավից: Մարմնի այրված մասերը ծակծկում եյին ասեղի պես և առաջներն իրար սղմելով հաղիվ եր պահում արտասուքը:

Ամեն որ գործից հետո ընկերները հերթով այցելում եյին նրան, ողնում, մխիթարում:

Բայց Կարապետի աչքը չարունակ դուռն եր:

«Ախ, մի Մարոս դար, տեսներ ես պալատանման սենյակը, վորքա՞ն պիտի ուրախանար Մարոս...» մտմտում եր նա՝ անհամբեր սպասելով: Գիշերները հատարյա անքուն եր անցկացնում:

Այնպես եր կարոտել կնոջն ու աղջկան, վոր կարոտից խոցոտվում եր նրա սիրտը:

Իրիկունը ևս սովերի պես սողոսկեց սենյակում և ամեն բան ծռայլվեց այնտեղ, մաուտխուղ դարձավ, կարասկոը կոճակը սեղմեց և սենյակը վողողվեց ելեկտրական լույսով:

Դուռը բացին և ուրախ կանչելով ներս ընկան կլինն ու վոքրիկ աղջիկը: Կարապետն իսկույն վեր թռավ անկողնուց և պլինդ-պլինդ դրկեց կնոջը, ապա աղջկան:

— Վայ Մարո ջան, վայ Նարդիդ ջան, աղիդ արևներըդ մեռնեմ,—բացականչեց նա ցնծության աղաղակներով:

— Չկարողացար կայարան դալ մեզ դիմավորելու, հը, անչնորք, մինչև սեղդ դասնք՝ հոդիներս դուս յեկավ,—պատասխանեց կլինը հանդիմանական շեշտով, բայց տեսնելով թարդու թևն ու վոտը կապած, դեմքը դժդուն ու դեղնած, իսկույն լրջացավ և վախեցած ճչաց,—վա՛յ, աչքերս քոռանան, ի՞նչ հալի ես, Կարապետ, եդ ի՞նչ է պատահել քեզ...

— Ինձի հնչ բան չե յեղել, Մարո ջան, աչքս ձեր ճամբան պահելով ջուր դարձավ, չատ ու չատ եյի կարոտցել, կրակն ել իայթեց լինձի, վոչինչ բան ե, կանցնի...

Ու լռդմնդաց Կարապետը ցնծագին ժպիտով, կրկին գիրկն առավ իրեն պես պստիկ կնոջը:

— Ես ինչ յավ ոթախ ես ձեռք բերե, Կարապետ, վահ, վահ, թագավորի պալատ,—ասաց կլինն աղատվելով նրա գրկից և հիացմունքով նայելով չուրջը:

— Ֆեղ համար եմ ձեռք բերե, Մարո ջան, քեղ համար, իսկ դու ուչացար և սիրտս տակն ու վրա արիր:

— Իմ մեղքը չեր, սիրելիս: Մինչև գործերս կարդի բերի, հաշիվները մաքրեցի, մի քանի բան դնեցի, ուչացա՛,—բացատրեց Մարոն և յեռանդով սկսեց իրենց հետ բերած իրերը ներս տանել, դասավորել ու կարդավորել սենյակը:

6.

Հետևյալ որը Կարապետը թևն ու ուսը կապած յեկավ աչքաուռանքի, ընկերները, վոր ամեն որ այցելում եյին նրան, բայց յերեկոյան ժողով ունենալով՝ չեյին կարողացել այցելել գարմացան: Այդ վորքան չուտ լավացան նրա վերքերը:

— Կարապետ, վո՞նց ես, վերքերդ լավացա՞ն,— հարցրին նրանք չորս կողմից:

— Աղեկ եմ, չատ աղեկ,—պատասխանեց նա ուրախ և չէր ձեռքն առավ:

— Յերևի կնիկդ յեկել ե, վոր այդպես ուրախ ես, կը խնդմնդաս...

— Յեկավ, Մարոս յերեկոյան յեկավ,— հայտարարեց Կարապետը հանդիսավոր կերպով:

—Այ, թե ինչու Կարապետը մի դիշերվա մեջ առողջացավ,— բացականչեց Մուշեղը զվարթ ձայնով:

— Ձի՛չտ ասա, Կարապետ, կրակի կծածն եր քեղ չատ տանջում, թե կնկանդ կարոտը,— հարցրեց Արտակը հետաքրքրությամբ վառված:

— Խե, խե, խե,— ծիծաղեց Կարապետը և աչքերը վայլեցնելով ասաց,— յերբ դուն ել բարով-խերով ամուսնանաս, էն ժամանակ կիմանաս կնկա-ողլուչաղի քաղցրությունը:

— Հըմ, դրա համար եր, վոր խեղճ Կարապետն ընկել յերկու կրակի մեջ երևում-խորովվում եր,— միջամտեց Մելսակը՝ կատակի տալով:

Սակայն նրանց խոսակցությանը վերջ տվեց հևացող ու ճթճթացող կրակը, վոր պահանջում եր ուղղություն տալ իր ոնթացքին և դասավորել իր հրեղեն թևերի մեջ այրվող նյութերը:

Հնոցավարները, նրանց հետ նաև Կարապետը, չչերով ղինված առաջ չարժվեցին:

ՀՈՍՈՂ ՋՐԵՐԸ

1.

Ճաշից հետո Կորյունը մի քիչ հանգստացավ, հագավ նոր չոքեր և սարալանջի ծառազարդ արահետով լքավ յերկաթգծի հանապարհը, վորն անցնում եր նախ փոքրիկ ժայռերի արանքով, ապա յերկու կողմից ծառերի տերևներն եյին հովահարում: Ներքև, ձորի մեջից չարունակ լչշում եր գետակը: Ինքը մացի լեռն ամբողջովին թաղված եր անտառի մեջ և կապուտակ յերկնքի լանջին պատկերում եր իր կանաչ ֆոնը:

Մոտ մի կիլոմետր այն կողմ, լեռան մնջքին՝ կպած եր փամրակ փոքրիկ կայարանը: Իսկ վերև, քարափին, նստոտել եյին համանուն գյուղի տները:

Կայարանն ամայանում եր և անչուք տեսք ընդունում, յերբ գնացք չեր գալիս: Կարծես թե մարդիկ չեյին բնակվում այնտեղ: Իսկ գնացքի ժամանակ, գյուղից, հանդիպակաց ամրաստեղ: Իսկ գնացքի ժամանակ, գյուղից, հանդիպակաց ամրաստեղ: լանջին տեղավորված մեղվաբուծական խորհանտեսությունից կամ մոտակա բանվորական չենքերից մարդիկ իջնում եյին գնացք նստելու, ծանոթ ուղևորի դիմավորելու կամ ճամբա դնելու:

Կառամատույցում միայնակ դրոսնում եր Կորյունը, հաճախ նայում եր քարափի բարձունքում ծվարած գյուղին, վորի տները ներքևից համարյա չեյին յերևում: Նրա սիրտը սղմվում եր ամեն անգամ, յերբ աչքերը բարձրանում եյին վերև՝ լեռան լանջն իվեր:

Ինչո՞ւ անհանգիստ եյին նրա աչքերը և բոսոր վայր եյին քնդունում, յերբ դիտում եյին կապույտ մչուշով ծածկված լեռան բարձունքները...

Կարճահասակ եր Կորյունը, սև գանդուր մազերով, դեմքն արևախանձ և ամրակուռ: Կայտառ եր նա ու չարժուն, ինչպես ձուկը՝ ջրում:

Արագ վոտքերով նա լքավ գետափ և ճարտարմարի մի քոթվածքում գտավ փոքրիկ, հպիվ գլզլացող աղբյուրը: Հանգստյին ջուր եր դա, թթվաչ համ ուներ և հոսում եր մեղմիկ, ուր պետք գետակի սրընթաց ջրերին չհասած, թաղվում եր հողաթմբերի թիրուսներում՝ կորցնելով իր հետքը:

Կորյունը ղրպանից հանեց փոքրիկ բաժակը, մի քանի անգամ լցրեց այն և խմեց:

Նրան չատ եր դուր գալիս այդ ջուրը, կարծես թե մի բան եր այրվում իր կրծքի տակ կամ մի մաշող ախնջանք եր բորբոքվում այնտեղ, վորը հանգստացնում, հագեցնում եր այդ անապական հեղուկը:

Զորամիջում խաղում եր իրիկնամուտի գեփյուռը: Նա թռվռում եր չարաճճի աղջկա պես, մատնահարում թիթեռն ու խոտերը և փախչում դնում ուր վոր: Անտառածածկ լեռան կանաչն ավելի ու ավելի յեր մուգանում և դառնում անթափանցելի:

Յերիտասարդը հանգարտ քայլերով բարձրացավ կայարան: Հերթապահը մի քանի անգամ զանգահարեց: Գնացքը դուրս եր յեկել մյուս կայարանից:

Արևի վերջին ցոլքերը վոսկե փոշի ցանեցին հանդիպակաց լեռան գագաթին, հուրհրացին մի պահ, թռչնեցին աչնան տերևների պես և մարեցին, հանդան: Անտառը դարձավ մի հսկայական ստվեր և պարուրվեց իրիկնամուտի կապույտ մչուշով: Ջով եր ողը և այնքան խաղաղ ու անդորր չրջակայքը:

Կառամատույցում յերկու մարդ լուռ կանգնած՝ ծխում եյին: Քարափի բարձունքից վայրյա աստիճաններով հանդարտ լքնում եյին սպիտակ չորերով մի կին և մի տղիկուհի՝ չոբերի մնձ կապոցը մնջքին:

Կորյունն ամբողջովին տեսողություն դարձած՝ միևև եր նայում չարունակ: Ո՞ւմն եր սպասում արդյոք: Ինչո՞ւ այդպես անհանգիստ եր և այդքան մտահոգ նրա դեմքը...

Կառամատուցում յերեք դեղջուկ տղա վաղվղում եյին և ուրախ կանչերով միմյանց հետապնդում:

Զորամիջի կանաչ մչուշում ծխի սպիտակ քուլաներ բարձ-

բացան, և հանդալով, դռռում-դռչումով դուրս թռավ վիշապի պես գնացքը, առաջ յնկավ վինչալով, ոռնդնդիից դոլորշի արձակելով և կանգնեց հևասպառ: Կայարանի խաղաղությունը վրդովվեց, մարդիկ չտապով ներքև իջան, վիրև բարձրացան, մխմյանց ձայնեցին. վագոնների լուսամուտներից ժպտուն աչքեր նայեցին, և ապա գնացքը սուլեց, հևաց ու կրկին առաջ չարժվեց: Մի քանի րոպե... և գնացքը ծածկվեց ձորամիջի կանաչ մշուշում:

Ձորից բարձրացավ աղջամուղջը և սողաց լեռան լանջն ի վեր: Կայարանն ու չրջակայքը թաղվեցին թանձր մառախուղի մեջ: Խորը մաքերով յերիտասարդը բարձրացավ աստիճաններն ի վեր: Այնտեղ, վերևում, սարալանջին, իրարից հեռու պատկերվում եյին գյուղի մեծ ու փոքր տները: Մի փոքրիկ առաջար քարափի լանջին սողոսկելով ձգվում եր ավելի հեռու: Ահա այնտեղ, մի քարաժայռի թիկնած՝ նստել և Մարոյենց տեղնակը:

Արդյոք տա՞ն և Մարոն և ի՞նչ և անում այժմ...

Առաջարի յեղերքին կանգնեց Կորյունը և ընկավ ծանր յերկմըտանքի մեջ՝ չարունակե՞լ ճամբան, թե հետ դառնալ... Ո՞ւր գնալ: Չե՞ վոր Մարոյի հայրը կամ մայրը կարող են տանը լինել: Ինչպե՞ս իմաց տա և դուրս կանչի Մարոյին: Չե՞ վոր դեռ գյուղը լիովին իր վրայից չի թոթափել հին սովորությունները ու աղաթները:

«Չե՛, չի կարելի այլևս առաջ գնալ: Մարոյին չի կարելի անհանդստացնել, հնարավոր չե այդ...»: Մտածեց Կորյունը, հետ դարձավ, նստեց քարափի ծայրին և տխուր աչքերով նայեց դեպի մթագնած ձորը:

«Այդ քանի՞ որ ե, վոր չի տեսել Մարոյին և ինչպես նրա կարոտն այրում ե իր սիրտը... Կարծես հենց մռութիկ, մթան մեջ, իրենից չատ մռութիկ պատկերվում են Մարոյի անուշիկ խոշոր աչքերը: Կարծես նա լսում ե և նրա քայլերի թեթև չրչյուրը: Ահա՛ նա գալիս ե, մոտ ե իրեն, այնքան մոտ, վոր ինքն զգում ե նրա ախորժելի հևքը... և ինչպես արագ ե բաբախում սիրտը, հոգին լցվում ե անուշ հույզերով:

Կարծես թե մի չատ հաճելի բան մեղմի՛կ, չատ մեղմիկ չոչափում ե իրեն, փայփայում: Ամբողջ մարմնովը սահում ե

մի ախորժելի սարսուռ: Ցնդ ինչ անուշ հեքիաթ ե ապրում Կորյունը—յերա՞զ ե արդյոք...

Ձայն չկա չուրջը: Խաղաղություն ե տիրում փոքրիկ դյուղում: Քարափի ծայրից մի չուն նայեց դեպի ձորը, մի քանի անգամ հաչեց և անարձագանգ մնալով՝ հետ դարձավ իր բունը:

Կորյունը բացեց կլսախուփ աչքերը և չատ տխրեց, յերբ իրեն դտավ մեն-մենակ նստած քարափի ծայրին: Ինչպես չուտ սահեց այդ անուշ յերազը: Ա՛խ, յերանի թե յերկար, չա՛տ յերկար մնար այդ բաղձալի պահը, չսահեր յերբեք, դառնար անվախան, մչտնջենական...

Փարափի բարձունքից սառնորակ զեփյուռը սլսլալով իջավ, իր պաղ թևերով չոչափեց նրա դեմքը և վազեց ձորն ի վար: Ձորում դղրդաց, սուլեց ապրանքատար գնացքը և առանց կանգ առնելու հեռացավ, գնաց: Դեռ յերկար ժամանակ ձորի խորքերից լսվում եր արագորեն ընթացող գնացքի ազմուկը:

Ցերիտասարդը վեր յելավ, մի կարոտագին հայացք գցեց խավարի մեջ թաղված գյուղին և իջավ կայարան: Մի քանի րոպե մարմրում եյին այնտեղ:

Ցերկաթգծի արանքով յերիտասարդը քայլեց առաջ: Մի կողմից քարաժայռերն եյին պատկերվում մռայլ ուրվականի պես, իսկ ներքևում ջրերն արագորեն ընթանում եյին աղմուկով ու չխոթով: Կարծես նրանց հալածում եյին, կամ ինչ վոր բանից ահաբեկված՝ գլխապատառ փախչում եյին ապաստան գտնելու:

Սա քանի՞երորդ որն ե, վոր Կորյունը գնում ե կայարան գնացքին սպասելու, բայց Մարոն ներքև չի իջնում, չի յերևում: Արդյոք ի՞նչ ե պատահել նրան, հո հիվանդ չի՞, գուցե գյուղական աշխատանքներն են խանգարում նրան ներքև իջնելու, չե՞ վոր ամառ ե, դաշտային աշխատանքների յեռուն չրջանը: Բայց յերեկ հանդիպած որ եր և գյուղից իջել եյին աղջիկները, զբոսնում եյին կայարանում, և նրանց զրույցից ու գրնդուն քրքիջները բռնել եյին չորս կողմը: Նա տեսավ նրանց մեջ Մարոյի ամենամռութիկ ընկերուհուն՝ կարմրաթուշ Շուղիկին: Ղերջինս նույնիսկ բարևեց իրեն, ժպտաց, բայց ինքը, չգիտես ինչո՛ւ, սիրտ չարավ հարցնել Մարոյի մասին: Նա հավատացած եր, վոր Մարոն ել ներքև կիջնի: Բայց ի՞նչ հիասթափություն,

յերբ գնացքի մեկնելուց հետո ամենքը հեռացան, աղջիկները ուրախ բացականչություններով վերև բարձրացան, Մարոն չեր եկել այդ օրը...

— Բարի աջողո՛ւմ, ախպեր,— ճայնեց ուղեկիցը, որ ձեռքին բռնած հազիվ իր չուրջը լուսավորող լապտերը նրա կողքից անցավ՝ յերբեմն-յերբեմն բահով գրնդապնդելով յերկաթգծերը:

Մորը մոքերի մեջ թաղված՝ Կորյունը հոգիվ պատասխանեց ուղեկիցի վողջույնին և չարունակեց ճամբան: Շուտով նա թեքվեց դեպի ձախ և մի նեղ ծառուղով բարձրացավ վերև: Սարալանջին, անտառի բացատում, մեկը մյուսից խոշոր՝ կանգնել էին բանվորական չենքերը: Նա մոտեցավ յերկրորդ չենքին և աստիճաններով բարձրացավ յերկրորդ հարկում գտնվող իր սենյակը:

Փոքրիկ եր սենյակը, մի լուսամուտով, որ նայում եր կանաչազեղ ձորին, որտեղից չարունակ զով ոդ եր նեռս թափանցում, և պատկերվում էին դեղանկար տեսարաններ:

Զնայած վաղուց ճաչելուն և տհաստարակ լավ ախորժակ ունենալուն, այդ յերեկոյան նա վոչինչ չկերավ: Տրամադրությունը խիստ ընկել եր և ախորժակը փակվել:

Գիշերը վատ քնեց Կորյունը, անհանգիստ չուռ ու մուռ եր գալիս անկողնում և չարունակ մտածում Մարոյի մասին:

«Ա՛խ, մի լմանաս, թե այժմ ինչ է անում Մարոն և ինչի՞ մասին մտածում... Արդյոք Մարոն մտաբերո՞ւմ է ինձ, մտածո՞ւմ է իմ մասին, ինչպես յես՝ նրա... Չլինի՛ մոռացել է ինձ և նրա միտքը դնացել ուրիշ տեղ, ուրիշի չուրջն է պատվում... Գուցե Ծնողներն ուրիշ տղա յեն գտել նրա համար... Ջե՛ վոր արդեն հասած աղջիկ է Մարոն: Գյուղում ամուսնության խընդրերն ավելի սարդ և արագ է վճռվում: Աղջկա Ծնողները յերբեմն վճռական դեր են խաղում այդ խնդրում: Իսկ Մարոյի Ծնողները, վոր կոմունայի կերպով իմացել են իմ մտադրությունը նրանց աղջկա մասին, համաձայն չեն դրան: Նրանք ուզում են Մարոյին ամուսնացնել իրենց դյուղացի տղի հետ, վոր իր տնտեսությամբ կապված է դյուղին: Ջե՛ վոր յես վոչնչ տնտեսություն չունեմ, մի որ այստեղ եմ, մյուս որը՝ ուրիշ տեղ: Ցերևի այդ է պատճառը, վոր Մարոն խուսափում է ինձնից և այլևս չի յերևում...»:

Ի՞նչ պիտի լինի արդյոք Կորյունի վիճակը, յեթե Մարոն չամուսնանա նրա հետ: Բանվեց դարձյալ և բոլորել արդեն Կորյունը և առաջին անգամ ե, վոր մի աղջիկ այնքան խորը ազդել է նրան և այդպես թունդ դրավել նրա սիրտը:

2.

Զորից բավական վերև, ամբակուռ ժայռերին կպած՝ նստել է դրանիտի գործարանը, վորի լուսամուտները նայում են ձորին: Հեռվից բարձրանում են գրանիտի ժայռերը:

Գործարանի ներսը, ընդարձակ տարածության վրա, չարունակ չիշխում և յերկաթյա ծանրակուռ գործիքը, իջնում և ու բարձրանում և իր սուր կնճիթով ջարդուռուում, համաչափ ձև և տալիս գրանիտին: Չիշխկացող մեքենայի մոտ փոշոտ բանվոր-նակով կանգնել է Կորյունը և հետևում է մեքենայի չարժումներին: Մի տարի յե, ինչ նա քաղաքից տեղափոխվել է գրանիտի գործարանը, սկզբում վորպես մեքենավարի ողնական, իսկ հիմա, յերբ մեքենավարը տեղափոխվել է ուրիշ գործարան, նա արդեն դարձել է մեքենավար:

Կորյունը լավ է հասկանում մեքենայի լեզուն և արդեն ուսումնասիրել է նրա մասերը: Յեվ, յերբ վերևե պատճառով մեքենան կանգ եր առնում և հրաժարվում աշխատելուց, Կորյունն իսկույն կարդավորում եր նրա խանգարված մասերը և աշխատանքի դնում:

«Ինչքան էլ ինատ անես, սատանա ընկնի փորդ կամ թե չե ծուլանաս և հրաժարվես բանելուց, մեքենան յե, ձեռքիցս չես ազատվի: Քեզ էլի գործի կդնեմ...» մտմտում եր Կորյունը և իր վարժ ձեռքերով լարում մեքենան:

Ժամերը սահում էին իրար հետևից, և Կորյունը լարված ուշադրությամբ հետևում եր թափով իջնող մեքենայի աշխատանքին:

«Այսոր գործարյալ պիտի դնամ կայարան և պիտի աշխատեմ, ինչպես լինի, հանդիպել Մարոյին: Ա՛խ, յեթե ինձ հաջողվեր տեսնել նրան այսոր...»:

Ինչ վոր նախազգացում նրան հուսադրում եր կարծես, վոր այդ իրիկուն կհանդիպի Մարոյին: Այս գիտակցությունը վոգևորեց նրան, ախորժելի հույզերով վարարեց սիրտը, և Կորյունը տարվեց քաղցր հիշողություններով:

«Մարոն թիկնել եր կայարանի ճաղերին, և նրա դեմքը պայծառացել եր՝ լեռան կանաչ բարձունքին նոտած վոսկեկուա ջահի պես փայլփլող արևի շողքից: Նրա կողքին կանգնել եր Շողիկը և ինչ վոր բան եր պատմում նրան: Ցերը Կորյունը նրանց մոտից անցավ և մի համառ հայացք գցեց նրան, Մարոն չվոթվեց այդ հայացքից, ել ավելի չառադունեց նրա դեմքը, և աչքերը խոնարհվեցին մի պահ: Ապա այդ աչքերը բարձրացան և սկսեցին հետևել յերկաասարդի քայլվածքին: Շողիկն ղնաց այդ փոքրիկ «միջադեպը», քիթ տակ ժպտաց և ինչ վոր փսփսաց Մարոյի ականջին: Հետո յերկուսը միասին ծիծաղեցին բարձրաձայն: Ի՞նչ խոսեցին արդյոք միմյանց հետ, յերկաասարդի համար մնաց գաղտնիք: Սակայն տասնյին իսկ հայացքից Մարոն այնքան խորն ազդեց նրան, վոր ամբողջովին ուշադրություն դարձած՝ սկսեց հետևել աղջկան: Մի քանի անգամ նրանց հայացքները չեշտակի հանդիպեցին միմյանց, մինչև վոր Մարոն անհարմար զգալով այնտեղ յերկար կանգնած մնալը, փայտյա աստիճաններով Շողիկի հետ սկսեցին բարձրանալ դյուղը: Սանդուխքի վրա պատկերվեց Մարոյի արևաչող դեմքը: Քարափի ծայրին Մարոն յերևաց և նկատելով ներքևը, կայարանից ամբողջովին ուշադրություն դարձած յերեն նայող յերկաասարդին, ժպտաց և այլևս չերևաց: Այդ ժպիտը Կորյունի սրտում մնաց վորպես մի քնքուշ, անկրկնելի հիշողություն: Մի քանի որ հետո նրան հայդուկով դրանիթ պարծարանում աշխատող բանվորներից մեկի միջոցով ծանոթացավ Մարոյին (նա Մարոյենց համադյուղացին եր, մոտիկ հարևանը): Այդ պատահեց կայարանում, յերբ Մարոն և Շողիկը դյուղից իջել եյին գնացքին դիմավորելու: Ծանոթանալով Մարոյի ու Շողիկի հետ Կորյունը մի ամբողջ ժամ անցկացրեց նրանց հետ զրոսնելով ու զրուցելով: Այնուհետև նա հաճախ եր առնում Մարոյին, բայց քիչ եր առիթ լինում նրա հետ խոսակցելու: Նրան հանդիպելիս Մարոյի դեմքը չառադունում եր, աչքերը խոնարհվում եյին, չվոթվում եր: Աշխատում եր խուսափել Կորյունից, չտապով վերև եր բարձրանում: Թեև դեռ նրանք չեյին բացել իրենց սրտերը և վոչ մի բառ չեյին արտասանել սիրո մասին, բայց այդ զգացմունքն անբարբառ ուրախ լուռ, արագորեն հեղեղում եր նրանց սրտերը՝ վարարած լրելի

պես: Յեվ նրանցից ամեն մեկն իր տեղը խորապես զգում եր այն անզուսպ, անդիմադրելի ուժը, վոր ձգում, միացնում եր նրանց սրտերը:

«Ա՛խ, Մարո ջան, հիմա ի՞նչ ես անում դու, տա՞նն ես արդյոք, թե հանդում. դուցե կալում յեղն ես քչում կամ ածրոից վերադարձող հորթն ես տեղավորում: Սափորն ուսած աղբյուրն ես գնացել կամ ձորում, գետակի ափին չոր ես լվանում. դուցե Շողիկի հետ գնացել ես անտառ և նրա խորքերից մոշ ես բերում տուն: Ա՛խ, արդյոք վո՞րտեղ ես դու, Մարո ջան...»:

Կարծես մի բան խայթեց նրան կամ մեկը սուր, խլացնող ճայնով ճչաց ականջին, այնպես ցնցվեց մտքերի մեջ որորվող Կորյունը և վեր թռավ: Նրան զարթեցրեց քարհատ բանվորներից մեկը: Նա սարսափով տեսավ, թե ինչպես մեքենան ինչ վոր պատճառով կորցնելով իր հավասարակշռությունը, թուլացել եր և փոխանակ գրանիտը ջարդելու, յերեսից խիճ ու ավազ եր պոկոտում և չորսում ողի մեջ: Ամբողջ շրջակայքը ծածկվել եր փոշու ամպի մեջ:

— Ա՛յ մարդ, քնել եյիր, խելքդ ուրիշ տե՞ղ եր գնացել, վոր մեքենան թողել ես անտեր,— խիստ ճայնով նկատեց հենց նոր ներս մտած գործարանի դիրեկտոր-ճարտարապետը:

— Ներողություն եմ խնդրում, դրա համար էլ ընկել եր մտքերի յեռանից,— չարաճճի կերպով խեթեց քարհատը:

Ցերիտասարդը թեև չափազանց ճնշված զգաց իրեն, բայց հավաքելով իր ուժերը՝ վերականգնեց սառնասրտությունը: Իսկույն կանգնեցրեց մեքենան և սկսեց ուշադրությամբ քննել ու կարգի բերել նրա խանգարված մասերը:

Շատ չանցած՝ մեքենան կրկին սկսեց կանոնավոր աշխատել:

Ճարտարապետը, վոր լուռ դիտում եր այդ գործողությունը, յերբ մեքենան սկսեց կրկին աշխատել, չոյից յերիտասարդ մեքենավարի ուսը և այս անգամ մտերմական ճայնով ասաց.

— Քեզ հետ այսպիսի բան չեր պատահել յերբեք. գոնե ինձ հայտնի չե, վոր նման դեպք պատահած լինի: Ցես կարծում եմ, վոր սա կլինի վերջինն ու առաջինը...

Ճարտարապետը բարձր եր խոսում, վոր իր խոսքերը լսելի լինեն: Նրա ճայնը դողում ու բեկբեկվում եր մեքենայի ականջ

խլացնող աղմուկի մեջ: Ցերեկասարդը ծպտուն չհանեց, և ճարտարապետն ավարտած համարելով իր դերը՝ անցավ մյուս բաժանմունքը:

3.

Մեծ իրարանցում էր Մարոյենց ընտանիքում: Նրա հայրը, Ցեղիկյան Սաքոն, մոտ քառասունհինգ տարեկան, ղլուխը կարմրավուն թաչկինակով կապած, յերկարաթեվ բեխերով, տրեխավոր մի ղեղջուկ՝ նստել էր ոջախի կիսամութ խորքում, հնամաշ կարպետով ծածկված թախտին և ձեռքն ուժգնորեն թափահարելով ոդում, բացականչում էր.

— Ցես նրան աղջիկ չե՛մ ասա, չե՛: Նա իմ ոջախի թալը չէ, ղլուխը քարը, ուր ուզում է՝ թող գնա:

— Մի ղրան տես է՛. ղլուխ դնելու տեղ չունի, պահակվել է ուզում: Ա՛յ քեզ բան,— մարդու խոսքերը լրացնում էր Մարոյի մայրը, վոր իր վոքրիկ մարմնով ջղայնությունից ճոճվում էր անթիկունք ու խարխուլ նստարանի վրա:

Հանդիպակաց պատին կռնակը տված՝ նստել էր ղրանիտե դործարանում աշխատող իրենց դյուղացի Մաճկալենց Մուշեղը, վոր կորյունի կողմից ուղարկված էր Մարոյի ձեռքը խնդրելու: Թեև Մուշեղին անախորժ էր, վոր իր առաջարկը Մարոյենց ընտանիքում մեծ դայրույթի ու դժդոհության առաջ բերեց, բայց նա չկորցրեց իր հավասարակշռությունը: Առանց ձայնը բարձրացնելու նա աշխատում էր ամեն կերպ համոզել Մարոյի ծնողներին:

— Իմ կարծիքով, դուք չեք սխալվի, յեթե Մարոյին տաք նդ տղին: Առողջ, խելոք և աշխատասեր տղա յե Կորյունը: Ի՞նչ ասած, վոր վորը և, ծնողներ չունի, բանվոր տղա յե, իր քրտինքով ապրող: Ենպիսի փեշակ ունի ձեռքին, վոր իսկի չի դրչի: Իմ խելքով, դուք լավ չեք անում, վոր եդպես կոդի յեք ընկել...

— Լավ ենք անում, թե վատ՝ մեր ապրանքը թող մնա մեզ: Դու եղ տղին ասա, վոր մենք աղջիկ չունենք նրան տալու,— յեռանդով հակաճառում էր Սաքոն:

— Ցեկեք աղջկան խոսեցնենք՝ տեսնենք ինչ կասի: Գուցե

նա ուզում և առնել են տղին: Ինչո՞ւ յեք աղջկա ձեռ ու վոտը կապում ու նստում բախտին:

Մուշեղի այս խորհուրդն ավելի ջղայնացրեց ու վայրացրեց Սաքոյին, նա վեր թռավ թախտից և խիստ ձայնով ասաց.

— Մեկ եղ եր պակաս, վոր աղջկա խելքով նստենք ու կանդնենք: Նա դեռ կաթնակեր յերեխա յե, վոնց կարող է չարը ու բարին իրարից ջոկել:

— Ցես նրա մազերը ձիպ կաամ, թել-թել կպոկեմ, վոռնելիս տակ կտրուեմ, հողին հավասար կդարձնեմ, քան թե կը-թողնեմ վոր նա իր կամքով չարժվի,— միջամտեց խոսքին Մարոյի մայրը մյուս կողմից:

— Հիմա ժամանակները փոխվել են, ախպեր. հիմա չի կարելի հին որերի պես բռնությունն դործ դնել, աղջկա ցանկության հակառակ դնալ և վոռնաոտակ անել նրա բախտը:

— Ինչքան էլ կյանքն ու ժամանակները փոխվեն, մենք մեր պապական ադաթներից ձեռք չենք վերցնի: Մենք չենք կարող մեր աղջկա բախտի հետ խաղալ: Դու են տղին համոզի, վոր ձեռք վերցնի Մարոյից և իր համար ուրիշ հարսնացու ճարի, ե դրանով փակենք ես անհամ պատմությունը, թե չե, ախպեր, յես գործ կունենամ դուշմանի հետ...

Սաքոյի այս վճռական խոսքերից հետո Մուշեղը վեր յեղավ և քայլերն ուղղելով դեպի դուռը՝ ասաց.

— Ցես իմ պարտքը կատարեցի, մնացածը դուք գիտեք, ախպեր:

Ու քարափի ոճապատյա առապարով իջավ ձորը:

Մարոն նստել էր ոջախի կռին և յերդիկից լսում էր Մուշեղի և իր ծնողների մեջև տեղի ունեցած խոսակցությունը: Նրա սիրտը բարախում էր ուժգին, ձեռները դողդողում էին: Ծնողների հակառակությունը նրա թևերը թուլացրին և նեռահարված թռչունի պես ուժասպառ՝ ընկավ յերդիկի մոտ:

Սրեկը հավաքեց իր վերջին չորերը լեռներից հանաչ թիկունքից: Հետզհետե լույսերն ու դույները աղոտացան: Վերևից՝ մանուշակի թերթի պես պատկերվող յերկնքից աստղերը բացին իրենց աչքերը և ժպտացին հեղանաղ: Հայացքն այդ ժպտացող աստղերին դարձրած Մարոյի սիրտը բեկվեց, ամբարտակ քանդող ջրի պես իր հունից դուրս յեկավ և վարարեց չորս հողմը: Մարոյի աչքերից արցունքներ գայտեցին և առատորեն

թափվեցին նեբքև: Ցերկու ձեռքով դլուխը բռնեց և հեկեկաց բնաւեր առաջակի պես:

Ինչո՞ւ այդպես փղձկաց Մարոն, և արցունքները հոսեցին անդադար: Ինչո՞ւ այսպես հուսահատ դալարվում եր նա ողջի կարին:

— Մարո՛,—նեբքևից յեռանդով կանչում եր մայրը:

— Ա՛յ Մարո...

Մարոն չկարողացավ չարձագանգել մոր համառ կանչերին: Վեր յելավ, ըրջազգեստի ծայրով սրբեց արցունքները և խարխլած առնդուխքով նեբքև իջավ:

— Սղջի՛, ա՛յ սևաաչրա, եղ ի՞նչ ես կուչ յեկել կարին, դնա հորթը բեր, մազդ թափվի...

Մարոն լուռ ու դլխիկոր բռնեց սարն ի վեր ձգվող առապարը: Ֆարքարոտ ճանապարհը չորացած խոտերի ու թվուտներեք ապառքով վոլորվում եր լեռան մեջքին:

Բավական յերկար բարձրացավ, և լեռան թիկունքին ընդարձակ հարթավայր բացվեց: Հորթարածը յերիչներին ու հորթերին քշում եր դեպի դյուղը: Մարոն առանձնացրեց իրենց հորթը և քշեց ուսն: Հորթը դեռ փոքր եր ու անվարժ. մինչև ճանապարհին վարժվելը Մարոն ուղեկցում եր նրան:

Գիշերը մեղմիվ չոչափեց և ապա ծանրացավ դյուղի վրա: Փայտերն ու քարափները սովերները դարձան: Գյուղացիք չատ պեցին իրենց տները: Ողջի մառախլապատ խորքում իր տրեխի քանդված թելերը հյուսող Սաքոն բարկացկոտ աչքերով ծուռ-ծուռ նայեց աղջկան, վոր աղբյուրից վերադառնալով, սափորով լիք ջուրը տեղավորեց մի անկյունում:

Մայրը սեղանի վրա դարսեց ուտելեղեն, և չուռով ընտանեբքը բոլորեց սեղանի չուրջը՝ ընթրելու:

Սաքոն բարկացկոտ աչքերը չեր հեռացնում Մարոյից:

— Դու դրանիսի մաչինստ տղի հետ խոսք ու դրից ունեցո՞ւ ես,— բացականչեց նա:

Աղջիկը լուռ եր և դեմքը դունատ:

— Ցեթե մեկ էլ դու եղ չանվորդու հետ ման դաս կամ դրից անես, էլ ձեռքիցս չես ազատվի, վոտքերիս տակ դցելով քեղ հեռես կջարդռտեմ, վոր չանատատակ լինես. իմացա՞ր, նամուսդ քեղ պահի, հը՛...

Բառնցքի մի ուժեղ հարվածի իջավ աղջկա մեջքին: Մարոն

սաստիկ ցավից կծկվեց, թևաթափ թռչունի պես խեղճացավ, սեղանի մոտից հեռանալով՝ ողջույց դուրս յեկավ և նստեց բակում մի կոճղի վրա: Գլխավերևը, կապուտակ յերկնքի լանջին ադամանդների պես փողփողում էյին աստղերը: Լեռան բարձունքին ինչ վոր մի ջան եր ճոռում, իսկ հանդիպակաց ախոռի բաց դռնից լսվում եր հանգստացող կովի խոր թառանչը:

4.

Ցերբ Մուշեղը կորյունին հայտնեց Մարոյի ծնողների պատասխանը, նրա աչքերը մշուշվեցին, դարձան ձմեռվա խոժոռ յերկինք:

— Եղբան դարդ մի անի, սիրելիս: Մի աղջկա համար չարժե եղբան վշտանալ և կսկծալ,— մխիթարում եր նրան կողքին նստած Մուշեղը:

— Եղ աղջիկն ուրիշ բան է: Ցես նրա հոդուն մատաղ,— հծծում եր քթի տակ Կորյունը:

Մուշեղն աշխատում եր ամեն կերպ համոզել, սփոփել նրան: Նա չատ եր համակրում Կորյունին: Բանվորների չրջանում դրանք ամենից ավելի էյին հասկացել ու մտերմացել միմյանց: Մուշեղը չատ եր հավանում Կորյունի պարզ և անկեղծ բնավորությունը, դնահատում եր նրա տոկունությունը, նվիրվածությունը աշխատանքին:

«Մենակ տղա յե, անտուն, անկայան, վոչ վոք չի ունեցել, վորբ և մեծացել և իր քրտինքով ու տոկուն ձեռներով կյանքի ճանապարհ բացել...»:

Ցեվ Մուշեղը ցանկանում եր ամեն կերպ ոգևորել նրան:

— Լավ կլինի՝ Թողնես, մտահան անես նրան: Ինչ աղջիկ է, վոր նրա համար եղբան մտածում ու տանջվում ես: Գյուղի չորսամյա դպրոցն է ավարտել և ուրիշ վոչինչ: Մի առանձին դեղեցկություն էլ չունի, վոր նրա համար եղբան տրորվում ես: Նրա նման աղջիկները չա՞տ կան, վորքան ուզես...

Կորյունը լուռ եր, դլուխը խոնարհել, մատներով պակոտում եր կանաչ խոտը և տրորում ձեռքի մեջ: Նրա լռությունը Մուշեղին քաջալերեց:

— Հը՛մ, սիրտդ լայն պահի, մի՛ մաչվիր եղբան: Ցես քեզ համար ուրիշ աղջիկ կճարեմ, ավելի լավը և ավելի հարմարը:

եղ աղջկա հայրը կամակոր մարդ է, դեռ համառ կերպով կը-
պած է հին ադաթներին ու սովորութիւններին, ինչերից չի
թողնում հին կյանքի փոչին. նրա հետ դործ ունենալ չար-
ժե...

Բավական դրագետ եր Մուշեղը, կարողանում եր ազատ
կերպով լրագիր և հանրամատչելի դրքեր կարդալ: Գրանիտի
դործարանում աշխատելու հենց սկզբից նա մտավ հետաքրքիր
բանվորական դպրոց և յերեք տարի սովորեց այնտեղ: Իսկ
Կորյունը ավարտել եր Թերի միջնակարդ դպրոցը և, վորպես հին
կոմյերիտական, քաղաքականապես բավական դարդացած եր:

Այդ զրույցը նրանց մեջ տեղի ունեցավ աշխատանքից հե-
տո, յերբ դնում եյին ճաշի: Կորյունի լուռթյունը Մուշեղը հա-
մարելով համաձայնութեան նշան, վեր յելավ և առաջարկեց
նրան դնալ ճաշի: Բայց Կորյունն ավելի հարմար համարեց
նստած մնալ ձորաթմբին: Մուշեղը չպնդեց այլևս և յերկաթ-
ջծի ճանապարհով քայլերն ուղղեց դեպի դյուղ: Նա իրենց
տանն եր ճաշում:

Մենակ մնալով, Կորյունը պառկեց խոտերի վրա և, յերե-
սը չուռ տալով դեպի դետակը, դիտեց ջրերի դլխապտուդա ու-
նդաձիից վազքը:

«Վորքան անհոդ են այդ ջրերը, միչտ աշխույժ, դվարթ,
յերդասուն: Կարծես վիշտ չունեն, վոչ մի ցավ կամ հոգս չի
տանջում նրանց: Գալիս են ու դնում չարունակ, իրենց թավան-
ջիկ թևերով ծեծելով ժայռոտ կողերը, արևի լուսերն ու չո-
ղերը բևեռեկելով իրենց մեջ ճաճանչում են, ժպտում, փրփուր
ցայտում ու փախչում, փախչո՛ւմ չարունակ...»:

Յերիտասարդի աչքերը վերև բարձրացան, ծառերի
տրանքից պատկերվեց հանդիպակաց ձորը՝ ամբողջովին ծածկ-
ված խիտ ծառերի մուդ-կանաչ ծածկոցով: Դա Բնձորն և, վոր
խորը ճեղքում և լեռը և դնում-կորչում բարձրաբերձ սարերի
խորքում: Այնտեղից մի վոխա վտակ հոսում և և դալիս միա-
խառնվում դլխավոր ձորի դետակին: Մի անդամ Կորյունը
Մարոյի ու Շողիկի հետ դնացել և Բնձոր մոտ հավաքելու: Ո՛,
յերբեք, յերբեք չի մոռանա Կորյունն այդ հրաչալի որը և
հիանալի դրոսանքը: Ցեվ այն ել ո՞ւմ, Մարոյի հետ...

«Առավոտ վաղ մենք ճամբա ընկանք, յերբ դեռ նոր եյին
աթեի ճառագայթները սպսպում լեռան կատարին: Մենք ժա-

մադրվել եյինք, և յես սպասում եյի դետակի վրա ձգված կա-
մրջկի մոտ: Վորքա՜ն մեծ յեղավ իմ ուրախութիւնը, յերբ
փոքրիկ դամբյուղները ձեռքներին Մարոն ու Շողիկը քարա-
փից իջան ուրախ բացականչութիւններով, յեկան-միացան ինձ
և կամրջից անցնելով՝ ճամբա ընկանք դեպի Բնձոր: Անտառի
յեզերքով անցանք և խշշացող դետակից հետո մտանք մի
մութ, ահռելի ձոր, վորտեղ վոչ վոք չի ապրում, և վոչ մի
մարդկային ոտնչ չի ընկնում, վորտեղ անտառի ծառերն այնքան
խիտ են, այնքան մոտ ու միմյանց թեվանցուկ, վոր մի քանի
քայլ հեռու վոչինչ չի յերևում: Ահա այդ ձորի լանջերին մենք
սկսեցինք մոռ հավաքել: Ցեվ վորքան առատ և այնտեղ այդ
սքանչելի պտուղը: Մարոն ու Շողիկն արագորեն քաղում եյին
մոռը և լցնում իրենց դամբյուղները: Ցես չարունակ նայում և-
յի Մարոյին, այդ անուշիկ աղջկան (ինձ համար աշխարքիս ա-
յի մենանանուշիկ և ամենագեղեցիկ աղջիկը Մարոն եր), հետևում
եյի նրա թեվերին, նրա մազերին, շողշողուն աչքերին ու չեյի
կշտանում... Մարոն զբաղում եր իր վրա կենտրոնացած իմ հա-
յացքը, ժպտում եր, և յես զբաղում եյի, վոր անչափ հա-
ճելի յե նրան այդ: Ցես հաճախ նրանց դամբյուղների միջից դո-
դանում եյի մոռը և ուտում: Աղջիկները չարանում եյին. «ինչ
չարն ես» ասում եր Մարոն: «Ինչ անկուշտն ես ու ծույլ, ինքդ
չես քաղում, աչքդ գցել ես ուրիշի քաղածին, ա՛յ քեզ ձրիա-
կեր»—բացականչում եր Շողիկը ջղայնացած: Բայց յես բնավ
ուշադրութիւն չեյի դարձնում նրանց այդ նկատողութիւննե-
րին: Աղջիկներն պրուշանում եյին, չեյին ուզում մտնել ձորի
խորքը, «արջ չատ կա այս ձորում», ասում եյին նրանք: Բայց
յես չեյի վախենում և պատրաստ եյի Մարոյի հետ դնալ ձորի
ամենախոր անկյունները, յեթե նա ցանկանար, թեկուզ արջի
հանդիպելինք կամ գայլեր գային. մենք նրանց կվոչնչացնե-
յինք: Իսկի չեյի վախենում, այնքան սքանչելի յեր Մարոն...»:

«Ցերը բավականաչափ մոռ հավաքեցինք և դուրս յեկանք
Բնձորից, դետակից բարձր, հենց այս հանդիպակաց սարալան-
ջին նստեցինք մի կանաչ ու ծաղկավետ տեղ: Ցես ինձ հետ
հաց, պանիր ու յերշիկ եյի բերել. միասին նախաճաշեցինք:
Մարոն մեծ ախորժակով ուտում եր իմ բերած նախաճաշը:
Ցեվ յես այնպես եյի ուզում, վոր Մարոն չարունակ ինձ հետ
լիներ և միչտ միասին նախաճաշեյինք բնութեան այդ հրաչալի

դրկում... Հետո մենք յերկար զրույց արինք, յես իմ մասին պատմեցի, Մարոն ու Շողիկն՝ իրենց։ Յերբ արևը բարձրացավ ու կախվեց ձորի վրա, Մարոն ու Շողիկը հրաժեշտ տվին ինձ ու քայլերն ուղղեցին դեպի գյուղ։ Նրանց դնալուց հետո յես հանվեցի ու մի հաճելի լոգանք ունեցա այս ջրերի առնաչունչ դրկում։ Ապա չորերս տեղափոխեցի այս ափը և հագնվելով՝ յեկա ու հանգստացա հենց այս հողաթմբին, այս կանաչավետ վայրում։ Ա՛խ, ինչ լավ եր այդ որը, այդ սքանչելի զբոսանքը, մթամած ինճորը, անուշահամ մոռը, ջրերը և Մարոն, Մարո՛ն...»։

Ծառերի վրա պառկած յերիտասարդը մի պահ մնաց այդ հիշողության թովիչ մթնոլորտում։ Շուտ անցավ այդ հմայիչ պահը։

Տխուր ապրումներով նա վեր յելավ և քայլերն ուղղեց տուն։ Այդ որը նա չճաշեց, ախորժակ չուներ բոլորովին, յերկարեց անկողնին և աչքերը բաց լուսամուտից հառեց կանաչազեղ ձորի վրա իջած կապուտակ յերկնքին։

5.

Վասկեղեն աչունը հանդարտ սահում եր ձորի մեջով։ Ծառերը չորանում եյին, տերևները դեղնում։ Անտառը կամաց-կամաց մերկանում եր։ Ցեղանակը ցրտում եր և ղղացվում եր ձնառեր հովի սառնորակ շունչը։

Ցեղանակի փոփոխությունը սակայն յերբեք չեր ազդում գործարանի աշխատանքների վրա։ Ամենքը այնպես եյին, ինչպես առաջ, միայն Կորյունն եր դառնում ավելի մտախոհ, ավելի ինքնամփոփ։ Մուշեղի ընկերական խորհուրդները չհասան իրենց նպատակին։ Ընդհակառակն՝ ավելի ու ավելի եյին բորբոքում չմարող կրակը...

Բոլոր ընկերներն էլ զիտեյին Կորյունի վիշտը և, վորովհետև չատ եյին սիրում իրենց ընկերոջը, աշխատում եյին ամեն կերպ աջակցել նրան, խորհուրդներ տալ։

— Յեթե այդքան սիրում ես և տանջվում նրա համար, յեթե հիրավի այդ աղջիկն էլ փոխադարձաբար քեզ է սիրում, էլ ի՞նչ ես ծնողների ոտքին մտիկ տալիս։ Ձեր կամքը չի՞, միացրեք ձեր կյանքը միմյանց, պրծավ-պնաց։ Մեր պատքն է ամանակել ձեր հարսանիքին, ուրախանալ և ձեզ յերկար կյանք ու բախտավորություն ցանկանալ...

Այսպես եյին խորհուրդ տալիս ընկերները։

«Հեչա եր, ի հարկե, նման խորհուրդ տալը, բայց հնարավո՞ր եր արդյոք այդպիսի բան։ Արդյոք կհամաձայնի՞ր Մարոն դիմել նման քայլի...»։

Կորյունի համար չատ անսպասելի ու զարմանալի յեղավ, յերբ հանդսաի որը, ճաշից հետո, կոոպերատիվ խանութի մոտ կանդնած դասավ Մարոյին... Ուրախությունից Կորյունի սրտոզի մարմինը դողաց, մոտ վազեց և ասաց.

— Մարո՛, եդ վո՞ր քամին քեզ բերեց այստեղ։

— Յեկա քեզ տեսնելու, ասելու բան ունեմ,—կամացուկ պատասխանեց աղջիկը, ուշադրությամբ նայելով չորս կողմը։

Ներանք ծառուղով բարձրացան սարալանջը և նստեցին դրսնիտի ժայռերի արանքում մի առանձնացած տեղ, ուր կարող եյին ապահով զրուցել։

Կորյունը յերբեք չեր պատկերացնում Մարոյին այդտեղ, իր կողքին նստած և յերջանիկ դողով բռնված՝ չեր կարողանում խոսել։ Աղջիկն ավելի գործնական դտնվեց և իսկույն դիմեց իր անսպասելի այցելության նպատակին.

— Յես յեկա հետդ խոսելու։ Ծնողներս ուզում են ինձ ամուսնացնել կիրովականցի մի մարդու հետ, վոր տաբելքով ինձնից յերկու անգամ մեծ է... Ավելի շուտ ինձ կխեղդեմ, կվոչնչացնեմ, քան թե կդնամ նրա տունը։ Ինչ ասած, վոր տուն, այդի ունի և լավ յեկամուտ և տանում։ Ինձ հարկավոր չեն դրանք։

Մարոյի աչքերի մեջ արտասուքի կաթիլներ պսպղացին։

— Ա՛խ, Մարոն ջան, յեթե դու իմ կինը դառնայիր, վորքան յերջանիկ կապրեյինք միասին,— չշնջաց Կորյունը և վերցրեց աղջկա ձեռքը։ Վերջինս թույլ տվեց, վոր տղան իր ձեռքը փայփայի իր ափի մեջ։ Իսկ ամեռնամուտի արևը սահում եր լեռան լանջով և իր ցոլքերով հաղիվ եր կարողանում ջերմացնել նրանց։

— Իմ կյանքը չատ է դառնացել։ Քո պատճառով ծնողները չարունակ տանջում են ինձ։ Յես չդիտեմ ինչ անեմ,— պռնգացավ աղջիկը և փղձկաց դառնապես։

Հետո ձեռքն ազատեց և սրբեց աչքերից թափվող արցունքները:

— Ցերեկ դու էլ սիրում ես ինձ այնպես, ինչպես յես քեզ, յեկ ինձ մոտ... Ամենալավ ճանապարհն այդ է,— ասաց յերկտատոպրդը:

Մարտն սարսափով նայեց նրան և վեր յելավ:

— Ուշում ես խայտառակվե՞մ ամբողջ աշխարհում: Այդպիսի բան կարելի՞ յե:

— Մենք այստեղից կհեռանանք, վորպեսզի ծանր չթվա այդ քայլը:

Կորյունի պատասխանը լուռ ունկնդրեց աղջիկը և բնակավ յերկմտանքի մեջ: Յերիտասարդը վեր յելավ նորմպես և չոյեց աղջկա մազերը: Մի վայրկյան էս, և աղջիկն իր յերեսին զգաց նրա չբծոնքների այրող հպումը. նա գլխապատառ վազեց պրանիսի ժայռերի արանքով և անհայտացավ մոտակա ծառուդում:

Յերիտասարդը մնաց մենակ, չփոթված, կարծես մի սքանչելի աչխարհ, մի հեքիաթային տեսիլք չքացավ իր զրկից և նրան թողեց ամայի ժայռերի վոլորաններում:

Մի ամիս հետո իր խնդրանքի համաձայն Կորյունն ազատվեց զրանիսի զործարանից և լավ բնութագրերը ստանալով՝ փոխադրվեց Արթիկի քարահանքները: Նա մեկնեց և իսկույն համապատասխան աչխատանք ստացավ: Շատ չանցած՝ նրան ստանձին տեղյակ հատկացրին բանվորական նորակառույց չենքերից մեկում:

6.

Մի ժութ գիշեր Մարտի հայրը կայարանից ուղեվարի հետ յերկաթգծով չատպով գնաց դեպի զրանիտի զործարանի բանվորական չենքերը: Սառած ձյունը ճրթճրթում էր նրանց վոտների տակ: Հաճախ նրանք մինչև ծնկները թաղվում էին ձյունի մեջ, և ուղեվարի լապտերի ազոտ ցոլքերի տակ ձորը պատկերվում էր ինչպես մի սպիտակ մշուշ:

— Մի ձեռքս ընկնի են աննամուսը, կպատառոտեմ, կսորկոտ կանեմ,— չդայնացած ասում էր Մարտի հայրը՝ ատամները կրճտացնելով:

Սակայն մեծ յեղավ նրա հիասթափությունը, յերբ բանվորական չենքի բնակիչները հայտնեցին, վոր Կորյունը վաղուց տեղափոխվել է ուրիշ տեղ: Նրանք չգիտեին նրա նոր բնակավայրը, իսկ դրասենյակը փակ լինելով, Սաքոն վոչինչ չհարցաչափել: Յեվ խիստ ընկճված ու ձեռնունայն հետ դարձավ: Նա հավատացած եր, վոր իր աղջիկը փախել է Կորյունի մոտ, վորովհետև դյուղում վոչվոքի տանը չդտավ նրան: Ուղեվարի լապտերի ոգնությամբ նա կրկին հետ դարձավ կայարան, վորտեղ կինը անհամբեր սպասում եր իրեն:

— Եղ աննամուսն եստեղից քոչել է ուրիշ քաղաք: Վաչվոք չգիտի, թե ուր է դնացել, իսկ աղջիկդ թող չորանար փորումդդ, դուրս չդար, վոր եսորվա որը խայտառակ չաներ մեզ խալխի առաջ,—ասաց Սաքոն զայրագին չեչոով:

Հորթը կորցրած կովի պես կինն այս ու այն կողմն եր նայում հուսահատուր դեմքով, ապա սկսեց հեկեկալ, պմփկել: Մարդկանց ձայներից և աղմուկից կայարանի հերթապահը պարթնեց, քնաթաթախ աչքերը ճմրթելով իր փոքրիկ սենյակից դուրս յեկավ և հարցրեց բանի եյությունը: Յերբ ամեն ինչ հայտնի դարձավ նրան, գլուխը խոնարհեց և նոր բան հիշողի փութկոտությամբ ասաց.

— Այ մարդ, իրիկունս քո աղջիկը տոմսակ դնեց, բայց դնացք նստելը չեմ տեսել:

— Յերևի դնացած կլինի, վոր տոմսակ ե վերցրել,—մի քամահեց ուղեվարը ձյունոտ վոտները թափ տալով:

— Հա, հիշեցի, տոմսակն էլ Լենինականի վրա յեր դնել, լավ հիշում եմ,— կրկին խոսեց հերթապահը:

Մարտի մայրը խորը հոդոց հանեց, իսկ հայրը բացականչեց.

— Ի՞նչ բան ունի նա Լենինականում, ենտեղ վաչ մի բարեկամ կամ ծանոթ չունենք և հեչ էլ դնացել եղ անհամոթը:

— Դա արդեն ձեր բանն է, յես գործ չունեմ,— հայտարարեց հերթապահը և ցրտից կծկվելով ներս դնաց: Ուղեվարն էլ նրա հետևից ներս մտավ վառարանի մոտ տաքանալու և չորերը չորացնելու:

— Հիմի յես վո՞նց դնամ նրա հետևից, մինչև տասվոսդնացք չկա,— ասաց Սաքոն հուսահատորեն թափ տալով գլխարկը:

յուխք և աղեկտուր արտասուք թափող կնոջ հետ ձյունոտ ատոխճաններով բարձրացան դյուղը:

Գյուղում բոլորն իմացան Մարոյի անհայտանալը և պանազան տեսակ եյին խոսատրում ու վերլուծում այդ պատահարը: Գյուղացիներից միայն յերկուսը գիտեյին խնդական յեղելությունը—պրանիտի զորձարանի բանվոր Մուշեղը և Մարոյի սրտակից ընկերուհին՝ Շողիկը, վորոնք ծածուկ ոժանդակել եյին Մարոյի փախուստին:

Առավոտը վաղ Սաքոն յերկաթգծի մոտ ինչ վոր մեկին եր սպասում: Մշուշում ծածկված եր շրջակայքը: Հանդիպակաց անտառի ծառերը սպիտակ բաճկոնակ եյին հագել: Բավական յերկար սպասեց Սաքոն և ցրտից ու ջղայնությունից՝ վոտնեբով չարունակ տրորում եր ձյունը: Նա կարեց զորձարան մեկնող Մուշեղի ճանապարհը: Մուշեղը վոչ մի բան չթաքցրեց նրանից.

— Եղպես եյ պետք է լիներ: Աղջիկը սիրում եր են տղին և իր հոժար կամքով գնաց նրա մոտ: Նա գտավ իր բախտը: Քեզ մնում է հաշտվել այդ դեպքի հետ և իսկույն տեղը անհամուրթյուն չանել: Միչա ասել եմ և յելի կրկնում եմ, վոր դու կորյունից ավելի լավ փեսա չեյիր ունենա:

Սաքոն մնաց չխոթված, տեղն ու տեղը քարացած: Նրա լեզուն լռվեց— չկարողացավ վոչինչ ասել: Իսկ Մուշեղն չարաչարում եր, վորպեսզի աշխատանքից չուշանա: Վերջը նա բավական հեռացավ, Սաքոն թուղթ հայհոյեց և թքեց նրա հետևից: Կարծես թե Մուշեղն եր միակ հանցավորը: Յեվ այնուհետև Սաքոն վոչ բարևում եր և վոչ եյ խոսում Մուշեղի հետ: Իսկ յերբ վորևե զորձով անցնում եր պրանիտի զորձարանի մոտից, կանգ եր առնում, բարկությամբ նայում, թքում և չարունակում ճամբան:

Յերեք որ հետո մի յեկվոր Մարոյից նամակ բերեց ծնողներին և պատմեց, թե ինչպես Մարոն ամուսնացել է Կորյունի հետ և չատ յերջանիկ է զգում իրեն: Միակ մտահոգությունն այն է, վոր ծնողները հաշտվեն իրենց կամքին հակառակ կատարված այդ ամուսնության հետ և թուլ տան, վոր Մարոն ու Կորյունը մի քանի որով գան նրանց մոտ այցելության: Նույն յեկվորը Մարոն գրել եր նամակում և ծնողներից խնդրում եր նեղսրտամիտ լինել:

Սաքոն պատառոտեց նամակը և բարկությամբ մի կողմ շպրտեց:

— Յես ե՛լ աղջիկ չունեմ, նրա ու եղ չան լակոտի յերեսը չեմ ուզում տեսնել: Իմ ոջախի դուռը փակ է դրանց համար և, յեթե հաշտվեն մեր կողմերը յերևալ, յերկուսին էլ չեմատակ կանեմ,—պոռաց Սաքոն նամակաբերի վրա և ճամբու դրավ նրան:

7.

Թեև Մարոն ու Կորյունը յերջանիկ եյին ապրում միմյանց հետ, բայց ծնողների վերաբերմունքը չատ եր ազդում Մարոյի վրա: Ծնողները, մանավանդ հայրը, վոչ մի կերպ չեյին հաշտվում աղջկա քայլի հետ և վոչ միայն չեյին պատասխանում նրա նամակներին, չեյին ընդունում ուղարկած նվերները, այլև ամեն անգամ հայհոյում, սպառնում եյին Մարոյին ու Կորյունին և նրանց համարում իրենց ընտանիքի, ոջախի պատիվն արատավորողներ, վոխերիմ թշնամիներ:

Այդ պատճառով Մարոն չատ եր մտահոգվում ու տանջվում: Ամուսինը, վոր չափազանց սիրում եր նրան, աշխատում եր չթողնել վոր նա ճանճրանա, տխրի: Աշխատում եր՝ վոչ մի քան պակաս չմնա տանը: Բայց յերբ նա գնում եր աշխատանքի, Մարոն նստում եր լուսամուտի առաջ և մաղում աչքերով գիտում Շերտակի ծավալուն հարթավայրը, նրա լուսապարզ հեռուն... Իրենց կանաչագեղ ձորի և սահմանափակ հորիզոնի փոխարեն այստեղ բացվում եր մի ընդարձակ տարածություն՝ կապտամշուշ հեռուներով: Հետո մտաբերում եր իրենց գյուղը, ծնողներին, քրոջը, ընկերուհիներին և ընկնում տխուր մտքերի գիրկը...

Յերկրորդ տարին նրանք ունեցան յերեխա, և Մարոն ըզբաղվեց նրա խնամքով: Յերեխային փայփայելիս ու մեծացնելիս՝ նա չարունակ ասում եր.

— Ա՛խ, ուր եր, վոր պապիկդ, տատիկդ ուրախանային, վոր թոռ ունեն ու գային քեզ տեսնելու, կամ թողնեյին, վոր գու գնաս նրանց մոտ: Արդյոք յե՞րբ կգա այդ բախտավոր որը, հը, ե՛խ...

***

Ձոթը ամառ դլորվեց և չորս անգամ ծաղկեց ու պտղավորվեց յերկիրը:

Հունիսյան մի դով յերեկո իրենց փոքրիկ սենյակում Մարոն ու Կոբյունը թեյում եյին, իսկ հոր ծնկներին արտուտի պես խաղում ու ճովողում եր նրանց փոքրիկ մանչը: Բաց լուսամուտից առատորեն թափվում եր դովաչունչ ոդն ու կապուտակ յերկնքի բանջին մեղմորեն ժպտում եյին արծաթաշող աստղերը:

Դուռը բացվեց և անսպասելի կերպով ներս մտավ Սաքոն՝ դանադան ուտելիքներով ծանրաբեռնված խուրջինն ուսին: Ուրախության ճիչերով Մարոն ցատկեց դեպի հայրը և վարվեց նրա կրծքին: Սաքոն խուրջինն ուսից վար դրեց և պինդ դրկելով աղջիկ դլուխը՝ խանդաղատանքով համբուրեց: Մարոյի աչքերից ուրախության արցունքներ հոսեցին...

Կոբյունն այնպես չվոթվեց այդ անակնկալ հանդիպումից, վոր մեաց մի պահ քարացած: Մինչև անդամ յերեխան չվոթվեց և պինդ վարվեց հոր կրծքին:

Ազատվելով Մարոյից, Սաքոն մոտեցավ Կոբյունին և կոտանքով համբուրեց նրա ճակատը.

— Անցածն անցած համարենք, հարսի աչքը քոռանա թող... Ինչ հարամություն վոր յեղավ, խաթեր արեք, ախպեր: Հիմի դուք յերկուսդ էլ իմ աչքիս լուսն եք, իմ աղիղ բալեքը...

Սաքոյի այս ներածական խոսքն ամեն ինչ վերացրեց, պարզեց:

— Իմ թոռը, իմ աղիղ թոռը,— բացականչելով Սաքոն վերցրեց յերեխային, բայց վերջինս վախվուկ ճիչեր արձակեց և հետ վախչելով՝ դլուխը ծածկեց հոր դրկում:

— Դեռ անծանոթ է յերեխես, նոր է տեսնում իր պապիկին,— ասաց Մարոն ժպտալով:

Ներանք բոլորվեցին սեղանի չուրջը և սկսեցին թեյել: Սաքոն խուրջինից պանիր, կարագ և նոր թխած հաց հանեց և դրավեց սեղանին: Թեյում եյին և ուրախ-ուրախ զրուցում: Ամենից շատ Սաքոն եր խոսում, յեռանդով պատմում եր դյուղի անցուդարձից: Նա պատմեց, թե ինչ մեծ փոփոխություններ եյին տեղի ունեցել դյուղում վերջին տարիների ընթացքում:

Դյուղում հիմնվել եր համայնական տնտեսություն: Դյուղացիք աշխատում եյին նոր ձևերով: Կյանքի ու կենցաղի պայմանները փոխվել եյին և դա պարզ յերևում եր Սաքոյի վրա: Նա այժմ համեմատաբար ավելի վայելուչ եր հագնված, նոր դաստակ կոշիկներ դլխին, իսկ վոտներին՝ տրեխի փոխարեն կոշիկներ: Ցերեսը մաքուր սափրած եր...

— Հիմա յես կոլտնտեսական եմ, սևն ու սպիտակը ենպես եմ ջոկում իրարից, վոր կարողանում եմ լրագիր կարդալ,— իր խոսքը յեզրափակեց Սաքոն և նրա դեմքը հպարտ արտահայտություն առացավ:

Կոբյունի համար այլևս դաղտնիք չեր Մարոյի հոր մեջ կատարված չրջադարձը և անակնկալ այցելությունը...

Ցերեկ որ հետո Սաքոն վեհապի, աղջիկ ու թոռան հետ վերադարձավ դյուղ: Թե ինչ մեծ ուրախություն պերեց նրանց ընտանիքում, դրչով դժվար է պատկերացնել: Դյուղն ամբողջ մասնակից եր այդ ուրախությանը:

Բայց ամենից շատ Սաքոն եր ուրախացել ու վոգևորվել...

ԿՈԼԽԻԴԱ

1.

Հունկեայան մի ամպչոտ որ Ճալաղիղի կայարնում հայտնվեց մի կարճահասակ մարդ՝ հագին թուխ բարակ բաճկոնակ, գլխին փոքրիկ կարմիր յեղրավոր վափախ, իսկ վոտներին պըտղտուն սապոգներ:

Ցերբ դնացքից ներքև իջավ և ուշադրությամբ դիտեց չըրջակայքը, մի ինչ-վոր տխրություն պատեց նրա հոգին: Կայարանը պատկերացնում եր ամայի, անշուք տեսք: Մի փոքրիկ կայարան՝ հարակից մռայլ չենքերով: Մի քիչ դենը՝ անտառապատ հարթավայր և անտառներ ցեխ...

Այդ ցեխերի միջով կտրում ես փոքրիկ տափածություն և դորաքամակ ծառերի արանքում ճահիճներ են, պղտոր ու ցեխոտ ջրեր, վորոնց մեջ իշխում են բյուրավոր դորտերը: Նրանց միապաղաղ կռկռոցները քո մեջ դարթեցնում են մռայլ ու տրտում պատկերներ...

Ցերբ դնացքը կարճատև հանգստից հետո կրկին առաջ եր ընթանում ծածկվելով ծառերի ու տերևների արանքում, Ճալաղիղի կայարանը դառնում եր խեղդող ամայություն...

Ահա այդ վայրում չրջանային հուսկոմիտեն Սուլավային ուղարկեց աշխատելու: Նա պետք և դեկավարեր կայարանից դեպի հյուսիս-արևմուտք, դեպի ծովափ ձգվող ընդարձակ հարթավայրի ճահիճների չորացման աշխատանքները: Վորքա՞ն յուրջ պարտականություն և ինչպիսի պատասխանատու խնդիրներ:

Ջոնդո Սուլավան մոտ յերեսուներեք տարեկան մարդ եր:

Տասնհինգ տարի առաջ նա կռվել եր կալվածատերերի և նրանց գործակալների դեմ: Լավ դիտեր, ինչ բան և դասակարգային պայքարը: Իր հայրը յերկաթուղային բանվոր և յեղել և Սուլավան ջերմորեն սիրում եր բանվոր դասակարգը, նրա հեղափոխական պայքարը: Ցերբ հեղափոխությունը հաղթանակեց, կուսակցությունը Սուլավային ուղարկեց միլիցիայի չորքերը պատասխանատու աշխատանքի: Նա մի քանի անդամ կռվեց բանդիտների դեմ, նրանց հալածեց և խոպատ վոչնչացրեց լեռների և անտառների խորքում: Այնուհետև մտավ արտաքրության մեջ և տարավ դեկավար աշխատանքներ: Ամեն տեղ նա ցուցաբերում եր կազմակերպչական չնորհք, աչալրջություն և անհաման յեռանդ:

Այժմ ահա կուսակցությունն ուղարկում եր նրան մի նոր, վոչ պակաս պատասխանատու տեղամաս՝ Կոլխիդայի ճահիճները չորացնելու:

Կոլխիդա... Զքնաղագեղ Վրաստանի արևմտյան մասում, Սև ծովի զմրուխտյա ջրերի ափերին ձգված մի ընդարձակ ճահճահարթ, 120·000 հեկտարից ավելի տարածություն: Առասպելական յերկիր է դա, վորտեղ թաղավորում են պղտոր ջրերը, թփուտները, թունավոր մոծակները, դորտերը բյուրավոր: Այդ հարթավայրը կտրում-անցնում է Ռիոնը իր տղմոտ, ծովածավալ ջրերով: Ինչպես մի հսկայական ոձի դեղին չապիկ, նա ձգվում է առաջ, բայց ջրերն այնքան հանդարտ են, այնքան անտարբեր, վոր կարծես թե չեն չարժվում, չեն ընթանում, այլ ինչ-վոր բանից մտածող՝ կանդնել սպասում են իրենց ընդարձակ հունի մեջ: Այդ ջրերը վորքան տիղմ են բերում իրենց հետ ու լցնում ծովափը, իսկ ծովի ջրերը համբորեն հետ ու հետ են ընկնում, դարերի ընթացքում գոյացնելով նորանոր ճահճահարթեր...

Յեվ յերկիրը դանդաղորեն աճում է, ընդարձակվում:

Մաքերի չրջանակում խորասուզված՝ Սուլավան իր ձեռնարկած փոքրիկ գրասանք-հետախուզությունից վերադարձավ և քայլերն ուղղեց կայարանի չենքը: Դռան մոտ փայտի ծայրով մաքրեց սապոգների ցեխը և ներս մտավ: Կայարանի փոքրիկ լուսավոր դահլիճում վոչ վոք չկար: Դահլիճին կից ներքնաենյակում բուֆետի մոտ նստել-պարեկուր եյին խը-

մում ճարտարապետ Մելաձեն և տեխնիկ Գվախարիան: Վերջինները յեկել եյին նախորդ գնացքով և սպասում եյին իրենց: Սուլխան մատնանշելով նրանց տեղանքին՝ մի կարճ խորտված ձուկ կերավ, յերկու բաժակ գարեջուր պարպեց, և նրանք միասին կայարանից դուրս յեկան շրջակայքը հետախուզելու:

— Հինգ հազար հեկտար տարածություն ճահիճներ պիտի չորացնենք այս շրջանում: Պետք է անցկացնենք ընդարձակ և հեռաձիգ խճուղի, յերկու կողմից մեծ ու փոքր ջրանցքներ, վորպեսզի ճահիճներից ջրերը հավաքվեն նրանց մեջ և հողը ցամաքի: Խճուղու յերկարությամբ մերձարևադարձային կլիմային հատուկ ծառեր և բույսեր պետք է տնկել: Յամաքած հողի վրա քնակելի շենքեր պետք է կառուցվեն, իսկ նրանց շրջակայքում՝ այգիներ ու պարտեզներ: Կուսակցությունը շատ կարճ ժամկետ է տվել այս գործը գլուխ բերելու: Ձեզ խոսք եմ տվել և մենք պետք է պատվով կատարենք այդ խոստումը...

Սուլխան խոսում եր յեռանդով, ձեռքով ցույց տալով ամայի ու գորշ հեռատեսանը: Նրա պղնձաձույլ դեմքին կորովի անկիրճամ արտահայտություն կար, իսկ աչքերի մեջ՝ հուրհրքան կրակ...

Ճարտարապետն ու տեխնիկը, վոր հենց նոր եյին ծանոթացել նրա հետ, խևուչն ղղացին այդ մարդու մեջ մի ազգու, վճռական կամք և խոնարհվեցին այդ կամքի առաջ: Նրանք յերեքով ուշադրությամբ դիտեցին կայարանի հանդիսավոր ճահճահարթը, զննեցին իրենց հետ բերած քարտեզը, պլաններ գծեցին և վորոշեցին խճուղու, ջրանցքների ու շենքերի կառուցման վայրը: Առաջին հերթին պետք եր կառուցել բանվորների բնակության համար ընդարձակ շենք:

Իրիկնապահին, յերբ կոլխիդայի միապաղաղ չոլը մի քիչ հոտվեց և ծովի կողմից փչեց թեթև տաք քամին, յերբ հորիզոնի գորշ ամպերի արանքից փոքր ինչ պպզաց և արյունոտվեց մայր մտնող արևը, նրանք նստեցին գնացք և մեկնեցին Փոթի:

Մյուս որվանից ճալադիդի կայարանում աշխուժություն և յեռ ու գեռ ընկավ: Հատուկ գնացքներով յեկան կառուցող ձեռքեր և թափվեցին բազմաթիվ շինանյութեր:

Յերիկնքը վերևից նայում եր ինչպես հսկայական գորշ աչք: Իսկ յերկնքի տակ անխախտ մնում եր միապաղաղ տոթը:

Ճալադիդի կայարանի առաջ սպասում եր բեռնատար ավտոմեքենան: Նրա վրա կանգնել եյին ճարտարապետ Մելաձեն, տեխնիկ Գվախարիան և տասնապետ Շաքրոն: Նրանք սպասում եյին Սուլխային. վերջինս մի փոքրիկ գործ ուներ կայարանում, վորը վերջացնելուց հետո յեկավ և մի վոստյունով ցատկեց մեքենայի վրա: Ավտոյի վրա կանգնած ընկերներն առանձին հարգանքով ու սիրով ընդունեցին իրենց պետին: Այդ հարգանքն ու սերը Սուլխան նվաճել եր իր անսպառ յեռանդի և աշխատանքի շնորհիվ:

Ավտոմեքենան ճռնչալով առաջ շարժվեց դեպի նորակառույց խճուղին:

Սուլխան նայում եր շուրջը: Խճուղու յերկու կողմից ջրանցքներ եյին, իսկ նրանցից մի քիչ այն կողմը պատկերվում եյին նոր կառուցված փայտաշեն տներ: Իսկ ավելի հեռուն ճահիճների մեջ նատած կանաչ թփուտներ:

Վեց կիլոմետր կարեց ավտոն նորակառույց խճուղով:

Մի քանի ամիս առաջ ո՞վ կարող եր անցնել այս վայրերից, վորտեղ համատարած ճահիճներ եյին և անթափանցելի թփուտներ...

Նրանք անցան գլխավոր ջրանցքի վրա կառուցված փայտեկամրջից: Այդ ջրանցքը փոքր գետի տպավորություն եր թողնում, վոր մյուս, յերկրորդական ջրանցքներից հավաքելով ջրերը, գնում թափվում եր Ռիոն գետը:

Ավտոմեքենան կանգնեց մի ընդարձակ շինության առաջ: Սուլխան և իր ուղեկիցները ներքև թռան: Խճուղու յեզերքին փոքրիկ ջրանցքի վրա ձգված դերաններից անցնելով և հոխեզով թաց հողը, նրանք տախտակե մի քանի աստիճանից յարձրացան նոր շենքը: Այնտեղ տեղավորված եր նրանց գրասենյակը, Սուլխայի, ճարտարապետի առանձնասենյակները, գործարկոմը, կուսկոմը, հաշվապահական և տեխնիկական բաժնի սենյակները: Այդ շենքում ապրում եր նաև Սուլխան: Ցանկերկու մեծ ու փոքր սենյակից բաղկացած այդ փայտաշեն շինությունը հիմք չուներ: Նրա հիմքը կազմում եյին հողի մեջ

ամբացրած ուժը հաստատուն փայտյա հենակները: Այդ շենքի հանդիսակաց կողմը զանազան շենքերում տեղավորված էին խրճիթ-ընթերցարանը, ակումբը, վոքրիկ ռադիոկայանը, ճաշարանը, բանվորական հանրակացարանը և այլն... Այնտեղ վերջանում էր խճուղին և մի քանի քայլ այն կողմը ճահիճներն էին, վորոնց մեջ կարելի չէր հեշտությամբ խեղդվել:

Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր Սուլթանն անընդհատ աշխատում էր պրասենյակում կամ կառուցումների վայրում: Նրա աչքերում չարունակ այրվում էր բոցակեղ կրակը, յերակների միջից հոսում էր ուժի և յեռանդի անսպառ աղբյուրը: Նրան ներշնչում և վոգևորում էր առաջնորդը, վորի պողպատակուռ դեմքը և խորաթափանց աչքերը չարունակ նայում էին իր դրասեղանի հանդիսակաց պատից: Այդ աչքերը նրան ուժ էին տալիս և մղում դեպի նորանոր հաղթանակներ բնության դեմ սկսած այդ դաժան պայքարում: Սուլթանն համարյա չէր հանդրստանում, միշտ վոտքի վրա էր, բեռնատար ավտոմեքենայում, չհանդուրժ մատակարարող ապրանքատար դնացքի վրա, խճուղու յեզերքին ճահիճների մոտ ցեխաթաթախ տապոդնեքով...

Միշտ մի ևնույն սև բաճկոնակն էր հագին և կարմիր յերիզներով սև փալախը դլխին:

Մինչև այսոր անձնական վոչ մի բարիքի մասին նա լրջորեն չէր մտածել դեռ: Հայրը մահացել էր, իսկ մայրն ապրում էր Թբիլիսիում մեծ յեղբոր մոտ, վորը աշխատում էր կուսակցության կենտկոմում կուսհրահանդչի պաշտոնով: Տարին մի քանի անդամ նա գնում էր մորը տեսության, նվերներ էր տանում, դուրգուրում և մխիթարում:

Կենսուրախ և դվարթախոս մարդ էր Սուլթանն: Նրան սիրում էին բոլորը և ամենքին դվարթացնում, վոչնչացնում էր իր քաղցր խոսքերով: Բանվորները նրան «ընկեր Զոնդո» էին կանչում, և նա վորքան պարզ էր և ուշադիր բոլորի հանդեպ, այնքան պահանջկոտ էր և աշալուրջ աշխատանքի մեջ: Սատարիչ առում էր ծույլերին ու լոդրներին: «Կատարիր աշխատանքդ բարեխիղճ և ազնիվ, իսկ նրանից հետո խելագին կերպով դվարճացիր վորքան կուզես»: Ահա նրա դեվիզը: Նա ինքն էր ապատ ժամերին դվարճանում (յեթե ապատ ժամանակ ունենար) և իր

ուսացած աշխատավարձը չէր ափսոսում ծախսել այդ դվարճանքների կամ ընտանիքով ծանրաբեռնված ընկերներին ոգնելու համար:

Նա մեծ ուժանդակություն էր ցույց տալիս այն դյուղացիներին, վորոնք յերկրի զանազան մասերից ընտանիքով տեղափոխվում էին ճահիճներից չորացած այդ վայրում բնակություն հաստատելու: Նրանց չինանյութերով և զանազան անհրաժեշտ իրերով ոգնում էր, վորպեսզի լավ բնակարան կառուցեն և բարեկարդ, կուլտուրական կյանք ստեղծեն: Իր դրասենյակից մի քիչ այն կողմը Մենդրելյալի խորքերից յեկած դևղջուկ Ղահրաման Ցոմայան չորս լուսավոր սենյակից բաղկացած տուն էր կառուցել, վորոնք կահավորված էին լավորակ մահճակալներով, աթոռներով և այլ կարասիքով: Ղահրաման Ցոմայան արդեն կով ուներ, իսկ տան չուրջը բանջրանոց էր մշակել, վորտեղ հիանալի կերպով աճող յեգիպտացորենը նրան առատ բերք էր խոստանում: Խճուղու մյուս յեղերքին Աջարիայից յեկած Մահմեդ Գոգոբերիձեն իր յերկու սենյակից բաղկացած տան կողքին անկել էր մի վոքրիկ այդի, վորտեղ աճում էին նարնջի և կիտրոնի ծառերը: Մահմեդ Գոգոբերիձեյի ընտանիքը յեռնք հոգուց էր բաղկացած—կինը՝ Զարիֆեն և աղջիկը՝ Թինան: Վերջինս քսանհինգ դարուն բոլորած մի աղջիկ էր՝ սև աչքերով, վորոնք այնքան պայծառ էին, ինչպես լուսնկա գիշեր, իսկ դեմքը փայլում էր դարնանային թարմությամբ, կարծես սերևների արանքից ժպտացող խնձոր լիներ:

Ահա յեկավ մի նոր ընտանիք ևս Ախալցխայի շրջանից: Ասաքել Ալանյանի այդ ընտանիքը բաղկացած էր հինգ հոգուց: Խճուղու ծայրին յերկու տախտակ դղեկին հենց նոր կառուցված չրանցքի վրա և այնտեղից անցնելով՝ տղմոտ ու թաց հողի մեջ փայտյա հաստ հենակներ զարկեցին և արագ կերպով բնակելի նոր չենք կառուցեցին: Մի ամսում պատրաստ յեղավ յերեք սենյակից բաղկացած այդ տունը: Տեղավորվելուց հետո, հենց հետևյալ որը, Ասաքելն իր կնոջ ու յերեխաների հետ յեռանդով չորացնում էին իրենց նոր տան շրջակայքը, վորպեսզի ծառեր տնկեն և բանջարանոց մշակեն:

Առավոտը Սուլավան կանգնել եր խճուղու ծայրին և ճարտարապետի ու տեխնիկի հետ խորհրդակցում եր խճուղին առաջ տանելու և նորանոր ճահիճներ ցամաքեցնելու մասին: Սակայն խիստ դժվար եր առաջ ձգել խճուղին, որովհետև ճահիճներն այնտեղ շատ խոր էյին ու տղմոտ:

— Անհրաժեշտ է խճուղին կտրող ջրանցքին նոր հուն պատրաստել, որպեսզի ջրերը հավաքվեն այնտեղ: Դա յե ճանապարհն առաջ տանելու միակ միջոցը,— յեղրափակեց ճարտարապետը:

Սուլավան վերջին զննող հայացքով դիտեց չուրջը և հայտարարեց.

— Չենայել ժամանակ ու միջոց և խնդուն անցնել գործի...

Այդ վորոշումն այնքան հաստատ ու վճռական եր, վոր տեխնիկին մնում եր բանվորներին ու վարպետներին հրավիրել աշխատանքի: Ցերը մերկ վոտներով բանվորները մտան ճահիճը և բահերն ու վորով մեքենաները սկսեցին քանդել տիղմը, այնտեղ հանդստացող դորտերը խրտնեցին և իրենց անճոռնի կռկռոցներով փախան ավելի հեռու:

Մինչդեռ ջրանցքի համար նոր հուն եր բացվում, Սուլավան հետ դառնալով քայլում եր խճուղու յերկայնքի վերև և դիտում չրջակայքը: Նա հարմար տեղ եր փնտռում դպրոցական շենք կառուցելու: Այդտեղ հազարից ավելի բնակիչ կար այդ չրջանում՝ և ամեն տարիքի յերեխաներ, վորոնց համար հարկավոր եր լրիվ միջնակարգ դպրոց ունենալ: Մտքում նա հաշվում եր ապագա դպրոցի դասարանների թիվը, նրանց մեծությունը, հարմարությունները:

«Ցերկու ամսում պետք է պատրաստ լինի այդ շենքը, առնվազն յերկու ամսում...» մտածում եր Սուլավան:

Ցեվ քայլում եր նա ձեռքը մեջքին դրած՝ ինչպես ռազմաճակատում հաղթություն տարած զինվոր՝ իր ուժին ու հաղթանակին վստահ...

Ահա նա կանգնեց Մահմեդ Գոգոբերիձեյի տան դիմաց, վորի կողքին ընդարձակ և հարթ տարածություն կար: Շատ հարմար եր այդ վայրը նոր դպրոցի կառուցման համար: Մանավանդ, վոր տեղն էլ դանվում եր կենտրոնում:

Մինչ նա խճուղու յեզերքին կանգնած խորհրդածում եր, Գոգոբերիձեյի բնակարանից դուրս յեկավ Թինան և պատչամբից լինելով չարժվեց դեպի խճուղին: Հագել եր սպիտակ բարակ չրջազգեստ, սևաթույր մազերը դլխին տանրած, մեջքին արծաթափայլ գոտի:

Գերանների վրայից նա անցավ փոքրիկ ջրանցքը և քայլերն ուղղեց ինչ վոր տեղ: Ցերը նա անցնում եր Սուլավայի կողքից, վերջինս համառ կերպով նայեց յերիտասարդ աղջկան և ինչ վոր ախորժելի բան թրթռաց կրծքի տակ:

Սպիտակ չրջազգեստի մեջ գծագրվում եր յերիտասարդ աջարուհու համաչափ մարմինը, նա շատ նման եր ճամբի յեզերքից մեղմորեն սահող ձերմակ թռչունի:

Իր կյանքում յերբեք նա այդքան համարճակ՝ և այդքան համառ չեր նայել անծանոթ աղջկա: Աջարուհին դդաց իր վրա Սուլավայի ուշադիր, համառ հայացքը և նրա դեմքը թեթև չիկնեց: Ցերկար նայեց Սուլավան աղջկա հետևից, մինչև վոր նա խճուղուց թեքվեց, մտավ ինչ վոր տուն և տեսողությունից ծածկվեց:

Սուլավան սպասեց մի քանի րոպե տեղում, մերթ դպրոցի ապագա շենքի կառուցման մասին եր մտածում, մերթ դեպատեսիլ աջարուհու մասին, վոր չքնաղ տեսիլքի պես այդպես չուտ անցավ...

Նարնջի ու կիտրոնի ծառերով զարդարված իր փոքրիկ այդին մշակող Գոգոբերիձեն նկատեց ճամբի յեզերքին կանգնած Սուլավային, մոտ յեկավ ու բարևեց:

Սուլավան առանձին սիրով ու հարգանքով ընդունեց նրա բարևը:

— Ուզում ենք քո տան կողքին, այն ընդարձակ տարածության վրա դպրոց կառուցել: Հը՞, ինչպես ես դոնում այս ծրագիրը,— հարցրեց Սուլավան:

Գլխին կարմրավուն չոր վոլոսներ, սև ու թավ բեխերով, խիտ ու թուխ հոնքերով աջարացին մտածեց մի պահ և պատասխանեց.

— Լավ ես անում, բայց իմ անից մինչև դպրոցի շենքը

թող չաս ապրածուքյուն մնա, վորպեսզի այլևս վորքան հնարավոր է ընդարձակեմ:

— Այստեղ այնքան ազատ հողամաս կա, վոր կարելի է քո առաջարկն ի նկատի ունենալ:

Սուլավակի այս սիրալիր վերաբերմունքը չատ դուր եկավ Գոգոբերիձեին: Նա ժպտաց ինքնագոհ և ինքնաբավական, հետո դառնալով մոտավ տուն և քիչ հետո այնտեղից դուրս եկավ պայծառատես նարինջները ձեռքին:

— Անուշ արա, Աջարիայից են ուղարկել ինձ:

Սուլավան հաճույքով վերցրեց նարինջները, կպճեց և նրա անուշահյութ մարմնից պոկելով մի մասը՝ հյուրասիրեց ընծայողին:

Այդ պահին իր դեզանի մարմինը պատկերելով խճուղու վրա, վերադարձավ Թինան, ինչ վոր կապոց ձեռքին:

— Լավ աղջիկ ունես, յերջանիկ ես,— ասաց Սուլավան մեղմ ձայնով:

— Նրա անուշ չանին մատաղ, լավն է,— պատասխանեց Գոգոբերիձեն ժպտալով, և մի րոպե լռելուց հետո հարցրեց.

— Դու յերեխաներ չունե՞ս:

— Դեռ չեմ ամուսնացել,— պատասխանեց Սուլավան դուրս խոնարհելով և սապոգի ծայրով ոլորելով խճուղու ավազը:

— Վա՛հ,— բացականչեց Գոգոբերիձեն զարմացած, — պետք է ժամանակին ամուսնանալ, վոր յերեխաները շուտ մեծանան: Իսկ առանց յերեխաների տխուր է կյանքը:

Սուլավան լուռ մնաց և այդպիսով ընդհատվեց նրանց խոսակցությունը:

Վերադառնալով դրսևոնյակը, նա կանչեց կուլտբաժնի վեկավարին և առաջարկեց չատ կարդով ցուցակագրել իրենց չրջանում ապրող և դպրոցական հասակ ունեցող յերեխաներին:

Գիշերը Սուլավան չատ ուշ քնեց: Աբատզրական խորհրդակցություն ուներ, ուր նա իրենց ձեռնարկությունների ու կառուցումների մասին վայլուն վեկուցում եր տվել:

Յերբ մատավ անկողին, նա լուսամուտի փեղկը դեն հրեց և ներս թափվող ողը չնչեց ամբողջ կրծքով: Պատուհանից մի քանի քայլ են կողմը ճահիճների մեջ կռկռում եյին գորտերը, այս ու այն կողմից սուլում և սուլոցներով միմյանց ձայնակցում:

Սուլավան չքնեց խոսուն: Նրա մտքում մեկը մյուսի հետևից պատկերվում եյին այն ձեռնարկումները, վոր նա չատով կկերպով անց եր կացնում այդ չրջանում— գլխավոր ջրանցքը, ոգոդրոցական չենքը, նորանոր բնակելի չենքեր... Նա մանրամասն պատկերացնում եր այդ ձեռնարկումների բոլոր առանձնահատկությունները: Յեվ վոգևորվում, ուրախանում եր այդ կառուցումների հաջող և արագ տեմպերով: Ապա նրա աչքին պատկերացավ սպիտակ չրջազգեստով յերիտասարդ աղջուհին...

«Ինչ համաչափ կազմվածք ունի, ինչ դրավիչ աչքեր...» մտմտում եր ինքնիրեն և ինչ վոր դուրեկան ղգացմունք չուտ եր, վայելչացնում նրան: Աստիճան անգամ լինելով իր կյանքում՝ նա մենակության ղգաց: Կարծես ինչ վոր բան պակասում եր նրան: Ա՛խ, յեթե հնարավորություն ունենար կանչելու աղջուհուն և յերկար զրուցել նրա հետ, բանալ իր սիրտը և արտահայտել իր ղգացմունքները: Արդյոք ի՞նչ պատասխան պիտի տար այդ աղջիկը, ինչպե՞ս պիտի ընդուներ իրեն: Արդյոք նա էլ մածո՞ւմ է իր մասին: Ի՞նչ պիտի մտածի վոր: Դա պատահական հանդիպում եր, վոր յեկավ, անցավ: Ինչո՞ւ իր աչքերից չի հեռանում այդ աղջիկը...

Սակայն հետզհետե Սուլավակի աչքերը ծանրացան և քունը հաղթեց...

4.

Ճանապարհին խաչաձևող գլխավոր ջրանցքի կառուցողական աշխատանքները մոտենում եյին իրենց վախճանին: Դեպի ծովը ձգվող ճահճահարթի վրայով ուղիղ անցնում եր գլխավոր ջրանցքի լայնաբերան հունը: Փոքրիկ առուների միջով պղտոր ջրերը հվաքվում եյին ու թափվում գլխավոր ջրանցքի հունը, և այնտեղ կազմվում եր մի նոր պետակ: Յերկակացքի հողը գտնվում եր արագորեն:

Ջրանցքի վրա ամբողջվող կամուրջ անցկացրին և խճուղին մի քանի կիլոմետր ել ավել դնաց: Նրա չուրջը հետզհետե նորանոր չենքեր եյին կառուցվում և գանազան կողմերից նորանոր ընտանիքներ եյին գալիս այստեղ բնակություն հաստատելու:

Ծովական ամբողջովին կլանված եր այդ աշխատանքներով։ Նա մոռացավ աջարուհուն և դրեթե ժամանակ չուներ մտածելու նրա մասին։ Վորքան ավելի չատ եր ցամաքում հողը, այնքան ավելի չատ եր բազմանում բնակչության թիվը։ Դրա հետ միասին բազմանում եյին նոր պահանջները, նոր կարիքները։ Դպրոցական շենքը կառուցելը դեռ բավական չեր, անհրաժեշտ եր բաղնիք ունենալ, կինոյի և թատրոնի շենքեր կառուցել և այլ կուլտուրական հարմարություններ ստեղծել։

Իսկ այդ բոլոր աշխատանքների հոգին Ջոնդո Սուլավան եր...

Ցերեկոյան ակումբի դահլիճում յերեկույթ եր և պարեր յեղան։ Մասնակցում եյին բացառապես տեղական ուժերը։ Այդ չքնաղ հավաքված բնակչության ուրախության ու հրճվանքի մի ցույց եր դա՝ յերգի, նվագի և պարի միջոցով արտահայտված։ Մարդիկ յերգում և ուրախանում եյին իրենց ստեղծած նոր կյանքի համար։

Սիմոն Սուլխաչվիլին չոնգուրի նվագակցությամբ մի չարք դուբեկան յերգեր յերգեց և իր հաճելի ձայնով հիացրեց լսողներին։ Հաճույքով լսվեցին նաև մենդրելական մի քանի ստացուած մեղեդիներ։ Վերջում պարեցին։ Հանդես յեկավ նաև յերիտասարդ աջարուհին...

Ցերեկ Թինան համաչափ մարմինը չարժելով չրջան դարձնեց բեմի վրա, առաջին չարքում նստած Սուլավայի սիրտը քարախնձ ուժգին։ Նրան պատեց այն անուշ և դուբեկան զգացմունքը, վոր նա զգացել եր առաջին անգամ այդ աղջկան հանդիպելիս։ Նա աչքերը չեր հեռացնում Թինայից և մի հարատարա, չատ հարատար բան եր զգում նրա հանդեպ։

Ցերեկույթից հետո Սուլավան Գոգոբերիձեյի հետ առանձնացավ նրա աղջկան և դուվեց նրա պարը։

— Մի՞թե յես այդքան լավ եմ պարում, վոր այդպես դողում եք,— ասաց Թինան ժպտալով։

— Առհասարակ յես չեմ սիրում կոմպլիմենտներ անել և առանց պատճառի դուվարանել մարդկանց։ Ցնծում եմ, նշանակում և լավ պարեցիք,— պատասխանեց Սուլավան։

— Ցնծում այդպես ե, չնորհակալ եմ ձեր ուշադրության համար։

— Մեզ մոտ ել արդեն ստեղծվեց կուլտուրական կյանք։

Այ, արդեն յերեկոներ ենք կազմակերպում, ժողովուրդն ուրախանում է,— միջամտեց Գոգոբերիձեն։

— Շուտով մենք թատրոնի շենք կունենանք, ներկայացումներ ու համերգներ կկազմակերպենք այնտեղ։ Դեռ չատ գործ կա անելու։ Մենք դեռ սկսում ենք,— յեռանդով հայտարարեց Սուլավան։

— Բայց ի՞նչ արդյունավետ հող կա այստեղ, արդավանդ ու բերրի։ Կարծես վոսկի հանք կա թաղված այս յերկրի խորքում։ Այնպես չուտ աճեցին իմ նարնջենիները ու կիտրոնները։ Ավազրեն աճում և նաև բանջարանոցը։ Ցեկիպատացորենի յերկու բերք կարելի յե ստանալ տարվա ընթացքում։ Մարդիկ այստեղ կարող են միանգամայն ունեվոր կյանք ստեղծել իրենց համար, յեթե միայն աշխատեն և հասկանան հողի լեզուն,— ասաց Գոգոբերիձեն։

— Ո՛չ, մեր նպատակն ել հենց այդ է։ Մենք ուզում ենք Նոլեմիզայի ճահիճները դարձնել մի ծաղկուն, բերրի յերկիր, ունեվոր և բարեկարգ կյանքի օջախ։ Ցեվ մենք այդ կանենք,— վճռական չեշտով խոսակցությունը յեզրափակեց Սուլավան։

Այսպես խոսելով նրանք հասան Գոգոբերիձեյի տան առաջ և մի պահ կանգ առան։ Խաղաղ ու տոթ դիշեր եր, յերկնքի դեմքին կարծես մոխիր եյին ցանել։

Գոգոբերիձեն Սուլավային հրավիրեց ընթրիքի։ Վերջինս չմերժեց այդ հրավերը և տախտակե մի քանի աստիճաններից բարձրանալով մտան սենյակը։ Թինան աշխուժացած և վոգևորված առաջ անցավ։ Ցերկու լուսամուտ ունեցող փոյատաչեն ընդարձակ սենյակը դիտողի վրա հաճելի տպավորություն եր թողնում։ Սենյակի կենտրոնում դրված քառակուսի սեղանին սպիտակ մաքուր սփռոց կար փռված։ Իսկ սեղանի չորս կողմը դրված եյին սրճագույն փայտից չինված աթոռներ։ Լուսամուտներին նուրբ ասեղնագործված վարագույրներ կային։ Անկյունում հակում եր պահարանը։

Գոգոբերիձեն և իր հյուրը սեղանի մոտ նստած ծխում եյին և զրուցում։ Իսկ Թինան և մայրը մյուս սենյակում զբաղված եյին ընթրիքի պատրաստությամբ։ Թինան առանձնապես իրար եր անցել։ Ինչո՞ւ յեր այդքան ձեռ ու վոտ ընկել Թինան... Ինքն ել չգիտեր։ Մայրը հարցրեց, թե ո՛վ է յեկել իրենց մոտ հյուր։

— Դա մեր չքնաղ մեծն է, աչխատանքների ղեկավարը,— պատասխանեց Թինան աչխուժորեն:

— Կին, յերեխաներ ունի՞,— հետաքրքրվեց մայրը:

— Չէ, կարծեմ չունի:

Մայրը մի ուչադիր հայացք ղցեց աղչկան և սկսեց յեռանդով կտրատել հացը:

Շատով Թինան ուտելեղեն ներս տարավ և պատրաստեց սեղանը: Գոդոբերիձեն հրավիրեց կնոջն ու աղչկան նույնպես մասնակցել ընթրիքին, սեղանի վրա յերկու չիշ դինի կալ:

— Գուրիայից եմ ստացել: Յեղբայրս այնտեղ է աչխատում և այս դինին մի քանի որ առաջ ուղարկեց: Կարծեմ նա էլ մտադրություն ունի ընտանիքով տեղափոխվել այստեղ,— ասաց Գոդոբերիձեն և լցրեց բաժակները:

— Շատ լավ կլինի, թող գա: Յես նրա համար ևս մի լավ տուն կտուցել կտամ: Գրեցեք, թող գա:

Սուլխանի այս հայտարարությունը չափազանց լավ ազդություն գործեց ամբողջ ընտանիքի վրա:

— Յես կգրեմ յեղբորս, վոր անպատճառ գա: Իսկ այժմ յեկեք գնահարենք այս բաժակները և անուչ անենք հացը,— առաջարկեց Գոդոբերիձեն:

— Ամենք ձեր ընտանիքի, ոջախի կենացը: Թող ձեզ նման այգեպես ծլեն ու ծաղկեն և բարեկարգ կյանք տեղծեն բոլոր այն ընտանիքները, վորոնք ցանկանում են մտնել մեր բարեչեն ու բարեչաճ կոլխոզան,— բացականչեց Սուլխանն և մինչև վերջին կաթիլը պարպեց բաժակը:

Զարմանալի կերպով Թինան էլ նրանց հավասար խմում էր դինին: Ամենից քիչ խմում էր նրա մայրը:

Յերբ խմեցին Սուլխանի կենացը, Գոդոբերիձեն բարեմաղթեց.

— Թող քո յեռանդն ու չնորքը միչտ անպակաս մնա, վորպեսզի մեր յերկիրը քեզ նման կարող և ձեռներեց ուժից չըդրկվի:

— Դու էլ ունենաս ընտանեկան հարկ, կին ու յերեխաներ,— ավելացրեց Թինայի մայրը:

Սուլխանն խնամ ուրախացավ այդ անկեղծ բարեմաղթությունից և նրա հայացքը մի վայրկյան հանգիստեց Թինային: Յերիտասարդ աղչիկը ժպտաց և նրա աչքերը խոնարհվեցին:

Գոդոբերիձեն և իր կինն ղգացին այդ հայացքների փոխանակումը: Ի՞նչ անցավ-դարձավ նրանց մտքով, հայտնի չէ: Բայց նրանց տրամադրությունը չատ բարձր էր...

Ուրախ էր անցնում ընթրիքը: Սեղանակիցները հաճույքով վայելում էին խորոված ձուկը, յերշիկը և դատարկում դինու բաժակները:

Յերբ խմեցին Թինայի կենացը, Սուլխան վոգևորված ասաց.

— Ինչ բարեմաղթություն վոր արիք իմ հացեկին, նույնը թող վերաբերի նաև Թինային: Թող նրան սպասող կյանքը պայծառ լինի ու բախտավոր...

Թինայի ծնողներն անչափ ուրախացան, իսկ մայրը կարոտագին համբուրեց իր սիրելի դստեր ճակատը:

— Շատ ուղղներ են յեկել մեր Թինային, բայց մեր սիրելի զավակից չբաժանվելու համար խոսք չենք տվել: Իսկ այժմ ժամանակն է, վոր Թինան տեղծի իր համար յերջանիկ ու բախտավոր կյանք,— ասաց հայրն առանձին վոգևորությամբ:

Այս հայտարարության մեջ չատ բան կար թաղնված և Սուլխանն ըմբռնեց այդ խոսքերի նրբությունը:

Կես գիչերից չատ եր անց, յերբ Սուլխանն բարձր տրամադրությամբ մեկնեց Գոդոբերիձեի տնից: Ջնայած նա բավական խմել եր, սակայն խելքը չեր յերևում, վոր նա դինի չ խմել:

Առհասարակ նա չեր հարբում, չեր կորցնում զգաստությունը: Վերադառնալով իր սենյակը, վառեց լույսը և յերկար ժամանակ քայլում եր հետ ու առաջ: Զգիտես ինչո՛ւ, քունը չեր տանում և ինչ-վոր միտք հմայել եր նրա ուղեղը: Իսկ սիրտը լցվել եր անուչ սարսուռով, վորը տարածվում, վարարում եր նրա ամբողջ էությունը:

«Հըմ, լավ մարդ և Գոդոբերիձեն, կինն էլ և լավ, իսկ Թինան՝ մի սքանչելի աղչիկ... Ինչպես յերևում է, Թինայի ծնողները հավանում են ինձ և թեպետ հաճույքով ընդունեն ինձ վորպես իրենց ընտանիքի մշտական հյուր և մոտիկ բարեկամ: Ժամանակը չէ՞ վերջապես վերջ դնել այս մենավոր կյանքին և ունենալ կին, յերեխաներ, ինչպես Գոդոբերիձեն եր խորհուրդ տալիս...»:

Սուլխան ժպտաց և բաց լուսամուտից նկատեց, թե ինչ-

սես Գոլիաթայի հեռավոր հորիզոնի վրա յերկինքի մոայլ դեմքը բացվեց և լուսավոր չերտեր ընկան: Հետո այդ չերտերից լուսեղեն կամարներ կազմվեցին և պայծառորեն բացվեց արշալույսը: Յերկինքը դարձավ չուչանի մի հսկայական թերթ: Այդ ճերմակ թերթի յեզերքին բոցեղեն լեզվակներ յերևացին և այդ հուրհրան յերիզների շրջանակում ժպտաց արևի վոսկեպայծառ աչքը: Ապա այդ աչքը դարձավ մի հուրհրան քուրա և, ինչպես ատրուճան, բոցավառվեց հորիզոնի չրթունքին...

Սուլթան չքնեց: Որը բացվում եր և աշխատանքը կանչում: Նրա անկողինն այդ գիշեր մնաց չբացված:

Ծագող արևի վոսկեվառ ճառագայթներն ընկան գլխավոր ջրանցքի մեծ կամրջից անցնող Սուլթանի վրա...

Այդ ճառագայթները պայծառորեն ընկել եյին նաև այն փոքրիկ ծառերի վրա, վորոնց տերևների արանքից չռշռղում եյին արդեն հասունացող նարինջները ու կիտրոնները:

Ճճուղու յերիտ կողմից թաց հողին նստած նորակառույց տների բաց լուսամուտներից յերևում եր զոլքինող կյանքը, վոր աշխուժորեն խլրտում եր, դուրս յելնում, չարժվում գործի բանջարանոց, փոքրիկ այգինները, դեպի խճուղին:

Արևի ցոլքերի տակ զղրդում եր մեքենան, սուր ատամնեբով վորում, քանդում եր հողը: Իսկ խճուղու վրա մի քանի ատանյակ մարդիկ յեռանդով հող ու ավազ եյին լցնում, ճահիճների ջրերը ցամաքեցնում, վորպեսզի ճանապարհը յերկար ու ձգվի ավելի առաջ:

— Դե՛հ, ձեզ մատաղ, ձեր ձեռ ու վոտին, ազիզ արևին մատաղ, քոմակ արեք, վոր ժամկետից չուտ վերջացնենք այս ամբողջ պլանը,—քաջալերեց Սուլթան աշխուժ ու մեերիմ ձայնով և ինքն էլ վերցնելով բահը, միանտնվեց աշխատողներին:

5.

Գոլիաթայի յերկինքը հաճախ և դղրդանում և կաթծես արտասուքն աչքերի յեզերքին է: Շուտ-չուտ և արտասվում և Թրջում գետինը: Կարծես անհատակ ծով լինի նրա աչքերը, այնպես հարդատատ են թափվում արցունքները:

Ցերը անձրևվում է, չրջակայքն ատանում և մոայլ տեսք և ակամա տրտմում ես ու թախծում: Բայց անձրևները չատ քիչ են փոխում ոդի մեջ կանդնած միապաղաղ տոթը:

Բուլդերն այստեղ արագորեն կանաչում ու փարթամանում են: Մարդկանց համար արդեն սովորական է դարձել անձրևը և նրանք այնքան էլ չեն ձանձրանում: Սուլթան հաղել եր մոխրագույն անձրևանոցը և անձամբ հսկում եր դպրոցական չենքի կառուցման աշխատանքներին: Արդեն պատրաստ եյին պատերը, կտուրն եյին ամրացնում: Տասը դասարանից և հարակից տեսուչն եյին ամրացնում: Տասը դասարանից և հարակից տեսուչների բաղկացած չենքի խոշոր լուսամուտները նայում եյին դեպի խճուղին, և Սուլթան հրճվում եր մանկան պես: Նա վերհիշում եր իր մանկության մոայլ որերը և յերանի տալիս այն մատաղ սերնդին, վոր այստեղ պիտի ծծի լույս ու գիտություն...

—Ա՛խ, այդ վորքա՛ն եք թրջվել,—կողքին արծաթի պես զնգաց կանացի մի ձայն:

Թինան եր, վոր ղլուխն ամփոփած թեթև շալի մեջ, իջնում եր խճուղուց իրենց տուն գնալու: Սպիտակ շալի միջից պսպղում եյին նրա սև աչքերը:

—Թող թրջվեմ, հոգ չէ: Ցես սիրում եմ մեր յերկրի անձրևը, նա վոտնդ չի սպառնում, մանավանդ, յերբ գանվում ես աշխատանքի պրոցեսում: Իսկ աշխատանքը, հատկապես հանրօգուտ գործին նվիրված աշխատանքը, յերբեք չի հոգնեցնում մարդուն,—ասաց Սուլթան կողքին կանգնած յերիտասարդ աղջուհուն:

Վերջինս իր հայացքն ազատեց նրա համառ աչքերից և պատասխանեց.

— Ցես պետք է պարապեմ այս դպրոցում: Դա կդառնա ինձ համար մի սքանչելի աշխատանք: Ո՛չ, յես անչափ սիրում եմ մանուկների դաստիարակության գործը:

—Գովելի մտք: Մենք արդեն կարիք ունենք նման ուժերի:

Թինան ավարտել եր բաթումիի լրիվ միջնակարգ դպրոցը և լավ գիտեր վրացերեն, սիրում եր գիրք, գրականություն:

— Լավ կլիներ նաև ունենալ սեփական յերեխաներ և դաստիարակել: Մանավանդ հիմա, յերբ նպատակավոր պարմաններ չատ կան,—ասաց Սուլթան և չարաճճիորեն ժպտաց:

— Այդ արդեն ուրիշ հարց է: Դրա մասին պետք է լուրջ մտածել,—պատասխանեց Թինան զսպված տոնով:

— Դա անչուշտ կախված է մեզանից: Այդ մասին յես արդեն լուրջ մտածել եմ...

Թինայի աչքերը մի վայրկյան բարձրացան և չեչոտակիտրեն ընկան Սուլավայի վրա: Ի՞նչ էլին հետաքրքրում արդյոք այդ աչքերը: Արդյոք նրանք կասկածո՞ւմ էլին Սուլավայի անկեղծությանը: Արդյոք նրա խոսքերը աննպատակ հայտարարություն՞ էլին, թե հետևանք մի վորևե վճռի կամ ցանկության: Թինան ժպտաց, ինչ վոր խորհրդավոր ցուլք պպզդաց նրա աչքերում, առաջ անցավ և քայլերն ուղղեց դեպի տուն:

Սուլավան ուշադիր հայացքով հետևեց, մինչև վոր Թինան մտավ իրենց տունը և ծածկվեց տեսողությունից:

Մի քանի քայլ հեռու կանդնած ճարտարապետը, վոր լուռ դիտում էր աղջկան՝ մոտ գալով ասաց.

— Հիանալի աղջիկ է յերևում այդ ալարուհին...

Թեև ճարտարապետի խոսքն անպատասխան թողեց Սուլավան, բայց խիստ դոհ մնաց նրա այդ հայտարարությունից: Ապա նա գնաց և գնդակի պես ցատկեց խճուղուց անցնող և մի վայրկյան սպասող ավտոմենքենայի վրա, վորը գլորգալով կրկին առաջ ընթացավ:

Սուլավան գարձյալ իր տարերքում էր: Գնում էր խճուղու և ջրանցքների աշխատանքները դիտելու:

Անձրևը թեև դադարել էր, բայց սաստիկ ցեխ էր խճուղին և մեքենան դժվարությամբ էր առաջ շարժվում: Մի քանի կիլոմետր էլ էր ճանապարհն առաջ ձգվել: Վորոշել էլին նրա մի ճյուղը տանել դեպի արևելք և միացնել Ցխակայա քաղաքը գնացող գլխավոր խճուղուն: Ճամբարաժանման այդ կարևոր հանդույցում բազմաթիվ մարդիկ էլին աշխատում: Մեծ քանակությամբ վինանյութ էլին բերել՝ դերաններ, տախտակներ, յերկաթե սյուներ և խճաքարեր:

Ցնկալ Ջոնդոն, աշխատանքների հոգին, բոցավառ չուներ: Մարդիկ լարվեցին, նոր թափ ստացան: Ջրանցքի վրա ձգվում էլին յերկաթե հենակները և միացվում դերաններըը, մեխվում հաստ ու լայնադիր տախտակները: Մենքենան չրի միջից դուրս էր չպրտում տիղմը, խորացնում ու լայնացնում էր ջրանցքի հունը: Քարտաշները մուրճերով ծեծում էլին քարերը, վորպեսզի նրանց վոդորկ ու հարթ ձև տան և նրանցով չարեն, կառուցեն ջրանցքի քարափները:

Սուլավան չոդում էր, հանեց անձրևանոցը և նետվեց աշխատանքի կենտրոնը:

— Հը, տղերք Ջան, ահա յես էլ յեկա: Տեսնո՞ւմ եք, մենակ չեմ թողնում ձեզ,— բացականչեց նա աշխատող ընկերներին:

— Արդեն դու միշտ մեզ հետ ես, մեր չրջանում: Դու ես ասա, խոստումդ յե՞րբ պիտի կատարես,—բացականչեց մի տարեց վարպետ՝ Սիլվեստր Ուրուչաձեն:

—Իր խոստումը ընկեր Ջոնդոն յերբեք չի մոռանա: Նա միշտ կատարել է ու կկատարի,—միջամտեց մի ուրիշ վարպետ:

— Ինչ վոր խոստացել եմ, կանեմ, ախպեր: Առաջիկա հանդըստի որը դուք իմ հյուրն եք,— պատասխանեց Սուլավան լրջին հատուկ աշխուժությամբ:

6.

Հանգստյան որը յերեկոյան կոլխոզայի այդ նոր ու ծաղկած ավանի ակումբում մեծ յեռուզեռ էր: Ջրանցքներն ու կամուրջները, ինչպես նաև խճուղին կառուցող վարպետներն ու բանվորները հավաքվել էլին ակումբի դահլիճը համերգ լսելու:

Դարձյալ լավեցին մենդրելական ու դուրիական ուրախ յերգերը, չոնդուրի վրա նվագեցին և պարեցին:

Իր ճկուն մարմնով և նազելի չարժումներով պարեց նաև Թինան: Սուլավայի աչքերը ճառագայթեցին և լցվեցին անահման խնդություն: Կարծես իր սրտի հարատատ մի մասնիկն էր այդպես չարժվում ու թռվռում բեմի վրա:

Համերգից հետո բանվորներն ու վարպետները հրավիրվեցին բանվորական ճաշարան ընթրիքի: Սուլավան խնդրեց, վոր Թինան էլ մասնակցի: Աղջիկը տատանվեց: Նրա մեջ խոսում էր աջարական կնոջ համեստությունն ու ամոթխածությունը: Հայրը մնացել էր տանը, վորովհետև այն որը Բաթումիից յեկել էր յեղբոր ընտանիքը և նրանցով էր զբաղված: Բայց Թինան դիմեց Սուլավայի թախանձանքին և նրա հետ գնաց ճաշարան:

Բանվորական ճաշարանում յերեք չարք յերկար սեղաններ էլին գրված, և բանվորներն ու վարպետները բոլորվեցին նրանց չուրջը: Նրանց չարքում Սուլավան ու Թինան էլ տեղ գրավեցին:

Շուտով մատուցողները ճաշատեսակները զարդարեցին զանազան ուտելիքներով և դինու շշերով: Ցերկու տակառ գինի յեր բերված և յերկու խոշ խորովված:

Մխաբերան Սուլավային ընտրեցին սեղանապետ: Թինայի կողքին բոցավառվեց կրակը և հրդեհի պես այրեց բոլորի սրտերը: Ամենքը լռություն դարձան: Բոլորն աչքերը հառեցին սեղանի մոտ բոցավառված այդ վոգբրկի մարդուն: Նա խոսում եր մեծ թափով ու շնչով: Նրա խոսքերը կորովի շեշտով հնչում եյին և մեխվում ներկաների սրտերը: Սեղանակիցները սիրում եյին նրան և դրա համար ել հաճույքով եյին լսում. նա խոսում եր Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության համաշխարհային նշանակության, ամբողջ Խորհրդային Միության և մասնավորապես Վրաստանի ձեռք բերած խոշորագույն նվաճումների մասին: Գովում եր հեգյաթական կոլխիդան, վոր հեգյաթից փոխվել և իրականության և դառնում և ծաղկուն ու բեղուն մի սքանչելի յերկիր: Ինչպիսի՛ խանդով ու յեռանդով եր նա գովաբանում այդ յերկրի բարեշատ հողը և պայծառ հեռանկարները:

Նա խոսեց բոլոր այն վարպետների ու բանվորների կենսացը, վորոնք ազնվորեն և անձնվիրաբար աշխատում են կոլխիդայի ճահիճները չորացնելու գործին մեղամասում: Ի՛նչ խանդավառ, վոգեշունչ խոսքեր, վորոնք անկաշկանդ և անկեղծ բղխում եյին նրա հոգու խորքերից...

Թինայի համար այդ դիշերն անցավ ինչպես մի դյութական յերազ: Իսկ այդ յերազի ամենապայծառ հերոսը կրակի պես այրվում եր իր կողքին: Այդ կրակի հրեղեն ճաճանչները թափանցում եյին Թինայի սիրտը և վոգևորում, հրդեհում եյին նրան: Նրա յերևակայության մեջ աճում, մեծանում եր Ջոնդոն, դառնում պատկառելի, հխտաքանչ դեմք, առասպելական հերոս, խիզախ, անպարտելի դյուցազուն, անխոցելի մարտիկ... Կարծես կռվի դաշտում հաղթանակ տարած ռազմիկի պես նա վերադառնում եր Թինայի մոտ և հպարտորեն դեկուցում իր քաջության ու հերոսության մասին...

Թինան այրվում եր աթոռի վրա վոգևորությունից և ուրախությունից արբած մարդու պես...

Ցերբ կես դիշերից չատ անց սեղանակիցներն ուրախ ու բարձր տրամադրությամբ ցրվեցին, Սուլավան Թինային առաջնորդեց տուն: Բավական յերկար ճանապարհ կար կտրելու: Խճուղին ամայացել եր և վոչ մի ստվեր չեր չարժվում այնտեղ: Ցերկնքի վրա պսպղում եյին արծաթացոլ աստղերը, իսկ մութ հորիզոնի յեզերքից աղոտ չողում եյին անհետացող լուսնյակի վերջին ցոլքերը:

Սուլավան վեցրեց Թինայի թևը և հանդարտորեն քայլում եյին: Նա չդիտեր ինչպես սկսեր խոսակցությունը և ինչի մասին խոսեր: Ընթրիքի ժամանակ չատ եր խոսել ու հուզվել, իսկ դինին այրել, բոցակալել եր նրա մարմինը: Այժմ այդ անուշիկ աղջիկն եր նրան հուզում, անսահման բերկրանք պատճառում:

— Ցես չդիտեյի, վոր դուք այդքան կրակոտ խոսել դիտեք և կարողանում եք հմտորեն կառավարել սեղանը: Անփոխարինելի սեղանապետ եյիք,—ասաց Թինան բերկրալից ձայնով:

— Արդյոք կոմպլիմենտ չե՞ս անում, Թինա,— պատասխանեց Սուլավան վոգեվորված:

—Մի՞թե չեք զգում իմ սրտի և խոսքերի անկեղծությունը,— ասաց Թինան, և նրա աչքերը դիշերային մութի մեջ պայծառ փայլ ստացան:

Սուլավան ձեռքով լրեն մոտեցրեց Թինայի գլուխը և համբուրեց նրա աչքերը: Ապա իր շրթունքները բոցավառվեցին Թինայի շրթունքներին: Սահեց յերջանկության տենչալի վայրկյանը...

Թինան ազատվեց նրա գրկից և հարդարեց մազերը: Սուլավան ջերմագին շեշտով ասաց.

— Ցես ուզում եմ, վոր դու դառնաս իմ կյանքի ընկերը: Մենք միասին կապրենք ու կծաղկենք մեր սքանչելի Կոլխիդայի հետ...

Աղջիկը մի բոպե մտածեց և պատասխանեց.

— Այդ մասին դու կխոսես իմ հայրիկի հետ...

Հետո խճուղուց թեքվեց և դերանների վրայից անցնելով արագորեն չարժվեց դեպի տուն: Նրանց պատշգամբում վոտնաձայներ լսվեցին և սենյակի դուռը փակվեց...

Սուլավան չարունակեց հանդարտորեն քայլել խճուղու յեզերքայնքի վեր: Ցերկնքի դեմքը դունատվեց և դիշերը մեղմորեն հավաքեց իր մոայլ փեշերը:

Խճուղու յերկայնքն ի վար քայլող և արշալույսի թարմ աղբ շնչող Սուլավայի վրա թափվեցին լուսաբացի առաջին ցոլքերը:

Գեղատեսիլ պուրակի տպավորութիւն եր թողնում Գոդոբերիձեյի վոքրիկ այդին: Հաճելի յեր լինել այնտեղ և դիտել տերևների արանքում ժպտացող նարինջը: Պտուղները հասել եյին արդեն: Կարելի յեր ծծել նրանց անմահական հյութը:

Վորքան ուրախանում ես և ինդեվորվում, յերբ քո անկած ծառերն արագորեն աճում են և արագորեն պտղավորվում: Դու լցվում ես աննկարագրելի հաճույքով և որհնում, վառաբառնում ես այն հողը, վոր այնքան բեղուն և և ամեցնող: Հողը, վոր մի ժամանակ անանցանելի ուիմ եր ու ճահիճ՝ լիքը թունավոր մոծակներով, հիմա այդ հողն արդասավորվել և և զարդարվել բյուր բարիքներով ու պանճերով:

Գոդոբերիձեն յեկիպատացորենի մի բերք ստացել եր արդեն, հողը մշակում եր, վոր յերկրորդն ստանա: Սուլավան այցելեց նրան և դովեց նրա յեռանդը: Նա սրտանց ցանկացավ, վոր Գոդոբերիձեն միշտ այդպես առատ բերք ստանա և պտուղներով ծանրաբեռնվեն նրա ծառերը: Գոդոբերիձեն ուրախացավ և չատ զղացված եր նրա հոգատար և ուշադիր վերաբերմունքից:

— Ա՛յ մարդ, դու ել ունեցիր այսպիսի այդի և մշակիր: Դա հաճելի զործ և և յերբեք ձանձրույթ չի պատճառում:

— Լավ ես ասում, բարեկամս, բայց դրա համար պայմաններ են պետք,— պատասխանեց Սուլավան լուրջ տոնով:

—Ստեղծիր քեզ համար այդ պայմանները: Դա դժվար կամ անհնարին բան չե: Յես սիրով կաջակցեմ այդ զործում,—հատուցրեց Գոդոբերիձեն բարյացակամ ժպիտով:

Սուլավան մի պահ լուռ մնաց: Ինչ-վոր ծանր խնդիր վճռող մարդու պես նրա դեմքի զծերն ամփոփվեցին: Ապա նա խղեց լռությունը և կամացուկ ասաց·

— Շատ և չատ չնորհակալ եմ քո պատրաստակամության համար: Իսկապես դա վճռական նշանակություն ունի ինձ համար: Մանավանդ, վոր յես մտադիր եմ խնդրել ձեր աղջկա ձեռքը և վստահ եմ, վոր ինձանից լավ բարեկամ չեք ճարի···

Գոդոբերիձեն ժպտաց և ձեռքը բարեկամաբար դրեց Սուլավայի ուսին, մտերմաբար չոյեց այդ ուսը և պատասխանեց·

— Յես յերբեք դեմ չեմ լինի, յեթե Թինան համաձայնի:

Վերջին խոսքը նրան և պատկանում: Ձե՞ վոր հիմա բոլորովին վերացել են աշարական հին ադաթները, յերբ ամուսնության խնդիրը միայն ծնողներն եյին վճռում, իսկ վորդիները լուռ հնազանդում եյին նրանց կամքին: Յես այդ մասին կխոսեմ աղջկա հետ:

Թինան գնացել եր դպրոց և պարապում եր այնտեղ: Նոր դպրոցի չենքում պարապմունքներն սկսել եյին արդեն: Յերիկու հարյուրից ավելի աշակերտ եր հավաքված: Թինան դասավանդում եր յերկրորդ դասարանում: Նա չատ ուրախ եր և ջերմորեն կպել եր իր աշխատանքին:

Յերեկոյան, յերբ ընտանիքը հավաքվեց Թեյասեղանի չուրջը, Գոդոբերիձեն խորհրդավոր ժպիտով չարունակ նայում եր աղջկան, կարծես մի չատ կարևոր բան ուներ ասելու, բայց չեր համարձակվում: Թինան թեյում եր և միաժամանակ ուղղում աչակերտների տետրերը:

Հայրը վերջապես վճռեց և հանդիսավոր կերպով հայտարարեց Սուլավայի առաջարկը: Յերիտասարդ աղջկա դեմքը չինվեց և աչքերը չբարձրացան տետրից: Նա բոլորովին լուռ մնաց: Նրա փոխարեն մայրը հանդես յեկավ և ամուսինների մեջ տեղի ունեցավ մտքերի յերկարատև փոխանակություն:

Թինայի աչքերը մշուշվեցին և տետրի մեջ դրված խոչոր տառերը խառնվեցին միմյանց: Նա այլևս չեր կարողանում ուշադրություն ամփոփել: Նրա մտքերը մեկնել եյին ուրիշ տեղ: Ախորժելի սարսուռ անցավ նրա մարմնով և ձեռները դողացին: Հետո նա վեր յելավ և հեռացավ ննջասենյակը: Այնտեղ նա պատկեց իր մահճակալի վրա և հայացքն ուղղեց լուսամուտից դուրս, դեպի մթնշաղով ծածկված յերկրի հեռավոր դորչ հորիզոնը:

Յերբ հետևյալ որը Սուլավան կրկին այցելեց Գոդոբերիձեյին, վերջինս մեծ սիրով ընդունեց նրան, համբուրեց նրա ճակատը և ուրախ-ուրախ հայտարարեց·

— Մենք չենք ուզում, վոր մեր աղջիկը մեր տնից հեռանա: Ձե՞ վոր նա մեր մինուճար զավակն է: Զորան ունենինք, միայն այդ մեկը մնաց: Մեկը մահացավ, յերկուսն ել ամուսնացել ապրում են Ամերիկայում: Մեր պատավը չատ պիտի տխրի, յեթե այս մեկն ել գնա և նա մնա բոլորովին մենակ: Այդ պատճառով ել լավ կլինի, վոր դու մեզ մոտ դաս: Մանավանդ վոր դու տեսական քնակարան և հարմարություններ չունես···

Հիանալի մխոք, հիանալի առաջարկ: Սուլաման հենց այդ էլ ուզում էր: Նրանց ընտանիքում նա իրեն ամենից բախտավոր ու յերջանիկ պիտի զգար: Մի կողմից Թինան, մյուս կողմից՝ նրա լավ ծնողները և ապա՝ բնակարանային հարմարություններըը: Եվ ինչ էր ուզում Սուլաման: Ուրախությունից գրկեց Գոզոբերիձեյին և հարազատ հոր պես համբուրեց:

Այլևս վոչինչ չկար ասելու... Սուլաման մնացավ խճուղին, աչխուժությամբ ցատկեց իրեն սպասող ավտոմեքենայի վրա և ձեռները կողքին կանգնած նայեց դեպի հեռուները, Կոլխիդայի հորիզոնները: Իսկ այդ հորիզոններն այնքան ընդարձակ ու լայնածավալ թվացին նրան, վոր կարծես վերջ ու սահման չունեյին: Նրա սիրտը դարձավ չրջապատի պես լայնածավալ ու ընդարձակ և յերջանկորեն ժպտաց վերևից հուրհրացող արևի պես...

Ավտոն արագորեն ընթանում էր խճուղու յերկայնքն ի վար, վորի յերկու կողմից նորակառույց չրանցքներն ու չենքերը ձգվում եյին և կյանքը, ծաղկող ու բարգավաճող կյանքը ժպտում էր Կոլխիդայի արևի տակ...

8.

Ցերկու սենյակից բաղկացած՝ Գոգոբերիձեյի տունը յերկու սենյակով էլ ընդարձակվեց և պատուհանների առաջ կառուցվեց նոր ու լայնանիստ պատշգամբ:

Այդ պատշգամբի ճաղերին թեքված պատկերվում եյին մերձարևադարձային լայնատերև բույսերն ու ծաղիկները: Նարնջի ու կիտրոնի ծառերից նոր այգի էս տնկվեց և դարձավ աչք չոյող մի աքանչելի տարածություն: Հնուհետե այդ այգին յերկարեց մինչև խճուղին: Իսկ խճուղու յերկու կողմից մշտադալար ու փարթամ ծառեր բարձրացան:

Սուլաման բերկրանքով էր զբոսնում ավելի և ավելի կանաչող ու ծաղկող այգում, վորտեղ իր սիրելի Թինայի հետ միասին նարինջ էր հավաքում: Նարինջները չոշչոզում եյին ծառերի վրա և ախորժակ եյին գրգռում:

Մի տարի հետո, յերբ Թինան պատշգամբում կանգնած նայում էր դեպի ծառազարդ խճուղին, նրա գրկին մի փոքրիկ մանչուկ կար, վորի անմեղ աչքերը ժպտում եյին լայնատերև բույսերի և յերկնագույն ծաղիկների արանքից:

Ժպտում եյին և արտացոլում ծաղկոց Կոլխիդայի խնդալից կյանքը:

Ե՜Յ, ԿԱՆԱՉ ՍԱՐԵՐ

Զորագնաց ելեկտրականի դեմառդեմ բարձրացող լեռան ըստորոտում աչք չդադմի դեղատեսիլ պուրակ։ Թավուտների միջից մեղմիվ ղղվում և ադբյուրի վճիտ ջուրը։ Անուշ յերգ ու հյուսում չարունակ, բայց ձայնը դնում կորչում և ներքև խշշացող Դերեզի ջրերի աղմուկում։ Աղբյուրի կողքին հինավուրց ընկուզենին և կանգնել հատատրուն և թհատոթրած։

Ահա այդ ընկուզենու տակն են քեֆ արել հին ժամանակ դյուղի ծերերը և իրենց վորդիներին ասել.

«Ապրեք յերեխեք, բայց մեղ պես չապրեք...»։

Այդ այն ժամանակն եր, յերբ այս լեռնաչխարհում ապրող դյուղացին դանվում եր տգիտության ու հետամնացության թանձր խավարի մեջ, ինչպես աշխանավերջին աղջամուղջով պարուրված անտառը։ Ցեվ ջրտիկի ու թավալի ճիպոտը չարունակ այրում եր նրա նիհար մեջքը։

Ժամանակը սահեց և պոետի խոսքերը ճչավեցին։ Հիրավի, այժմ նոր սերունդը, այդ դառն խոսքն արտասանող պատերի զավակներն ու թոռները բոլորովին այլ կյանք են ստեղծել իրենց համար։ Զորամը դղրդալով դնացք և անցնում։ Ելեկտրականն և բարձրացել վորպես լույսի և ուժի անապատ ավազան։ Արդեն քարափներն իվեր մագլցել են կանթեղները լուսատիպոտ և արծաթի նման չողում, յերբ դիշերն իր մութ թևերը փռում և անտառների ու ժայռերի վրա։

Մի նեղ, քարքարոտ ու վոլորան ճանապարհ չարունակ դեպի վեր և ձգվում։ Այդ ճանապարհը թեև կարճ և, բայց դժվարին և ու հոդնեցնող։ Կանաչափառ ձորն աստիճանաբար իջնում և և դառնում խոր անդունդ։ Հանդիպակաց լեռան լանջին յերևում և Սաեփանավան դնացող դիզդազ խճուղին։ Վերևը Զորագյուղն և թառել, վորպես հինավուրց ավանդություն։ Ամեն վերևը յերկնքի կապույտ լանջն և պատկերվում լուսապայծառ, իսկ ներքևից դեռ լսվում և ջրերի վշշոցը։

Ցերեկն–յերեկն կանգ ես առնում կամ նստում վորևե ծառի չվաքին փոքր ինչ չունչ առնելու և հանգստանալու։ Ապա կրկին բարձրանում ոճապատույտ լեռնուղին։ Ահա հասնում ես քարափի բարձունքին և մի փոքրիկ քարաժայռ և միայն ատամնավոր պարսպի պես ծառանում դլխավերևդ։ Նստում ես քարեբի վրա։

Անդնդախոր ձոր, չուրջդ լեռներ թև–թևի տված, և ամկամա հիշում ես բանաստեղծի «Լոռեցի Սաքոն» ու «Մարոն» հրաշալի պոեմները։

«Այն Լոռու ձորն և, ուր հանդիպակաց
«Ժայռերը խորունկ նոթերը կիտած՝
«Դեմ ու դեմ կանդնած համառ ու անթարթ
«Հայացքով իրար նայում են հանդարտ...»։

Այդպես և այս դեղատեսիլ յերկրի արտաքինը։ Բայց մեջատեղից խոպատ վերացել են չարքերից ու դեվերից ահակալած Սաքոները, կամ լինը տարեկան հասակից անբախտացող Մահթոները։ Ներքինը բոլորովին այլ և։ Ու մտարերում ես մի հեռատաքրքիր դեպք, թե ինչպես անցյալ տարի պոետի դյուղն այցելող մի յերիտասարդ բանաստեղծ այս քարափից ձորը նայելիս ուղեցել և մի անմեղ կատակ անել և ուժգին յերկարող ձայնով կանչել և...

— Սաքո՛, Սաքո՛...

Ձորի խորքերից, ծառերի թփուտների արանքից մի ձայն արձագանդել և.

— Ո՛, ո՛...

Ցերիտասարդ բանաստեղծի կրկնակի կանչին, թփուտների մեջից դուրս և յեկել մի չահել գառնարած, ուշադիր նայել վերև և ձայնել.

— Ով ա, եհե՛յ...

— Ինձ այնպես թվաց, վոր դու Լոռեցի Սաքոն ես,— բացականչել և վերևից յերիտասարդ բանաստեղծը չփոթված։

— Լուռեցի Սաքոն ո՞վ ա, ճնանչում չեմ: Ցես Սհակյան Սաքոն եմ,— պատասխանել է դեղջուկը և կրկին անհայտացել ծառերի արանքում:

Յեվ յերիտասարդ բանաստեղծը չատ է հրճվել իր միամիտ կատակի վրա:

Ֆարափի հենց պռնկին պահակի նման կանգնել–հսկում է մի յերկհարկանի վայտաշեն տուն: Ապա դիմավորում են մի քանի հաղթահասակ բարդիներ և մտնում ես դյուղը:

«Մեր դյուղն են է, վոր հպարտ
«Լեռների մկզ միպպատ,
«Ինր ձորերի քարափին՝
«Զեռքը տված ճակատին՝
«Միտք է անում տխրադեմ...»:

Գյուղն այլևս առաջվա նման «միտք չի անում տխրադեմ»: Նա այժմ հիմնովին կերպարանափոխվել է: Յերկհարկանի տներ են բարձրացել այնտեղ լայն պատշգամբներով, կալսիչ մեքենաներ կան, լրիվ միշնակարդ դպրոց: Հիմա կոլխոզնիկին ավելի կուլտուրական ապրուստ ունի, պատռաքաղով և ճաշամ, յերկաթյա մահճակալի վրա քնում, ձմեռը կրկնակոշիկ հագնում և աչխույժ հետևում է քաղաքական խնդիրներին:

Ահա պոետի փայտաշեն վերանդան, վոր արդեն հնացել և ու ճաք–ճաքել: Մտնում ես մի ընդարձակ, կիսամութ տուն, մեջտեղը թոնիրն է, այս ու այն կողմը զանազան իրեր կան դասած: Ակամա միտք են գալիս պոետի խոսքերն այն մասին, թե ինչպես «ձմռան ցուրտ որերին, դյուղի ահելն ու ջահելը տաք ողաներում հավաքված՝ լսում են ծերերի «զրույցները հին–հին»:

Այս կիսամութ ողայումն է ծնվել ահա պոետը: Այստեղ են պարուրել նրան մանկական խանձարուրի մեջ և որորել սքանչելի յերգերով: Այստեղ, այս թոնրի չրթին է տաքացել ձմռան դաժան ցրտերին: Վերևը, փոքրիկ լիսածակից հաղիվ է լույսը ներս թափանցում և յերկինքը պատկերվում է վորպես կապուտակ աչք:

Յեվ այդ մռայլ ու զեռնահարկ ողայից դուրս գալով առջոխում ես յերկու սենյակից բաղկացած մի նորակառույց դեղեցիկ բնակարան իր բոլոր հարմարություններով ու դարձյալ զդում, վոր մեր որերի մարդիկ բոլորովին այլ կյանքով են ապրում...

Պատշգամբում հաղիվ քայլում է սև չորերով մի բարձրահասակ լիննունամյա պառավ, վորի մարած աչքերին լույսը հապիվ է առկայծում: Պոետի մայրն է: Սա յէ ահա աչխարհ բերել այն հսկա կաղնին, վոր իր պատվավոր տեղն է դրավել մեր դրականության կանաչափառ անդաստանում: Ցերբ հարցնում ես առողջությունը, ջղայնանում է և վերհիչելով իր «անուշ Հովհաննեսին», մղկտում է դառնագին:

Ընդարձակ, լուսավոր սենյակում թերթում ես սեղանի վրա դրված ալբոմներն ու հիչողությունների դրքերը, վորոնց մեջ համարյա մեր բոլոր հին դրողների նկարները կան և նրանցից մի քանիսի ձեռագրական նամակները՝ պոետին ուղղած:

Իջնում է ամառային մեղմ, անուշ յերեկոն: Գյուղը չրջապատող լեռները սևանում են և յերկինքն ընդունում է թանաքի գույն: Սափորներն ուսած աղջիկները դառնում են աղբյուրից ուրախ կանչվռտուքով, անասունները բառաչում են այս ու այն կողմից, իրենց կացարաններն են չտապում: Փչում է սառնորակ զեփյուռը:

Գիշերում ես Մովսես բլճայի մոտ, վոր հարմար բնակարան ունի: Հետաքրքիր մարդ է Մովսես բլճան, հյուրընկալ, զրուցասեր: Վաթսունամյա ծերունկը յերկու ջահել տղա ունի նոր ամուսնացած, յերկուսն էլ կոլտնտեսական, դաչտավարական բրիգադայի ամենաակտիվ անդամներից, ամբողջ որը հունձ անելուց հոդնաբեկ՝ վերադառնում են տուն: Յերկուսն էլ պրագետ, ամենօրյա լրագրերին ուչադիր հետևող: Ներանց կանայքն էլ են դրագետ, սակայն տղամարդկանց մոտ տակավին պահպանում են վորոչ համեստություն ու ամոթխածություն: Մովսես բլճան թեև ուչացել է, բայց սրդեն խնդիր է տվել կոլխոզ ընդունվելու: Վորդիները ավելի առաջ են, ավելի կուլտուրական ու բարեկեցիկ: Հայրերը հետևում են նրանց ուրինակին և արդեն զդում են նոր կյանքի բույրը...

— Ա՛խ, թե մի սաղ ըլեր Հովհաննեսը, խակը նրա վախտն եր հիմի, յերբ ասպարեզ չատ կա գործելու: Ինչ մարդ եր ե՛, յես նրա աղիզ չանին մատաղ: «Քեզի անողին քիզի չի պակսիլ» խոսքը հենց նրա համար եր ասած: Գալիս եր դյուղը թե չե, հավաքում եր իր ուղած մարդկանց ու գնում-նստում եյինք հրեն են

տարի դռչին սևին տվող անտառը, կաթնաղբյուր կոչված աղբյուրի կշտին ու լսում նրա քաղցր ղրկոցը, նա էլ մեզը,— վողևորված պատմում է Մովսես բիձան և, յեթե Թողնես, մինչև լույս կխոսի: Ու չափազանց հոգատար է, վոր պոետի գյուղն այցելողները «բեզամաշ» չլինեն:

Առավոտ, յերբ «քարտ թիկունքից Զաթին Դազ լեռան նոր և արևը պռունկը հանում» և պսպղում վոսկու պես, յելնում ես գյուղի չրջակայքը դիտելու: Զորս կիլոմետր քայլում ես հեծղհետե բարձրացող սալահարթով ու հասնում անտառին: Հակառակ կողմը պոետի սիրած Զաթին Դազն է ձգվել ինչպես մի հսկայական պատ և ձորից բարձրացող ամպերը բամբակի քուլաների նման չարվում են նրա ուսին:

Անտառի խորքում փոքրիկ լճակ, չուրջը փարթամ մարդապեսին: Ջրի մեջ նստել և հաղիվ սև թիկունքներն են ցույց տալիս յերեք գոմեշ, իսկ հանդիսակաց ծառի տակ խոտերի վրա հանգստանում և ուսից ուսելիքի պայուսակը կախ՝ մի տղա:

— Այ տղա՛, բա գնդերից չես վախենում, վոր մենակ յեկել պատկել ես այստեղ:

Ջո հարցին նա ժպտում է հանդիստ, ցույց է տալիս սպիտակ ատամներն ու պատասխանում.

—Գնդե ի՞նչ պիտի անի վոր, գնդից վախում չեմ:

— Բա չարքե՞րը, դևե՞րը, նրանցից էլ չես վախենո՞մ:

— Եղ ի՞նչ խոսք ա. եղենց բաներ չկան,— հայտարարում և նա ամրապնդ:

— Դու կարդացե՞լ ես Թումանյանի բանաստեղծությունները:

— Ես՞ չեմ կարդացել, բոլորը կարդացել եմ,— ասում և պեղջուկ տղան հպարտ և շուռ գալիս մյուս կողքին. քունը աչքերի յեղրին է:

Անտառը հետզհետե մեծանում է, ծառերը մերձենում են իրար, խառնում:

Ահա այս անտառումն է պոետը չրջել իր մանկության օրերին, մոռ հավաքել, մորի ու մոշ— անտառի այդ անուշահամ պտուղները ճաշակել: Սիրել և անչափ այս համապարփակ խաղաղությունը...

Հետոն, ծառերի արանքից նշմարվում է Մարց փոքրիկ գյուղը, ապա՝ Լոռուտը, և անտառը դառնում է ավելի ամենախիտ և մթին:

Իրիկնադեմին կհասնես, բայց ավելի դեղեցիկ չրջակայք ունեցող մի ուրիշ ճանապարհով իջնում ենք ձորը: Շուրջը կանաչ պորպի պես անտառ, իսկ ներքև խորը անդունդ: Սայթաքելիր թե չե, խորը, շատ խոր կղնաս և գուցե միայն ականջդ մնա իրեև հիշատակ...

Շատ ժամանակ չի անցել, յերբ հաչվապահ Սողոն մի որ գյուղխը տաքացրած պահին՝ այս գլխապտույտ զառիվերով բարձրանալիս իր կնոջ հետ՝ սայթաքել և ու գահավիժել: Ու մինչև այսոր էլ գլորվում է և խեղճ կինն աչքը չուր դառած՝ գուր տեղն սպասում է նրան...

Ու չես կարող չհիշել Անուշին, վոր նահապետական դժնի աղաթներից խելագարված վազում եր գլխակորույս այս ահռելի անդունդն ի վար և այդ աղաթներին գոհ գարձած Սարոյի մահը վողբում: Հիշում ես այդ բոլորը և մի պահ տխրության ամպով ծածկվում և հոգիդ:

Բայց կողքիդ անցնող գեղջուկների զվարթ ճայնը սթափեցնում է քեզ և գու կրկին պայծառանում ես չրջապատիդ պես:

Բազկատարած ու սովերախիտ ծառերի արանքից անցնելով հասնում ես մի գովասուն վայր: Սառնորակ աղբյուր և չոռում: Շուրջը, ծառերի սովերների տակ քարաթմբեր են, վորոնց վրա հանգստանում ես մի պահ:

Վայրկյանն աստիճանաբար ավելի դժվարին և դառնում: Բայց ահա մեկը մյուսի հետևից յերևում են Գոլադերան կայարանը, յերկաթգիծը և խշխշացող գետակը:

Վրա հասնող իրիկունը սև սովեր և գարձնում ձորը, պղպղում են լույսերը և դղրդում և գնացքը: Իսկ քիչ առաջ թողած կանաչ, վիթխարի բարձունքը ահռելի մեծությամբ ծառանում և գլխավերեվդ:

Նայում ես գարձյալ այդ կանաչագեղ բարձունքին և կրկնում պոետի սիրելի խոսքերը:

«Ե՛յ, հին ծանոթներ, ե՛յ, կանաչ սարեր...»

ԱՐԾՎԻ ՃՈՒՏԸ

1.

Կաբմիրների №... վաշտումն էր կռվում Չոկատապեա Ա-լեքսեյ Իվանովը: Նա մոտ քառասուներեք տարեկան մի ջահա-սակ չիկահեր մարդ էր, դեղնավուն դեմքով, ամրակազմ ու ժիր:

Քաղաքացիական կռիվներն սկսվելուն պես Իվանովն անցավ կարմիրների կողմը: Յերկար տարիներ նա աշխատել էր իբրեև փոքրիկ քաղաքի ծխախոտի փոքրիկ գործարանում և համար-վում էր նրա լավագույն բանվորներից մեկը: Սակայն ստատիկ առում էր գործարանատեր Ռոտիշևին: Այդ փոքրիկ մարմնով, մանր, պղպղուն աչքերով, սպիտակամազ մարդուն ամեն անգամ տեսնելիս, Իվանովը զայրույթից կրճատացնում էր առամները և լցվում անդոր կատաղությամբ: Սակայն ստիպված էր զսպել իրեն, վորովհետև ձեռքում ճար չկար:

Բանն այն է, վոր գործարանատեր Ռոտիշևին առհասարակ վատ էր վարվում բանվորների հետ: Անընդհատ աշխատեց-նում էր նրանց և քիչ վարձատրում: Ինչպես են ապրում բան-վորները, ինչպիսի բնակարան ունեն և արդյոք տա՞ք և նրանց բնակարանը, յերեխաները տաքո՞ւմ են. այդ բոլորը մագաչափ անգամ չէր հետաքրքրում նրան: Ահա թե ինչու Իվանովն ա-ռում էր այդ մարդուն, ինչպես և նրա հյու-հնազանդ գործակա-ռարներին:

Իվանովն առելությամբ լցված էր նաև իր առնտրրոջ հան-դեպ, վորի մեծ և ընդարձակ տան ներքնահարկումն էր ապրում նա: Մինչդեռ առնտրերն ամենավերին հարկում չորս սենյակից

բաղկացած և բոլոր հարմարություններով հվանալի բնակարան ուներ, ամենալավ տեսակի կահկարասիքով զարդարված:

Իվանովն ապրում էր կիսամութ ներքնահարկում, վորի լու-սամուտից հազիվ էր ներս թափանցում լույսը, իսկ արևի մասին խոսելն ավելորդ կլիներ, վորովհետև դիմացի չինության բարձր պատի պատճառով արեղակը հնարավորություն չուներ թափան-ցել այնտեղ: Ահա այդ խոնավ, անարև նկուղում հիվանդացան ու մահացան Իվանովի կինն ու աղջիկը...

Ջավաղանց դառն ու վշտալի եյին նրա համար մեկը մյուսին հետևող այդ կորուստները: Նրա ցլխին յեկած այդ ծանր դժ-բախտությունն է՛լ ավելի ջղայնացրեց Իվանովին և նա առանց հուզմունքի չեր կարող նայել վերևի հարկում, լուսավոր սենյակ-ներում ապրող տանտիրոջը:

Ինչո՞ւ պիտի ինքը կյանքը մաշի կիսամութ նկուղում, ա-ռավոտից մինչև յերեկո աշխատի ու չարչարվի գործարանում և չնչին վարձ ստանա: Ինչո՞ւ ինքն էլ չպիտի կարողանա ազատո-րեն վայելել այս լեն ու բոլ աշխարհը...

Իվանովը չարունակ մտածում էր, բայց դժվարանում էր ինքնուրույն կերպով լուծում տալ այս հարցին: Դժվարանում էր, վորովհետև այնքան ուսում չուներ և աշխարհի չարն ու բարին չեր կարողանում լավագույն կերպով վերլուծել: Բայց մի բան նրա համար ակնհայտ էր և անվիճելի, վոր աշխարհում յերկու տեսակի մարդիկ են ապրում: Նրանցից չատերը վատ պայմաններումն են, իսկ քչերը՝ լավ: Առաջիններն աշխատում, չարչարվում են, իսկ յերկրորդները ուտում, վայելում են: Այ-սքանը քաջ հայտնի յեր Իվանովին, հայտնի յեր նրան նաև այն, վոր ինքը սարսափելի ատում է վերջին տեսակի մարդկանց: Ա-տում է և հաճախ նույնիսկ պատրաստ է հարձակվել նրանց վրա և վոչնչացնել, յեթե միայն մեկը դրդի կամ կպատահերպչի նրան...

Ահա թե ինչու, յերբ գործարանատեր Ռոտիշևին սկսեցին և բանվորներից կարմիր գնկատաններ ստեղծվեցին, Իվանովն իսկույն-ղենքը վերցրեց և միացավ նրանց: Դրանից հետո պարզ եր այլևս-ման ինչ: Ղեկավար ընկերներն իրենց յելույթներում ու ճառե-րում ավելի ու ավելի եյին պարզաբանում բանվորական չարժ-ման և դասակարգային պայքարի խնդիրները. Իվանովի համար

անդրդվելի, անվիճելի սկզբունք եր դարձել անխոնա և մինչև վերջը վոչնչացնել բոլոր հարստահարողներին ու կեղեքիչներին:

Այսպես ել նա մնաց անդրդվելի մինչև իր կյանքի վերջը...

2·

№...վաշտում գտնվում եր նաև Իվանովի վորդին՝ Վասյան:

Դա տասնվեց տարեկան չլալինդ թևերով, արևախանձ դեմքով մի կայտառ տղա յեր, Իվանովի ընտանիքի միակ մնացորդը: Հայրը նրան վերցրեց իրեն հետ կռվի դաշտը: Իրենց քաղաքում նա մոտիկ ազգականներ չուներ, վոր վորդուն հանձներ նրանց խնամքին: Առանց այն ել Վասյան վոչ մի դեպքում չեր համաձայնի բաժանվել հորից, վորի հետ ինքը կապված եր իր կյանքի բոլոր թելերով:

Վասյան մեծ մասամբ լինում եր վաշտի թիկունքում, պատշարակիր սայլակների կամ դինակիր կառքերի վրա, իսկ դիչերները գալիս քնում եր հոր վրանում, նրա կողքին:

Ահա չորս ամիս է, ինչ №...վաշտը կռվում եր Արմավիրի մոտ: Յերեք անդամ նրան հաջողվել եր մտնել և դրավել քաղաքը, բայց ելի սպիտակների գերազանց ուժերի ճնշման տակ ստիպված եր յեղել դուրս գալ քաղաքից և դիրքեր գրավել դեպի մյուս ափին, հողաբլուրների վրա: Կռվող կողմերի միջև չարունակ տեղի յեր ունենում կատաղի հրացանաձգություն և թնդանոթամարտ:

Վասյան արդեն սովորել եր այդ կրակոցներին: Նա նույնիսկ ինչ-վոր բավականություն եր զգում կռվի, առաջխաղացման ու նահանջի այդ անհանգիստ ու վտանգավոր խաղերից: Գոհ եր մանավանդ, վոր գտնվում եր ռազմի վայրում, հոր կողքին: Վորքան հայրը զրկում, համոզում եր նրան հեռանալ կռվի վտանգավոր տեղամասերից, այնքան պատանու հետաքրքրությունն ավելի յեր վառվում ու աճում:

Դեղնավուն չքից բաճկոնակը հագին, կապույտ չալվարով, առանց գլխարկի Վասյան չարունակ վոտքի վրա յեր, ըրված մեքենայի պես չարժվում եր մեկ կետից մյուսը: Յերբ անհրաժեշտ եր լինում կերակրել հանդստացող մարտիկներին, Վասյան պաշարակիր սայլերի, ռուսական բորշչ պատրաստող մեծ կաթսայի մոտն եր: Յերբ հրաման եր գալիս խրամատներ փորելու, պատանին քլունգը ձեռքին խառնվում եր հողափոր մարտիկներին: Հաճախ ել նրան տեսնում եյիք առաջավոր դիրքերում, գիրքապահ ռազմիկների մոտ: Վասյան յեռանդով մասնակցում եր վիրավորին գետի վիրաբուժական կայան տեղափոխելուն:

Ինչպիսի լարված, սպասողական արտահայտություն եյին ստանում նրա աչքերը, յերբ ոդի մեջ սուրում եր հակառակորդի գիրքերից արձակված մի արկ, վոր պայթում եր և վժժալով ընկնում ներքև: Նա մոտավորապես վորոշում եր արկի անկման տեղը և աչխատում եր խուսափել այդ վայրից:

— Ա՛յ տղա, ի՞նչ ես թրև գալիս գիրքերում, հեռացիր կրակի գծից: Ուղում ես սպիտակների գնդակները քեզ չամփրձին,— բացականչում եր հայրը և պահանջում, վոր Վասյան գնա ավելի ապահով տեղ:

— Եհ, հայրիկ ջան, դու քո ճարը տես, ինձ գնդակը չի դպչի: Մահից վախեցողը չուտ կմեռնի: Ձես արդեն սովորել եմ կրակոցին:

Համարձակ պատանու այս խոսքերը առանձնապես դուր եյին գալիս մանավանդ վաչտապետին, վոր իր կոչտ և ամուր ձեռքով սիրալիր խփում եր նրա ուսին:

— Շուտով Վասյային յես կղարձնեմ իմ տեղակալը: Նա արդեն կռվել գիտե: Իսկ յերբ մարդը չի վախենում վտանգից, նա կարող է դիմադրել և հաղթել թշնամուն:

Վաշտի հրամանատարը մի բարձրահասակ, հաղթանդամ մարդ եր: Նա աչխատել եր մեռազաձուլական գործարանում վորպես յերկաթագործ: Համաչխարհային պատերազմին չորս տարի կռվել եր արևմտյան ճակատում և յերբեք թիկունք չեր դարձրել: Նրան տվել եյին յենթասպայի աստիճան: Հեղափոխության ժամանակ նա անցավ կարմիրների կողմը և գործավ կարմիր բանակի լավագույն վաչտապետներից մեկը: Նա հագել եր զինվորական չոր, առանց վորևե նշանի: Կողքից կախված եր յերկար վայրկյան թուրը, վոր չատ անգամ եր պատյանից դուրս յեկել և ճահաբեր կայծակի պես չչվել թշնամու գլխին: Դեղնափայլ կաշվե պատյանում պատրաստ նստել եր պարաբելլումը: Թավ բեխեր ուներ և խիտ հոնքեր: Յերբ նայում եյիր նրան, զարգանդ եյիր զգում, այնքան ահավոր ու դաժան եր նրա տեսքը: Սակայն այդ ահավոր կերպարանքի մեջ թաղնված եր մի սիրտ, վոր այնքան քաղի յեր գտնում և անձնազոհ իր չրջապատողների և

պինակիցների հանդեպ: Նա չափազանց զգահատում էր ընկերներին և յերբեք վերևե բանով չէր վրդովում կամ կոտրում նրանց սրտերը: Առանձնապես լավ էր տրամադրված և չարաճակ կատակներ էր անում Վասյայի հետ: Նրան մի նազան տվիրեց հիսուն ռամխուշով: Այդ նազանը մեծ ուժ և վոսևորություն ներշնչեց Վասյային, և ուրախությունից չոզացին նրա աչքերը:

— Տեսնենք՝ Վասյան այս նազանով քանի ապիտակ կոշտարկի են մյուս աշխարքը, սատանաների պլերկը,— ասում էր վաշտապետը ժպտալով:

— Նազանն ինչ և վոր, յես արդեն հրացան կրակել գիտեմ, չուտով ուժերս կփորձեմ հրեաների վրա, կզտնամ թշնամանթաձիլ,— հայտարարում էր Վասյան համարձակ կերպով:

— Խե՛, խե՛,—ծիծաղեց պինկոմը, վոր լսում էր այդ խոսակցությունը, և զանազով Վասյայի հորը՝ բացականչեց.—Իմանավ, բա չես ասի, վոր քո տղեն քեզանից առաջ անցավ, քեղ թողեց կես ճամբին...

Այդ ժամանակ թնդանոթների վորոտը դրավեց նրանց ուշադրությունը և նրանք չարժվեցին դեպի առաջավոր դիրքերը: Վասյան էլ հոր հետ գնաց, մտավ խրամատների չարքը, յերբեմն վորտող տալով, յերբեմն կռացած ու տափեսափ առաջ անցավ մինչև դիրքապահ ջոկատը: Այնտեղ նա պատկեց հոր կողքին և մի քանի անգամ կրակեց նազանից: Այդ կրակոցները նրան ուժ և արիություն տվին, թեև նա չմտացավ, թե ուր սլացան իր գնդակները:

Դիրքերի վրա կրակի հեղեղ էր թափվում: Գնդակները մրդրդում էին մեղուների պես, այրում ողը և ծառում հողի մեջ, ծակոտում, ճանկռում նրա կուրծքը:

3.

Կուբան գետը բաժանում էր հակառակորդների դիրքերը: Փոքրիկ քաղաքի չուրջն ապիտակները էին ամրացել և թնդանոթներով չարունակ ամրակծում էին գետի մյուս յեզերքին հողաբլուրների վրա ամրացած կարմիրների դիրքերը:

Գետի յեզերքին մի փոքրիկ անտառ կար, ծառերը և թփերի մի կանաչ պուրակ: Անտառի միջով լայն ծառուղին ուղիղ ձգվում էր գետի ջուրը, վորի վրա ձգվում էր յերկար, ճաճվոզ կամուրջը:

Գիշերը այդ կամուրջը գրավելու և անցնելու համար վճռական հարձակում էր սպասվում ապիտակների կողմից: Այդ հարձակումը կանխելու համար կարմիրները նախազգուշական միջոցներ ձեռք առան: Նրան կարևոր նշանակություն ուներ ռազմավիտական այդ կետի պաշտպանությունը: Յերեք թշնամին գրավեր կամուրջը, կարմիրների և քաղաքի միջև հաղորդակցական միակ ճանապարհը կկտրվեր բոլորովին: Ահա թե ինչու մի ուժեղ ջոկատի հանձնարարվեց այդ կետի պահպանությունը:

Իվանովն էր այդ ջոկատի պետը: Նա իր մարտիկներին դասավորեց կամրջի չուրջը՝ համապատասխան դիրքերում, գնդացիրներ տեղավորեց գետեղրին և ինքն էլ վոտքից-գլուխ սպառազինված, արթուն չրջում էր իրեն հանձնարարված այդ տեղամասում:

Գիշերն իջավ և իր սև վերմակով ծածկեց չրջակայքը: Մոտակա անտառը դարձավ մի մութ զանգված: Արագընթաց գետի ջրերը հոսում էին վերվրալով ու պղտոր: Այրքները զարկվում էին միմյանց և միորինակ խշշոցով տառջ ընթանում: Ալավարի մեջ ժպտում էին աստղերը՝ արծաթացրլ ու պայծառ:

Թեև ողի մեջ կոտրվել էր ամառային որվա տոթը, բայց մարդկանց վոռների տակ դեռևս զգացվում էր հողի ջերմությունը: Իսկ թփուտների և խոտերի միջից անդադար լսվում էին ծղրիդների սուլյուն ու բղեղների սլավոցը:

Անտառի մոտյալ սավերից գենը մառախլապատ քաղաքում հազիվ մեկ-յերկու նվազ լույսեր էին պլպլում: Քաղաքի կողմից յերբեմն-յերբեմն կրակոցներ էին լսվում, վորոնք մեծ մասով մնում էին անպատասխան:

Իվանովը պատկեց փոքրիկ հողաթմբի հետև, հրացանի կոթը դրեց թևի տակ և աչքերը գետի կողմը հառած՝ սպասում էր: Հողաթմբի տակից ջրերը գլորվում էին խռովահույզ և աղմկում, վազում առաջ: Դեպի վերև, հողաբլուրն իվեր բարձրացող ճանապարհի յեղերքին լսվեց պայմանական սուլոցը: Իվանովը վեր յելավ, մի քանի քայլ առաջ գնաց և հրացանին կոթնած սպասեց: Զառիվայրով իջան յերկու սովեր: Գետի յեղերքին պատկերվեց վաշտապետի աժդահա հասակը, իր սև փափախով, նրա կողքին կանգնած էր Վասյան:

— Իլանով,— ասաց վաշտապետը վորչափ կարելի չե ցածր ձայնով, թեև նրա բամբ ձայնը յերբեք չեր կարող դառնալ չըշշուկ կամ մնալ անլսելի,—մեր հետախույզները հայտնեցին, վոր Թշնամու մի զորասյուն կամաց-կամաց չարժվում և գնալի այս կողմը: Շուտով յերևի գնդապետիվ պիտի ունենանք նրանց հետ: Պետք և խիստ աչալուրջ լինել, վորպեսզի ձեղ իրենց ճանկի մեջ չդցեն:

— Թող դան ու փորձեն իրենց ատամները: Իմ բաղեներն արդեն կշտմ ու պատրաստ սպասում են: Թող դան հրամայով դառնան ու յետ վախչեն,—պատասխանեց Իլանովը առանց փոխելու իր դիրքը:

— Յես վստահ եմ, վոր դու նրանց ատամները կջարդես և չես Թողնի, վոր այս կամուրջը գրավեն:

— Այդ մենք կտեսնենք,— վճռապես հայտարարեց Իլանովը և թեթևակի խլելով Վասյայի ուսին ասաց.

— Այ տղա, դու ինչո՞ւ ես նապես դիշերով յեկել այստեղ: Անլիճած լինես, հա՛:

— Վասյան ուզում և այս դիշեր քեղ հետ անցկացնել. միթք ունի փորձել կողակնների Թրև ծայրը,— ասաց վաշտապետը ծիծաղելով:

Հողաթմբից իջավ և յերկու քայլ հեռու հայտնվեց մի կսրմիր բանակային: Նա ինչ-վոր կարևոր գործով վաշտապետին կանչեց վերև: Իսկ Վասյան մնաց կամրջի մոտ: Հայրը պատվիրեց նրան չքնել կամ հեռու տեղեր չդնալ: Պատա ին այդպես ել արեց: Նատեց հողաթմբի հետև՝ գնդացրորդ Լիսովսկու կողքին և սպասեց: Լիսովսկին յերիտասարդ կայտառ տղա յեր: Արթուն պահակի պես նստած եր գնդացրի կողքին, յերբեմ -յերբեմն չոշափում եր նրա պլանակը՝ կրկին համոզվելու համար, թե գնդակներով լցվա՞ծ և նա: Հետո հանդստակաց յեղերքի սավերախիտ տարածությունն եր չափում: Մեկ-մեկ ել սիրտը, բայց չատ կամաց ձայնով խոսում եր Վասյայի հետ և բացատրում գնդացրի կառուցվածքը, նրա առանձնահատկությունները: Յեվ այդպես գանդաղորեն սահում եր դիշերը:

Կես դիշերից վորքան եր անց, հայտնի չեր: Վասյայի աչքերը ծանրացել եյին, հորանջում եր, իսկ ականջին մեծ աղմուկով խշխշում եյին ջրերը...

Գետի մյուս ափին, անտառի խորքում, Թույլ մի սուլոց լսվեց: Պատանին աչքերը բաց արեց և ուշադրությամբ նայեց չուրջը: Կողքին գլուխը գնդացրի հետևակին գրած ննջում եր գնդացրորդ Լիսովսկին: Վասյան չկարթեցրեց նրան, վոր կացավ և կամացուկ չարժվեց դեպի կամուրջը: Համատարած խավարի մեջ վոչինչ չեր նկատվում: Մի ինչ-վոր հանդուգն միտք դրդեց նրան փորող տալով առաջ չարժվել կամրջի վրա:

Փամփուշտներով լցված նապանը բռնեց ձեռքին և անշշուկ սողաց կամրջի տախտակների վրայով: Ներքևից ընթացող և մեյանց բաղխվող ջրերի աղմուկը չեր Թողնում լսել փոքրիկ շշուկները: Տեսողությունը լարած՝ Վասյան նայում եր իր դեմաց և չարունակ առաջ սողում: Ալ ձեռքով պինդ բռնել եր նապանը, իսկ ձախով հենվում եր կամրջի վայտե Թևերին և ներքանց ոդնությամբ առաջ չարժվում: Նրա մարմինը լարի պես ձղվել եր և պարձել ինչպես միաձույլ մեքենա: Յերբ հասավ կամրջի մյուս ծայրը, նա մի վայրկյան անշարժ պառկած մնաց և ականջ դրեց: Գետից այն կողմը մի փոքրիկ հարթ տարածությունից հետո սկսվում եր անտառի ծառուղին: Վասյան լքավ կամրջից, պառկեց գետնին և ականջը հողին կպցրած՝ սպասեց: Անտառի խորքում մի ինչ վոր խուլ չարժում կար, խոտերի և տերևների Թեթև խշրտոց: Վոտնաձայներ եյին լսվում... Պատանու սիրտը բարախեց ուժգին, բայց նա ինքնիրեն չկորցրեց: Ջրերի աղմուկն այլևս չեր խանգարում նրան: Պարզ լսվում եր ամենափոքրիկ չշուկն անգամ: Վոտնաձայները և խոտերի խշրտոցը սաստկացան և ծառուղու մութ չրջափակում նշմարվեցին առաջ չարժվող մարդկանց բազմաթիվ սվիններ...

Պատանին խիստ ըմբռնեց վերահաս վտանգը և հետ դառնալով՝ կամրջի վրայից արագորեն սողաց դեպի հակառակ կողմը: Նա չսպասում եր զարթեցնել իրենց ընկերներին և ահազանգ տալ: Հաղիվ եր հասել մյուս ծայրը, յերբ անտառից դուրս գալով դեպի կամուրջը վազեցին բազմաթիվ մարդիկ: Նրանք ուզում եյին խմբով անցնել կամուրջը և հանկարծակիի բերելով՝ վոչնչացնել կամ փախուստի մատնել կարմիրներին: Պատանին պառկեց կամրջի մուտքի առաջ, ձայն տվեց և նռաքանից կրակեց կամուրջը հասած զարհուրելի Թշնամու վրա: Այդ ձայնից ու կրակոցից կարմիր մարտիկները խիստ դուչակեցին վտանգը և սկսեցին յետանդով կռվել: Թշնամին տեսնելով, վոր կարմիր

ներն արթուն են և կազմ ու պատրաստ, չհամարձակվեց անցնել կամրջից, հետ քաշվեց և դիրքեր գրավեց անտառի փեշին:

Կարմիրների զնդացիրները կրակի հեղեղ անդադար թշնամու դիրքերին: Իվանովը դեռևս մյուս կողմից տեղացող գնդակների տակ չորեքթաթ անցնում էր հողաթմբի և խրամատների միջով և խրախուսում մարտիկներին: Նա մոտեցավ Վասյային և մեծ գթությամբ դրվեց նրա գլուխը: Իսկ Վասյան չարունակ կրակում էր, աչքերը չհեռացնելով թշնամու դիրքերից:

Գիշերվա սև քողը պատվեց և յերկնքի յերեսին լույսի շերտեր ընկան: Կամաց-կամաց թացվեց և պայծառացավ յերկնքի գեմքը: Աստղերի լույսը նվազեց և հետզհետե նրանք մարեցին: Բլուրներից իջավ վաղ առավոտի զովաշունչ հովը: Անտառի ծառերը դարձան մուգ կանաչ, իսկ քաղաքի վրա իջավ կապույտ մշուշ: Այդ մշուշի միջից պարզորոշ պատկերվում էին յեկեղեցիների զմբեթները և բարձր տների կտուրները:

Գիշերային խավարի մեջ սկսած կատաղի համազարկը կամաց-կամաց հանդարտվեց լուսարացի հետ: Կարմիրների կրակոցին թշնամին թույլ էր պատասխանում: Հետզհետե հակառակորդի վերջին կրակոցներն էլ լռեցին: Արշալույսի վառ շողերից պայծառացավ չրջակայքը: Նորածագ արևի ճառագայթներից վոսկեվորվեցին ծառերի գլուխները:

Վասյան նաղանը պատչանում գրած համարձակ չրջում էր դիրքերում: Նա յերևան գնդակ էր վառնել և գեռ գդում էր վառոդի կծու հոտը: Կռվի դաշտում հաղթանակ տարած ռազմիկի հպարտությամբ նա վողջունում էր պայծառացող որը: Սակայն նա չափազանց ցավ զգաց, յերբ գնդացրի մոտ անշարժ պառկած գտավ Լիսովսկուն: Նրա յերիտասարդ գեմքին խաղաղ մարել էր կյանքի վերջին ժպիտը: Թշնամու գնդակը ծակել էր նրա գլուխը և ցրիվ տվել ուղեղը...

Լիսովսկու գնդացիրը կրակե կարկուտ էր թափել հակառակորդի վրա: Ինչպես յերևում է, Լիսովսկին կռվի վերջումն էր զոհվել:

Յերկու կարմիր բանակային էլ վիրավորվել-ծանր տնքում էին: Նրանց փոխադրեցին բժշկական կայան: Իսկ Լիսովսկու գիակը տարան և թաղեցին մոտակա գյուղի գերեզմանոցում:

Յերբ վաշտապետը յեկավ և իմացավ գիշերային հարձակման և կռվի մանրամասնությունները, իր կոշտացած խոշոր ձեռքով թեթև հարված տվեց Վասյայի թշին և ասաց.

— Հը՛մ, յես վաղուց զգում եյի, վոր ես տղից լավ մարտիկ դուրս կգա, կարմիր մարտիկ, վոր իր կյանքը չի խնայի հեղափոխության համար...

Իվանովը չատ ուրախացավ այդ խոսքերից, ինքն էլ զվանքով նայեց վոդդուն և իր ջոկատով տեղափոխվեց Թիկունք՝ հանգըստանալու: Կամրջի պաշտպանությունն անցավ ուրիշ ջոկատի:

Յերբ նախաճաշից հետո Վասյան գնաց քնելու, նաղանը պատչանով դրեց կողքին և թևը հենեց նրա վրա, կարծես թևի չատ թանդագին, նվիրական բան եր սղմված իր թևի տակ, վոր պետք է մեծ խնամքով պահպանել...

4.

Իրիկնադեմին Կավկազկայա կայարանից ոգնության յեկող կարմիր զորասյունները կատաղի կռվից հետո գրավեցին քաղաքի կայարանը:

Թիկունքից հարվածող №... վաշտն անցավ գետը և մտավ քաղաքը: Սպիտակներն չտապով նահանջեցին դեպի Հանքային Ջրերը:

Վաղ առավոտից քաղաքում մեծ իրարանցում եր ընկել: Գետեղերյա փոքրիկ անտառի և քաղաքի միջև ըկած ընդարձակ հարթավայրն եր չարժվում քաղաքացիների հոծ բազմություն: Աչխատավոր մասսան հավաքվում եր այնտեղ՝ մասնակցելու մեծ միտինգին և վողջունելու կարմիր բանակի հաղթանակը:

Հրապարակում քաղաքի հաղարավոր աչխատավորությունը հավաքված տոնում եր իր հաղթանակը, Վասյան և իր հայրը միտինգից հետո քայլերն ուղղեցին դեպ իրենց տունը:

Քանդել-ավերել եյին իրենց բնակարանը: Կիսաջարդ և կախ ընկած դուռը հրելով նրանք ներս մտան կիսամութ սենյակը: Ամեն տեղ ամեն ինչ տակն ու վրա յեր արված: Ջարդել եյին ճաչասեղանը, աթոռները և տարել վսյտե մահճակալները:

Այդ ավերված և թալանված բունը չափազանց ճնշող տպավորություն գործեց իր հին բնակիչների վրա:

— Մի փոքրիկ սենյակ ունեյինք, գլուխ դնելու տեղ, են էլ քանդեցին ու թալանեցին եդ անիծածները: Ուզում են, վոր ամեն ինչից զուրկ մնանք, դառնանք անբուն ու անկայան թըռ-

չուն: Հը՛մ, իժի ծնունդնե՛ր,—դառնորեն դանդատվում եր Իվանովը ատամները կրճատնելով:

Ալեքսեյ Իվանովը և իր վորդին յերկար ժամանակ կանդնած՝ տխրությամբ դիտում եյին իրենց ավերված բունը: Ել քան չկար անելու այնտեղ: Այդ անհյուրընկալ աշխարհը բոլորովին անպետք եր բնակության համար:

Այնտեղից նրանք դուրս յեկան խիստ ճնշված տրամադրությամբ: Փողոցում Իվանովը կանգ առավ և մի պահ նայեց վերևի հարևի լուսամուտներին: Նրանք փակ եյին և մի քանի վարագույրները՝ ծածկած:

«Արդյոք այժմ ո՞վ և ապրում այնտեղ: Արդյոք են վրված տանտերն էլի նույն տե՞ղն և բնակվում, թե՞ վաճառել և քաղաքից...»

Իվանովը նայեց վորդուն: Նրա դեմքը մռայլ եր և սպառնալի:

— Հապա մենք վո՞րտեղ պետք և ապրենք, հայրիկ ջան,— հարցրեց Վասյան կարճ լռությունից հետո:

— Մենք այսուհետև կապրենք նրանց բնակարանում, որքեր ավերեցին և քանդեցին մեր փոքրիկ բունը,— պատասխանեց հայրը վճռական:

Վասյան տարակուսանքով նայեց հորը և չհասկացավ նրա խոսքերի իմաստը:

Իվանովը հաստատ քայլերով առաջ ընկավ: Վորդին հետևեց նրան: Նրանք դուրս յեկան կենտրոնական փողոց և կանգ առան մի դեղեցիկ չինության առաջ: Մուտքի յերկաթե դուռը փակ եր և անկարելի յեր բանալ: Իվանովը հրացանի կոթով մի քանի ուժգին հարված հասցրեց դռան, բայց վերջինս չբացվեց: Տան լուսամուտները փակ եյին և կարծես թե վոչվոք չեր ապրում այնտեղ:

— Ես ո՞ւմ տունն է, հայրիկ ջան,— հարցրեց Վասյան հետաքրքրությամբ լցված:

— Սա, սիրելիս, Ռոտիչևի տունն է: Հիշո՞ւմ ես մեր դռծարանատերը: Մեզ անխնա չարչարող և մեր արյունը խմող էն անատամ ծերուկը:

Վասյան մի անգամ եր տեսել դործարանատեր Ռոտիչևին, բայց ավելի լավ հիշում եր սպասկան չորեր հագած նրա վորդուն, վոր միշտ կաք կամ ճի նստած դոռոզաբար ու հպարտ անցնում եր փողոցով: Կարծես թե ամբողջ աշխարհը գավթել եր, այնպես համարձակ և մեծամիտ տեսք ուներ...

— Սրի գնանք պարտեզի կողմից ներս մտնենք,—առաջարկեց Իվանովը և վորդու հետ մտան հարևան տան բակը:

Հարևանի բակը գնում-միանում եր Ռոտիչևի տան հետևն ընկած պարտեզին: Յերկաթյա ցանկապատը բաժանում եր պարտեզը բակից:

Իվանովն ու Վասյան բարձրացան ցանկապատի վրա և իջան պարտեզը: Յերիտասարդ և անուշահոտ ծաղիկներով զարդարված այդ պարտեզը սքանչելի տպավորություն եր թողնում: Նրա կենտրոնում ավազան կար, վորի մեջ կառուցված չարխափից ջրերը պղպջում եյին չարունակ: Ջրի վրա ոյորվում եր կատաղը, միշտ բարձր պահելով իր հոյակապ վիզը: Շրջակայքի այդ չքնաղ տեսարանը հիացրեց Վասյային: Զարմացած աչքերով ուշադրությամբ չուրջն եր նայում:

— Տեսնո՞ւմ ես, ինչ հիանալի տեղ և ապրում մեր կալին քերթող էն անատամ ծերուկը,— ասում եր Իվանովը՝ քայլելով ծաղիկների և մարդերի միջով:

— Տեսնում եմ,—պատասխանեց վորդին ճնշված ձայնով,— սա իսկի նման չէ այն կիսամութ նկուղին, վորտեղ մենք ապրում եյինք:

Նրանք հասան հանդիսակաց տան պատշգամբը, վորի ճաղերն ու սյուները ծածկված եյին խաղողի վորթատունկերով և զանազան բույսերով ու ծաղիկներով:

Պատշգամբի վրա բացվող դուռը պինդ փակված եր: Իվանովը հրացանի կոթի մի քանի հարվածով իբրև կահավան արեց դուռը, և նրանք միմյանց հետևից ներս մտան: Մի խավար միջանցք, վորի խորքում բացվեց դուռը և մնաց կիսաբաց: Մարդկային վոչ մի ստվեր չեր յերևում այնտեղ:

Յերբ Իվանովը մի քայլ առաջ գրեց և ուզում եր ներս մտնել այդ դռնից, ոդի մեջ, նրա դլխավերև բարձրացավ և չորաց մի վայրկյան իր... Դա այնքան արագ կատարվեց, վոր Իվանովը քարացած մնաց տեղն ու տեղը: Բայց հետևից յեկող Վասյան չկորցրեց իրեն: Նրա նպատակը պայթեց և ոդի մեջ չորացող վայրկյան իրեն ընկավ նրանց վոտների առաջ: Վասյան կռացավ և վերցրեց դետին ընկած թուրը: Դռան հետև կանգնած

եր սև վախախով մի ահագին կողակ: Դա Ռոտիչևի տան պահակն եր:

Վորդու արձակած զնտակը ազատեց Իվանովին փորձանքից: Վասյան նաղանն ուղղեց կողակի ճակատին և ուզում եր ցրիվ տալ նրա ուղեղը, բայց հայրը չթողնց:

— Զեռդ մի թաթախիր դրա արյան մեջ: Արդեն զինախախ և յեղել, ել նրանից վտանգ չկա: Մենք նրան խելքի կբերենք, ուղիղ ճանապարհ ցույց կտանք և կդարձնենք մեր մարդը,— առաջարկեց Իվանովը և դառնալով կողակին ասաց.

— Ա՛յ մարդ, ո՞ւմ համար ես կյանքդ վտանգում: Ինչո՞ւ ես հարուստին, կապիտալիստին ղերի դարձել: Նա հարստացել, վայելում է կյանքը, իսկ դու աղքատ, խեղճ ու կրակ մարդ ուզում ես նրա համար կյանքդ զոհել: Ինչո՞ւ չես պիտակցում քո դասակարգային չահը...

Պահակը լուռ մնաց և ամոթից գլուխը խոնարհեց: Նա չեր ազատում, վոր իրեն ձեռք չեն տա և այդպես քաղցը կվարվեն: Նա պատրաստ եր ամեն կերպ հաճոյանալ այդ մարդկանց:

— Ազան տա՞նն է, թե վախել է,— հարցրեց Իվանովը:

— Փախել է, վաղուց է վախել: Հայրն ու վորդին միասին վախան,—պատասխանեց պահակը:

— Իսկ ընտանի՞քը:

— Ընտանիքը հրեն տանն է...

Պահակի բերանից արագի հոտ եր գալիս: Նա խմած եր: Իվանովն ու Վասյան նրան հանդիստ թողին և մուտքի դռնից ներս մտան մի պայծառ ու լուսավոր միջանցք, վոր առաջնորդում եր աղայի բնակարանը. դա բաղկացած եր վեց սենյակից և տեղավորված եր առաջին հարկում: Մեկը մյուսից մեծ, լուսավոր և հիանալի կահավորված սենյակների լուսամուտների մի մասը փողոցի, մյուս մասը պարտեզի վրա յեր նայում:

Տանը մնացել եյին գործարանատիրոջ կինը իր տալոջ և աղջկա հետ: Նրանք չա՛տ վախեցան, տեսնելով ներս մտնող այդ պինված մարդկանց: Նրանք կարծում եյին, վոր գրանք յեկել են իրենց հարստությունը տանելու կամ մի վորևե վնաս հասցնելու: Բայց մեծ յեղավ նրանց զարմանքը, յերբ հանդիպեցին քաղաքավարի վերաբերմունքի: Նրանք կարմիրնևրին համարում եյին ավազակներ և մարդասպաններ:

Գործարանատիրոջ կինը՝ Նատալյա Պետրովնան, իր աղջկա հետ վակված մնաց առանճնասենյակում: Նրա փոխարեն գուրս յեկան տալը և աղախինը:

— Մենք մտադիր չենք վորևե վնաս տալ ձեզ, բայց ձեր քնակարանի մի մասը պետք է վերցնենք: Ցերեք սենյակը ձեզ լիովին բավական է, իսկ մնացածը կդնենք մեր տրամադրության տակ,—առաջարկեց Իվանովը:

Տանտիրուհու տալը թեև զժկամակության նշաններ ցույց տվեց, բայց Իվանովն ու Վասյան ուշադրություն չդարձրին պառավի վնթվնթոցներին ու մտան հիանալի կահավորված դահլիճը, այնտեղից անցան ընդունարանն ու գործարանատիրոջ առանձնասենյակը:

— Այս յերկու սենյակը կվերցնենք մեզ, իսկ դահլիճը կհատկացնենք վաչտապետին,—ասաց Իվանովը վորդուն:

Նրանք իրենց վերարկուները կախեցին կախարանից և սենյակների դռները վակելով յելան փողոց:

— Ահա թե ինչպիսի հարմարություններ մեջ են ապրում գործարանատերն ու հարուստները: Տեսնո՞ւմ ես ինչքան տարբերություն կա մեր կյանքի ու նրանցի միջև: Մեզ որնիբուն աշխատեցնում եյին, մեր քրտինքն ու արյունը ծծում, վորպեսզի իրենք հարստանան և այսպիսի յերջանիկ կյանք վայելեն,— ճանապարհին դառնորեն դանդատվում եր Իվանովը:

— Իսկ մենք մաչվում ու փտում եյինք մեր փոքրիկ ու խոնավ նկուղում,— պատասխանեց Վասյան ընկճված ձայնով:

Ճանապարհին պատանին ընկել եր խորը մտքերի գիրկը: Նա ապշել, զարմացել եր այն հարստությամբ ու չքեղությամբ, վոր գիշ առաջ տեսավ: Մտաբերեց իր մանկությունը, վոր անց եր կացրել զրկանքների մեջ: Ինչո՞ւ, ի՞նչ մեղքի համար իրենք պետք է ապրեյին այնպես զրկված ու կարոտ, իսկ սրանք այսպես յերջանիկ ու չքեղ... Այժմ նա ավելի լավ եր հասկանում ու գիտակցում կյանքի հակասությունները, մեկի յերջանկությունը, մյուսի՝ զառնությունը: Հասկանում եր, թե ինչու մարդկանց մեծագույն մասը իրենց նման աղքատ ու թշվառ է յեղել, իսկ փոքրագույն մասը այսպես բախտավոր կյանք է վարում:

Նրանք հասան այն հրապարակը, ուր գարձյալ հավաքվել եր աշխատավորների մեծ բազմություն և ամբոխի վրա կանգնած մարդիկ կրակոտ ճառեր եյին արտասանում աղատության

և բանվոր դասակարգի հաղթանակի մասին: Ամբողջ երջանկությունը թվում էր ուրախ բացականչություններից և ծափերից: Հընչում էր ներաժշտությունը և թվում էին մարգկանց սրտերը:

Հոլածանքվող ծովի պես ալեկոծվեց մարդկային բազմությունը: Միտինգը վերջացավ և մարդիկ ցրվեցին այս ու այն կողմը:

№... վաչյոը հանդստանում էր քաղաքում: Իվանովն ու Վասյան վաչատպեսի հետ ապրում էին դործարանատիրոջ բնակարանում:

— Ձես չատ եմ վախենում, որ ապրելով այսպիսի սենյակներում ու պայմաններում, կենթարկվենք մեղկության ու թուլամորթության: Ասիստս չեյի՞ն մեր վրաններն ու բարակները,— պանդատվում էր վաչատպեսը:

— Ձես ուղում եյի մի քանի որ փորձել հարուստների կյանքը, բայց տեսնում եմ, որ դա մեզ սաղ չի գալիս: Մենք ուրիշ ռանգի մարդիկ ենք,—ասում էր Իվանովը ժպտալով:

Գիշերը կիսաբաց եյին թողնում սենյակի լուսամուտը և պարտեզից ներս էր թափվում ծաղկաբույր զով օդը: Պարտեզում խաղաղ էր ամեն ինչ, միայն ծղրիդները եյին խանդարում գիշերային լռությունը, իսկ յերկնքում փայլում եյին վառ աստղերը:

Վասյան պառկում էր վախուկ անկողնում՝ յերկաթյա մահճակալի վրա: Այնպես հանդիստ էր այնտեղ, այնպես խաղաղ...

Ամբողջ որը վաչատպեսն ու Իվանովը զնում եյին վաչատ և զբաղվում զինվորական դործերով: Իսկ Վասյան դուրս էր գալիս զբոսնելու կամ մեծ մասամբ անցկացնում տանը: Նա չատ էր սիրում ժամերով նստել ծաղկափիթիթ պարտեզում և ականջ դնել չաուրվանի ջրի դղդղոցին:

Պատանին լսում էր ջրերի այդ յերաժշտությունը, նայում էր ծաղիկներին և լցվում էր քնքուշ զգացմունքով: Յերբեմն նա զբույցի յեր բռնվում պահակի հետ, որ կարծես թե ավելի ֆռևրմացել էր նրան: Իսկ հաճախ զբաղվում էր գործարանատիրոջ աղջկա հետ: Դա իրեն հասակակից՝ նուրբ, դուրեկան չեմքով մի աղջիկ էր: Նա սիրում էր հաճախ յեկնել պարտեզ, զբոսնել նրա ծառուղիներում կամ նստել ավազանի մոտ զրված նստարանին և տարվել չաուրվանից թափվող ջրերի յերաժշտությամբ: Այդպիսի պահերին մոտենում էր Վասյան և փորձում զրուցել նրա հետ: Նրա անունը Կատյուշա յեր: Սկզբում աղջիկը չատ սառն և անտարբեր ընդունեց Վասյային: Նրան դուր չեյին գալիս այդ աղայի կիսամաչ չորերը, թափթփված տեսքը, և նա չափազանց ջղայնանում էր, յերբ տեսնում էր իրենց սենյակներում ոտար մարդկանց...Նրան զրպռում և տանջում էր մանավանդ այն դիտակցությունը, որ իր հայրն ու յեղ այրը փախել եյին սպիտակների հետ և ով դիտե վորտեղ և ինչ պայմաններում են ապրում նրանք:

Այդ պատճառով էլ Կատյուշան սկզբում սառն և թշնամաբար վերաբերվեց Վասյային: Սակայն ժամանակի հետ փոխվեց նաև նրա տրամադրությունը: Նա կամաց-կամաց մեղմացավ և փափկեց: Դրան նպաստեցին նաև Վասյայի ժիր չարժումները և այն հուրհրան կրակը, որ վառվում էր պատանու աչքերի մեջ...

— Վո՞րտեղ է աչխատում և ինչ դործով է զբաղվում քո հայրը,—հարցրեց մի անդամ Կատյուշան պատանուն, յերբ վերջինս ավազանի փոքրիկ քարափին նստած՝ նայում էր նրա զուլալ ջրերին:

— Իմ հայրը բանվոր է: Նա աչխատում էր ձեր հոր դործարանում...

Աղջիկը մի ջղային չարժում դործեց: Նրան դուր չեկան պատանու խոսքերը: Նա մտաբերեց փախած հորն ու յեղբորը և սաստիկ տխրեց: Վեր յելավ լուռ և աչքերը խոնարհած չարժվեց դեպի տուն: Այդ որը նա այլևս չերևաց, փակվեց սենյակում: Իսկ մայրը բոլորովին դուրս չեր գալիս տնից: Վասյան զդաց իր խոսքերի դործած անախորժ տպավորությունը: Բայց ինչ արած, մարդը պետք է անկնճռ լինի: Պարզություն և անկեղծություն ամեն դործում և քայլափոխում: «Որիորդ»-ին դուր չեկան իմ խոսքերը: Իհարկե, նա չեր ուզենա, որ իր հոր դործարանում աչխատող և նրան յենթակա, նրանից չահադործվող բանվորը հանկարծ ինչ-որ հրաչքով պա և զավթի իր բնակարանը և բնակություն հաստատի այնտեղ... Սրանից ավելի անախորժ բա՞ն: Մի՞թե կարելի յե տանել նման յերևույթ... Իրերի նման դրություն: Այսպիսի բան իսկի յեղե՞լ եր, կամ կարո՞ղ եր տպատվել յերբևիցե: Ինչ սարսափելի և անսպասելի փոփոխություն և յեղել կյանքում:

Այսպես եր մտածում Վասյան ավազանի քարափին նստած:

Վորքան սքանչելի յե բացվում արշալույսն այդ նոր տանը:

Դեռ մութն եր, յերբ աչքերը բացեց Վասյան և բաց լուսամուտից նայեց պարտեզը: Տերևների արանքից պատկերվող կապուտակ յերկնքի վրա լույսի չերտեր ընկան և լուսեղեն կամարներ կազմեցին: Ողը զովանում եր և քամին մեղմօրեն չարժում տերևներն ու ծաղիկները: Կարծես թե կամացուկ չչընջում ու յեղուկում եյին տերևները: Պարտեզից չարունակ լսվում եր չառվանի ջրի ախորժալուր նվագը: Բարդու բարձր կատարին նստած սարյակը հանկարծ սկսեց յերգել: Ինչ քաղցր եր այդ ղեղղեղանքն առավոտյան թարմ ողում:

Յերկնքի դեմքը պայծառացավ: Աստղերը փակեցին իրենց աչքերը: Այս ոչ այն կողմից ուրիշ թռչուններ էլ ճռվողեցին և անուշ յերգերով ձայնակցեցին մեմյանց: Պատուհը զարձավ լույսերի, գույների և ձևերի մի սքանչելի պահակեր:

Վասյան զմայլած դուրսն եր նայում և հիանում եր այդ տեսարանով:

Մյուս սենյակում հանդիստ քնել եր հայրը, իսկ դահլիճում՝ վաշտապետը: Պատանին իզուր անկողնից, արագորեն հագնվեց և դնաց պարտեզ: Դուռն մոտ իր հագի հատակով կանդնել եր պահակը, վոր խռպոտ ձայնով պատասխանեց վայրի բարևին:

— Հը՛մ, ո՞ւր և հապա քո թուրը, էլ ինչո՞ւ չի զարձրատնում ողի մեջ,— հեղնեց պատանին:

Պահակը ժպտաց, քորեց արդեն ալիտակող ղլուխը և աչքերը փայլեցնելով պատասխանեց.

— Են վախտն ուրիշ եր: Յես կարծում եյի, վոր դուք յեկել եք թալանելու և կոտորելու: Հիմի պարզվեց, վոր եղ տեսակ բան չկա...

— Բա վոր ազգիդ սենյակները զավթե՛լ ենք...

— Եղ մասին թող ազան զարդ անի: Նա յեր ենտեղ քնում: Յես ի՞նչ եմ կորցնում վոր...

— Ելի առաջվա պես հավատարի՞մ ես ազգիդ, ելի սիրո՞մ ես նրան,— համառորեն հարցրեց Վասյան:

Պահակի աչքերը զարձան կիսախուփ, դեմքի բաղմաթիվ կնճիռներն ամփոփվեցին: Նա լուռ մնաց, մոայլվեց...

Վասյան թողեց նրան և մի քանի անգամ չրջեց պարտեզում: Շատրվանից թափվող ջուրն արծաթի պես պսպղում եր արևի հառագայթների տակ:

Վասյային հետո, չատ հետո մխայն հայտնի զարձավ, վոր Կատյուշան Ռոտիչևի հարազատ աղջիկը չե, այլ նրա հեռավոր ազգականներից մեկի աղջիկը, վոր մանկությունից կորցնելով ծնողներին, վորդեգրվել և Ռոտիչևի ընտանիքում և ապրում ու մեծանում և այնտեղ վորպես նրանց հարազատ աղջիկը:

Յեկավ նաև Կատյուշան դիրքը ճաշելու և նստելով չատրվանի կողքի նստարանին, սկսեց կարդալ:

Պատանին թարմ ծաղիկներից մի փոքրիկ փունջ նվիրեց աղջկան և նստեց ավազանի քարե թմբին:

— Առավոտը յես չատ վաղ վեր յեմ և զբոսնելի պարտեզում: Սքանչելի յեր: Ուրեմն դուք այսպես միշտ հիանալի՞ յեք սպրել և առատության ու հարստության մեջ վայելել կյանքը,— ասաց Վասյան խոսքն ուղղելով աղջկան:

— Իսկ դուք վատ եյիք ապրո՞ւմ,— հարցրեց Կատյուշան աչքերը բարձրացնելով գրքից:

— Յես կուզենայի քեզ տանել մեր նկուղը և ցույց տալ, թե ինչպիսի բնակարաններում ենք ապրել:

— Կարիք չկա ցույց տալ, պատմիր մանրամասն, յես կը-պատկերացնեմ:

— Սեվական տան, հրաչալի կահավորված սենյակների, սպասավորների, ամեն տեսակ հարմարությունների, այս դեղեցիկ պարտեզի փոխարեն յերեւակայիր մի կիսամութ նկուղ, առանց հարմարությունների, առանց արևի և չատ հառաջակ կահավորված: Դեռ մի կողմն եմ թողնում աստո փող, հանդիստ կյանք, չքեղ հագուստներ և ուրախություն, վայելչություն...

Աղջիկը լուռ մնաց: Նա չգիտեր՝ ինչ պատասխան տար: Մի քանի րոպե լռությունից հետո ուշադիր դեմքով նայեց Վասյային և հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ դուք էլ հարմարություններ չեք ստեղծում ուրիշների նման: Մի՞թե չեք կարող դուք էլ լավ բնակարան ունենալ և լավ ապրել:

— Իմ հայրը դործարան չուներ, ուրիշներին չէր բանեցնում և չահագործում: Դրա համար էլ մնացել եր աղքատ,— պատասխանեց Վասյան:

Կատյուշայի աչքերը խոնարհվեցին և նրա մատներն արագորեն թելերում էլին դրքի եզերը:

— Այժմ մենք էլ ենք ուզում լավ կյանք ստեղծել և յերջանիկ ապրել,— շարունակեց իր խոսքը Վասյան,— դրա համար էլ կռվում ենք հարուստների և կալվածատերերի դեմ:

Կատյուշան վշինչ չասաց: Նրան անախորժ եր շարունակել այդ խոսակցությունը: Վեր յելավ և քայլերն ուղղեց դեպի տուն: Իսկ Վասյան քիչ տակ մնդմ չվշվացնելով շարունակեց գրոսնել պարտեզում:

Տուն գալով՝ Կատյուշան պատմեց մորը Վասյայի հետ ունեցած խոսակցությունը: Նատալյա Պետրովնան, վոր առանց այն էլ ջղայնացած եր, ավելի ևս ջղայնացավ:

— Ի՞նչ, ուրեմն այդ արիկանները, մարդատպանները մեր դործարանում բանվոր են յեղե՞լ, մեզ մոտ աշխատել, մեր հացը կերել և այժմ համարձակվել են մտնել մեր տունը, գրավել մեր սենյակները և տեր ու տիրական դառնալ: Բա սա լաված, լմացված բա՞ն է: Ցերբևիցե նման բան պատահե՞լ է: Յեթե նրանք հպարտն և իշխանության տեր դառնան, կարող են մեզ այստեղից բոլորովին քշել և դարձնել իրենց պես աղքատ ու թափառական:

Նատալյա Պետրովնան խիստ հուզված քայլում եր սենյակում և չդիտեր ինչպես արտահայտեր իր զայրույթը:

— Եվ եղ չան լակոտի, կարմիր ճուտի հետ չխոսես: Նա քեզ խելքահան կանի: Նրանից հեռու կաց,— պատվիրեց նա աղջկան:

Կատյուշան լուռ մնաց: Այնուհետև նա խուսափում եր պարտեզ դնալուց և Վասյային հանդիպելուց:

6.

Թնդանոթի ձայները հետզհետե ավելի պարզ էլին լսվում քաղաքում: Սպիտակները նոր ուժ ստանալով առաջ էլին չարժվում: Քաղաքում դարձյալ սիրեց ելեկտրականացած մթնոլորտ:

Վասյատպեան ու Իվանովը դիշերը տուն չեկան: Նրանք ռազմական պատրաստության մեջ դրին վաչոը և արագորեն դիրքեր էլին պատրաստում քաղաքը պաշտպանելու համար:

Թնդանոթի ձայները վոդեվորեցին Նատալյա Պետրովնային: Ուրախ-ուրախ քայլում եր սենյակում, ձեռքերը շփում և ասում:

— Շուտով մերոնք կգան: Կգան նաև Կատյուշայիս հայրն ու յեղբայրը: Շուտով ես սատանի ճաերն էլ այստեղ չեն լինի...

Վասյան ատրճանակն ու վամփուշտները վերցրեց ու դնաց վաչո իր հոր մոտ: Այնտեղ, վաչոում, մեծ աշխուժություն կար: Կարմիր մարտիկները ռազմական պատրաստություն էլին տեսնում: Այդ աշխուժությունն ու յեռուղեռը պարձյալ վոգևորեց պատանուն:

Գիշերը սպիտակները մոտեցան քաղաքին և սկսեցին յերանդով ռմբակոծել կայարանը:

Վասյան չվերադարձավ տուն. մնաց վաչոում, հոր մոտ:

Հետևյալ որը կատաղի կռիվներ տեղի ունեցան քաղաքի շրջակայքում: Սպիտակների ուժը գերազանց եր: Նրանք մեծ քանակությամբ ոժանդակ ղորք էլին ստացել: Կարմիրները թեև յերեք որ համառորեն պաշտպանեցին քաղաքը, բայց ստիպված յեղան նահանջել:

Նահանջելուց առաջ վևչոտպետը կարդադրեց, վոր Վասյան և մի ուրիշ կարմիր բանակային՝ Լյուբչենկոն ծպտված հագուստով մնան քաղաքում, ուսումնասիրեն սպիտակների ուժերն ու չարժումները, քաղաքի ներքին կյանքն ու անցու դարձը և ապա փախչելով տեղեկություն բերեն:

Յերբ սպիտակները մտան քաղաքը, Վասյան ու Լյուբչենկոն թաղնվել էլին վերջինիս ազգականներից մեկի տանը:

Լյուբչենկոն մոտ քսանհինդ տարեկան կարճլիկ, անմազ դեմքով, խարտյաշ մազերով ժիր ու ճարպիկ յերիտասարդ եր: Նրան քաջ հայտնի էլին քաղաքի բոլոր մասերը և շրջակայքի

հաղորդակցության ճանապարհները: Նա հասել էր ուսանողական համազգեստ, վորպեսզի աչքի չընկնի: Վասյան եւ ընկերները չորեր էր հասել և համարյա թե չէր ճանաչվում:

Ցերը քիչ թե շատ կարգ ու կանոն ընկավ քաղաքում և ժողովուրդը հնարավորություն ունեցավ տներից դուրս գալու, Վասյան ու Լյուբչենկոն վորոշեցին իրենց անելիքը և դուրս գնել հետախուզության: Վասյան պետք է ուսումնասիրեր կայարանի շրջանը, իսկ Լյուբչենկոն՝ քաղաքի ծայրամասերը:

Գաստոնին զրուցության համար գնաց կայարանի կողմը: Նրան այնպես թվաց, վոր քաղաքն ամայացել, դառնացվել է: Ջեյին երբեմն բանվորական չորեր հագած մարդիկ: Փողոցներում բարձրաձայն ծիծաղելով քայլում էին լավ հագնված մարդիկ, պայղուն ուսադիրներով սպաներ, չքեղ հագուստով կանայք: Միանգամայն հակառակ պատկերը նախորդ օրերի: Վասյան առելության էր նայում այդ չքեղ հասարակության:

«Ցերևի կատյուշայի հայրն ու եղբայրն էլ են գնկել: Հիմի նրանց տանը լինճույք է, ուրախանում են: Աղտավեցին մեզանից, «բոլշևիկներից», եւի կվայելեն կյանքը և կապրեն առատ ու չքեղ: Բայց արդյոք դա երկա՞ր կտևի...». մտմտում էր ինքնիրեն ճանապարհին:

Կայարան մտնելն արդելված էր: Սպիտակ պինվորների շղթան վանել էր նրա դլխավոր մուտքերը:

«Ցերևի զոբք կամ ռազմամթերք են տեղափոխում» մտածեց Վասյան ու վորոշեց ինչ դնով էլ լինի մտնել արդելված շրջանը և հետազոտել: Նա անցավ կայարանի հետևն ընկած ձերի զործարանի կողմը և զարտուղի ճանապարհով ընկավ կայարանի շրջանը: Կայարանի ծայրում կանդնած էր դրահադնացքը: Զինվորները հրացաններն իրար խաչաձևած ամբացրել էին դետնի վրա և իրենք նախաճաշում էին: Նրանց թիվը հազարից անցնում էր: Գաստոնին հեռվից մոտավորապես հաշվեց թնդանոթների և դնդացիրների քանակը: Հեվալով մոտենում էր դնացքը: Կայարանում յեռուզեռ ընկավ: Ցերը դնացքը հասավ կայարան և կանգնեց, պատանին վագոնների արանքից անցավ մյուս կողմը և մխիթարվեց ժողովրդին: Գնացքից իջնողները զլխավորապես զինվորականներ էին, մի քանիսն էլ զաղաքացիական հագուստներով: Կանայք ուրախության ճիչեր էին արձակում տեսնելով վախուստից վերադարձած իրենց պաշտպաններին:

Վասյան քայլում էր բազմության միջով: Նա չնկատեց իր վրա կենտրոնացած յերկու համառ աչքեր, վորոնք խիստ ուշադիր հետևում էին իրեն...

Ցերը Վասյան ուզում էր քարձրանալ դնացքը և վագոնների արանքից անցնել մյուս կողմը, կայարանից հեռանալու նպատակով, նրա առաջը կտրեց մի զինվորական և սպիտակ հետևել իրեն: Գաստոնին չհասկացավ բանի էությունը, բայց չկորցրեց իր սառնասրտությունը: Ցերը նրանք մի քանի քայլ առաջ անցան և մոտեցան սպասողների մի խմբի, կանանցից մեկն անջատվեց այդ խմբից, մոտ յեկավ և ճչալով բացականչեց.

— Այ, սա յեր մեր սենյակները զավթողը, ես կարմիր սատանի ճուտը, հենց սա յեր...

Վասյան ճանաչեց Նատալյա Պետրովնային, իսկ մի քանի քայլ հեռու՝ սևեռուն հայացքով իրեն նայող Կատյուշային...

Մի ուրիշ զինվորական էլ մոտեցավ և ծալա-ծուռ նայեց Վասյային: Նրանք վոտքից զլուխ չափում էին նրան:

— Մի տես ե՛, սատանի ճուտը վռնդ է հաղուստները փոխել, վորպեսզի չճանաչենք,— ասում էր Նատալյա Պետրովնան ճղճղան ձայնով:

— Սրա հետ ինչպե՞ս վարվել, ազա՞տ թողնեմ, թե՞ տանենք մեզ հետ,— հարցրեց Վասյային բերող զինվորականը:

— Տանենք մեզ հետ, տեսնենք, թե սրա մեջ ինչ է թաքնված: Տանենք մի քիչ թաղ տանք,— պատասխանեց Կատյուշայի կողքին կանգնած զինվորականը, վորը մի զեղեցկակազմ սպա յեր:

Դա Կատյուշայի յեղբայրն էր՝ Միխայիլ Սերգեյեվիչը, վոր վերադարձել էր քաղաքը զրավող սպիտակների հետ: Նա մոր, քրոջ և ընկերոջ հետ յեկել էր կայարան հորը զիմավորելու: Սակայն վերջինս այդ դնացքով չվերադարձավ:

Միխայիլ Սերգեյեվիչը բարձրահասակ, վայելչակազմ, նոր ու փայլուն համազգեստով, ատրճանակը մեջքին, դանդաղ քայլերը զլխին խնամքով սարքած զինվորական էր

Նրանք խմբով կայարանից դուրս չեկան և չարժվեցին տուն: Վասյային եկ տարան իրենց հետ:

— Ես դիմնազիաի հազուստը վորտեղի՞ց ես ճարել, տատանի ճուտ,— սուր ձայնով հարցրեց Նատալյա Պետրովնան տատմները կրճատացնելով:

— Հաղել ե, վոր աննկատ մնա. մի՞թե հասկանալի չե,— մի ջամառից նրանց ուղեկցող և Վասյային ձերբակալող զինվորականը:

Պատանին չեր խոսում: Նրա աչքերը մի քանի անգամ ընկան կատյուշայի վրա, բայց վերջինս լուռ եր և աչխատում եր խուսափել նրանից:

Վասյան աչքի ծայրով դես ու դեն եր նայում, հարմար առիթ վորոնում, վորտեղի փախչի կամ թաղնվի մի վորևե տեղ: Սակայն հնար չեղավ: Իրեն ձերբակալող զինվորականը չարունակ կողքին եր և ուշադիր հսկում եր նրան:

Տուն հասնելով, Վասյային տարան այն սենյակը, ուր նա քնում եր:

— Ես սենյակը զավթել, սեփականացրե՞լ եյիր, տատանի ճուտ,— բարկությամբ դոռաց Միխայիլ Սերգեյեվիչը և ապտակի ուժեղ հարվածը հասցրեց Վասիայի յերեսին:

Պատանու դեմքը կարմրեց, տատիկ ցավից աչքերից կաթ-ծերը ցայտեցին: Կատաղությունից ուղում եր ցատկել և պատախանել այդ հարվածին, բայց զսպեց իրեն:

— Ես ո՞վ ե ավել քեզ, հը՛, վորտեղի՞ց ձեռք քերիր հը՛, հը՛,— ճչում եր սուր ձայնով Նատալյա Պետրովնան և ձեռքով քաչքչում, տրորում եր պատանու բաճկոնակը:

Վասյան լուռ կանդնել եր և վոչ մի հարցի չեր պատասխանում:

— Հիմի ինչպե՞ս վարվենք ես լակոտի հետ,— ասաց կատյուշայի յեղբայրը:

Նրա ընկերը խորհուրդ տվեց Վասյային տանել և հանձնել հետախուզական բաժնին: Բայց Նատալյա Պետրովնան առաջարկեց պատանուն պահել մինչև իր ամուսնու վերադարձը:

— Թող ամուսինս դա ու տեսնի, թե իր բացակայության ժամանակ ինչքեր եյին մտել ու զավթել մեր սենյակները: Թող դա տեսնի և իր ձեռքով անի նրա դատաստանը:

Նատալյա Պետրովնայի առաջարկը չատ հարմար նկատվեց և պատանուն դուրս քերելով սենյակից՝ իջեցրին բակը և բանտարկեցին նկուղում: Դուռը փակեցին և բանալին հանձնեցին պահակին, վորպեսզի պահի և հսկի կալանավորի վրա:

Վասյայի կալանատունը դեռնափոր մի նկուղ եր՝ առանց լուսամուտների, քարաչեն հատա պատերով: Վոչ մի տեղից լույս կամ ոդ չեր թափանցում: Գետինը խոնավ հող եր, իսկ առաստաղի դերանների արանքից կախված եյին փտած և բորբոսնած չյուղեր և ճիլեր: Սարսափելի ծանր և խոնավ ոդ եր կանղնած այնտեղ: Ինչ վոր տեղից, նրա հիմքի քարերից, թե կիսաթաց հատակից բուրում եր սառնություն և բորբոսի հոտ: Փակված դռան հատա տախտակների արանքում մի փոքրիկ անցք կար, վորից կարելի չեր աղոտ կերպով տեսնել դրսի աչխարհը: Դռնից դենը մի քանի քարաչեն աստիճան եր բարձրանում դեպի մութ միջանցքը:

Սկզբում վոչինչ չեր յերևում Վասյայի աչքին: Շրջապատի համատարած խավարի մեջ կարծես թե նրա աչքերն եյ դարձան խավար: Բայց հետո քիչ-քիչ նա կարողացավ մթան մեջ նշմարել նկուղի մոայլ տեսքը: Ձեռքով չոչափեց պատերը և զղաց նրանց խոնավությունն ու սառնությունը: Նկուղի խորքում մի քանի դերաններ կային ընկած և նրանց մոտ ջարդած փայտի կտորներ: Դրանցից բացի եյ վոչ մի իր չկար այնտեղ:

«Ճերևի սա նրանց վհայտատունն է»,— մտածեց Վասյան և չկարողացավ վորևե յեզրակացության հանգել: Նա քայլում եր կույր մուրացկանի կամ վանդակում արդելափակված վոքրիկ գազանի պես, չրջապատում նկուղի պատերին քովելով, չոչափում պատերը, փորձում եր դուրս գալու կամ փախչելու յեղք դանել: Սակայն պատերը չքրված եյին խոշոր, ամրակուռ քարերից, դուռը չափազանց պինդ եր, իսկ առաստաղը Ֆակելու մասին մտածելը խելագարություն կլիներ:

Պատանին նստեց դերանի վրա, գլուխն առավ ձեռների մեջ և մնաց այդպես մտածկոտ: Ինչ պիտի աներ հապա, ինչպե՞ս փախչեր և ազատվեր այդ սարսափելի նկուղից: Արդյոք ինչպե՞ս պիտի վարվեն իրեն հետ...

«Ցերանի թե կայսրան չղնայի: Ցեթե այնտեղ չղնայի, չէյի պատահի դրանց: Ո՞վ դիտեր, ո՞վ կսպասեր, վոր այսպիսի խառն ժամանակ կատյուշան և իր մայրը կդան կայսրան: Ո՞ւմ խելքից կանցներ դա: Ցեթե ինքը նախապես նրանց նկատեր, իսկույն կվռազնվեր մայրդկանց կամ վագոնների ատրանքում, կվախչեր ու կանհետանար տեսողությունից: Արդյոք ո՞վ առաջին անգամ ճանաչեց իրեն... Կատյուշա՞ն, թե՞ մայրը: Միթե՞ կատյուշան կմատներ իրեն... Բայց ինչո՞ւ չպիտի մատներ վոր: Կատյուշան էլ զորձարանատիրոջ ցեղից էի՞, նույն դասակարգից, նույն արյունից: Ինչո՞ւ չպիտի մատներ վոր: Զիզճա՞յ արդյոք: Բայց տեսնենք, թե ինչ պիտի լինի վերջը: Տեսնենք, թե ինչ պիտի վճռի զորձարանաերը, կատյուշայի հայրը: Արդյոք կատյուշան չի՞ միջնորդի ինձ համար և նրա միջնորդությունը կանցնի՞...»

Որը սահում եր դանդաղ ու մռայլ: Դռան փոքրիկ անցքից նայելով Վասյան նկատեց, թե ինչպես դուրսը մթնում եր և միջանցքը ծածկվում թանձր մառախուղով: Նա քաղց ըզգաց: Առավոտից վոչինչ չեր կերել: Դռան անցքից մի քանի անգամ կանչեց պահակին, բայց մնաց անպատասխան: Դուռն սկսեց նախ թեթև, ապա ուժգնորեն ծեծել վոտներով և ձեռներով: Միջանցքում լսվեց պահակի խռպոտ ձայնը: Իր ծանր ոտքերով նա իջավ քարե աստիճաններից և դռան մյուս կողմից կանչեց.

— Ե՛յ, ի՞նչ ես ուզում:

Վասյան չրթունքները փակցրեց անցքին և պատասխանեց.

— Դուռը բաց արա, ուզում եմ դուրս գալ, սիրաս ճաքից այստեղ...

— Չի կարելի, ադան թույլ չի տալիս, առանց նրա հրամանին իրավունք չունեմ դուռը բաց անել,— իր խռպոտ ձայնով պատասխանեց պահակը:

Վասյան չատ խնդրեց, աղերսեց, բայց իզուր: Դուռը չբացեին: Նա խնդրեց, վոր ջուր և հաց բերեն իրեն: Սաստիկ ծարավ եր և քաղցած, ուզեին էլ ծանրացել, ցավում եր նկուպի խեղդող ոդից:

— Գնամ ադային կասեմ, յեթե թույլ տան՝ կբերեմ,— կանչեց խռպոտ ձայնը և ծանր ոտքերը քարե աստիճաններից պահապատրեն հեռացան:

Ջրաֆնությունից Վասյան աոտամները կրճատցրեց, վանդակում փակված աղյուսի կորյունի պես ճանկռում եր դուռը և փորձում եր չարժել, տեղահան անել: Ջայրույթից և ապարդյուն փորձերից հոդնեց և աչքերից արցունքներ հոսեցին:

«Ախտոս վոր եղ չան վորդուն, պահակին նոպանի գնդակով չեր խորովել: Պետք եր են ժամանակ, ղրան տեղափոխել են մյուս աշխարքը: Ելի սկսել և իր լակեյությունը, ոդում և աղայի վոտների առաջ: Ցերկերեսանի չանվորդի...». մոտածում եր Վասյան՝ բռունցքը թափահարելով ոդի մեջ:

Դաքծյալ դանդաղ և սրամաչուկ սահեցին ժամերը: Դրսից կրկին լսվեց մոտեցող ծանր քայլերի ձայնը, բանալին չխկաց կողպեքի մեջ և դուռը մի քիչ բացվեց: Այնտեղ պատկերվեց հաղթանդամ պահակի կիսատավերը: Նրա ձեռքին աղոտ ճրագ կար: Նա պատանուն հանձնեց ջրով լցված հոդամանը և սև հացի մի մեծ կտոր: Վասյան ջուրն ու հացը թղթի հետ միասին դրեց հատակին և դլխում կայծակի պես փայլեց մի հանդուգն միտք... Մի վոտքունով հասավ դռանը, փորձեց... բաց անել և դեմին տապալելով պահակին՝ փախչել: Բայց... Դուռը չբնկալեն փակվեց նրա վրա և պինդ կողպվեց:

— Հը՛մ, սատանի ճուտ, ուզում ես ինձ փորձանքի մեջ ղցե՞լ, ուզում ես ծլկվե՞լ, սատանի ճուտ,— դռան մյուս կողմից ծանոց պահակը:

Նրա ծանր կոշիկները չխկացին քարե աստիճանների վրա, և խավարի մեջ լուծվեց փոքրիկ ճրագի վերջին աղոտ լույսը:

Վասյան մնաց քարացած նկուղի համատարած խավարի մեջ: Հեռու ջաֆնությունից մի քանի անդամ անցուդարձ արավ, վերցրեց հոդամանը և ագահորեն խմեց ջուրը: Ապա քաշվեց խորքը, նստեց ջերանին և սկսեց դանդաղորեն կրծել սև հացը:

7.

Գիշերը վորքան եր անցել, հայտնի չէ: Վասյայի քունը չեր առնում: Նկուղի ծանր ոդը և մռայլ մոքերը ճնշում էին նրան: Նա մերթ նստում եր և դլուխը ձեռների մեջ մոա-

ծում, մեթի վեր եր կենում և ջղայնորեն քայլում հետ ու առաջ։ Անկյունից վերցրեց դավաղանի նմանող մի հատ փայտ և ղրանով ուժգնորեն ծեծեց պատը, թափահարեց ոդի մեջ, կարծես թե այդպիսով արտահայտում եր իր ծայրահեղ հուսահատությունն ու ցասումը։ Այդ անոդուտ և աննպատակ հարվածներից հոգնեց և ղերանները մի կողմից մոտ թերելով՝ փայտերը դասավորեց նրանց վրա, թափահ ձև տվեց և պատկեց, ղլուխը հենելով թևին։

Վորքան մնաց այդպես, հայտնի չե։ Աչքերը ծանրանում եյին և մաքերը խառնակվում։ Ինչ-վոր թեթև չրխկոց լսվեց։ Աչքերը բաց արավ և լարեց լսողությունը։ Արդյոք փախչող մկան չրխկո՞ց եր, թե մի վորևե բան պոկվեց, ներքև ընկավ առաստաղից։ Գուցե քամի յե բարձրացել դուրսը և վղղում է դռան արանքից։

Կրկին լավեց ինչ վոր թուլ, հաղիվ լսելի թրխկոց։ Վասյան վեր թռավ տեղից և կանգնեց նկուղի կենտրոնում։ Նա մի հատ փայտ վերցրեց և պատրաստ պահեց ձեռքում։

«Ո՞վ դիտե, գուցե դաղտագողի յեկել են իրեն տանելու կամ սպանելու, դրանցից ամեն բան սպասելի յե...»։ մտածեց պատանին և փայտը պատրաստ պահած մոտեցավ դռան։

Դուրսը ինչ վոր բան չարժվեց և մեկը ձեռներով կամացուկ չոչափեց դուռը։ Ապա մի կանացի մեղմ, հաղիվ լսելի ձայն դռան անցքից չշնչաց.

— Այդ յես եմ, Կատյուշան։ Մերոնք բոլորն էլ քնած են, յեկա քեզ տեսնելու։

Վասյան ամբողջ մարմնով փչաքաղվեց և ուրախության մի ճիչ արձակեց։

— Սո՛ւս, կամաց։ Պետք է այնպես խոսել, վոր մեզ չլսեն։ Աբբը, դու չատ ջահել ես։ Ցես քեզ խղճում եմ։ Բայց բանալին չդիտեմ վորտեղ է դրել պահակը։ Վաղը կաշխատեմ անպատճառ դտնել և հեռախյալ դիշերը դու կարող ես այս նկուղից հեռանալ։

— Ա՛խ, Կատյուշա, յես չեմ հավատում ականջիս։ Արդյոք այդ դո՞ւ ես խոսողը, արդյոք այդ քո ձա՞յնն է։ Մի թե՞ դու այդքան ազնիվ սիրտ ունես,— մրմնջաց դռան արանքից Վասյան դողդողուն ձայնով։

— Ցես այդ կանեմ։ Դու լավ տղա յես յերևում, բայց մի

պատճառ։ Ցեթե միայն դու կատարես այդ պատիժը,— ասաց Կատյուշան կամացուկ,

— կտանեմ, ամեն հնարավորը կանեմ։ Միայն թե ազատվեմ այս սարսափելի վորկից։

— Ցես արդեն դիտեմ և պատկերացնում եմ, թե ինչ սոսկալի տեղ ես ընկել դու և ինչ մեծ վտանգ է սպառնում քեզ։ Դեռ բավական չեն քո տանջանքները այս մութ խորշում, բայց քեզ վողջ չեն թողնի։ Ջե՛ վոր դու կապ ես ունեցել կարմիրների հետ, իսկ դրանք՝ մեր վոխերիմ թշնամիներն են, մեր տուն քանդողները, արյուն ծծողները...

Վասյան լուռ լսում եր նրան, չեր պատասխանում։ Նա սպասում եր, վոր Կատյուշան պիտի առաջարկի իր պայմանը։

— Ա՛յպես ուրեմն,— շարունակեց իր խոսքը Կատյուշան,— ցեթե դու իմ պայմանը կատարես, խոսք տաս և պատվով իրագործես քո խոստումը, յես քեզ այստեղից կազատեմ։

— Ցես լսում եմ, Կատյուշա,— չշնչաց Վասյան։

— Իմ պայմանը հետևյալն է։ Դու պետք է խնդրեն հեռանաս այս քաղաքից։ Կգնաս ուրիչ քաղաք և կաշխատես հեռու մնալ այս արյունահեղությունից և յերբեք չես միանա կարմիրներին...

Վասյան մի պահ լուռ մնաց։ Նա չդիտեր ինչ պատասխանել։ Իսկ Կատյուշան պատասխանի յեր սպասում։

— Մի՞թե այդքան ծանր է իմ առաջարկը։ Մի՞թե դու այդքան համոզված բոլշևիկ ես,— չշնչաց Կատյուշան։

— Ցես կկատարեմ քո առաջարկն այսպես։ Իսկույն կըփախչեմ այս քաղաքից, կաշխատեմ դնալ հեռավոր տեղեր։ Բայց թե հետո ինչ կլինի, ինչպես կդասավորվեն դեպքերը, նախօրոք չեմ կարող ասել։

Տիրեց լռություն։

— Ուրեմն դու տատանվում ես, չես կարողանում հստակ խոսք տալ,— չշնչաց Կատյուշան։

— Դու կարո՞ղ ես հաստատապես ասել, թե մոտակա կամ հեռավոր ապագայում ինչ կպատահի։ Արդյոք կենդանի կմնա՞նք։ Արդյոք դարձյալ կհանդիպե՞նք իրար։

— Թե ի՛նչ կլինի կամ ինչե՛ր կպատահեն, իհարկե, գժվար է

նախատեսել: Բայց մի բան պարզ է, վոր դու չպիտի լինես նրանց շարքում,— համառեց Կատյուշան:

— Ճես կղնամ իմ հոր մոտ, Կատյուշա: Իսկ թե հետո ինչ կլինի, առաջուց չեմ կարող ասել: Բայց յես ատում եմ բոլոր հարուստներին և չահագործողներին: Ցատում եմ նաև ձեր յերկերեսանի պահակին: Ճես նրա հախից կդամ, յեթե ազատվեմ: Իսկ քո վավերթյունը միշտ պիտի հիշեմ և պիտի աշխատեմ հատուցել... Այդ իմացիր, Կատյուշա...

Աղջիկը մի պահ լռեց և ապա կամացուկ ասաց.

— Դու խոսք չտվիր ինձ: Ինչպես յերևում է, դա չափազանց դժվար պայման է քեզ համար, կյանքից էլ դժվար: Ճես քեզ հանկանում եմ: Առայժմ վերցրու այս փոքրիկ կապոցը: Ճես պետք է հեռանամ, վորպեսզի չնկատեն և չլսեն մեր խոսակցությունը:

Դռան անցքից ներս թափվեցին մի քանի փոքրիկ թղթե կապոցիկներ: Հետո քարե աստիճանների վրա կանացի վոտների թեթև ձայներ լսվեցին: Հետո ամեն ինչ լռեց:

Ճերկար ժամանակ Վասյան ականջը կպցրել էր դռան անցքին և ուզում էր դրսից մի վորևե ձայն վերսալ, բայց լուռ: Համատարած լռություն էր տիրում չորս կողմը: Ապա կռացավ և դեռնից չոչափելով հավաքեց թղթե փոքրիկ կապոցները: Ներսցից անուշ բույր էր գալիս: Դա Կատյուշայի սքանչելի բույրն էր: Իսկ կապոցների մեջ անուշահամ քաղցրավենիքներ և կանֆետներ էին:

«Ինչպե՞ս բացատրել Կատյուշայի այս վերաբերմունքը, ինչո՞ւ պիտի իրենց թշնամու, դատապարտվրոչ աղջիկը նման հոգատարությամբ, բարեհամակամ վերաբերմունք ցույց տա: Արդյոք խըղճո՞մ է ինձ, արդյոք ապնվության և մարդասիրության զգացո՞ւմն է խոսում Կատյուշայի մեջ...» մտածում էր Վասյան: Այդ խոսավ, իսկապես Վասյան իրեն մի պահ յերջանիկ զգաց: Նա սկսեց ուտել աղջկա նվիրած քաղցրավենիքը: Մինչ այդ նա իրեն զգում էր աշխարհից կտրված, ամենաձեռացած, բոլորովին մենակ ու վորբ: Նա մի կողմից ափսոսում էր, վոր համաձայնել է բաժանվել հորից և հանձն առել նման պատասխանատվություն: Մյուս կողմից, սակայն, նա հպարտանում էր, վոր կատարում է իր պարտականությունը:

«Բայց յես դեռ վոչինչ չեմ արել, հենց նոր ձեռնարկեցի գործի՝ ուսումնասիրելու կայարանը և սպիտակ գրքերի չարժումները և հանկարծ ընկա թակարդ... Արդյոք կկարողանա՞մ ազատվել այս վորջից: Դեռ հարց է, Կատյուշային կհաջողվի՞ ազատել ինձ: Գուցե նա չկարողանա ձեռք բերել բանալին, ով դիտե, վորտեղ է պահել եղ չանվորդի պահակը: Ի՛նչ, մի ձեռքս ընկնի, վոնց պիտի նրա հախից գամ...

Նրա աչքերում կրկին չողացին կատաղության կայծերը: Վեր յելավ և պառկեց փայտերի վրա:

Դարձյալ սահեցին ծանր ժամերը: Համատարած լռությունը: Ողը կարծես թե սեղմում էր նրան: Նկուղի անկյունից լսել վոր բան ծղրտաց: Մկան ձայն էր դա: Նրան ծանոթ էր այդ ձայնը: Իրենց նախկին բնակարանում նա հաճախ է լսել նման ծղրտյուն:

Վորքան ժամանակ էր անցել, հարցնի չէ: Նա իրեն պղտում էր լսել վոր ճնշող ծանրության տակ: Հանկարծ աչքերը բացել, չարժվել և կարծես թե վրայից ընկավ այդ ծանրությը: Լսել վոր անհետաձգելի բան վերհիշողի պես վեր կելավ, իջավ պերանների և չտատել դեպի դուռը: Կարծես թե լսել վոր բան էր սպասում նրան այնտեղ: Դուռը չոչափեց, բայց նա դարձյալ պինդ փակված էր: Դռան անցքից պատկերվեց մի ջանցքի պատ լույսը: Ատավոտ է ուրեմն, գուցե և յերեկ, լսել մանաս— վոչ արև է յերևում, վոչ յերկինք, վոր հայտնի անի:

«Ինչ արեց հասպա Կատյուշան...»:

Դարձյալ նրան պատեց հուսահատության: Նկուղի ողն ավելի կեր ծանրացել դիշերվա ընթացքում: Կատաղությունից նա սկսեց ճանկռել դուռը և վայրով պինդ բաղխել: Ճերկար բաղխեց, հոգնեց դուռը ծեծելուց: Դրսից դարձյալ լսվեց սպասողների ձայնը: Դռան անցքից յերևաց պահակի դեմքը:

— Նո՛ւ, աղավնյակս, վանդակից չես կարող թռչել: Դուռն էլ շատ պինդ է, չափազանց պինդ: Ջուր ես ձեռներդ լարդում, դա քեզ չի ողնի,— մռմռաց նրա թավ ձայնը:

— Դուռը բաց արա. յես այստեղ խեղդվում եմ,— խնդրում էր Վասյան...

— Նո՛ւ, եղ շատ մեծ բան ես պահանջում, դեռ կարող ես դիմանալ, քո ջանը պինդ է, աղավնյակս,— հեղնորեն պատասխանեց պահակը:

— Սիրը քեզ ի՞նչ ողուա, յեթե յես այստեղ չարչարվեմ: Ի՞նչ չահ ունես, ե՛:

— Ոչդում ես զործից զրկվե՞մ: Սպասում ենք աղայի զալուն: Նա դեռ չի վերադարձել: Նա պետք է քեզ տեսնի, ականջներդ պինդ քաշի և խրատի, վորպեսզի խելոք մնաս, ել ուրիշների առնը չխոկվես:

Կատաղությունից Վասյայի աչքերը վառվեցին, դեմնից վերցրեց վայրը և վազեց դռան անցքից հարվածել պահակին: Բայց վերջինս իր ուսած դեմքը իսկույն հեռացրեց:

— Նո՛ւ, աղավնյակս, չուին անցնում ես: Գլխիդ հետ ես խաղում,— մրմնջաց պահակը:

— Սի՛ խ, մի ձեռքս ընկնես, քավթառ ծերուկ, ես անպամ կտոր-կտոր կանեմ քեզ,— զայրացած ձայնեց Վասյան:

— Հըմ, ահա թե ինչ: Սպառնում ել ե սատանի ճուտը: Գրծավ, ել եստեղից չես ազատվի, թե չե, ախպեր, խոթաքաղա ես: Սատ ե՝ արջի քոթոթից ղուշ կաց, կմեծանա, վոսկորներդ կջարդի:

Սպասղների ձայնը կրկին հեռացավ: Միջանցքում վոչ վոք չէր յերևում: Վասյան մի քանի անպամ ել ջղայնորեն ծեծեց դուռը, բայց ապարդյուն... Սատիկ բարկությունից ցնցվեց ամբողջ մարմնով, սկսեց հեկեկալ, արցունքները վազում էին աչքերից...

Դարձյալ պատեց նրան հուսահատության ծանր զգացմունքը: Այս անպամ նա լրեն զգաց մինպամայն մենուսացած, և մահվան դժնդակ պատկերը յերևաց նրա աչքերին...

Գիշերն անցավ հավիտենորեն դանդաղ քայլերով: Վասյան ջրամբար էր նկուղում և ջղայնությունից դողդողում էր, կծոտում իր մատները: Անզորության զիտակցությունից չգիտեր ինչ աներ:

Նրան ավելի յեր հուսահատեցնում այն մտքը, վոր Կատյուշան չի յերևում:

«Արդյոք մի վորևե բան չի՞ պատահել նրան: Գուցե նկատել են նրա ինձ մոտ զալը, հանդիմանել կամ ծեծել են: Ո՞վ գիտե: Ցերանի թե իմ պատճառով մի վորևե բան չպատահի նրան, փորձանք չդա...»:

Նա հանկարծ խղճաց և կարոտեց Կատյուշային: Սրդեն վազուց կերել զրծել էր Կատյուշայի բերած քաղցրավենիքը: Մնացել էին միայն թղթի կտորները, վորոնցից անուշ հոտ էր բուրում: Պատանին ձեռքի մեջ սեղմում էր թղթի այդ կտորներն ինչպես մի նվիրական բան...

Լուսաղեմին նրա աչքերը ծանրացան, վոտների մեջ թուլություն զգաց և պառկեց վայրերի վրա: Ինչքան ժամանակ անցավ, հայտնի չէ:

Դուռը կամացուկ թրխկացրին, և Վասյան մի վոտյունով խելագարի պես առջ ցատկեց: Դռան անցքից պատկերվեց սովատակ չրջազգեստը, հետո մի խոշոր, ժպտուն աչք: Կատյուշան էր...

— Քնած եյիր: Մի քանի անգամ թրխկացրի, ձայն չտվիր: Ենպես վախեցա,— քնքշաբար չչնջաց Կատյուշան:

— Ցերեկ և գիշերս անհամբեր սպասում եյի քեզ, բայց դուռ չերևացիր: Դա շատ տխրեցրեց և հուսահատեցրեց ինձ: Այնպես եյի կարոտել քեզ... Մեկ ել ես սարսափելի վորջում չես արդեն խեղդվում եմ, ել չեմ կարող տանել,— արտասվալից ձայով պատասխանեց Վասյան:

— Ցերեկ մենք դարձյալ սպասում եյինք հայրիկիս, բայց նա չեկավ: Ներանից հեռագիր ստացանք, վոր հիվանդացել և դտնվում է Պյատիգորսկում, մեր ազգականի տանը: Մայրս ուղեղայրս գնացին նրա մոտ: Իսկ յես չեմ կարողանում դանել քանալին: Այսօր յես ուզում եմ պահակին մի վորևե դրծով աղարկել մի տեղ և թերևս նրա բացակայությանը դանեմ քանալին,—չչնջաց աղջիկը:

— Միակ հույսս դու ես: Մի բան արա, ինձ ազատիր այստեղից: Անչափ, անսահման յերախտապարտ կլինեմ:

— Իսկ իմ առաջարկը: Նրա մասին մտածեցի՞ր արդյոք: Ցես պատասխանի յեմ սպասում:

— Ի՞նչ առաջարկ, Կատյուշա, յես մոռացել եմ: Գլուխս այնքան է չշմել, վոր վոչ մի բանի մասին չեմ կարող մտածել, ուղեղս չի դործում: Ցես կարող յերևակայել և պատկերացնել, թե ինչպիսի սարսափելի վորջում եմ դտնվում: Պահակն ու մարդասպանը բանտի խցում ավելի հանդիստ են զգում իրենց, քան թե յես այստեղ...

Դռան անցքից կրկին մի քանի կապոցներ ընկան և սպիտակ չրջազգեստն անհետացավ միջանցքի աղոտ լույսի մեջ:

Վասյան դարձյալ մենակ մնաց: Կռացավ դետնի վրայից հա-

վաքից փոքրիկ կապոցները և սկսեց մեծ ախորժակով ուտել նրանց մեջ ամփոփված անուշեղենը:

8·

Միջանցքի ազոտ լույսերը հանգեցին: Նկուղում ծանրացա, անառանելի ողը դառնում էր արդեն հեղձուցիչ:

Պատանին տենդով բռնվածի պես անցուդարձ էր անում և ջայնաբթյունից տրորում էր մատները: Այդանջը չարունակ դեպի դուռն էր...

Ահա թեթև թրխկաց դուռը, և Վասյան վրա հասավ:

— Այդ յես եմ,—չընջաց Կատյուշան:

Անսահման յերջանիկ մի բան թրթռաց Վասյայի սրտում: Աչքերը մոտեցրեց անցքին և անհամբերությամբ մրմնջաց·

— Կատյուշա...

— Ոգավելով պահակի բացակայությունից, մտա նրա սենյակը և դուռ բանալին: Կարծեմ հենց սա յե:

Կատյուշան կտացավ, բանալին անցկացրեց կողպեքի մեջ և ջոլոքեց: Ճռնչալով բացվեց դուռը...

Ներսից աղջկա յերեսին փչեց ծանր գարշահոտ ողը: Կատյուշան հետ քաշվեց և փորձեց բարձրանալ աստիճաններից, սակայն նրան փաթաթվեց Վասյայի թևը և ճակատին դպավ ջևքի համբույրը: Կատյուշան ազատվեց Վասյայի թևից և չնչակոտը չընջաց,

— Փախիր, հեռացիր խնդրում, քանի պահակը չի վերադարձել:

— Ցետս ուզում եմ նախ նրա հախիցը գալ և ապա փախչել,— պատասխանեց Վասյան:

— Ցեթե դու ինձ հարգում ես, պետք է չասպես: Ջե՞ վոր յես էլ կարող եմ վտանգվել քո պատճառով: Իմ լավությունը գործությա՞մբ ես ուզում փոխարինել: Փախի՛ր խնդրում,—պընդեց աղջիկը:

— Ցես քեզ յերբեք չեմ մոռանա, Կատյուշա, յերբեք,— ասաց պատանին, ջերմորեն դղվեց աղջկա ձեռքը և միջանցքի բաց դռնով յելավ պարտեզ:

Կատյուշան կրկին փակեց նկուղի դուռը և բանալին տանելավ՝ գրեց իր նախկին տեղը: Պահակը դեռ չեր վերադարձել:

9·

Հարթածի պես եր դղում իրեն, վոտները Ծանրացել եյին, հրաժարվում եյին առաջ գնալ: Կուրծքն այնպես արագ եր չընչում, կարծես ուզում եր միանգամից կուլ տալ դրսի ամբողջ թարմ ողը...

Այդպես Վասյան քայլեց պարտեզի ծառուղով, յերկաթգուռ ցանկապատից անցավ մյուս կողմը և հարևան բակից յելավ փողոց: Այնտեղ նա անհետացավ անցորդների արանքում: Կտրելով մի քանի փողոց, նա մոտավ այն բնակարանը, վորտեղ իջևել եր Հետախույզ Լյուբչենկոյի հետ:

Դուռը բաց արեց սպիտակ չորով և խորշոմած դեմքով տանտիրուհին: Նա զարմանքով պատանուն եր նայում, չեր հավատում աչքերին:

— Պա՛հ, եղ դու ե՞ս, Վասյա,— բացականչեց Լյուբչենկոն սենյակի խորքից առաջ վազելով,— անտանել, ես չորս որ և վոր զրծս թողած քեզ եմ փնտռում: Գլուխս կորցրել եյի: Կարծում եյի, վոր ոտ չես, պոլիտականները քեզ կերել են: Սիրտ չեյի պնում վերադառնալ մերոնց մոտ: Ի՞նչ պատասխան պիտի տայի հորդ...

Վասյան կանգնել եր դիմաքաց, փչչու և կեղտի մեջ արտված հագուստով, տանջված դեմքով:

— Ա՛յ տղա, եղ ի՞նչ ե պատահել քեզ: Ի՞նչ հալի ես: Կարծես թե են աշխարքից ես գալիս, ենպես դեղնել, սլերթնել ես...

Լյուբչենկոն ուշադրությամբ դիտում եր Վասյային, իսկ վերջինս դժվարանում եր խոսել, կարծես թե յերազումն եր: Այնքան անհավատալի յեր թվում նրան իր ազատությունը: Նա համառոտ պատմեց իր դլխին յեկած փորձանքը: Լյուբչենկոն չարժեց դլուխը և պատասխանեց·

— Թարսի պես հենց կայարանո՞ւմ պիտի հանդիպեիր եղ չանվորդիներին: Բայց կե՛ցցե աղջիկը, քեզ փրկել է: Մի ուրիշ բուրժուի աղջիկ եղիսի բան յերբեք չեր անի:

Լյուբչենկոն մի պահ լռեց և չարունակեց՝

— Ինչպես յերևում է, եղ բուրժուի աղջիկը կայարանում քեզ տեսել ու մատնել է: Այնուհետև դդալով քո դրությունը, դղջացել և փրկել է քեզ:

— Հիմի մենք ի՞նչ ենք անելու: Ցե՞րբ պիտի մեկնենք մերոնց մոտ,— հարցրեց Վասյան:

— Ես դիշերն ու վաղը ցերեկը կհանգստանամ, իսկ յես մի փոքր հանձնարարություն ունեմ, կկատարեմ: Իսկ հետեվյալ դիշերը միասին կհեռանանք,— պատասխանեց Լյուբչենկոն և նստեց սեղանի մոտ ինչ-որ բան գրելու:

Վասյան միջանցքում թափ տվեց, մաքրեց չորերը, գլուխն ու ձեռները լվաց և ներս մտավ: Պառավ տանտիրուհին թեյի պատրաստությամբ եր զբաղված: Նա Լյուբչենկոյի մորաքույրն եր: Ցերեկ աղջիկ ուներ, վորոնք մարդու եյին գնացել, իսկ ամուսինը գործով մեկնել եր Ստավրոպոլ և ճանապարհները փակվելու պատճառով չեր կարողանում վերադառնալ:

Պառավը սրտնեղում եր և չարունակ մտածում իր մարդու մասին:

Վասյան զբաղեց Լյուբչենկոյի թղթերը: Դրանք զանազան գիրքերի, տեղամասերի, ռազմադիտական կետերի նկարներ և պլաններ եյին մատիտով ստվերագծված:

Թեյից հետո Վասյան պառկեց անկողին: Նա իրեն այնքան հոգնած ու ջարդված եր զգում, վոր քունն իսկույն ծանրացավ աչքերին: Տանտիրուհին էլ տեղավորվեց սենյակի անկյունում՝ թախտի վրա: Իսկ Լյուբչենկոն չարունակեց իր աշխատանքը: Հետևյալ որը նա գլխովին կորավ, իսկ Վասյան մինչև կեսոր վեր չելավ անկողնից: Տանտիրուհու հետ միասին ճաշեց: Իսկ յերեկոյան, յերբ Լյուբչենկոն վերադարձավ, նա արդեն բավական թարմացել եր և պատրաստ սպասում եր նրան:

Լյուբչենկոն Խարկովի համալսարանի յերրորդ կուրսի ուսանող եր: Նրա հայրն դեռ մնում եր ուսանողական մաշված համազգեստը: Նա գլխարկը վերցրեց և քանդելով նրա աստառը, մեջը տեղավորեց իր կարևոր թղթերն ու պլանները և կրկին աստառը կարեց այնպես, վոր խակի չեր յերևում, թե այնտեղ թղթեր կան պահված:

— Նո՛ւ, Վասյա, իմ սիրելի ուղեկից, յես արդեն պատրաստ եմ: Մենք պետք է մեծ զգուշությամբ քաղաքի արվարձանից դուրս դանք գաշտը, այնտեղից մանենք անտառ և սպա լողալով անցնենք գետը:— Իսկ դու լող սոլ կարո՞ղ ես,— ասաց Լյուբչենկոն:

— Լա՛վ: Կլողամ այնպես, ինչպես ձուկը՝ ջրում,— պատասխանեց Վասյան:

Տանտիրուհին նրանց համար մի կապոց ուտելու պաշար պատրաստեց, և ուշ դիշերին նրանք ճամբա ընկան:

Նախապես Լյուբչենկոն Վասյային պատվիրեց, վոր յեթե հարցնող լինի, հայտարարի, վոր իբր իրենք Ստավրոպոլից են և գնում են ծնողների մոտ:

Քաղաքի հետ ընկած փողոցներով նրանք դուրս յեկան ընդարձակ տափարակը: Մութն եր չուրջը և վոչ մի մարդկային ոտվեր չեր շարժվում: Յերկինքը ծածկված եր ամպերով: Քաղաքում հազիվ մի քանի աղոտ լույսեր եյին պլպլում: Հեռվից, կավկազկայա կայարանի ուղղությամբ թնդանոթի խուլ թընդյուններ եյին լսվում:

— Արդյոք յե՞րբ կհանդիպենք մերոնց,— չչնջաց Վասյան:

— Սուս, ա՛յ տղա, խոսելու վախտը չի: Նախ գլուխները ապահով կրակից, ապա մտածենք մերոնց հանդիպելու մասին,— պատասխանեց Լյուբչենկոն:

Նրանք քայլում եյին մեծ զգուշությամբ և ուշադրությամբ դիտում եյին չուրջը: Ձենք չեյին վերցրել, վորպեսզի բռնվելիս կասկածի չենթարկվեն: Նրանք կամրջից չանցան, վորովհետև սպիտակ պահակները հսկում եյին այնտեղ: Ցերը անտառ մտան, Լյուբչենկոն հանգիստ չունչ քաշեց: Այնտեղ՝ այդ մութ անտառում նրանք համեմատաբար ապահով եյին զգում իրենց: Սակայն իրար կողքի կանգնած մեծ ու փոքր ծառերի մեջտեղ տեսքը սարսուռ եր պատճառում Վասյային: Թվում եր, թե այդ ծառերի հետևն ուրվականներ կան թաղնված, վորոնք վորտեղից վոր և դուրս կթռչեն և կկտրեն իրենց ճամբան: Ահա դուրս յեկան անտառի թանձր մառախուղից, լսեցին ջրերի աղմուկը և զգացին նրանց թարմ չունչը: Կամրջից բավական հեռու լինելով՝ աչքի չեյին զարնվում: Նրանք չտապով հանեցին չորերը և կոշիկները, փաթաթեցին, զարձրին մի կապոց և ձեռքում բռնած մտան ջուրը: Հաղուստի կապոցը մի ձեռքում բարձր պահած, մյուս ձեռքով նրանք լողում եյին դեպում, պատռում նրա թափանցիկ կուրծքը, դիմադրավում ալիքների հախուռն վազքին և ճանապարհ հարթում: Ամառվա ամիսներին Կուբանի ջրերը նվազ եյին և այնքան էլ վտանգավոր չեր նրանց միջից անցնելը:

Ահա նրանք հասան մյուս տիրը, թաչիճահով չթայրին մարմինը և հագան չորերը:

— Ես վորձանքին էլ պրծանք: Կարծես թե հավով են գնում մեր գործերը,— չչնչաց Լյուբչենկոն:

Վասյան չեր խոսում: Քայլում եր լուռ, բարձրանալով հողաբլրի գահավեժերը: Նրա մարմինը ոտը լոդանքից հետո այժմ տաքացել եր և իրեն կայտառ եր զգում:

Ամպերն ավելի խտացան և կապարի պես ծանրացան յերկրագրամ: Արդեն հասած, բայց տակավին չհնձած արտերի վրայից բևեռի քամի անցավ: Հասկերը թեքեցին իրենց մէջքը, ալեծածան և դյուրինները մխացրին միմյանց: Լավեց ամպերի վորոտը և սկզբից կտիճել անձրևը:

— Լավ կլինի, վոր պիչերը մնանք մոտակա պրաչնակոպ գյուղում և անձրևից պաշտպանվենք,— առաջարկեց Լյուբչենկոն:

Յեվ ցրտնի արտերի միջով քայլերն ուղղեցին մոտակա գյուղը, վոր ամբողջովին ծածկվել եր պիչերիա ան վարպուդրով:

Բոլորը քնած եյին գյուղում: Մի շուն անգամ չհաչեց: Դա կոզակների փոքրիկ գյուղ եր: Լյուբչենկոն այնտեղ մի ծանոթ ընտանիք ուներ, վորի հետ նա ծանոթացել եր, յերբ իրենց վաշարն իր բանակը գրել եր այդ գյուղի շրջակայքում: Գյուղի հայրումն եր գտնվում յերկու սենյակից բաղկացած այդ ծանոթի փոքրիկ տունը: Յերկար բաղխեցին դուռը: Վերջապես կոպեկը ճիկաց և կիսաբաց արին դուռը:

— Ովքե՞ր եք, ի՞նչ եք ուզում,— գոռաց հետևից լսվեց ազամարդու խռպոտ ձայնը:

— Յես եմ, քեռի Ջան, Լյուբչենկոն:

Դուռը բացվեց և նրանք ներս մտան: Այնտեղ, փոքրիկ միջանցքում, ճրագի ազոտ լույսի տակ պատկերվեց մի բարձրահասակ, հաղթանդամ կոզակ՝ ծնոտից ավելի պես կախված թավ մորուքով, վորի մազերն արդեն սկսել եյին ճերմակել: Անկողնից դեռ կենդանի, առանց շորերը հագնելու, վեր թռավ տանտերը և պարձակ մի խրխրզոցավոր ուրախական: Նա կատաղած աչքերով նայում եր նորեկների վրա:

— Ես ի՞նչ խաբար ե, եսպես ուշ պիչերով: Վորտեղի՞ց եք գալիս և ո՞ւր եք գնում,— հարցրեց տանտերը:

— Քաղաքից ենք գալիս և գնում ենք մերոնց մոտ: Անձրևն ստիպեց պիչերն ոթևանել քեզ մոտ: Հը՛, ի՞նչ ես ասում, քեռի Ջան,— պատասխանեց Լյուբչենկոն:

— Ես արծվի ճո՞ւտն ավ ե: Ինչ-վոր ծանոթ դեմք և յերևվում: Կարծես թե ձեր վաշտում տեսած լինեմ դրան,—հարցրեց կոզակը վոտքից գլուխ դիտելով Վասյային:

— Սա Իվանովի վորդին ե. հիշո՞ւմ ես մեր ջոկատապետ Իվանովը: Լավ ասացիր: Իսկապես վոր արծվի ճուտ ե,—ծիծաղելով պատասխանեց Լյուբչենկոն:

Յերկար ժամանակ իրենց վաշտը գտնվում եր այդ գյուղի շրջակայքում, այդ պատճառով էլ տանտերը համարյա թե ճանաչում եր նրանցից շատերին: Զուռ, կաթ և ուրիշ ուտելիքներ մատակարարելով և չփոխ ունենալով կարմիր բանակայինների հետ, նրանց չեր մոռացել:

Տանտերը հյուրերին հրավիրեց իր սենյակը: Մի լուսամուտ ունեցող սենյակը փոքր եր: Յերկու թախտ և մի սեղան հազիվ եյին տեղավորված այնտեղ:

— Ուտել ուզո՞ւմ եք,— հարցրեց տանտերը:

Հյուրերն իրենց հետ առատ ուտելիք ունեյին՝ հաց, յերշիկ, սալ: Այդ բոլորը դրին սեղանին: Իսկ տանտերը մի խոշոր ճմեռուկ բերեց, և նրանք սկսեցին ախորժակով ուտել:

— Ախոռս վոր արագ չկա: Տնաքանդները, գոնե մի չիչ եպ անմահական հեղուկից բերեյիք ձեզ հետ:

Տանտերը հոգի յեր տալիս արագի համար: Նա մոտ հիսունհինգ տարեկան ազամարդ եր, ամրակազմ, ժիր ու կենսուրախ: Կոզակների հքավոր դասին եր պատկանում և այդ պատճառով էլ կարմիրներին համակրում եր, թեև չեր սիրում կռիվ, արյունհեղություն:

— Ես կռիվը շատ արյուն կթափի և շատ ուռն կքաշեի,— ասում եր նա դլուխը թափահարելով:

— Ջհուվես, արյուն չթափես՝ իրավունքդ չես պաշտպանի: Նավով միայն կարելի յե ձեռք բերել ազատություն, քեռի Ջան,— փիլիսոփայում եր Լյուբչենկոն:

Նրանք լավ ընդունեցին և կերան անուշահյութ ճմեռուկը, իսկ դուրսը անձրևը թափվում եր հեղեղի պես:

Լյուբչենկոն խնդրեց քեռի Կիպկալովից, վորպեսզի թխա

զաղտնի պահի իրենց այնտեղ լինելը: Կիպիալովը ձեռքը սեղմեց բերանին և դրանով ցույց տվեց, որ վոչ վոքի չի ասի: Հետո նրանք պատկեցին քնելու:

Լյուբչենկոն ու Վասյան իրար կողքի տեղավորվեցին մի թախտի վրա, իսկ քեռի Կիպիալովը պատկեց մյուս թախտին: Նրա ալեվորված մազերն առատորեն թափվել էլին բարձին, իսկ չիբուխ-սալխատախառն մորուքը նստել էր վերմակի վրա, ինչպես թռչունի թև:

Հյուրերը հոգնած լինելով իսկույն քնեցին: Հարևան թաղից լսվեց քեռի Կիպիալովի ծանր խոմփոցը:

10.

Վասյան ուշ զարթնեց: Լուսամուտից առատորեն ներս էլին թափվել արևի վոսկեփայլ ճառագայթները: Ցերը հաղթվեց և գնաց մի քանք լվացվելու, այնտեղ կանգնած էր Լյուբչենկոն և սերյոժը ղուզում էր Կիպիալովի ամուսնացած աղջկա՝ Նյուռայի հետ, վոր ապրում էր մյուս սենյակում:

Դա միջահասակ, լիքը մարմնով, առողջակազմ, սպիտակ մորթով յերիտասարդ կին էր, վորի կապույտ աչքերի մեջ ղուզում էր կյանքի պայծառ ժպիտը: Նյուռան իր աչքերը հառեց պատանուն, ժպտաց և ասաց.

— Սա՞ յե քո ուղեկիցը: Շատ ջահել է, դեռ պետք է շատ թաթ խմի, վոր դառնա իսկական ազամարդ:

— Նա արդեն ազամարդ է: Կռվել գիտի, կռվի մեջն էլ հաղթել գիտի: Ցերեկը թիկունք չի ցույց տալիս թշնամուն:: Արծվի ճուտ է,—պատասխանեց Լյուբչենկոն ծիծաղելով:

Վասյան լվացվեց, մաքրվեց, և նրանք մտան սենյակ նախաճաշելու: Թարմ կաթ խմեցին և կերան կուրանի սև, ախորժահամ հացը: Քեռի Կիպալիովը գնացել էր ինչ-վոր տեղ:

— Լավ աղջիկ է Նյուռան, արևի կտոր: Ցերեկ ամուսնացած չլիներ, յես նրան կդարձնեյի ինձ կին: Ախտա վոր մարդ ունի,— վշվշում էր Լյուբչենկոն:

Երանք մնացին փակված սենյակում մինչև մթնեց: Քեռի Կիպիալովը վերադարձավ և պատեցնում էր նրանց իր կատակներով և դյուղի անցյալի ու ներկայի մասին բազմաթիվ պատմություններով: Ախորժելի յեր զրուցել այդ ծերուկի հետ: Իսկ մի քանքում հաճախ էր լսվում Նյուռայի կենսուրախ քրքիջը:

Ցերը մութն ընկավ և դյուղի շրջակայքը ծածկվեց թանձր մառախուղով, Լյուբչենկոն ու Վասյան վճարեցին քեռի Կիպիալովին և շնորհակալություն հայտնելով ճամբա ընկան:

Նրանք դուրս յեկան խճուղին և քայլերն ուղղեցին դեպի Գրիգորոպոլիս դյուղը: Վորքան առաջ էլին ընթանում, այնքան ավելի պարզ էլին լսվում թնդանոթի թնդյունները: Կռիվը տեղի յեր ունենում դեռ մյուս կողմը, Կավկազակայա կայարանի մոտերքում:

Ցերկնքի կապույտ ծովում պայծառորեն պլպլում էլին աստղերը: Զով յերեկո յեր: Ճանապարհն անցնում էր սքանչելի արտերի միջով: Լայնածավալ հարթավայրի վրա փռվել էլին վոսկեգույն հասկերը:

Նրանք քայլում էլին լուռ, ամեն մեկը նրանցից առանձին էր խորը մտքերի մեջ: Վասյան մտածում էր այն մասին, թե յերբ պետք է տեղ հասնեն իր հայրիկի մոտ, վորին չափազանց կարոտել էր: Արդյոք մի վորևե բան չի՞ պատահել նրան... Ապա մտաբերեց այն սարսափելի նկուղը, դղվելի ողը և վշաքաղվեց նրա ամբողջ մարմինը: Հետո աչքին պատկերացավ Կատյուշան... Ցավ չգիտես ինչու, ժպտաց Վասյան: Զգիտես ինչո՛ւ այդ բերկրալից ժպիտը դարձավ մի քաղցր հուշ և չոյեց, փայփայեց նրա սիրտը...

Իսկ ինչի՞ մասին էր մտածում Լյուբչենկոն: Գուցե նա էլ Նյուռայի մասին էր մտածում, ափսոսում էր, վոր Նյուռան մարդ ունի... Գուցե ուրիշ բանի մասին էր մտածում Լյուբչենկոն, ինչ իմանաս:

Վորքան էլին ճանապարհ կտրել, հայտնի չէ: Յերևում էր, վոր շատ ժամանակ էր անցել: Աստղերն ասես իրենց տեղում մեխված՝ չարունակ հետևում էլին նրանց ու ժպտում: Կապույտ հորիզոնի վրա մի աստղ ցոլաց, արծաթե թել արձակեց և մարեց: Բարձրացավ թևեհ քամին: Յորենի հասկերը ովսոում էլին և ատամնավոր ծովի ալիքների պես:

Լյուբչենկոն կանգ առավ հանկարծ և ականջ դրեց: Նա խկույն պատկեց դեմքին և ականջը կպցրեց հողին: Ձիերի դոփյունի ձայն էր գալիս: Լյուբչենկոն կանգնեց և չչնջաց Վասյային.

— Այ տղա, ճանապարհից իսկույն պետք է հեռանալ և թաղնվել: Ձիավորներ են գալիս, ինչպես յերևում է, սպիտակների հեծելազորն է:

Ագռաւները նա իրեն զգեց մինչև մեջքը հասնող ցուրենի հագուկների մեջ, վասյան էլ՝ նրա հետևից: Նրանք կռացած անցան բավական ուղ և թաղնվեցին արաների մեջ բուսած թխուտների արանքում:

Շատ չանցած սարչավ յեկան մոտ հարյուր ձիավոր: Նրանցից մի քանիսը ձիերը քշեցին արաների մեջ, հրացանները պատրաստած ձեռ եյին տալիս, սպասում եյին, ինչ վոր բան վորոնում: Պարզ եր, վոր նրանք կիսախավարի մեջ հետևից նկատել եյին ճանապարհից անհետացող ինչ-վոր սովերներ և այժմ ուզում եյին գտնել: Բավական չարչարվեցին, բայց իզուր անցան նրանց վորոնումները: Լյուբչենկոն ու վասյան այնպես եյին ծածկվել և անշարժ պառկել թփերի մեջ, վոր ոչխարով սատանան միայն կարող եր գտնել նրանց:

Սպիտակ ձիավորները հայհոյեցին, մի քանի անգամ կրակեցին և չարունակեցին իրենց ճանապարհը:

Լյուբչենկոն թփի տակ վոշնու պես տափ արած պատանուն սպասել մինչև վոր ձիավորները բոլորովին հեռանան: Իսկ դեռ մյուս կողմից թնդանոթի ձայներն ավելի պարզ եյին լսվում: Նրանք թնդում եյին դիչերային լուռթյան մեջ և սդի ալիքները սատանելով ցրվում հեռու-հեռու:

Բավական ժամանակ անցավ, յերբ Լյուբչենկոն վասյային սկսեց չարունակել ճամբան: Պատանու աչքերը ծանրացել եյին և նրա մտքերը գնացել ինչ-վոր անհայտ տեղ... Լյուբչենկոն բռնեց նրան, և նա աչքերը բացեց յերապից պրծնող մարդու պես: Նրանք ցուրենի հագուկների մեջից դուրս յեկան խճուղին և չարժվեցին առաջ: Ցերկար գնացին: Ճանապարհի յերկու կողմից նրանց դիմավորեցին բարձրահասակ բարտիները: Ցերկնքի վրա կրկին ցոլաց մի սաստ և մարեց: Հեռավոր հորիզոնի ծայրին լույսի աղոտ շերտեր ընկան, կարծես թե չուշանի հսկայական թերթիկներ լինեին: Ապա այդ լուսները հետզհետե մեծացան և կամարների պես ձգվեցին յերկնքի վրա: Աստղերի աչքերն սկսեցին աղոտանալ: Նրանք կորցնում եյին իրենց պայծառ ժպիտը, գունատվում եյին և ապա մարում:

Բարակների կատարներին ճլվլացին թռչունները, իսկ հորիզոնի լուսեղեն սյուների արանքում վառվեց մի կարմիր կրակ, վոր հետզհետե մեծացավ և դարձավ հրդեհ: Արեգակը ծագում եր:

Գյուղի հենց առաջին տան կտուրին թեվերը թափահարեց աքաղաղը և կանչեց: Այդ ղիլ կանչին ճայնակցում եյին ուրիշները: Յերկու կողմից յերեսացին մի հարկանի սպիտակ չինքերը՝ լուսամուտները կողպած: Գյուղի լայնարձակ փողոցը նրանց չատ առաջ տարավ: Կարծես թե ծայր ու սահման չուներ այդ փողոցը:

— Ես լավ չեղավ, վոր մենք լուսով հասանք գյուղը: Սպիտակ ձիավորները բավական մեղ պահեցին ճանապարհին,— ասաց Լյուբչենկոն և ճանապարհից չեղվելով մտավ մի քանդված տուն և նրա վերատակների միջից անցնելով դուրս յեկավ խնձորենիների փոքրիկ այգին: Վասյան էլ անթաժան հետևում եր նրան: Խնճորենիներից մեկի տակ նստել հանգստանում եր մի ութսունամյա ծերուկ՝ սպիտակ մորուքով, բայց դեռևս կենդանի աչքերով: Լյուբչենկոն հարգանքով բարևեց ծերուկին և նստեց կանաչների վրա: Ծերուկը պննող աչքերով նրան եր նայում:

— Հը, պապի ջան, չճանաչեցի՞ր: Ցես քո վորդու՝ Լուկիայի ընկերն եմ: Հիչո՞ւմ ես, սրանից յերկու ամիս առաջ մի քանի դիչեր մնացի ձեզ մոտ հյուր,— ասաց Լյուբչենկոն: Ծերունին ձեռքը դրեց քունքին, մտածեց մի պահ և կարծես թե ինչ-վոր բան վերհիչեց:

— Լյուբչենկոն ե՞ս, հիչում եմ: Դեհ գառամել եմ, ութսուն ձմեռ ե գլորվել մեջքիցս, հիչողությունս էլ առաջվա նման սուր չի: Եսորվա տեսածը վաղը մոռանում եմ: Ներիր ինձ, վորդիս,— մեղմորեն պատասխանեց Ծերունին: Ցեվ մի բոպե լռելուց ու չունչ առնելուց հետո չարունակեց,— իմ Լուկիայից խաբար չունեմ, տեսել ե՞ս նրան, հիմի վորտե՞ղ ե:

— Լուկիան հիմի գտնվում ե Կավկազակայա կայարանում: Ցես եղպես եմ կարծում: Ցես ինքս Արմավիրից եմ գալիս...

— Պահ, պահ, հեր որհնած, վո՞նց ես անցել սպիտակների պաակից: Լավ վոր գլուխդ չեն կտրել— զարմացավ Ծերունին:

Նա դողդողալով վեր յելավ, հենվեց գավազանին և իր հյուրերին հրավիրեց տուն: Նրա տունը մի փոքրիկ խրճիթ եր, աղքատիկ, անշուք տեսքով: Ծերունին գյուղի ամենաչքավորներից մեկն եր: Շատ քիչ հող ուներ, բայց բավմանդամ ընտանիք: Այդ հողը չեր կարողացել կերակրել նրան և նա, ինչպես նման վորդին, ստիպված եյին մշակ դառնալ ուրիշների մոտ, ու-

բիչների արաը հնձել, սայլը բառնալ ու քշել կամ դյուղական այլ աշխատանքները կատարել: Նրանք միշտ էլ ժժդոհ էլին իրենց կյանքից, վորովհետև միշտ էլ ուրիշներից զրկված էլին ապրել: Այդ պատճառով էլ առում էլին հողատեր և հարուստ դյուղացիներին: Ցերը հեղափոխությունը յեղավ և կարմիրները մտան նրանց դյուղը, նրա վորդին խնդուն անցավ կարմիրների կողմը: Ցեվ այժմ կռվում եր այն վաչառում, ուր դիմում էլին Լյուբչենկոն ու Վասյան:

Ծերունը նրանց առաջնորդեց իրենց սենյակը. Բակում վազվզում էլին կիսամերկ թոռները: Հարսը զործով պնդացել եր դյուղամեջ: Իսկ իր պառավ կինը խոհանոցում ինչ-վոր բան եր յեփում:

— Հիմի դուք ո՞ւր եք գնում,—հարցրեց Ծերունը:

— Ուզում ենք մինչև յերեկո ապատել, իսկ գիշերը ճամբա ընկնել մերոնց մոտ գնալու: Բեզանից չատ բարև կտանենք Լուկիային,— պատասխանեց Լյուբչենկոն...

— Առում են մեր տղերքը ջարդել են սպիտակներին և ես մի քանի օրս կլինեն եատեղ,— ասաց Ծերունին վոգևորված:

Թնդանոթի վորոտները գնալով ատատկանում էլին և թվում եր, թե կռիվը մոտենում է դյուղի շրջակայքին: Ինչպես յերևում եր, սպիտակները նահանջում էլին դեպի Սամավիր: Վասյան վոգևորված եր, նա ուզում եր գնալ դյուղամեջ նոր բան իմանալու, բայց Լյուբչենկոն չթողեց:

— Զուռչ կաց, վորդի, խառն ժամանակ է, կարող ես կորչել,— հորդորեց Ծերունը:

Նրանք թեյ խմեցին և ատատիկ հողնած լինելով պառկեցին քնելու:

Շատ չանցած՝ դյուղի այս ու այն կողմից հրազենի պայթումներ լսվեցին: Հարսը չնչակուր ներս ընկավ:

— Եղ ի՞նչ խաբար է, ինչո՞ւ ես իրար անցել,— հարցրեց Ծերունին:

— Պապի ջան, եվի զալմազալն ընկել է դյուղում: Սպիտակները հարբել են և ընկել են տները, չարչարում, թալանում են,— պատասխանեց հարսը և տեսնելով իրենց սենյակում պառկած ատար մարդկանց՝ չփոթված կանգ առավ:

Ծերունին հայտնեց քնածների ով լինելը: Հարսն ավելի ևս անհանգստացավ և ասաց.

— Պետք է դրանց զարթեցնել ու տանել մի տեղ թաղցնել, թե չե սպիտակները կարող են մեզ մոտ էլ զալ և դրանց նկատել: Կնկատեն ու սրախողող կանեն: Ել վոչ վոք չի կարող եսպիսի խառն ժամանակ ազատել դրանց: Զեն տուր...

Լյուբչենկոն, վոր առհասարակ չուտ եր զարթնում, աչքերը բացեց և վեր թռավ: Ծերունին նրան պատմեց բանի եյությունը:

— Հիմի դյուղամեջ դուրս գալ չի լինի, խիստ վտանգավոր է: Պետք է մեր տանը կամ այգում մի վորևե տեղ թաղնվենք, մինչև վոր տեսնենք ինչ կլինի,— առաջարկեց հարսը:

Լյուբչենկոն վասյային զարթեցրեց և Ծերունի հետ խորհրդակցելով վորոշեցին թաղնվել այգու ծայրին կառուցված մարագում: Իսկ հարսը յերեխաների հետ փոխադրվից հորանց տուն: Այնտեղ համեմատաբար ավելի ապահով եր:

Մարագը մի ընդարձակ ու կիսախարխուլ չենք եր: Առատապղի ղեռանների արանքից խոտի բազմաթիվ չյուղեր եյին կախված: Ներքում չորացած հին խոտի կույտեր եյին և փայտի ու տախտակի կտորներ: Վասյան ու Լյուբչենկոն թաղնվեցին խոտի դեզի մեջ և ընչահեղձ չլինելու համար ամեն մեկը նրանցից մի փոքրիկ անցք եր թողել:

Գյուղում իրարանցումը գնալով ատատկանում եր: Հարբած կոզակները մերկացրած թրերով աներն եյին մտնում և «կազակ-ձեվի մարդիկ» փնտռելու անվան տակ անկարգություններ եյին անում: Ներանցից յերեքը ձիերը քշելով յեկան Ծերունենց տունը: Ձիերը կապեցին բակում և դուացին այնտեղ ծառի տակ նստած Ծերունի վրա.

— Հը՛մ, քավթառ, տղեդ վո՞րտեղ է: Ինչո՞ւ միացավ կարմիրներին: Դու էլ խոմ կարմիր չե՞ս, հը՛: Ուզում ես, վոր ատատակ գլուխդ թրի կերակո՞ւր դարձնենք...

Կիսահարբած կոզակներից մեկը մնաց ձիերի մոտ, իսկ մյուսներն սկսեցին խուզարկել տունը: Ներանք մտան սենյակը, սխտորը, ուշադրությամբ նայեցին չորս կողմը և գտնելով Ծերունին ասին:

— Վեր յել, այ քավթառ, գնա արագ բեր խմենք:...

Ծերունին աղաչական ձայնով հավատացրեց, վոր արագ չուներ: Կոզակները հայհոյելով առաջ գնացին և մարագի կողքից անցնելով մտան այդին: Ներանցից մեկը մարագի դուռը հր-

րեց և պլուխը նեբս կոխելով ուշադրությամբ պիտեց մարագը: Ծառերի արանքում պահված Լյուբչենկի ու Վասյայի մարմինը վշաքաղվեց և նրանք չնչները պահեցին... Անցավ սպասումի ահավոր վայրկյանը... Սև փափախը պլխին դրած կոզակը վոչինչ չհասկացելով դուռը կրկին վրա րերց և դնաց այլին:

Ծառերի մեջ կուչ եկած Վասյան շարժվեց և կամացուկ ասաց.

— Ձես պիտի դուրս դամ այս սարսափելի տեղից, չունչս կտրվում է:

— Ինձ խելքդ չե՞ս թացրել պլխիդ: Դեռ տապ արա, տեսնենք ինչ կլինի սրա վերջը,— պատասխանեց Լյուբչենկան:

— Ախր ես մլած խոտերի ծանր հոտից չշմել և գլուխս, էլ չեմ կարող դիմանալ:

— Գործարանատիրոջ սարսափելի նկուղում կարողացար դիմանալ, ետուդից զժվո՞ւմ ես: Մի՞թե սա նրանից ավելի լավ տեղ չե,— համոզում էր Լյուբչենկան:

Մինչ նրանք խեղդվում եյին մարագի խորքում խոտերի մեջ, կոզակները յեռանդով թափահարում եյին խնձորենիները և պլուղները հավաքելով վերադառնում ձիերի մոտ:

— Ախտոս վոր պատավ ես, ծերուկ: Թե չե վաղուց քեզ ուղարկել եյինք են մյուս աշխարք, հայր Աբրահամի գիրկը,— բացականչեց նրանցից մեկը և հրացանի կոթով պլնդ հարվածեց սենյակի դուռը:

Նրանք հենման ձիերը և արշավելով հեռացան: Ծերունին հանգիստ չունչ քաշեց և վեր կենալով դնաց մարագ:

— Հը, տղերք ջան, վո՞նց եք: Մի փորձանքից ազատվեցինք, տեսնենք հետևյալն ինչ կլինի,—ասաց նա խոտերի միջից դուրս յելնող Լյուբչենկոյին ու Վասյային:

Վասյան յեռանդով թափ եր տալիս չորերը, ծղոտներից մաքրում եր պլուխը:

— Ինչ ուզում է լինի, ախպեր, յես էլ ես սատանի ծոցը չեմ մտնի,— բացականչեց պատանին չարացած:

— Դեռ վո՞րտեղ ես, դեռ վորքա՞ն փորձանքներ պիտի դան մեր պլխին: Սա քաղաքացիական կռիվ է, դասակարգային պայքար: Մինչև վոր մեկը չվոչնչանա, մյուսը չի հաղթանակի: Ինչ հաղթանակելու համար բազմաթիվ զոհեր և արյուն է պետք,— ասաց Լյուբչենկոն:

Լուսերն արդեն նվաղում եյին և մթնում եր որը: Մարագում ավելի յեր կուտակվում աղջամուղջը: Թնդանոթի վորոտները սատկանում եյին և կարծես թե կռիվը մոռենում եր պլուղին: Գյուղի ծայրամասում սկսվեց ուժեղ հրացանաձգություն:

— Ինչպես յերևում է, մերոնք չուռով կմանեն պլուղը, դուսկ և մտել են,— բացականչեց Լյուբչենկան ուրախ ձայնով:

— Արի դուրս դանք: Խնդական և թաղնվենք: Ձես չգիտեի, վոր դու այդքան վախկոտ ես,— ասաց Վասյան:

— Վախկոտության խնդիր չկա, ախպերս: Ամենախիզախ մարդն էլ պետք է պլուշ լինի և աչալուրջ: Ասանց զենքի մենք վոչինչ չենք կարող անել,— հորդորում եր Լյուբչենկոն:

Իսկ ծերունին պահանջում եր, վոր նրանք դեռ սպասեն մթադում:

Գիշերն իր հսկայական մուխ թևով ծածկեց գյուղը: Թընդանոթի վորոտները կամաց-կամաց թուլանում և հեռանում եյին: Դադարեց նաև հրացանաձգությունը: Գյուղն ընկավ խաղաղության մեջ:

Ծերուկի հարսը վերադարձավ հարևանց տնից և հայտնեց, վոր սպիտակները արդեն հեռացել են: Լյուբչենկան ու Վասյան ուրախությունից չգիտեին ինչ անել: Այլևս չհամբերեցին, դուրս յեկան մարագից և բակի դռան արանքից փողոցն եյին պիտում: Այնտեղ վոչ մի սավեր չեր շարժվում: Գյուղացիները փակվել եյին տների մեջ, դռները պլնդ կողպել, ծածկել եյին նաև լուսամուտների փեղկերը:

Պայծառ գիշեր եր: Մոմերի պես պլպլում եյին բյուրավոր աստղերը: Ցերեկն-յերեկն հեռվից վորոտում եր թնդանոթը և կրկին թաղավորում եր համատարած լռություն:

Հարսը հաց ու կերակուր դարսեց սեղանին, վորպեսզի հյուրերը ճաշեն, իսկ ինքը դարձյալ գնաց հորանց տուն նոր լուրեր բերելու: Հորանց տունը գտնվում եր գյուղի կենտրոնում և այնտեղ ավելի հեշտ եր նոր տեղեկություններ իմանալը: Կես գիշերի մոտ գյուղի յերկաթուղային փողոցում բազմաթիվ ձիերի դոփյունները լսվեցին: Ձիավորները կանգ առան գյուղի հրապա-

բակում: Նրանք գալիս էին մոտակա Ալեքսանդրովսկ գյուղաքաղաքից և գնում էին դեպի Պրաչնակոպ:

Հարսը կրկին յեկավ և ուրախությունից վայելում էր նրա գեմքը:

— Աչքներդ լույս, մերոնք արդեն մտել են գյուղը...

Դեռ նա իր խոսքը չվերջացրած, մի ձիավոր սրարշավ մոտեցավ նրանց տանը: Ամբողջ ընտանիքը դուրս թափվեց:

Լուկիան էր... Ամենքը վրա ընկան և պինդ-պինդ համբուրվեցին նրա հետ: Իսկ Ծերունին ուրախությունից արտասվեց: Լուկիան չատ զարմացավ, յերբ Լյուբչենկոյին և Վասյային գըտավ իրենց տանը:

— Պահ, ես ո՞ւմն եմ տեսնում, վորտեղից-վորտեղ: Իսկ մենք ձեզանից ձեռք վերցրել էինք արդեն: Կարծում էինք, վոր դուք այլևս չկաք, դոյություն չունեք...

— Իսկ հայրի՞կս: Արդյոք նա էլ յեկել էլ ձեզ հետ,—հարցրեց Վանյան անհամբերությամբ:

Լուկիան մի վայրկյան տատանվեց և պատասխանեց չվոթված ձայնով.

— Ձո հայրը, սիրելիս, մեծ քաջություններ գործեց...

Հետո էլ չկարողացավ շարունակել: Լյուբչենկոն խնդրեց Լուկիայի խոսքերի իմաստը և տխրեց: Իսկ Վասյան համառորեն նայում էր Լուկիային և պատասխանի սպասում:

— Ճիշտն ասած՝ վերջին որը հայրիկիդ չտեսա: Դե նա կըռվում էր հետևակում, իսկ մեր հեծելազորը հեռու յեր գտնվում նրանց վրաչից:

Վասյան նայեց Լյուբչենկոյին և նրա գեմքի կնճռոտված ըզծերի մեջ կարդաց ինչ-վոր բան... Հետո դուրս յեկավ բակից և արագորեն վազեց դեպի գյուղամեջ, գյուղը գրաված կարմիր հեծելազորների մոտ.

— Ինձ տղան մնաց բոլորովին վորը,—հառաչեց Լուկիան:

— Վորտե՞ղ սպանվեց Իվանովը,—հարցրեց Լյուբչենկոն:

— Կավկազսկայա կայարանի տակ յերկու որ առաջ մենք ուշնեցանք վճռական ճակատամարտ: Սպիտակները չդիմացան և նահանջեցին: Իվանովն իր ջոկատով հրաշքներ գործեց, գոհելով իր կյանքը:

— Հեղափոխությունը յերբեք չի մոռանա նրան, այդ քաջ, անձնուրաց մարտիկին: Լավ է, վոր նա այնպիսի տղա յե թողել, վոր կարող է բռնել նրա տեղը: Իրեն պես հերոս, անձնուրաց,— ասաց Լյուբչենկոն:

Մինչդեռ Լուկիան իր ընտանիքով չրջապատված ուրախությամբ ըրույց էր անում, Լյուբչենկոն գնաց գյուղամեջ Վասյային գտնելու:

Լյուբչենկոն հարազատ յեղբոր պես սիրում էր Վասյային և պատրաստ էր ամեն կերպ ոգնել, մխիթարել նրան:

Մոտենալով գյուղում հանգստացող կարմիր հեծելազորներին՝ Վասյան հարցրեց Իվանովի մասին:

— Իվանո՞վ,— բացականչեց մարտիկներից մեկը:

— Այո, ջոկատապետ Իվանովը:

— Եղ քո ասած մարդը կարծեմ էլ չի գտնվում ես աշխարհում: Նա իր հաշիվները յերկու որ առաջ մաքրեց,— մրմնջաց մի ուրիշ հեծյալ:

Վասյան հանկացավ ամեն ինչ և սկսեց դառնորեն հեկեկալ: Ռազմիկները դադարվեցին:

— Իվանովը քո ի՞նչն է, այ բալամ,— հարցրեց նրանցից մեկը և դորովանքով չոյեց պատանու գանգրահեր գլուխը:

— Հայրս է,— մրմնջաց դառնորեն արտասվող Վասյան:

Գատանուն չորս կողմից չրջապատեցին և մխիթարեցին, բայց նա դառնորեն արտասվում էր

Ցեկավ Լյուբչենկոն և Վասյային մի կողմ տանելով ասաց.

— Սմոթի է, Վա՛սյա, այդպես արտասվել կարմիր ռազմիկների չրջանում: Դրանով դու կորցնում ես քո արժանավորությունը: Քո սքանչելի հորը յես էլ եյի չատ սիրում ու հարգում, բայց ինչ արած, հեղափոխության համար զոհեր են պետք և նա զարձավ հերոսաբար ընկած զոհերից մեկը: Թող նրա մահը կրկնապատկի ու յեռապատկի մեր յեռանդն ու կամքը պայքարի և հաղթանակի համար...

11.

Հինգ ամսից ավելի յեր, ինչ Արմավիրի տակ տեղի եյին ունենում կատաղի կռիվներ: Կարմիր բանակի զորամասերը յերկու կողմից մոտեցել եյին քաղաքին, մի քանի անգամ հաջողվել էր մտնել քաղաքը, բայց սպիտակներն ուժանդակ ուժ ստանալով

կրկին չեռ էին մղել նրանց: Սպիտակները ամեն կերպ աշխատում էին երենց ձեռքը պահել կայարանը, որպես հանդուցյալին կարևոր կետ, որպեսզի պահպանեն երենց նահանջի ղիծը:

Վասյան մտել էր №... վաշտը որպես կարմիր բանակային: Նրա հետ նույն ջոկատում կռվում էր նաև Լյուբչենկոն: Նրանք չարունակ միասին էին և կարծես թե երենց կյանքը կապել էին միմյանց: Սվինամարտ դնալիս նրանք աչալուրջ հսկում էին, որպեսզի թշնամին երենցից մեկին ավելի հասկ չանի: Վասյան կռվում էր մեծ կատաղությամբ և ապամի պաշտում խիտոխ էր ու ճարպիկ: Վաշտում նրա անունը կնքեցին «Արծվի ճուտ» և այդպես էլ մնաց նրա անունը:

Կռիվները տեղի էին ունենում գլխավորապես կայարանի շրջակայքում կամ կուրան դեպի յերկրքին: Սպիտակները ամեն գնով աշխատում էին դեպի Մոսկվա–Տուապսե–Նովորոսիյսկ նահանջի ղիծը պահպանել: Դրա համար էլ այդ ճակատամասի կռիվները յերկարատև էին ու կատաղի:

Յերբ №... վաշտը գիմում էր հարձակման, Լյուբչենկոն ձեռք էր առնում Վասյային և ժպտալով ասում.

— Զգո՛ւշ կաց, ա՛յ բալամ, գլուխդ պահպանիր, մոր ես և չուտով կատյուշայիդ կտեսնես...

Վասյան ծիծաղում էր և նրա սրտում խլրտում էր մի անորոշ զգացմունք, Սակայն հանկարծ պատանին լրջանում էր, գլուխը հենում էր հրացանի կոթին և աչքերը հառում հանդիպակաց հողաթմբերին, որոնց հետևում թաղնվել էր թշնամին համառ և սպառնալի: Հետո այդ աչքերին պատկերանում էր փոքրիկ քաղաքը մշուշի մեջ կորած: Այն քաղաքը, որ զարձել էր յերկար ամիսների արյունոտ կռվածադիկը:

— Հե՛յ, Արծվի ճուտ, որ՞նց ես: Հերսս հոր արժանավոր պատիվ, վամփուշտներդ խոմ չե՞ն սպառվել,—կատակով բացականչում էր վաշտապետը, յերբ կռացած անցնում էր խրամատների միջով:

— Արծվի ճուտի հրացանը այնքան է տաքացել, որ չուտով կպատի: Կրակելու մեջ արդեն ռեկորդ է խփում Արծվի ճուտը,— պատասխանում էր Լյուբչենկոն:

Հերավի, Վասյան կրակելուց չեր կշտանում: Փամփուշտները վառում էր իրար հետևից և չափազանց ուրախանում էր, յերբ իր սուր աչքերով նկատում էր, թե ինչպես իր դնդակները ընկնում էին թշնամու խրամատները մոտ և նրանց հարվածից հոպի կտորներ կամ հողով նկատելի փոշի յեր բարձրանում:

Ժամանց ցուրտ օրերին, յերբ յերկիրը ծածկվեց ձյունով ու սառնամանիքով, նրանք չեյին հեռանում խրամատներից: Շինելների և մուշտակների մեջ կոլոլված՝ նրանք կռվում էին և աչալուրջ հսկում: Վասյան ականջները քաչում էր չինելի ոճիքի մեջ և միայն աչքերն էր թողնում ազատ՝ թշնամու դիրքերը հսկելու: Վոռներով դուրս էր հողը, որպեսզի չմրան: Իսկ շուրջը համատարած սպիտակություն, որի մեջ կուրանի կիսատաշած ջրերը հոսում էին կապույտ յերիզի պես:

Վաշտապետը խղճում էր Վասյային, վախենում էր, որ պատանին մրսի, ցրտահար լինի:

— Եղ Արծվի ճուտին ուղարկեցեք թիկունք, թող հանգըստանա: Մեղք է, կարող է սառել,— ասում էր նա ջոկատապետին:

Ջոկատապետն ուսերը թափ էր տալիս և պատասխանում.

— Ո՛չ, նա իսկապես Արծվի ճուտ է: Վոչ մի ուժ նրան չի կարող հեռացնել դիրքերից, դուրս քաշել խրամատից:

Վասյան դիմացավ ցրտին ու բքին, սառնաշունչ քամիներին, խոնավ ու թաց հողախորշին: Նա դիմացավ նաև թշնամու արյունախանձ դնդակներին: Բացվեց յերկնքի դեմքը և քաղցրացավ նրա աչքը: Ձյունը հալվեց, հողը ծծեց նրան, մի մասն էլ դուրըշխացավ: Գետի ջրերը պատռեցին իրենց սառցե կամարները և վարարեցին: Հողի սպիտակ ղեկտրը նախ սեվացավ, ապա դարձավ կանաչագեղ: Վասյայի դեմքն էլ պայծառացավ, աչքերի մեջ արտացոլում էր յերկնքի չինչ կապույտը, կանաչող ու ծաղկող բնության խինդը: Հողն այլևս խոնավ ու ուռած չեր, նրա կուրծքը շնչում էր արևի ջերմությամբ և վառ այան աթորժակով էր պատկում նրա վրա: Պատկում էր նրա կրծքին և ունկնդրում նրա մեջ յեռացող կյանքը: Բայց նրա հողին պղտորում էին հրացանների անվերջ ճարճատյունները, սիրտը թնդում էր դնդացիրների կրակոցներից կամ նրանց դլխավերև թռնավոր ոճի պես ֆշշացող թնդանոթի արկերից: Հողնել էր: Յե՞րբ պիտի վերջանա այս խրամատային կռիվը, յե՞րբ պիտի դուրս յելնեն հողախորշերից...

— Յես ճանճրացա արդեն ես խլուրդային տուբ ու դմփոցից, համբերություն հատնում է,— դանդատվում էր Վասյան:

— Համբերությունն էլ մի ժլատին տեխնիկա է, որին սեռք է տիրապետեն մարդիկ: Ցերբեմն վրա տալն է լավ տեխնիկան, յերբեմն էլ համբերելը: Նայած թե յերբ և ինչպես,— պատասխանում էր Լյուբչենկոն փիլիսոփայի տեսք ընդունելով:

— Ցես դերազատում եմ վրա տալը: Թող միանգամից և վճռական հարվածից վորոշվի կռվի յելքը...

Վասյան ուզում էր, վոր հրաման տրվի միանգամից արշավել քաղաքի վրա: Իսկ քաղաքն այնքան մոտ էր, վոր պարզ յերեվում էին նրա չենքերն ու կատուրները: Ներանք հետզհետե, նորանոր դիրքեր էին դրավում և քայլ առ քայլ առաջ չարժվում:

Արյունահեղ կռիվը մղվում էր ամեն մի վերչակի, յուրաքանչյուր թիզ հողի համար: Շատ արյուն թափվեց այնտեղ, բազմաթիվ կյանքեր զոհվեցին, բայց յելի քաղաքը մնում էր անձեռնմխելի: Վասյան հոդաթմբի արանքից տեսնում էր քաղաքի ցորչ զանգվածը և ատամիկ ջղայնանում էր, վոր չեն կարողանում վերջնականապես պատռել թշնամու չղթան, ջախջախել նրա վերջին բեկորները:

12.

Վաղ առավոտից թնդանոթները ատամկորեն վորոտում էին ղեռեզերյա հոդաթմբերից: Կարմիրներն ոժանդակ ուժեր ստանալով՝ ընդհանուր հարձակման էին պատրաստվում:

Վասյան չափազանց աշխուժացել էր: Գիշերը նա հանգիստ քնել էր թիկունքում, վրանի տակ և կայտառ էր զգում իրեն: Ցերր լուսաբացին իրենց վաշտը դիշերային հանգստից հետո կրկին տեղավորվեց առաջավոր դիրքերում, Լյուբչենկոն ու Վասյան կողք-կողքի պառկեցին խրամատում և նայեցին վազղոզան մշուշով ծածկված թշնամու դիրքերին ու քաղաքին:

Ամառվա առավոտը բացվեց և լուսերը պայծառորեն ընկան յերկրի վրա: Մշուշը ցրվեց քաղաքի վրայից և կատուրների թիթեղները պսպղացին: Հորիզոնի կողմը կարմիր գույա վառվեց և ծագող արևի ցոլքերը վոդոդեցին հարթավայրը:

Թնդանոթները թնդում էին ահասարսուռ: Հետո դնդացիրներն սկսեցին ակտիվ և հրաբորբ դնդակներ չաղել թշնամու դիրքերի վրա:

— Ե՛, Արծվի ճուտ, ավելի պատրաստ պահիր, հիմի պետք է առաջ չարժվենք,— բացականչեց Լյուբչենկոն:

— Ես անգամ մենք կմտնենք քաղաք: Թե չե, ախպերս, ես յերկար ու բարակ տուր ու դժվոցից գնաց,— պատասխանեց Վասյան աչխուժացած:

Վաշտապետի ձայնը դուրս խրամատների չչխկոցի միջից հրացանները ձեռներին դուրս սողացին մարտիկները: Լյուբչենկոն պառկեց հողաթմբի վրա և փորող տալով առաջ չարժվեց: Նրա նիհարած դեղնավուն դեմքը ամբողջովին լրջություն էր դարձել, իսկ աչքերն անթարթ հառել էին մի կետի: Նա տեսավ, թե ինչպես իր կողքին խլրտաց Վասյան և կուզիկուզ առաջ գնաց: Կարծես թե ուզում էր ամենից շուտ հասնել հանդիպակաց կետը...

— Հե՛յ, Արծվի ճուտ, զգուշ կաց, հա՛: Սա կռիվ է, հասարանիք չէ: Ետեղ չեն պարում, այլ աչխատում են զգուշ պահել, տակառվ կռվել: Գեղ մի կորցնի, պատկե՛ր,— հորդորում էր Լյուբչենկոն:

Բայց Վասյան անզուսպ կեցցով առաջ էր նետվում մինամարաթ յելնող ցուլի պես:

Պատկե՛ր, ե՛յ,— գոռաց մի ուրիշ ձայն:

Վասյան նայեց ձայնի կողմը, կողքին հողի վրա պսպղում էր մի սվին և մի զույգ զարմացած աչք նայում էին իրեն: Թշնամին դնդակների կարկուտ թափեց: Ողը չխկացավ և լցվեց աուբացող դնդակների մահաբեր բզզոցով: Վասյան պառկեց հողին, գարձավ նրան հավատար և սկսեց անխնա կրակել:

Թնդանոթներն ու դնդացիրները ավերում էին թշնամու դիրքերը: Քանդված հողը ցրիվ էր գալիս և ողը ծածկում փոշու ամպով: Վասյան ու Լյուբչենկոն չարունակ կրակում էին և փորող տալով դանդաղորեն առաջ չարժվում: Ահա նրանք հասան թշնամու հողաթմբերին և յերկու կողմից, կարծես թե դեռնի տակից, ցատկեցին ավլնավոր մարդիկ և խոյացան մեքյանց վրա: Աբյունոտ և ահավոր ավլնամարտ...

Ինչ-վոր տարերային սոսկալի ուժից Վասյայի մարմնի մկանները պրկվեցին, կրծքում բորբոքվեց բարկության և ատելության կրակը, աչքերը կատաղորեն վառվեցին... Նրա հրացա-

նը պայթեց և նա տեսավ, թե ինչպես հակառակորդի խրամատից հենց նոր դուրս չեկած և իրեն վրա հարձակվող ավիատակ գինվորը հրացանը դցեց, դոռաց, յերկու ձեռքով բռնեց փորը, դիվահարի պես աչքերը չռեց և տապալվեց հողաթմբի վրա...

Շուռ գալով՝ Վասյան սարսափով տեսավ, թե ինչպես սպայական համազգեստով մի չիկահեր յերիտասարդ թուրը բարձրացրել— փորձում եր հարվածել, կիսել Լյուբչենկոյի ուսը... Իսկ Լյուբչենկոն հարվածում եր մի ուրիշ ավիատակ գինվորականի: Մի ակնթարթում Վասյան ավլինը աստակորեն խրեց չիկահեր սպայի կողը... Սպան դողդողաց, թուրն ընկավ ձեռքից, չոքեց, ճանկռեց հողը և յերեսն ի վար տապալվեց դեսին: Յերբ Վասյան արյունոտ ավլինը դուրս քաշեց անշնչացած սպայի կողից, նայեց նրա դեմքին, ծիծաղեց մահասարսուռ ծիծաղով և ինքնիրեն ասաց.

«Դա Կատյուշայի յեղբայրն է, զործարանատիրոջ վորդին... Մի ժամանակ նա ուզում եր ինձ իրենց տարտափելի նկուղում վողջ-վողջ թաղել, այժմ էլ Լյուբչենկոյի կյանքին եր սպառնում, վայ չանվորդին...»:

Ապա չուրջը նայեց և տեսավ, թե ինչպես ավիատակները չըդիմանալով ավինամարտին, փախչում էին դվնակորուստ ու անկարգ: Իր հաշվինները մաքրելով ավիատակ գինվորների հետ՝ Լյուբչենկոն մոտ յեկավ և ասաց.

— Կեցցես, այ ազա, դու ինձ մահից փրկեցիր: Ամբողջ կյանքումս պարտական կմնամ քեզ...

Ճեղ պինդ գրկելով Վասյային համբուրեց:

— Ճառ ասելու ժամանակ չէ: Մերոնք արդեն առաջ են անցել, պետք է չտապել,—բացականչեց Վասյան և հրացանը ձեռքում աղմած առաջ անցավ:

Նրա ուժերը կրկնապատկվել, քառապատկվել էին: Շեշտակի հարվածի և հաղթանակի գիտակցությամբ ալրած՝ վազում եր նա հողին լցված հերոսության ու խիզախության անդուսդ կրակով...

— Եյ, Արծվի ճուտ, քեզ չատ առաջ մի' դցի, վախչող թշնամու վերջին գնդակները կարող են ծակծկել քեզ,—գոչում եյին ընկերներն ամեն ու ամեն կողմից:

Բայց Վասյան առաջ եր գնում չարունակ կրակելով, հաջողությունից խելահեղ, աչքերի մեջ բռնորագույն վայլ...

Սկա և քաղաքը: Յերևացին նրա ծայրամասի սպիտակ մեհարկ տները: Կատուների վրա պսպղում եյին արևի վոսկեվառ ցոլքերը:

Սպիտակներն չտապով թողին քաղաքը և հանգնցին հակառակ ուղղությամբ:

Հետևյալ որը քաղաքն ամբողջությամբ կարմիրների ձեռքին եր...

13.

Վասյան գնաց զործարանատեր Ռոսիչևի տունը: Նա ուզում եր տեսնել Կատյուշային:

Ինչ-վոր անհամբերություն և անհանգստություն սեղմում եյին նրա սիրտը: Արդյոք ինչպե՞ս պիտի հանդիպեր իրեն Կատյուշան: Արդյոք դարձյալ սպիտակ չընդունելու հագին, նույն պայծառ աղջի՞կն եր Կատյուշան...

Ճանապարհին նա Լյուբչենկոյին խնդրեց, վորպեսզի Կատյուշային չհայտնի յեղբոր սպանության մասին:

— Թող նա չիմանա, վոր մեր ձեռքը բարձրացել է յեղբոր վրա: Թող Կատյուշան չիմանա այդ...

— Ինչպես տեսնում եմ, դու թունդ սիրահարվել ես եպ աղջկան: Տեսնենք ինչպիսին է քո Կատյուշան,—ասում եր Լյուբչենկոն ժպտալով:

Գործարանատիրոջ տունը փողոցի կողմից ամուր փակված եր: Նրանք հարևան տան բակից մտան պարտեզը: Նույն գեղեցիկ ծառուղիները, ծաղիկները և կանաչ պուրակները: Շատրվանից ղղղալով թափվում եր ջուրը և ավարտնում մեղմաբեն սահում եր կարասը:

— Այ քեզ աքանչելի տեղ: Սկա թե ինչպիսի հարմարություններ և յերջանիկ կյանք եյին ստեղծել իրենց համար մեր լուրժուները,—բացականչեց Լյուբչենկոն:

Մուտքի դուռը բաց եր: Նրանք նեցա մտան սրահը և անտեղից բակը: Վոչ վոք չեր յերևում: Սենյակների դռները պինդ փակված եյին: Նրանք յերկար բաղխեցին բնակարանի մուտքի դուռը, բայց վոչ վոք չբացեց: Պահակը նստել եր իր փոքրիկ

ռենյակում, թախտի վրա և ձեռքը յերեսին՝ ընկել եր կաթծեռ մտածմունքի մեջ: Նա աչքերն ուղղեց ներս մտնողներին, ինչ-վոր բան մրթմրթաց, հայհոյեց քիի տակ, բայց տեղիցը չշարժվեց:

— Հարբած է յերևում,— ասաց Լյուբչենկոն:

Վասյան մոտ յեկավ և սկսեց հարցեր տալ: Պահակը չճանաչեց Վասյային և նրա հարցերին կիսատ-պռատ պատասխաններ եր տալիս:

— Ո՞ւր է քո ապան,— հարցրեց Վասյան:

— Աղան անցյալ տարի իր հողին ուղարկեց ատամանների մոտ: Ես աշխարքումը չի: Յերեք դնաք են մյուս աշխարք, կը-դառնեք նրան,— պատասխանեց պահակը:

— Իսկ աղչայի ընտանի՞քը:

— Սպաղ ունե՞ս, արագ տուր կասեմ թե վորտեղ և աղչայի ընտանիքը:

— Դու ասա, յես քեզ ընտիր արագով կպատավեմ,—ասաց Վասյան:

— Հը՛մ, սատանի ճուտ, խաբում ես: Շատ ոչինչարժեն ես յերեվում, սատանի ճուտ:

Վասյան ու Լյուբչենկոն հավատացրին, վոր անպայման արագով կպատավեն նրան:

— Եխ, դուք լիժի ծնունդները, անհավատներ: Յես բոլշևիկներին լավ դիտեմ: Ներանցից ոգուտ չկա, տուն քանդողներ են նրանք,— վնթփնթաց պահակը:

Վասյան համբերությունից դեյավ, ջղայնացավ:

— Ասա՛, ա՛յ ծերուկ, վորտեղ է կատյուշան, ասա թե չե դլուխդ նապանիս դնդակով ցրիվ կտամ:

— Հը՛մ, հիմի դլխի ընկա: Դու են սատանի ճաղն ես, բոլշևիկի ճուտը, վոր ծլվլեցիր մեր նկուղից: Ափսոս, վոր սազ պրծար ձեռքիցս: Պետք եր քեզ կենդանի չթողնել, վոր ելի չդայիր ու կեղտոտեիր մեր տունը, եխ...

Վասյան պատյանից հանեց նապանը և մոտեցրեց պահակի ճակատին:

— Կասե՞ս, թե կատյուշան վորտեղ է...

Պահակը սարսափից դողդողաց և պատասխանեց.

— Ներանք փախան արտասահման, կատյուշան էլ դնաց...

Վասյան ատրճանակը կրկին տեղավորեց պատյանում: Կար-ծես թե սառը ջուր ցանեցին նրա վրա: Մի պահ քարացած մնաց միևնույն տեղում:

— Գնանք ախպեր, սա մեր տեղը չի,— առաջարկեց Լյուբչենկոն և նրանք դուրս յեկան պահակի սենյակից:

Պատանին դլխիկոր հետևեց նրան: Նա խիստ ճնշված եր: Նկատելի միջանցքից անցնելիս, Վասյան քարե ատաձաններից իջավ և դուռը հրելով, ցույց տվեց մութ նկուղը:

— Ահա այստեղ եյին բանտարկել ինձ:

Լյուբչենկոն ներս նայեց և դլուխը շարժելով պատասխանեց,

— Լավ վոր կենդանի ազատվել ես ես սարսափելի վոճրից:

Յերբ նրանք կրկին անցան պահակի սենյակի մոտից, Վասյան կանգ առավ և անսովոր կատաղությունից փայլեցին նրա աչքերը:

— Ներս չմանե՞մ, չսատկեցնե՞մ եղ քավկասին:

Լյուբչենկոն նրա թևից ուժգնորեն քաշեց և ասաց.

— Բան չունես, ձեռդդ մի թաթախի նրա արյան մեջ: Թող իր համար ապրի եղ ծերուկը: Կյանքը կփոխվի, կփոխվին նաև մարդիկ: Թող ապրի և ղղջա իր դործած սխալը:

Նրանք կրկին մտան սարատով և քայլեցին ծաղիկների և կանաչների միջով: Վասյայի տրամադրությունը խիստ ընկած եր:

№... վաշտը վերակառուցման յենթարկվեց: Թաղմական փայլուն պատրաստության և աչքի ընկնող աշխատանքի համար վաշտապետին նշանակեցին դումարտակի հրամանատար: Վասյան մնաց այդ դումարտակում վորպես առաջավոր մարտիկ, իսկ Լյուբչենկոյին դանազան տեխնիկական աշխատանքների համար ժամանակավորապես թողին քաղաքում:

Մարտական այդ նախապատրաստությունից հետո, Վասյայի դումարտակը հրաման ստացավ արշավելու դեպի Հանքային Ջրերը և այնտեղից Վլադիկավկազ: Արշավանքից առաջ Վասյան վորոշեց կրկին այցելել դործարանատիրոջ տունը: Դործարանատիրոջ տան դուռն ու լուսամուտները բաց եյին: Ներսում մեծ փոփոխություն եր կատարվել: Շատով մաքրում եյին սենյակների հատակները, յերկաթյա վոքրիկ մահճակալներ եյին դասավորում, բազմաթիվ աթոռներ և սեղաններ եյին բերել, իսկ դործարանատիրոջ կահկարասիքը վոխադրել եյին ուրիշ տեղ:

Նոր մարդիկ էին այնտեղ աշխատում, զվարճալիս կանայք: Իսկ պահակը վոտքով-գլխով անհայտացել էր:

— Այստեղ պետք է դառնա մանկատուն,—բացատրեց աշխատողներից մեկը:

«Հիանալի ծրագիրը: Ավելի հարմար կացարան մանկատան համար հազիվ թե ճարվեր քաղաքում»—մտածեց Վասյան և դոհ սրտով վերադարձավ իր դումարտակը:

14.

Ինչպես վոր փոթորկված ծովը մռնչալով զուրս է գալիս իր ափերից, խորտակում և ամբարտակները, վարարած ջրերը հեղեղում են ամբողջ շրջակայքը և անհնարին է կասեցնել նրանց թափը ու դիմադրավել, այնպես էլ դժվար է զսպել ժողովրդական մասսաների ցասումը:

Դարերով կուտակված անհուն ատելության և զայրույթի բռնկումով աշխատավոր ժողովրդի զավակները սկսում էին առաջ հաղթելու և նորանոր հողամասեր նվաճելու վճռակամությամբ:

Կարմիր բանակի №... դումարտակն արշավում էր դեպի Հանքային Ջրերը: Ոգնի դաշտում կուվված յուրաքանչյուր մարտիկի հոգին լցված էր պայքարելու և հաղթելու բուռն տենչանքով: Նրանք վստահ էին իրենց ուժին և գնում էին բարձր տրամադրությամբ:

Վասյան հազել էր զինվորական հոդատուն բաճկոնակ: Ա՛չ թևին աչքի էր ընկնում կարմիր ժապավենը: Փոքրիկ, սև վախտի տակ պսպղում էին նրա կապույտ աչքերը: Վոտներին սև կոշիկներ ուներ, իսկ շալվարի ծայրերն ամփոփել էր գուլպաների մեջ: Նրա կողքին չարունակ հսկում էր նռգանը, իսկ ուսից կախված էր կարճլիկ կարաբինը:

Դումարտակի հրամանատարը առանձնապես սիրում էր Վասյային, և վերջինս ազատ չէր ու մուտ ուներ նրա մոտ: Ճերը մի վորևե տեղ ուղարկելու կամ հանձնարարություն տալու խնդիր էր ծագում, դումարտակի հրամանատարը կարզադրում էր.

— Արծվի ճուտին ուղարկեցեք, նա չուտուլիկ է, կրակի պես տեղ կհասնի...

Վասյան համարյա թե էլ չէր հիշում կատյուշային:

«Եվ էլ մի բան էր լինելու ու անցավ...». մտածում էր նա և այդպես փակում այդ պատմությունը: Ասենք նա ժամանակ չուներ զբաղվելու նման հարցերով: Դումարտակի հաղթական առաջընթացը, կարմիր բանակայինների ուրախ կատակները, նորանոր հողամասերի ու գյուղերի զբավումը ամբողջովին կլանում էին նրա ուշադրությունը: Բայց և այնպես նա հաճախ մտաբերում էր իր հորը և խորը ցավ զգում, վոր նա չկա իրենց հետ...

Լայնածիր հարթավայրի հորիզոնի վրա պատկերվեցին կապույտ մշուշով պարուրված լեռների բարձունքները: Աստիճանաբար փոխվում էր շրջակայքի տեսքը: Կանաչ թմբեր, հետո հողաբլուրներ, ապա հետզհետե ու մոտավոր բարձրություններ երևացին: Սմառվա տոթը կամաց-կամաց մեղմանում էր: Հեռատեսության կապույտ մշուշում ծածկված կովկասյան լեռներից փչող սառնորակ հովն էր, վոր այդպես զովացնում էր շրջակայքը:

Ճանապարհի յերկու կողմը փռված էին արտերը ցորենի վոսկեծածան հասկերով: Արևի պայծառ ճառագայթների տակ պսպղում էին նրանց չինվող գլուխները: Դաշտերի մի մասը հովիվների հետևանքով մնացել էր խոպան:

Դեռ նոր էր լույսը բացվում, յերբ նրանց դումարտակը հասավ Հանքային Ջրերը և դիրքեր գրավեց նրա շրջակայքում: Դումարտակի առաջավոր եշելոնը շարժվեց դեպի Պյատիգորսկ: Այդ շրջանում նահանջող սպիտակների մնացորդները կրակ բացին գնացքի վրա: Կարմիր մարտիկները վագոններից իջան և դիրքեր գրավելով սկսեցին կռվել: Սպիտակները կրակելով քաշվում էին դեպի մոտակա անտառները: Վասյան պատվեց մի հողաթմբի վրա և սկսեց կրակել: Նա տեսնում էր, թե ինչպես սպիտակները վախչում էին անտառի ուղղությամբ: Չհամբերեց, առաջ գցեց իրեն:

— Եյ, Արծվի ճուտ, ո՞ւր ես գնում, չարքից դուրս մի՛ ընկնի, թե չե քեզ կպատկն,— դոչաց Ջոկատապետը:

Բայց Վասյայի աչքին խառնվել էր ամեն ինչ և նա կրակում էր, չնկատելով դնդակները: Կարծես թե հաճույք էր գտնում այդ կրակոցից, կարծես թե այդ վայրենի վագոններն ու ճիչերը ուրախացնում, հաճույք էին պատճառում նրան: Սպիտակների մնացորդները ցած ու ցրիվ եղած պահվեցին անտառներում:

վասյան չոչափում եր հրացանի տաքացած փողը և նրա կամբած դեմքին փայլում եր լինչ վոր ժպիտ:

Առավոտը բացվել եր արդեն: Ծառերի վրա տակավին պլպլզում եր ցողը: Ծառերի արանքից լսվում եյին կրակոցները: Հանկարծ լինչ-վոր բան ծանրացավ Վասյայի աչ ուսին և ամուեղ ուռը ծակոց ղղաց: Նա դեմց հրացանը և բռնեց ուռը, ձեռքին դղաց մի տաք և լպրծուն բան... Կապարյա մի ծանրություն սեղմեց նրան, և Վասյան նստեց խոտերի վրա: Նա խոր ռնքաց և դեմքն տատյալ քաթանի դույն: Նա լսեց, թե ինչպես մի խուլ ձայն կանչեց,

— Արծվի ճուտին վիրավորեցին ըները...

Հետո խիստ թուլություն ղղաց վոտների մեջ: Գլուխն իջավ դեսին և ուշաթափվեց...

Նա աչքերը բացեց հիվանդանոցում: Աչ ուսը փաթաթել եյին վիրակապերով և խիստ ռնքում եր ցավից: Նրա աչքերը մի պահ նայեցին չուրջը: Ընդարձակ, լուսավոր սենյակ, յերկու կողմից երար կողքի մահճակալներ եյին չարված, վորոնց վրա պառկել եյին վիրավորներ և մարմնի զանազան մասերում ալրված կամ ջարդված ունեցող հիվանդներ: Հետո նրա հայացքը կենտրոնացավ սպիտակների առաստաղի մի կետի և մի քանի րոպե մնաց այդպես: Ապա առաստաղեն ռնքաց և աչքերն իջեցնելով առաստաղից՝ սխուր նայեց իր կուրծքը ծածկող ճերմակ վերմակին: Նրա աչքերը կարծես թե հանդուստացան: Նրան չատ դուր յեկավ ամառային թեթև վերմակի այդ դույնը:

Սպիտակ խալաթ հագած բարձրահասակ բժիշկը նեղա մոտավ: Նրա դեմքից առողջություն և աշխուժություն եր կաթում: Դա այն մարդն եր, վոր վիրաբուժական սեղանի վրա նշաարի ուռը ծայրով անինա վորփորում եր վերքը: Յեվ Վասյան մեծ հուզմունքով ու ջղայնությամբ եր նայում այդ կենսուրախ մարդու ամուր թևերին և առողջ դեմքին...

Բժիշկը հեռվից նայեց հիվանդներին և ժպտալով մոտեցավ իրեն:

— Հը, յերիտասարդ ընկեր, վո՞նց ես: Թեև պնդակը լավ և խայթել քո ուռը, բայց վնաս չունի: Մենք քեզ չուտ կուղարկենք տուն,— ասաց բժիշկը և նայելով մահճակալի ծայրից կախած պեղնախուն թղթին՝ չարունակեց,— Ջերմությունդ արդեն իջնում ե: Իզուր չե, վոր քո ընկերները քեզ «Արծվի ճուտ» են անվանում:

Վասյայի դեմքին մի թեթև ժպիտ խաղաց: Նա ուղեց ինչ-վոր բան ասել, բայց բժիշկը դնաց մյուս հիվանդի մոտ:

Այդու վրա բացվող ընդարձակ լուսամուտից իր մահճակալին ընկած արևի պայծառ ճառագայթը և ջերմ, ախորժելի չոյանքով ղղվեց նրան: Յերկար-յերկար նայում եր նա լուսամուտից պատկերավոր կապույտ յերկնքին, աչքը չոյող կանաչազարդ ծառերին և վերհիշում մտիկ անցյալը, իրենց հաղթական արշավը, արյունալի կռիվները, թնդանոթների վորոտը և կատաղի պրոհը:

«Արդյոք հիմա վորտե՞ղ և հասել իրենց դումարտակը: Արդյոք սպիտակները դլխովին կոտրո՞ն, անձնատուր յեղան, թե չարունակում են կռվելով նահանջել: Ինչ ուզում և լինի, մեծ նույն է, նրանց յերզը յերգված և արդեն: Ժողովուրդը նրանց չի սիրում, չի հավատում, նրանց յետևից չի դնում, չի աջակցում: Նրանց տեղ չկա մեր աշխարքում:

Գիշերը նա բավականին քնեց, ուստ առաջվա պես առատկրեն չեր տնքում: Այժմ նա կարողանում եր դիտել չուրջը և վոչել սենյակում պառկած հիվանդների դեմքերը: Նրանք բոլորն էլ յերիտասարդներ եյին, բացի անկյունում պառկած յերկու հիվանդից, վորոնց մաղերին ճյունը յերեի արդեն նստել եր վաղուց:

Վասյան նայեց հարևան մահճակալի կողքին կանդնած խիստ ջահել խաբատյաչահեր հիվանդապահուհուն: Նրա նուրբ սպիտակ դեմքը պայծառորեն արտացոլում եր սենյակը վողողող առաջ լույսը: Կարծես թե Վասյան աչխուժացավ նայելով ճերմակ թռչունի պես մահճակալի կողքին կանդնած այդ կենսավատ աղջկան: Հետո նայեց այդին, նրա պուրակների և ծառուղիների միջով մարդիկ եյին դնում-դալիս: Կյանքը չարժվում եր այնտեղ կենսաթրթիռ, ծաղիկները ժպտում եյին և այնպես ախորժելի արև կար այնտեղ:

Յերանի թե Վասյան առողջ լիներ և քայլեր այդ կանաչ ծառուղիներով:

«Ինչի նման եր ինքն այդպես պառկած, ինչպես նաև մյուս հիվանդները: Այդպես թույլ անկյանք ու սխուր: Յերանի չուտ դուրս դամ այս թախծոտ չրջապատից...»

Այսպես եր մտածում Վասյան։ Հետո նա լսեց հիվանդներից մի քանիսի տնքոցները, կարծես թե մոլթում եյին նրանց։ Կարծես թե ինքն ել վարակվեց այդ տնքոցներից և մի քանի անգամ խորը հառաչեց։ Նա զգաց, վոր իր ուսին վերք կա, վոր նրան մեխել և անհոգին։ Հիվանդներից չատերի դեմքերն այնքան դուշատ եյին, այնքան նիհար, կարծես մեղրամոմ լինեյին։ Սրտյոք ինքն ել այդպես նիհարել ու դունատվել է։ Ախոռս հայելի չէր վոր, վոր նայեր։ Աներք լալն են և, վոր չկա, թե չի՝ պիտի տաղտաներ, հուսահատվեր իր դեմքը տեսնելով։

Նա չատ ախորժակով կերավ հիվանդատահուհու բերած կերակուրը։ Կարծես թե այդպես համեղ բոլշչ խմի չեր կերել։

— Լավ ախորժակ ունես, խոսք չկա։ Այդպես մխայն աղջիկներն են ուտում,— ասաց խարտյաշահեր աղջիկը մի պահ նայելով նրա վրա։

Վասյան ժպտաց։ Ներան չատ դուր յեկան այդ խոսքերը։

15.

Ընդունելության որը հիվանդներին այցելության յեկան։ Համարյա թե բոլոր հիվանդներն ել ազգականներ, ծանոթներ ունեյին։

Վասյային այցելում եյին վաշտի ընկերներից, բայց այն որը նրանցից վոչ վոք չեկավ։ Ցերևի վաշտը հեռացել եր արդեն քաղաքից։

Ցերանի հայրը վողջ լիներ, իր սիրելի հայրը... Նա վերքի ցավից մի պահ փակեց աչքերը և մնաց այդպես։ Ցերը աչքերը նորից բացվեցին և նա ախորոին նայեց իր չուրջը, դիմացի մահճակալի մոտ կանգնած տեսավ յերկու աղջիկ։ Ներանցից մեկը կռացած հիվանդի վրա՝ կերակրում եր նրան, իսկ մյուսը կանգնած նայում եր։ Կանգնած աղջիկը յերկնագույն բարակ չրջազգեստ եր հագել, մազերը մաքուր սանրած և ամփոփած եյին գլխին։ Զգիտես ինչու, Վասյան համառորեն նայում եր այդ աղջկան և ուզում եր անպատճառ տեսնել նրա դեմքը։ Բայց աղջիկը մեջքը դեպի իրեն դարձրած՝ նայում եր հիվանդին և լուռ եր։ Բավական ժամանակ անցավ։ Մեկ ել աղջիկը դեմքը չրջեց Վասյայի կողմը և նայեց նրան։

Վասյայի սիրտը ուժգին բաբախեց։ Մխաո ծանոթ թվաց այդ դեմքը։ Կատյուշան չե՞ արդյոք...

Վասյան չհամբերեց և կանչեց մեղմ ձայնով.

— Կատյո՛ւշա...

Աղջիկը լսեց իրեն կանչող ձայնը և խկույն հետ դարձավ։ Նրա աչքերը կրկին հանդիպեցին Վասյայի աչքերին։ Աղջիկը չփոթվել եր, չդիտեր ինչ անի։

— Կատյուշա,— բացականչեց աչխուժով Վասյան,— չճանաչեցի՞ր ինձ, Վասյային...

Կատյուշան չփոթված յերկու քայլ առաջ յեկավ, մոտեցավ Վասյայի մահճակալին և զարմացած ու ընկճված հարցրեց.

— Այդ ինչպե՞ս ընկար այստեղ, ի՞նչ է պատահել քեզ...

Վասյան ձեռքը հանեց վերմակի տակից, դլուխը բարձրացրեց և բռնելով աղջկա ձեռքից՝ սկսեց դեպի իրեն։ Կատյուշան կանգնած մնաց և մի պահ թույլ տվեց, վոր իր ձեռքը մնա Վասյայի ձեռքերի մեջ։ Հետո աղատեց ձեռքը և դորովանքով նայեց պատահուն։

Վասյան դլուխը դարձյալ դրեց բարձին և այնպես յերջանիկ դղաց իրեն։ Կարծես թե մի ամբողջ աշխարհ հավաքվել յեկել եր իրեն տեսության։ Սենյակում լույսերը պայծառացան մեկեն, դեմքերը ժպտացին։ Վասյայի աչքերը շաղում եյին բերկրալից ժպիտով։ Նա կատատացավ, ել ցավ չեր դդում, կարծես թե վիրավորված չեր ուսը, վերք չկար այնտեղ։ Նա Կատյուշային խնդրեց, վոր նստի։ Աղջիկը նստեց մահճակալի կողքին դրած կոշ, անթիվունք նստարանին։

Վասյան մանրամասն պատմեց բոլոր այն դեպքերը, վոր տեղի եյին ունեցել Կատյուշայենց նկուղից վտխչելուց հետո։ Հառաչելով պատմեց իր հոր մահվան մասին։ Հպարտությամբ նկարագրեց իրենց կռիվները և հաղթանակը։ Միայն մի դեպք չհիշեց, Կատյուշայի յեղբոր սպանությունը։ Դիտմամբ չհպատնեց այդ, վորպեսզի Կատյուշան չտխրի։

— Իսկ քո վե՞րքը, խոմ վատնդ չի սպառնում կամ քուժվելուց հետո վորևե հետևանք չի թողնում,— հարցրեց աղջիկը, յերբ պատմությունը վերջացրեց իր պատմությունը։

— Իմ վերքը չուտով կառողջանա, Կատյուշա։ Գնդակը թեև ծակել և ուսս, բայց վոսկրային կարդվածք չի պատճառել։ Այնպես վոր կապաքինվեմ և կդառնամ նույն Վասյան...

Այսպես ասելով պատանին ծիծաղեց և ավելացրեց.

— Իսկ դու, Կատյուշա, դիտե՞ս, վոր յես յերկրորդ անուն ել ունեմ, իմ անունը կնքել են «Արծվի ճուտ»...

— Աբծվի ճո՞ւտ,— զարմացավ Կատյուշան:

— Այո, Աբծվի ճուտ: Այդպես անվանում են նրա համար, որ չես չեմ վախենում կռվից ու դնդակից, դնդացրից ու թնդից... Չեմ վախենում մահից... Ձես կռվել պիտեմ: Մոտ մի տարի պատերազմի խրամատում. հետո դրոհ տվինք, լարվեցինք թշնամուն...

Կատյուշան զարմանքով նայում էր պատանուն: Նրան անհավատալի էր թվում այդ պատմությունը: Զարմանում էր ու չգիտեր ինչ ասեր:

— Հը, Կատյուշա, չես հավատո՞ւմ: Բայց ափսոս, որ ձեր պահակի դլուխը չթռցրի, հազար ափսոս...

Վասյան պատմեց, թե ինչպես վերջին անգամ այցի չի գնացել նրանց տուն և թե ինչպես հարբած պահակը հայհոյել և, որ էլը նրանց ընտանիքը մեկնել և արտասահման:

— Մենք նրան պատվիրել էինք, որ բոլորին այդպես ասի,— պատասխանեց Կատյուշան և ինքն էլ իր հերթին պատմեց իրենց ընտանիքի մասին:

— Անցյալ տարի հայրս հիվանդացավ և վախճանվեց այս քաղաքում: Ցեղբայրս էլ կռվի դաշտում սպանվեց: Մայրս վրոշեց տեղափոխվել այս քաղաքը, իր ծնողների մոտ: Իսկ հորաքույրս գնաց մյուս յեղբոր մոտ տպրելու: Մենք մեր անից վերցրինք կարևոր իրերը միայն և վտխադրվեցինք այստեղ: Փոխադրության միջոցների դժվարության պատճառով կահկարասիքի մի մասը մնաց այնտեղ, տանը: Հիմա մենք վոչինչ չունենք, վո՛չ տուն, վո՛չ դործարան, վո՛չ հայր, վո՛չ էլ յեղբայր: Մենք դարձել ենք քեզ նման պրոլետար...

Կատյուշան հառաչեց, մի պահ լուռ էր: Նրա դեմքը մշուշվեց տխրության ամպով:

— Ձես հենց են դլխից վոչինչ չեմ ունեցել, յեղել ենք աղքատ, պրոլետար... Սիբելի հորս էլ սպանեցին, մնացի բոլորովին մենակ ու վորբ... Ձես շատ ուրախ եմ, որ վոչինչ չենք ունեցել ու կորցրել, միայն թե կենդանի մնար հայրս,— ասաց Վասյան նույնպես հառաչելով:

Մի պահ լռություն տիրեց: Սենյակում, հիվանդի չուրջը, աշխուժություն էր տիրում: Շատ այցելուներ դնում էին, նրբերը զալիս:

— Արդյոք ի՞նչ դրդեց քեզ սպասել ինձ ձեր նկուղից, Կատյուշա: Ինձ համար շատ հետաքրքիր է իմանալ այդ,— հարցրեց Վասյան խզելով լռությունը:

Աղջիկը ժպտաց և պատասխանեց.

— Քեզ մահ էր սպառնում: Ցեղբայրս ու մեր պահակը վրոշել էին սպանել, վոչնչացնել քեզ: Ձես այդ բանն իմացա և վորոշեցի քեզ սպասել...

— Դու սքանչելի աղջիկ ես, Կատյուշա: Քեզ պետք է պահել ձեր միջավայրից և բերել մեր աշխարհը, պրոլետարական տչխարհը,— բացականչեց վոգևորված Վասյան և ավելացրեց,— իսկ հետո՞, քեզ մի վորևե վնաս կամ անախորժություն չեզո՞վ էմ պատճառով:

— Գուցե լինեը, յերթե յեղբայրս հորս հիվանդության պատճառով չմեկներ նրա մոտ և այնտեղից էլ՝ ռազմաճակատ: Իսկ մեր պահակը մի քանի անգամ վնթվինթաց քթի տակ և ուրիշ վոչինչ:

— Ախր ինչո՞ւ այդպես մտահոգվեցիր իմ մասին,— հարցրեց Վասյան համառորեն նայելով աղջկան:

Կատյուշան գլուխը խոնարհեց և կամացուկ ասաց.

— Ձես խղճում էի քեզ...

Զանգը հնչեց: Այցելուների ընդունելությունը ավարտված էր:

Մյուս հիվանդի մոտից յեկավ Կատյուշայի ընկերուհին: Դա լիքը մարմնով, կարճահասակ, չեկ մազերով աղջիկ էր:

— Ծանոթացիր, իմ մոտիկ ընկերուհին է, անունն էլ Նաստաչա: Այն հիվանդը, որի մոտ յեկել էինք, Նաստաչայի յեղբայրն է: Անցյալ որը ընկել էր աշխատանքի վայրում և գոտկատը վնասել: Հիմա արդեն լավ է զդում իրեն, առողջանում է: Ձեթե յես այսոր չայցելեյի նրան, յերևի յերբիք չեյի հանդիպել քեզ,— ասաց Կատյուշան՝ ընկերուհուն ներկայացնելով Վասյային:

Սենյակին արդեն դատարկվում էր այցելուներից: Հիվանդներն ափսոսանքով ճամբու էին դնում իրենց բարեկամներին ու ծանոթներին:

Յերբ աղջիկները բաժանվեցին Վասյայից, վերջինս գլուխը թափթփացրեց և կարոտանքով ասաց.

— Ինձ չմոռանաս, Կատյուշա...

Աղջիկները հետ դարձան, ժպտացին և մյուս հիվանդին էլ հրաժեշտ տալով հեռացան:

Սենյակում մնացին միայն հիվանդները ու հիվանդապահուհին: Կարծես մի լավ, մտերիմ բան պոկվեց ու հեռացավ սենյակից, պարպվեց, ամայացավ...

— Վորտեղի՞ց ես ճանաչում Կատյուշային,— հարցրեց հարևան մահճակալից Նատաշայի յեղբայրը:

— Ձեռ նրանց տանն ապրել եմ, դիտեմ,— պատասխանեց Վասյան:

— Հրաշալի աղջիկ է Կատյուշան, լավ սիրտ ունի,— գովեց Նատաշայի յեղբայրը:

— Ձեռ այդ վաղուց դիտեմ,— ասաց Վասյան և նայեց դեպի ապակեպատ դուռը, վոր բացվում եր մի ջանցքի վրա: Կարծես թե այնտեղից դեռ լսվում եր աղջիկների ընդդուն ձայնը...

Այն որը Վասյան իրեն շատ զվարթ եր զգում: Գիշերը լավ քնեց և յերբ հետևյալ առավոտը զարթնեց, նրա առաջին մտքը յեղավ Կատյուշան...

16.

Յերբ Կատյուշան վերադառնալով տուն պատմեց Վասյայի մասին, մայրը սաստիկ ջղայնացավ և հուզմունքից դողաց: Նա միանգամից վերհիշեց մոտ անցյալը, իրենց անտեսության քայքայումը, ամուսնու մահը, վորդու ապանության, իրենց վախտանն ու ծնողների մոտ ապաստան գտնելը... Այդ բոլորը վերհիշեց Նատալյա Պետրովնան, և աչքերից հոսեցին արցունքները:

— Ելի պատահեցիր և դարձյալ խոտո՞ւմ ես եղ սատանի ձագի հետ: Ախըր դա և դրա պեսները չե՞յին, վոր մեզ գցեցին ես սարսափելի որը: Ինչպե՞ս կարելի յե հանդիպել և խոսել մեր սրտյուն խմողների հետ, ըը՞, խելքդ թռցրե՞լ ես, դժվե՞լ ես, ի՞նչ ե,—ճղճղան ձայնով գոռում եր Նատալյա Պետրովնան:

Կատյուշան լուռ եր: Նա համբերությամբ լսում եր մոր հայհոյանքները, դուռում–դռչումները: Ամբողջ որը Նատալյա Պետրովնան վնթփնթփում եր քթի տակ, հայհոյում եր և բունդքները սեղմած ապատում ինչ–վոր մեկին:

Նատալյա Պետրովնայի հայրը, վորի տանն ապաստանել եր

նա աղջկա հետ, վաթսունից անց մի փոքրիկ ծերուկ եր՝ արհեստով փորագրիչ: Նա ծաղկանկարներ կամ տառեր եր փորագրում վոսկեղեն կամ արծաթեղեն զանազան զարդերի վրա: Այդ դրծը, վոր առաջ բանուկ եր, հեղափոխության պատճառով խանգարվեց և համարյա թե անգործության մատնեց նրան: Այժմ նրա ընտանիքը բաղկացած եր չորս հոգուց և ստիպված եյին զանազան իրեր ծախել ապրելու համար:

Մոր ցանկության հակառակ, Կատյուշան վորոշեց կրկին այցելել Վասյային: Վերջինիս առողջական դրությունը շատ եր հետաքրքրում նրան:

«Մենավոր վորը տղա յե: Ինձ նման նա էլ կորցրել է հորը: Վոչ մի բարեկամ կամ մտերիմ չունի այս քաղաքում: Ինչո՞ւ չդնալ, չմխիթարել նրան...» մտածում եր Կատյուշան:

Նատաշան էլ դրդում եր նրան իր հետ դնալ հիվանդանոց իր յեղբորը, ինչպես նաև Վասյային տեսնելու:

— Լավ տղա յե յերևում Վասյան: Գոնե յես այդպիսի աջակցություն ստացա,— ասում եր Նատաշան:

Ցեվ դնալով՝ Նատաշայի մեջ ամրանում, ուժեղանում եր այդ տպավորությունը...

Նատաշան բնավորությամբ հասարակ և պարզ աղջիկ եր, կենսուրախ ու զվարթ: Նրա հայրը ներկարար եր, թեև ակտիվ մասնակցություն չեր ունեցել քաղաքացիական կռիվներին, բայց ամբողջապես համակրում և պաշտպանում եր բոլշևիկներին: Նատաշան էլ հետևում եր հորը: Նա էլ, յերբ առիթ եր լինում կամ խոսք բացվում հեղափոխության մասին, առանց տատանվելու թունդ պաշտպան եր կանգնում:

— Ձեռ սիրում եմ աղատություն, բանվորների և բոլոր ղրկվածների աղատությունը: Ձեռ ուզում եմ, վոր նրանք էլ լավ ապրեն, վայելեն կյանքը և մարդավարի ապրուստ ստեղծեն իրենց համար: Ինչո՞ւ պետք է միայն հարուստները, փողատերերը վայելեն աշխարքը, իսկ բանվորները դառը դատեն ու դառարկ նստեն: Այ, այս դեղեցիկ կուրորտները, հանքային ջրերը մինչև հիմա ո՞վքեր եյին միայն վայելում: Իսկի բանվորն ոչ՞ր եր այս բուժիչ վայրերից, վայելում այս սքանչելի բնությունը: Սրանից հետո կյանքն ու բնությունը վայելելու հերթն աշխատավորներինն է...

Նատաշան խոսում եր յեռանդով, նա իր հոր հարազատ

պատկերն էր: Կատյուշան լուռ ունկնդրում էր նրան, չէր ա-
ադարիում: Կատյուշան ամեն օր տեսնում էր իր շուրջը տեղի ու-
նեցող հսկայական վոփոխությունները, նոր տիպի մարդկանց
ու կարգերի հաստատումը: Թեև տանը Նաստասյա Պետրովնան
չարունակ հայհոյում, անիծում էր բոլշևիկներին ու դուչակում
նրանց մոտալուտ անկումը, բայց դրսի աշխարհը բոլորովին այլ
էր: Դրսի կյանքն արագորեն ձեվափոխվում էր և միանգամայն
տարբեր բան էր թելադրում: Ցեվ Կատյուշան, վորպես նոր
կյանք մտած չահել ուժ, կարծես թե տարվում, խմորվում էր
նոր կյանքով...

Ցերը Կատյուշան Նաստասյայի հետ կրկին այցելեց նրա հի-
վանդ յեղբորը, Վասյան թիկնել էր բարձին և նստել անհոդ-
նում: Նրա աչքերը չորացին ուրախությունից, յերբ Կատյուշան
ներս մտավ: Կարծես թե մի շատ հարազատ բան էր մտնում
իրեն: Ուրախության ժպիտը վայելեց դեմքին:

— Ցես քեզ վազուց սպասում եյի, Կատյուշա: Վախենում
եյի, թե այլևս մոռացար ինձ, ել չես գա,—բացականչեց Վա-
սյան:

Կատյուշան բարևեց Նաստասյայի յեղբորը, հետաքրքրվեց նրա
առողջությամբ և յեկավ նստեց Վասյայի մահճակալի մոտ:

— Հիմա ինչպե՞ս ես զգում քեզ, վերջը յավանո՞ւմ է,—
հարցրեց աղջիկը սիրալիր ձայնով:

— Այժմ յես համեմատարար շատ լավ եմ: Տեսնում ես, ար-
դեն կարողանում եմ նստել: Մի ամսից յերեսի դուրս գամ այս-
տեղից կազդուրված և առողջ,— պատասխանեց Վասյան:

— Շատ ուրախ եմ: Բայց հետաքրքիր է իմանալ, այստե-
ղից դուրս գալուց հետո ո՞ւր ես գնալու և ի՞նչ ես անելու...

— Ձիշտ նույն հարցի մասին հետաքրքրվեց յերեկ Սոմա-
վիրից այստեղ մի քանի որով գործուղված և ինձ այցելության
յեկած իմ մտերիմ ընկերը՝ Լյուբչենկոն: Ասիստս, վոր դու նրան
չես ճանաչում, Կատյուշա: Ցերեկ այսոր ել գա, կծանոթացնեմ
քեզ: Նա իմ ամենամտերիկ և լավագույն բարեկամն է: Մենք յե-
րեկ խորհրդածում եյինք մեր գործերի և պապագայի մասին: Ցեվ
դիտե՞ս ինչ վորոշեցինք, Կատյուշա...

— Վորոշեցիք գարձյալ գնալ ռազմաճակատ՝ կռիվը չարու-
նակելու,— նրա խոսքն ընդհատեց Կատյուշան:

— Սռայժմ վոչ այդպես, Կատյուշա: Թեև մեզանից շատ հե-

ռու դեռ չարունակվում է քաղաքացիական կռիվը, բայց ըստ ի-
րության այդ կռիվը վերջացած պետք է համարել: Բանվոր դա-
սակարգը հաղթել է արդեն: Նրա ձեռքից հազիվ թե մի վորևե
ուժ կարողանա խլել իշխանությունը: Ցերեկ կարիք զղացվի,
մենք զարձյալ կզինանք կռվելու: Սակայն մենք այժմ, յես ու
Լյուբչենկոն, վորոշել ենք գնալ Մոսկվա սովորելու: Նա յերեկ
չարունակի իր կիսատ թողած մասնագիտությունը, իսկ յես
կմտնեմ զինվորական դպրոց: Ցես շատ եմ սիրում ռազմական
գործը: Ուզում եմ խորապես ուսումնասիրել ռազմական գի-
տությունը և տիրապետել նրա տեխնիկային: Ցես այդ գործն եմ
նախընտրում և պիտի գնամ այդ ճանապարհով,— յեղրափակեց
իր խոսքը Վասյան:

Աղջիկը չպատասխանեց և տիրեց մի պահ լռություն:

— Հը՛, ինչ ես ասում, ինչ խորհուրդ կտա՞ս, Կատյուշա:

— Ի՞նչ խորհուրդ պետք է տամ,— պատասխանեց աղջիկը
մեղմ ձայնով,— ինչ վոր մտքումդ դրել ես՝ այդպես ել արա:
Ցերևի դա լավ կլինի...

— Իսկ դու ի՞նչ ես վորոշել, Կատյուշա:

— Ցերևի մի բան ել յես անեմ: Մի վորևե աշխատանքի
անցնեմ կամ չարունակեմ ուսումս:

— Ցես կցանկանայի, վոր դու չարունակես ուսումդ և մի
վորևե մասնագիտություն ձեռք բերես: Դա ամենից լավն է:
Հետո... ցանկանում եմ, վոր ինձ չմոռանաս, Կատյուշա...

Աղջկա աչքերը կենտրոնացան Վասյայի դեմքին և մի պահ
կարծես թե քննեցին նրան: Հետո այդ աչքերը խոնարհվեցին և
դարձան յերազուն:

— Այս, Կատյուշա: Դու չպետք է մոռանաս ինձ: Ցես նա-
մակ կգրեմ և հույս ունեմ, վոր կպատասխանես, չե՞ս:

Աղջիկը լուռ եր և մատներով խաղում եր ձեռքի պայուսակի
հետ:

— Հույս ունենա՞մ, Կատյուշա: Կպատասխանե՞ս,— համա-
ռերեն պնդեց Վասյան:

— Ուրախությամբ կպատասխանեմ, յեթե միայն դու լավ
պահպանես քո կյանքն ու գործերը և խելոք նամակներ գրես:

Վասյան ծիծաղեց: Նրան շատ դուր յեկան աղջկա խոսքերը:
Նրանք պայմանավորվեցին, վոր Վասյան նամակները գրի Նա-

տաչայի հասցեյով, վորպեսզի դրանք չընկնեն Կատյուշայի մոլ ձեռքը և այդ պատճառով անախորժության չպատահի:

Ներս մտավ Լյուբչենկոն և նրանց խոսակցությունն ընդհատվեց: Վասյան Կատյուշային ծանոթացրեց Լյուբչենկոյին և վերջինս մի պահ համառորեն նայեց աղջկան:

— Վասյան ինձ շատ է պատմել ձեր մասին: Դուք փրկել եք նրան մահից և դրանով անմոռանալի ծառայություն եք մատուցել մեզ,—ասաց Լյուբչենկոն սիրալիր ձեղտով:

— Այո, եթե Կատյուշան չլիներ, չես հիմա ով գիտե ապրած էլի, դրախտո՞ւմ, թե դժոխքում,—բացականչեց Վասյան:

Կատյուշան լուռ եր և նրա աչքերը ժպտում էին դոհունակությունից:

Ջիչ հետո Նատաշան մոտեցավ նրանց և Կատյուշային առաջարկեց հեռանալ: Ընդունելությունն ավարտվել եր և այցելուները գնում էին սենյակից: Ցերբ աղջիկները մենկնեցին, Լյուբչենկոն ասաց.

— Լավ աղջիկ է յերևում Կատյուշան, անկեղծ ու պարզ: Խակի չի յերևում, վոր բուրժուայի ցեղից է:

Վասյան շատ ուրախացավ այդ խոսքերից, նա դեռ դոնվում եր հեռացող աղջկա ազատության տակ և խնդությամբ ամբերկրանքով լցված եր նրա հոգին:

Հատուկ թուլությունն սանձելով՝ Լյուբչենկոն մինչև ուշ յերկո մնաց Վասյայի մոտ: Նրանք յերկար-յերկար դրուցեցին, ծրագրեր կազմեցին Մոսկվա գնալու և մասնագիտության ձեռք բերելու մասին, մեկը տեխնիկական, մյուսը՝ ռազմական:

17.

Կատյուշան այլևս չեր հայտնում մորը, վոր չարունակում է այցելել Վասյային: Ամեն անգամ հիվանդանոց գնալիս նա իր հետը պահած ըրամներով խմորեղեն կամ քաղցրավենիք եր բերում ու տանում Վասյային: Զգիտես ինչո՛ւ, Նատաշան էլ ամեն անձին համակրանք եր տածում դեպի այդ ազան և չարունակ Կատյուշային ըրդում եր, վոր չմոռանա նրան...

Վերջին յերկու այցելության ժամանակ Կատյուշան Վասյային պատմ հիվանդանոցի պարտեղում և նրանք այնտեղ զրուցում էին կամ նստարանին նստած զրուցում:

Կապդուրվելով և հիվանդանոցից դուրս գալով՝ Վասյան Լյուբչենկոյի ուղեկցությամբ ներկայացավ կուսակցության շրջկոմիտե և այնտեղից դործուղվեց Մոսկվա սովորելու:

Ուղևորվելու որը Վասյային ճամբու դցելու համար Կատյուշան և Նատաշան գնացին կայարան: Վասյան ու Լյուբչենկոն շատ ուրախացան և զգացվեցին այդ ուշադիր վերաբերմունքից: Ցերբ մեկնումի վերջին զանգը հնչեց և Վասյան ու Լյուբչենկոն բարձրացան վագոն, լուսամուտից Վասյան գլուխը խոնարհեց և մայթի վրա կանգնած Կատյուշային ասաց.

— Նամակներիս կպատասխանես ու չես մոռանա ինձ...

Կատյուշայի փոխարեն պատասխանեց Նատաշան.

— Ցեթե դործերդ լավ դասավորեք և խելոք նամակներ դրբեք, վոչ միայն Կատյուշան, այլ չես էլ կպատասխանեմ ձեր նամակներին...

Գնացքը չարժվեց և հեղհեղուկ արտացոլելով իր ընթացքը՝ առաջ անցավ: Վագոնի լուսամուտից դեռ յերևում էին Վասյայի ու Լյուբչենկոյի ժպտուն դեմքերը և ծածանվող թաշկինակները:

Ցերբ գնացքը բոլորովին անհետացավ տեսողությունից, Կատյուշայի աչքերը մշուշվեցին և նրա սրտում խլրտաց մի հաճելի բան... Հետո միմյանց հետ կատակելով ու սրախոսելով՝ աղջիկները վերադարձան տուն:

Արտադրեն փոփոխվող կյանքի հետ փոխվում եր նաև մարդկանց ապրելակերպը:

Կյանքն ստիպեց Նատալյա Պետրովնային էլ ծառայության մտնել և նա դանձապահ դարձավ քաղաքային պարկի ճաշարանում: Դա ամենահարմար գործն եր, վորովհետև նա վորևե մասնագիտություն չուներ: Իր կյանքում յերբեք չաշխատած և չարքունակ լեն ու բոլ ապրած Նատալյա Պետրովնայի համար սկզբում շատ անհաճո և ծանր թվաց այդ աշխատանքը: Բայց լինչ արած, ստիպված եր գնալ կյանքի հետ, իսկ նոր կյանքի պայմանները հրամայողաբար ստիպում էին նրան աշխատել:

Կապդուրվելով և դուրս գալով հիվանդանոցից՝ Նատաշայի յեղբայրն էլ հոր հետ պարապում էին իրենց մասնագիտությամբ՝ նավիգարարությամբ: Կատյուշան և Նատաշան զրազվում էին տնային գործերով, իսկ ազատ ժամերին կարդում էին կամ գնում քաղաքային պարկը յերաժշտություն լսելու:

Կատյուշան Վասյայից ստացավ առաջին նամակը: Վասյան հայտնում էր, թե ինչպես ինքը զոնվում է Մոսկվայում, ընդունվել է ռազմական դպրոցի նախապատրաստական կուրսերը: Նա խորհուրդ էր տալիս, վորպեսզի Կատյուշան էլ չարունակի ուսումը, վորևե մասնագիտություն ձեռք բերի և դուրս գա մեչչանոական ինքնամփոփ կյանքից:

«Ցես քեզ չեմ մոռացել, Կատյուշա, և յերբեք էլ չեմ մոռանա... Բայց յես ցանկանում եմ, վոր դու լիովին ըմբռնես և հասկանաս մեր կյանքը: Մենք հալածել ենք արդեն և ստեղծում, կառուցում ենք մեր նոր, խորհրդային կյանքը: Մեր առաջնորդ Լենինը պահանջում է սովորել և հետ չմնալ կյանքից: Ցես գնում եմ այդ ճանապարհով: Ցես ղրում եմ, վոր տգետ եմ և պետք է շատ խորանամ դիտության մեջ: Իմ չի սովորում, նա չի կարող առաջ ընթանալ մեր որերի և կյանքի հետ: Լյուբչենկան էլ է սովորում, չարունակում է իր մասնագիտությունը: Ցես կցանկանայի, վոր դու էլ սովորես և լավ ուսումնասիրես մեր կյանքը...»

Այնուհետև Վասյան նամակում մի քանի խոսքով նկարագրում էր կարմիր մայրաքաղաքի մասին: Նա շատ էր վոգեվորված Մոսկվայով, նրա աշխուժությամբ, յեռուզեռով:

«Ցերանի թե դու էլ այստեղ լինեիր, Կատյուշա: Գիտե՞ս վորքան հնարավորություններ կան առաջ գնալու...»

Ամբա Վասյան խնդրում էր բարևել Նատաշային և ցանկանալ նրան հաջողություն:

Նամակը գրված էր չափազանց պարզ լեզվով: Ցերևում էր, վոր հեղինակը նոր էր յուրացնում գրագիտությունը: Կատյուշան նամակը կարդաց Նատաշային և վերջինս ուրախացավ Վասյայի ուշադրության համար:

— Տեսնո՞ւմ ես տղան: Արդեն ընդունվել է կուրսերը և չի մոռանում իր ծանոթներին: Ցես կարծում եմ, վոր նրա սքանչած խորհուրդը շատ տեղին է: Լավ կլինի, վոր մենք էլ մի վորևե մասնագիտություն ձեռք բերենք, այլապես, ինչպես Վասյան է ասում, կարող ենք հետ մնալ կյանքից,— ասաց Նատաշան:

Կատյուշան առանձին ջերմությամբ բռնել էր նամակը և աչքերը չէր հեռացնում նրանից:

— Բայց զարմանալին այն է, վոր նա լավ գրել գիտե: Ցերբեք չէի սպասում, վոր այդ տղան կարողանա այսպես փոքր ի շատե գրագետ նամակ գրել,— ասաց Կատյուշան:

— Այդքան ցավերից ու փորձանքներից հետո նա բովվել է արդեն: Այժմ նա այլևս կովված է կյանքի համար: Ինքն էլ չնորհքով տղա, իհարկե լավ կսովորի և առաջ կգնա: Իսկ նրա համար հնարավորություններ շատ կան առաջ գնալու,— ասաց Նատաշան:

Այս խոսակցությունը տեղի յեր ունենում քաղաքային պարկում, իրիկնադեմին: Մութն իջնում էր հանդարտ: Զով էր յեղանակը: Կանաչապեղ պարկի վրա իջել էր մուգ կապույտ մշուշը: Շատրվաններից ցայտում էին ջրերը, իսկ պարկի խորքում լսվում էր ուրախ յերաժշտություն:

18

Մյուս տարվանից կուլտուրական վարչությունը քաղաքում բժշկական տեխնիկում հիմնեց, վորտեղ ընդունվեցին նաև Կատյուշան ու Նատաշան:

Կատյուշայի համար նոր կյանք սկսվեց: Նա շատ էր ուրախացել ու վոգևորվել, վոր սովորում է: Այդ մասին նա իսկույն նամակ գրեց Վասյային: Այդ նամակը թեև կարճ էր, բայց լիովին պատկերացնում էր Կատյուշայի վոգևորությունը:

«Ցես էլ եմ այժմ սովորում և դա անչափ վոգևորում է ինձ: Հիշո՞ւմ ես, յերբ դու բանտարկված էիր մեր նկուղում, յես քեզ խորհուրդ էի տալիս և համոզում, վոր թողնես քո ընտրած ճանապարհը... Բայց դու չլսեցիր ինձ և համոզված ու անխախտ չարունակեցիր քո ուղին: Դու պայքարեցիր քո սիրած գաղափարների համար և հաղթեցիր: Կյանքն սոխրում է ինձ մոռանալ հինը և յերես չրջել նրանից: Մեռք չունի շարունակ վիշտալ անցյալի, հին որերի մասին, ինչպես այդ անում է իմ մայրը: Այդ որերը այլևս չեն դառնա: Ցես այժմ ավելի լավ եմ հասկանում, թե ինչ բան է ուսումը և ինչ անգնահատելի նշանակություն ունի դիտությունը: Ցես արդեն քեղանից յերեք նամակ եմ ստացել և տեսնում եմ մեծ փոփոխություն... Ցերրորդ նամակն ինձ վրա հաճելի տպավորություն թողեց իր գրագիտությամբ: Դու չնորհք ունես և գրամանալի արագ տեմպերով առաջ ես գնում: Սրտանց ցանկանում

եմ քեզ հաջողություն: Ցես և Նատաչան աշխուժորեն սովորում ենք և համառ կերպով պատրաստվում տարեվերջի քննություններին: Նատաչան խնդրեց Ջերմորն բարևել...»:

Այս նամակին Վասյան չուշացրեց պատասխանը: Նամակն ավելի յերկար եր և համեմատաբար ավելի խնամքով գրված: Վասյան յեռանդով նկարագրում եր մայրաքաղաքի վերջին նորությունները: Նա արդեն սովորում եր ռազմական դպրոցում, ուսումնասիրում եր վոչ միայն ռազմական տակտիկան, այլև պրականություն և անտեսական ու քաղաքական դիտություններ:

«Ձիչան ասած, կատյուշա, սկզբում յես դժվարանում եյի: Ինձ խանգարում եր թերի դրադիտությունը: Դու այդ արդեն նկատել ես իմ նամակներից: Բայց յես մեծ ջանք գործ դրի, հաղթահարեցի ամեն խոչընդոտ և ձեռք բերի դրագիտություն: Այժմ ինձ այնքան եյ դժվար չե կարդալ և ուսումնասիրել դրքերը, ինչպես նաև դրավոր ու բանավոր դեկուցումներ պատրաստելը: Չկա ամրոց, վոր չկարողանան դրավել բոլշևիկները: Ով վախենում է, փախչում դժվարությունից, նա չի կարող առաջ գնալ, կմնա ճանապարհի կեսին և հետ կընկնի կյանքից: Ցես արդեն գտել եմ կյանքի դժվարությունները հաղթահարելու բանալին: Դա իմ համառ ու անդիջում պայքարն է, խիղճը և աշխատասիրությունը: Ցես դինված եմ այդ դենքերով և առաջ կղնամ համարձակ: Այդ դենքերը յես ձեռք եմ բերել իմ մանկության և պատանեկության ծանր տարիների զրկված կյանքից, աղքատությունից և մանավանդ, քաղաքացիական կռիվներին մասնակցելուց: Այդ կռիվներն ինձ համար մի սքանչելի դպրոց դարձան, և յես այժմ վայելում եմ նրանց պտուղները... Բայց յես կցանկանայի, վոր դու ընդմիշտ թոթափես քո անհարատատ անցյալը: Դու լավ սիրտ ունես: Զարմանալի կերպով նման չես քո դաժան հորը և մանավանդ մեջտանկա մորդ... Ցերը հիշում եմ քեզ, քո պայծառ դեմքը, քնքուշ վերաբերմունքը և այն, թե ինչն ստիպեց քեզ փրկել ինձ մահից, միայն մի յեղբայրացության եմ հանդում, վոր դու խղճում եյիր ինձ... Քո մեջ խոսում եր պատանեկության և անմորձության քնքուշ զգացմունքը: Ազնահարություն, ցավակցություն, մարդկայնություն... Միայն այդքան: Այդ զգացմունքները դրդեցին քեզ դգնել ինձ: Իսրտակես չնորհակալ եմ, իհարկե, մարդասիրական այդ վերաբերմունքիդ համար: Բայց դու խորտակես ատում եյիր մեզ, մեր դասակարգին: Դա, իհարկե, հասկանալի յե: Այդպես պահանջում եր քո դասակարգային չահը, անհաշտությունը: Այժմ դուցե դարձյալ նույն մարդասիրական զգացմունքներից դրդված ես պատասխանում իմ նամակներին: Ջե՞ վոր վորքան ջերմ են ու մանրամասն իմ նամակները, այնքան զուսպ են ու կարճ քո նամակները: Արդեն անցել և յերկու տարի և միայն յերկու նամակ եմ ստացել քեզանից: Գրածներիս մեծագույն մասը մնում է անպատասխան... Բայց հիշիր, կատյուշա, վոր յես ներկայումս վոչ մի հարազատ կամ մերձավոր չունիմ աշխարհում: Թեև ամբողջովին կլանվել եմ ուսումով, բայց հոգիս չարունակ թռչում է դեպի այդ կողմերը... Ժամանակը սահում է և իմ մեջ հետզհետե ուժեղանում և հարազատ մեկին ունենալու անհչանքը... Այսպիսի մոմենտներին, չգիտես ինչու, դու ես պատկերանում ինձ, քո պայծառ պատկերը... Դու պետք է հասկանաս ինձ, կատյուշա: Ցես կուզենայի, վոր դու թոթափելով անցյալի փոշին, քո դասակարգի (վոր ապրեն մեռել է կամ վերջին հոգեվարքն է տալիս) հոգյալ հատկանիշները, դիմես դեպի նոր կյանքը, մեր կյանքը և ամբողջովին մերվես նրա մեջ: Բացի դրանից, դու պետք է վերանայես քո զգացմունքները և հիշես ու մտաբերես ինձ այնպես, ինչպես յես եմ ուզում: Դա իհարկե, լուրջ խնդիր է, ժամանակի կարոտ, և դա անչուշտ հայտնի կլինի քո հետագա վերաբերմունքից և նամակներից...»:

Այնուհետև Վասյան ջերմ բարևներ եր ուղարկում իրեն և Նատաչային և այդպիսով վերջանում եր նամակը:

Կատյուշան նամակը կարդաց քաղաքային պարկի մի չքեղ, առանձնացած վայրում, վորտեղ վոչ վոք չեր խանգարում նրան: Նա մենակ եր և ցանկանում եր այդ պահին մենակ մնալ իր մտքերին ու հույզերին հանձնված: Կրկին և յերրորդ անգամ կարդաց նամակը: Ինչ կիրթ լեզու, զգացմունքների զեղում, մտքերի խորություն... Ցերկու տարվա ընթացքում վորքան փոփոխություն և առաջադիմություն: Վասյան հետզհետե ավելի յեր բարձրանում նրա աչքին, դառնում եր մի պատկառելի դեմք, համակրելի մեծություն... Զգիտես ինչու, նա ցավում

եր, որ ինքը չի գտնվում Մոսկվայում, չի տեսնում այնտեղի կյանքը և չի հանդիպում Վասյային: Արդյոք մոռացան և փոխվել նա, մեծացել, հասունացել: Արդյոք ինչպես և հաղնվում: Անշուշտ գինվորական համազգեստ ունի հագին և դա մորքա՛ն սազում է նրան... Արդյոք եղի այն հուրհրան չողով վայրե՛մ են նրա աչքերը...

Նա չերկար նստեց այդ սքանչելի պուրակում: Դիմացը պատկերվում եր կանաչագեղ չեզեխնին և նրա վրա՝ կապուտաչյա չերկինքը: Շուրջը ծաղիկներ եյին անուշ բույրերով:

Այդ նամակը խռովեց Կատյուշայի սիրտը: Նա հուզված եր: Այն որը և այնուհետև Կատյուշան մոախոհ եր դարձել, բայց այդ մասին նա ոչինչ չհայտնեց ոչ ոքի, ինչպես նաև նատաշային:

19·

Կատյուշան հետզհետե ինքնամփոփ եր դառնում ու մտախոհ: Նրա վրա խորապես ազդել եր Վասյայի վերջին նամակը: Այդ նամակն ստիպեց նրան լրջորեն անդրադառնալ և հաշվի առնել Վասյայի հետ ունեցած փոխհարաբերությունը: Մինչ այդ Կատյուշան ուրիշ կերպ եր վերաբերվում այդ հարցին, ավելի թեթև, իմիջի այլոց: Նա Վասյային համարում եր քաջ, անձնուրաց, սրտաբաց տղա, որ բոցավառվում է կյանքի չեմքին:

«Մի՞անգամայն ճիշտ է ընորոշել Վասյան իմ վերաբերմունքը: Հիրավի, յես խղճում եյի նրան, իմ մեջ խոստում եր մարդկային զգացմունքը: Յես չեյի ուզում տեսնել նրա մահը, որ կորուստը, մանավանդ մեր նկուղում... Դա յես համարում եյի անխղճություն, դաժանություն: Յես ինչպե՞ս կարող եյի ուրիշ վերաբերմունք ցույց տալ կամ այլ զգացմունքներ ունենալ նրա հանդեպ: Ջե՞ որ նրա հայրը մեր ընտանիքի ամենավոխերիմ թշնամին եր, մեր կյանքը դժբախտացնողներից մեկը: Մի՞թե յես կարող եյի այլ զգացմունքներ տածել այդ վորբ, աղքատ, թափառական և անկյան պատանու հանդեպ: Վերջապես նա հարմա՞ր եր մեր ոջախին, դերդաստանին: Սակայն յես այնքան առաջ գնացի և այնքան թուլասրեցի, որ մեր հարաբերությունների մեջ մի նոր շրջան սկսվեց: Այդ

վերաբերմունքի արդյունքն ել այս յեղավ՝ Վասյայի վերջին նամակը... Իսկ վորքան խելոք և զրում, խորհրդատու և ինչպես քայլերով և առաջ ընթանում...»

Նման խորհրդածություններով եր տարված Կատյուշան: Ինքնությունները նա հաջող ավեց: Ամառվա արձակուրդին ուղարկեցին նրան բուժարաններում գործնական աշխատանքի: Կատյուշան հնարավորություն ունեցավ չփվել կյանքի և մարդկանց հետ: Նա բարեխիղճ աշխատող եր և կատարյալ կատարում եր իր պարտականությունները: Այդպիսով աչքի ընկավ փորձնական աշխատանքում: Ուսումնական տարվա սկզբից նրան ուսումնարանում լծեցին հասարակական աշխատանքի: Ուսանողական կազմակերպության մեջ պատասխանատու աշխատանքներ եյին տալիս նրան՝ ժողովների քարտուղարություն, պատի թերթի խմբկոլոում, հեղափոխական տոներ անցկացնող հանձնաժողովում: Հասարակական այդ աշխատանքների ասպարեզում նա չարունակ չփվում եր դասախոսների, ուսանող-ուսանողուհիների հետ և նրա հոգին խմորվում, թրծվում եր նոր կյանքի մեջ: Մայրն ել տարված եր իր աշխատանքով և նրանք քիչ եյին հանդիպում միմյանց: Նոր կյանքը նրանց յերկուսին ել տարել եր գործնական աշխարհ, մարդկային փոխհարաբերության չրջանակը: Տնային գործերով գլխավորապես զբաղված եր մեծ մայրը, իսկ Նատալյա Պետրովնայի հայրը կարողանում եր քիչ ու միչ զբաղվել իր մանանափառությամբ: Ցեվ այդպես ապրում. եր նրանց ընտանիքը:

Ցերկար ժամանակ մտածում եր Կատյուշան և չգիտեր ինչ պատասխանել Վասյայի վերջին նամակին: Ի՞նչ գրել: Կարո՞ղ եր մի՞թե վորևե լուրջ զգացմունք տածել դեպի Վասյան... Այս հարցը ամեն անգամ ծառանում եր նրա ուղեղում, մտահոգում նրան... Կատյուշան հետզհետե ավելի եր մխրճվում զբաղմունքային կյանքում, դրքերի ու դասերի մեջ, հասարակական բազմազան աշխատանքներում:

Աչնանը նա նոր նամակ ստացավ Վասյայից: Վերջինս իր խորին զարմանքն ու դժգոհությունն եր հայտնում, որ Կատյուշան չի պատասխանում:

«Որը ցավ և պատճառում ինձ քո լռությունը: Ինչի՞ն վերագրել այդ: Անտարբերությո՞ն, թե «չափազանց» զբաղված լինելուն. Մի՞թե այդքան զբաղված ես: Գոնե ամառային ար-

ձակուրդներից ոգտվելիր նամակ գրելու կամ... մի քանի րոպե քո թանդ ժամանակից նվիրելիր ինձ: Գուցե ահաճութիւն պատճառեցին քեզ նամակումս արտահայտված մտքերն ու ըղձացմունքները: Դրանք խոմ պարտադիր չե՞ն, կարող ես ընդունել կամ մերժել: Դա կախված է քո կամքից: Եվ ինչո՞ւ խռովվել և յերկար ժամանակ լուել: Գուցե հիվանդացել ես կամ մի վորևե դժբախտութիւն ու անհաջողութիւն է պատահել: Շատ կուզենայի իմանալ պատճառը: Ինչպես է դնում ուսումդ: Արդյոք հաջողո՞ւմ է քեզ յելնել դիտութեան բարձունքները: Արդյոք խոչընդոտների չե՞ս հանդիպում: Լավ կլիներ, վոր ակտիվ մասնակցութիւն ցուցյց տայիր ուսանողական կազմակերպութիւններին և աշխատելիր զարգացնել քո մեջ հասարակական ջիղը: Նման աշխատանքներն ու վոխհարաբերութիւնները քեզ դուրս կբերեն մեկուսացումից և կամաց-կամաց կըստեղծեն քո մեջ համակրանք դեպի նոր կյանքն ու կարդերը... Ցես կուզենայի, վոր դու կերպարանափոխվելիր, վերածնվելիր, Կատուշա: Ցես կուզենայի, վոր դու լցվելիր մեր նոր կյանքի հուշերով, մեր սքանչելի յերկրի հարաճուն վերելքով:

«Ամառը մեզ տեղափոխեցին Լենինգրադ՝ Բալթիկ ծովի ափին: Ցես սիրեցի խռովահույզ ջրերը, նրանց հարափոփոխ ծփանքները և սառնորակ չունչը: Ցես սիրեցի մշուշածածկ հյուսիսը, նրա տխրամած յերկինքը և դալարապեղ յեղևնիները: Այժմ մենք գարձյալ մայրաքաղաքումն ենք, սովորում եմ նախկին յեռանդով, թափանցում դիտութեան խորքերը... Հուսա ունեմ, վոր դու ևս յեռանդով ուսումնասիրում ես դիտութիւնը և ղղում նոր կյանքի բույրը: Թոթափիր հին փոշին, յերես դարձրու անցյալի մռայլ տրադիցիաներից, մերվիր նոր կյանքին ու միջավայրին, վերածնվիր, Կատուշա... Ցերբ այդ բոլորը կանես, այն ժամանակ նորից կվերհիշես ինձ ու կըզատապես պատասխանել...»

Կատուշան մի քանի անգամ կարդաց այդ նամակը և պառկեց անկողին: Կես գիշեր եր արդեն: Խաղաղութիւն և անդորր եր տիրում իրենց տանը: Նաստյա Պետրովնան վաղուց եր քնել: Մյուս սենյակից յերբեմն-յերբեմն լսվում եր նրա հոր չոր հազը:

Անկողնում պառկած Կատուշան ընկել եր խորը մտքերի գիրկը: Ցերեկոյան ուսումնարանում նա մասնակցել եր հոկտեմբերյան հեղափոխութեան տարեդարձին նվիրված հանդեսի նախապատրաստութեանը: Նա ընտրված եր տոնակատարութիւնն անցկացնող հանձնաժողովի անդամ: Մեծ քանակութեամբ պլակատներ, լոզունգներ եյին գրել ու պատրաստել: Խմբագրըրում եյին պատի թերթի տոնական համարը: Նրան առաջարկված եր մի հոդված գրել պատի թերթի համար: Տուն վերադառնալիս Կատուշան մտածում եր հոդվածի մասին, յերբ Նաստյան հանձնեց իրեն Վասյայից ստացված նամակը:

— Տեսնո՞ւմ ես վոնց չի մոռանում քեզ Վասյան: Հաճախ է գրում,— ասաց Նաստյան մտերմական չեշտով:

Կատուշան վոչինչ չպատասխանեց, չտապեց տուն՝ նամակը կարդալու: Ցեվ այժմ նամակը կարդալուց հետո նրան թըվում եր, վոր հարազատ մեկը չընկնում է իր ականջին, քնքուշ խոսքեր ասում, քաղցր պատմութիւններ պատմում: Կարծես թե այդ մեկը չարունակ հետևում է իրեն, անուշ հեքիաթներ պատմում և ուղեկցում նրան ինչ-վոր տեղ... Կարծես թե նա գտնվում եր այդ սքանչելի պատմութիւնների կախարդիչ շըրջանակում և տարվել, համակվել եր...

Քանի ամիս է վոր չի պատասխանել Վասյային: Կես տարուց ավելի: Ինչո՞ւ արդյոք: Մի՞թե Կատուշան մոռացել է մարդկայնութեան և քաղաքակիրթութեան զգացմունքները, ընկերական վոխհարաբերութեան պատշաճութիւնը: Ինչո՞ւ անտարբեր լինել և այդպիսով անախորժութիւն ու ցավ պատճառել Վասյային: Ցերե՞ք ամառը Վասյան հնարավորութիւն ունենար մի քանի որով գալ իրենց քաղաք և Կատուշան հանդիպեր նրան... Ափսոս, վոր այդ հնարավորութիւնից զրկված է յեղել Վասյան: Ինչ վոր զգացմունք չունեց աղջկա սիրտը, արդյոք կարոտո՞ւմ եր Վասյային...

Կատուշան արդեն չնչել եր քաոսներորդ դարուն: Նա լցված եր յերիտասարդութեան և հասունութեան բուռն ոյժերով: Նրա հոգին բռնկված եր զարնանային պայծառութեամբ:

Կատուշան վեր յելավ անկողնից, վեթաթվեց տաք շալի մեջ և նստեց դրասեղանի մոտ: Ժամեր ատհեցին և նա գրում եր իր պատասխանը Վասյայի նամակներին:

«Շատ ներողութիւն, վոր նամակներիդ պատասխանը չա-

փազանց ուշացրի: Դա անբարեխղճություն եր իմ կողմից, զուտ ամարդություն: Ինչպես ուզում ես դատիր, կներս մեղավոր եմ: Մի շարք կարևոր խնդիրներ եյիր չուշափել և առաջադրել քո նախորդ նամակում, որոնք ստիպեցին ինձ լրջորեն և լուրջ մտածել: Դրանք հեշտությամբ լուծվող խնդիրներ չեն, մանավանդ ինձ համար: Ձե՞ վոր յես դուրս եմ յեկել միանգամայն տարբեր միջավայրից, տարբեր դաստիարակություն ստացել, ուրիշ մթնոլորտում չնչել: Յես բուրժուական ընտանիքի զավակն եմ յեղել... Իսկ դու լավ գիտես, թե ինչ է անել Մարքսը, վոր «կենցաղն է վորոշում գիտակցությունը» (մենք այժմ անցնում ենք հասարակական գիտությունները): Ահա թե ինչու մենք միմյանց հակապատկերն եյինք և յես յերբեք չեյի կարող սիրել ձեր դասակարգը, համակրել նրա հեղափոխական չարժմանը, նոր կարգերին: Սակայն կյանքը վոխվեց, չրջվեց հիմնովին: Ստեղծվեց նոր կենցաղ ու կեցություն: Նոր կյանքն իր հզոր ալիքներով չարժվեց մեր յերկրում, հիմնավորվեց քաղաքներում ու գյուղերում, մտավ տները, ընտանիքները, թափանցեց սրտերը: Յես չեյի կարող անտարբեր լինել, մեկուսանալ: Յես ջահել եմ: Իմ մեջ յեռում է կյանքը և կյանքը զրդեց ինձ բռնել քո ուղին՝ սովորել, յերթալ գիտության բարձունքները: Յես ակտիվ կերպով մասնակցում եմ մեր ուսումնարանի հասարակական կյանքին ու կազմակերպություններին: Յես չգիտեյի, վոր իմ մեջ թաղնված ուժ կար և ընդունակություն: Այժմ յես տարվել եմ այդ աշխատանքներով և ինձ զգում եմ ամրապնդ, ուժեղ: Մի քանի որից, պիոներական կազմակերպության առնակատարությունը: Վաղը հանդիսան որ և և յես պիտի զրավեմ զրելով Հոկտեմբերյան առներին նվիրված մի հոդված: Ո՞վ կարող եր սպասել, վոր Կատյուշան, Ռոտիչևի աղջիկը, գովի և գովարանի բանվոր դասակարգի հաղթանակը, խորհուրդների իշխանությունը... Ո՞վ կարող եր սպասել: Այդպես յեղավ: Նոր կյանքը թրծել և Կատյուշային իր հրաբորբոք հնոցում... Առայժմ այսքանով բավականացիր: Խիստ հոգնել եմ այսոր դասերից ու հասարակական աշխատանքներից: Կես գիշերից վաղուց անց է, չուտով արշալույսը կբացվի: Հորիզոնի վրա արդեն նշմարվում են լույսի գունատ չերտերը: Ցանկանում եմ քեզ հաջողություն»:

Կ ա տ յ ու շ ա

Կատյուշան նամակը ծրարեց, պահեց գրքում և պառկեց քնելու:

Լուսամուտից յերևում եր հետզհետե բացվող և պայծառացող յերկինքը: Աստղերը փակում եյին իրենց աչքերը և արշալույսի լուսեղեն կամարները վառվում եյին հրդեհի պես:

Մի ամսից հետո Վանյայից ստացվեց հետևյալ պատասխանը.

«Վողջույն բարի ու պայծառ Կատյուշային: Կարդացի նամակդ, ինչպես նաև Հոկտեմբերյան հեղափոխության տոնակատարման նվիրված հոդվածիդ պատճենը: Ինձ ուրախացրեց քո նամակի լրջությունը, մանավանդ հոդվածդ, վորի մեջ դու արծարծել ես հեղափոխական մտքեր... Աչքերիս չհավատացի: Այդ ի՞նչ մեծ չրջադարձ է տեղի ունեցել քո մեջ: Արդյոք հավա՞նք է, թե իրականություն: Ո՞վ կասեր, վոր Կատյուշան այդպես կփոխվի, կվերածնվի... Սակայն դա արդեն կատարվում է: Դրա վկայություն ապացույցը ահա այն հոդվածը, վոր նամակիդ հետ ուղարկեցիր: Նման հոդված կարող է գրել միայն նա, ով ներշնչվել է, խորապես տարվել մեր կյանքով: Դու նկարագրում ես Հոկտեմբերյան հեղափոխության բարիքները, մասնավորապես կանանց ազատագրումը: Այո, միայն Հոկտեմբերը կարողացավ իսկական ազատություն բերել կանանց, դարձնել հասարակության իրավահավասար անդամ, ապահովել նրան ընտրելու և ընտրվելու, պետական և հասարակական բոլոր խնդիրներին մասնակցելու և ընթացք տալու իրավունք: Թե նամակից և թե հոդվածից յերևում է, վոր քո մեջ կատարվել է բեկում: Ուսումնական միջավայրը, հասարակական աշխատանքները, ընկերական կյանքը և չրջապատը չեյին կարող իրենց բարերար ազդեցությունը չգործել: Ձե՞ վոր դու ես մտել կյանք, ջահել ես, ընտանությանդ գծերն ու հոգեբանությունդ նոր են ձևակերպվում ու կազմակերպվում: Ուրիշ և ոսկան մայրդ. հաղիվ թե նա կարողանա մերվել մեր կյանքին և հաչտվել նրա հետ: Սրտանց վողջունում եմ քո աշխատանքը և ցանկանում, վոր էլ ավելի առաջ գնաս: Յես այժմ իմ ազատ ժամերը նվիրում եմ դեղարվեստական գրքերի ընթերցանության: Հաճույքով կարդացի Չեխովի պատմվածքները: Այ թե ինչպես է դիտում ու նկարագրում կյանքը: Այժմ յես կարդում եմ Գուչկինի յերկերը: Սքանչելի յեն նրանք թ-

սեղանի մոտ նստած՝ աղջիկը թերթում էր ինչ-որ դիրք, յերբ դուռը բաղխեցին թեթև: Յերբ աղջիկը բաց արեց դուռը, մի-ջանցքում կանգնել էր մի պատկառելի պինվորական: Կատյուշայի սիրտը բաբախեց ուժգին և դուռը կիսաբաց թողնելով՝ չդիտես ինչո՛ւ, յերկու քայլ հետ դնաց սենյակում: Նա վորձեց «Վասյա» բացականչել, բայց, չդիտես ինչու, լեզուն կապ ընկավ: Սակայն պինվորականն ավելի ակտիվ գտնվեց, ներս մտավ, պինվորական բարև տվեց և վերցնելով աղջկա ձեռքն՝ ասաց.

— Լավագույն կատյուշային արևավառ վողջույն...

Հետո համբուրեց աղջկա ձեռքը և ուշադրությամբ նայեց նրան:

— Այդ վորքան փոխվել ես դու, Կատյուշա, մեծացել, աքանչելի որիորդ ես դարձել:

— Իսկ քեզ հաղիվ ճանաչեցի: Դու ավելի ես փոխվել, մեծացել: Իսկ այդ համազգեստը վորքան սաղում է քեզ,—պատասխանեց Կատյուշան և հրավիրեց նստել:

Վասյան նստեց բաղկաթոռին, իսկ աղջիկը՝ աշխատասեղանի մոտ, իր տեղը:

Վասյան պատմեց իր դերազանց ավարտելու, նոր պաշտոնի, բնակարանի և ճամբորդության մասին: Նա խոսում էր կիրթ չեզվով, կիրթ չարժ ու ձևերով, վերին աստիճանի կուլտուրական և կարծես թե նրա ներքինն ու արտաքինը կատարելապես ներդաշնակվում էին: Տպավորությունը հիանալի էր:

Կատյուշան էլ էր վերջացրել ուսումը և այժմ աշխատում էր քաղաքի բուժարաններից մեկում:

Դուռը բացվեց և ներս մտավ Նատալյա Պետրովնան: Զարմացած աչքերով նա նայեց պինվորականին, չճանաչեց: Վերջինս վեր յելավ և հարգանքով ու վայելուչ ներկայացրեց իրեն.

— Գնդի հրամանատար Վասիլի Ալեքսեևիչ Իվանով...

Նատալյա Պետրովնան դլխի յընկավ. չփոթված մերթ պինվորականին էր նայում, մերթ աղջկան:

— Հը՛, մամա ջան, չճանաչեցի՞ր,— բացականչեց Կատյուշան կենսուրախ ժպիտով:

Նատալյա Պետրովնան դլուխը չարժեց և ասաց.

— Բոլորովին չեմ հիշում, մոռացել եմ...

— Վասյան է, մամա ջան, հիշո՞ւմ ես, Վասյան վոր քանտարկել էլիք մեր նկուղում...

— Ա՛հ,— բացականչեց Նատալյա Պետրովնան և ինչ-վոր ծանր հիշողությունից խայթված՝ կծկեց դեմքը:

— Տեսնո՞ւմ ես, վորքան փոխվել և, սիրունացել, մեծացել և դարձել բոլորովին այլ մարդ,—ասաց Կատյուշան յեռանդով և մեկ-մեկ պատմեց յերիտասարդի ձեռք բերած հաջողությունները:

Նատալյա Պետրովնան դիվանին նստած լուռ լսում էր: Այդ բոլոր կարծես յերազ էր թվում: Թեև նրա դեմքին խոր ակոսներ կային և յերևում էին պատավելու նշանները, բայց նա աշխատում էր խնամքով պահել իրեն: Դիտելով յերիտասարդ պինվորականի վայելուչ դեմքը, կիրթ չարժումները և լսելով աղջկա պատմածը, չդիտես ինչու, նա իրեն խիստ վատ զդաց, աչքերը կարծես մթնեցին, դլուխը պտտվեց և դնալով մյուս սենյակը՝ պառկեց մահճակալին և աղիողորմ արտասուք թափեց... Նա վերհիշեց անցյալը և դառնացավ նրա հոդին:

Յերիտասարդը նկատեց այդ և կամացուկ ասաց.

— Մայրդ դեռ կառչել է հնին: Նրա համար խիստ դժվար է պոկվել անցյալից...

Կատյուշան գլխով հավանության նշան տվեց և տիրեց մի պահ լռություն:

Ներս մտավ Նատալյա Պետրովնայի հայրը, ծերուկ Պյոտր Միխայլովիչը:

Կատյուշան ծանոթացրեց նրան Վասյային և, յերբ Պյոտր Միխայլովիչն լմացավ, վոր նա հենց նոր է յեկել Մոսկվայից, սկսեց հարցերի տարափ տեղալ: Նա բավականին չատախոս ծերուկ եր և սիրում եր խորհրդածել քաղաքական հարցերի մասին: Նորեկ հյուրն էլ չկարողացավ աղատվել նրա ձեռքից: Մինչ նրանք տարվել էլին զրույցով, Կատյուշան զբաղվեց թեյի և ընթրիքի պատրաստությամբ:

Նատալյա Պետրովնայի հուզմունքի առաջին նոպաներն անցել էլին, թեև վորոշ չափով հանդստացել եր, բայց ընկել եր խորը յերկմտանքի մեջ: Նա չդիտեր ինչպես վերաբերվել, ներկայանա՞լ հյուրին, ի՞նչ դիրք բռնել: Նրան խորապես զարմացրել եր հյուրի արտաքինը, կիրթ չարժ ու ձևը և խոսակցու-

թյունը: Դա բոլորովին այլ մարդ էր, վերածնված, կերպարանափոխված:

Նատալյա Պետրովնան առաջվա աղղեցությունը չուներ այլևս աղջկա վրա: Այժմ Կատյուշան մանավանդ ուներ, արդեն չփվել էր կյանքին, աշխատում էր և ինքնուրույն կյանք էր ստեղծել իր համար: Հիմա Կատյուշան կարող էր բոլորովին անկախ ապրել և դասավորել իր դործերը:

Նատալյա Պետրովնան վաղուց էր ղդում, որ Կատյուշան անտարբեր չի դեպի այդ յերիտասարդը: Նա դիտեր, որ իր աղջիկը նամակադրության մեջ է նրա հետ: Իր հանդիմանություն ու հորդորներն այդ ուղղությամբ իղուր եյին անցել: Կատյուշայի ձեռքը նույնիսկ խնդրողներ էլ յեղան, այն էլ լավ ընտանիքի յերիտասարդներից, բայց աղջիկն ուշադրություն չդարձրեց, մնաց անտարբեր: Կարծես թե նա համառորեն սպասում էր մեկին: Ի՞նչ էր սպասս որ: Կատյուշան և՛ սիրուն էր, և՛ խելոք: Նրան հեշտ էր ամուսնացնել: Բայց Կատյուշան համառում էր, ձանձրանում էր խոսել այդ մասին կամ այդ ուղղությամբ համակիր վերաբերմունք ցույց տալ: Նատալյա Պետրովնայի բոլոր փորձերն ապարդյուն անցան: Եվ հիմա հայտնվում էր ահա այն մեկը, որին չսիրաղանց սուել էր նա: Կասկած չկա, որ այդ մեկը ներկայանում էր իրենց տուն որոշ դիտումով և նպատակներով: Նատալյա Պետրովնան լավ էր ղդում այդ: Իսկ որ իր աղջիկն էլ անտարբեր չէր նրա հանդեպ և ուրախացել էր նրա դալով, այդ մասին կասկած չէր կար: Արդյոք ինքն ի՞նչ դիրք պիտի բռնի, արդե՞ք հանդիսանա, աշխատի խանգարե՞լ դործը... Այժմ ժամանակն ու կյանքը բոլորովին փոխվել եյին, այլ պատկեր ուներյին, ուրիշ բան եյին թելադրում: Կամ ինքը պետք է հարմարվեր, յենթարկվեր նոր որերի ու կյանքի հրամայական կամքին, կամ պետք է մեջտեղից վերանար, վոչնչանար... Ուրիշ յելք չկա...

Մինչ Նատալյա Պետրովնան այրվում էր այս մտքերի մեջ, ներս մտավ աղջիկը և հրավիրեց նրան մյուս սենյակը:

— Ախր ինչո՞ւ յե յեկել եղ տղան: Նպատակն ի՞նչ է: Զլինի՞ միտքդ ծուռ է, ուզում ես դրան առնել,— ասաց մայրը, նստելով մահճակալին:

Կատյուշան ծիծաղեց և ուրախ ձայնով պատասխանեց.

— Այդ մասին հետո կխոսենք, մամա՛ ջան: Բայց վոր նա հրաշալի, կրթված մարդ է և պետք է քաղաքավարի վերաբերվել նրան, դրանում կասկած չկա: Դու պետք է թողնես քո արհամարհանքն ու վոխակալությունը, պետք է հաշտվես կյանքին, մոռանաս հին ցավերը, անցած-դնացածը և քեզ պահես կարգին, վայելուչ...

— Քեզ համար կյանքը հիմնովին փոխվել է և ամեն ինչ հեշտ է վճռելը: Բայց յես չե՞մ վոր հարստություն եմ կորցրել, վորդի և ամուսին եմ կորցրել, հեշտությամբ վո՞նց մոռանամ անցյալը,— բացականչեց մայրը և թաշկինակը մոտեցրեց աչքերին:

Կատյուշան համբուրեց մոր դլուխը և մեղմորեն ասաց.

— Լավ, մամա ջան, քիչ հանդստացիր և ապա կդաս մյուս սենյակը և միասին կքննենք:

Կատյուշան վերադարձավ մյուս սենյակը և չարունակեց պատրաստել սեղանը: Իսկ Վասյան ու Պյոտր Միխայլովիչը դեռ չարունակում եյին իրենց ջերմ զրույցը: Մեծ մայրը խոհանոցում ուտելիքի պարագաներ էր պատրաստում:

Շուտով նրանք հավաքվեցին սեղանի չուրջը և սկսեցին թեյել: Եվևավ նաև Նատալյա Պետրովնան: Նա լուռ նստեց սեղանի մի անկյուն և համարյա թե չմասնակցեց խոսակցությանը: Նիստ տխուր էր, ընկճված, աչքի տակով չարունակ նայում էր ղինվորականին և զարմանում էր, աչքերին չէր հավատում, չէր կարողանում պատկերացնել, որ դա Վասյան է... Հրա՞չք է, թե՞ իրականություն և ի՞նչպես է խոսում, ի՞նչպիսի կիրթ լեզվով...

Պյոտր Միխայլովիչը չարունակում էր իր հարցուփորձը: Այս անդամ նա հետաքրքրվում էր դիտության ու տեխնիկայի նվաճումներով: Վասյան ժպտում էր քիմի տակ և պատասխանում ինչ-վոր դիտեր, ինչ-վոր հնարավոր էր: Բավական յերկար ժամանակ նրանք նստած մնացին սեղանի չուրջը, հետզհետե ծավալվում էր խոսակցությունը և սիրում էր ջերմ մթնոլորտ: Արդեն ուշ էր, յերբ Վասյան վեր յելավ, բարի գիշեր մաղթեց և վերադարձավ իր իշևանը: Նրա դնալուց հետո ընտանիքի անդամներն սկսեցին իրենց տպավորությունները փոխանակել:

— Ուսումնական յերիտասարդ է, լավ պաչտոն ու դիրք

ունի: Ուրախությամբ կարելի չի զրուցել նրա հետ,— ասում եր Պյոտր Միխայլովիչը վոգևորված:

Նատալյա Պետրովնան վերջապես խղեց լուսթյունը և ջղային չեչոտ դիմեց աղջկան:

— Ցես չեմ հասկանում, թե ինչու այդ տղան համառ կերպով հետապնդում է քեզ: Արդյոք ի՞նչ նպատակ ունի: Ամուսնանա՞լ է ուզում, թե՞ իր պարապ ժամերն ոգտագործում է քեզանով զբաղվելու համար: Ցես կարծում եմ՝ բավական է, պետք է վերջ տալ այս անիմաստ խաղին: Թե չե՝ դա քեզ պատիվ չի բերում:

— Նրա հետ խոսելը կամ լինելն ինձ չատ հաճույք է պատճառում և դրա մեջ վոչ մի անպատեհություն կամ անպատվություն չեմ գտնում: Բավական է, պետք է վերջ տալ այդ հին տրադիցիաներին և վճռական գնալ նոր կյանքի հետևից,— պատասխանեց աղջիկը խիստ ձայնով:

Մայրը լուռ մնաց, նրա աչքերի մեջ կարդացվում եր մեղմ տխրություն:

Գիշերը կատյուշան անհանգիստ քնեց: Նա չարունակ մտածում եր Վասյայի մասին: Նրա վերադարձը և ջերմ տպավորությունները զբաղեցնում եյին աղջկա միտքը: Մի ախորժելի սարսուռով այրվում եր մարմինը: կարծես թե կյանքը բացել եր իր հրաշալի դռները և նրան առաջնորդում եր մի նոր, լուսավոր ճանապարհ...

Այնուհետև սովորական դարձավ Վասիլի Ալեքսեյվիչ Իվանովի այցելությունը: Ցերեկոներն անցկացնում եր Կատյուշայենց տանը կամ աղջկա հետ միասին գնում եյին զբոսնելու քաղաքային պարկում և մյուս զբոսավայրերում:

Ցերբ նրանք միասին զբոսնում եյին քաղաքային պարկի ոքանչելի ծառուղիներում, Վասյան չարունակ խոսում եր ամուսնության, իրենց ապագայի մասին: Նրանք քայլում եյին թևանցուկ և վայելում եյին զով յերեկոն:

Կատյուշան վոգևորվել եր ամուսնանալու և Մոսկվա տեղափոխվելու հեռանկարով:

— Դու կարող ես, սիրելիս, Մոսկվայում մտնել բժշկական ինստիտուտ և ավելի խորացնել քո մասնագիտությունը: Այնտեղ առաջ գնալու հնարավորություններ չատ կան,— ասում եր Վասյան:

Այդ առաջարկն ել ավելի ուրախացրեց և վոգևորեց աղջկան:

Հարցն ինքնին լուծվում եր արդեն: Մնում եր պաշտոնական ձևակերպում տալ նրան: Ընտանիքում հոմարյա վոչ վոք չհակառակվեց: Կատյուշայի մայրը միայն ջղայնացավ և դառնորեն արտասվեց: Նրան ցավ եր պատճառում կատյուշայից բաժանվելը: Աղջիկն առաջարկեց մորը տեղափոխվել Մոսկվա և ապրել իրենց մոտ: Մայրը չկարողացավ վորոշել այդ հարցը:

Կատյուշայի և Վասյայի ամուսնական խնճույքին մասնակցում եյին մի քանի աղջականները, ինչպես նաև Նատաշան ու իր յեղբայրը:

Բոլորն ել ուրախացան, յերգեցին ու պարեցին, միայն Նատալյա Պետրովնան եր լուռ ու մտախոհ...

***

Տաս տարի հետո...

Վասիլի Ալեքսեյվիչ Իվանովն իր ցուցադրած ռազմական ընդունակության և համոզության շնորհիվ կամաց-կամաց բարձրացել եր և վերջին տարին նշանակվել դիվիզիայի հրամանատար: Կատյուշան արդեն ավարտել եր բժշկական ինստիտուտի մանկաբուժական ֆակուլտետը և զբաղվում եր այդ մասնագիտությամբ:

Նրանք ապրում եյին յերջանիկ, քաղաքի կենտրոնում չորս սենյակից բաղկացած հիանալի բնակարանում: Իրենց տրամադրության տակ ունեյին առանձին ավտոմեքենա:

Արդեն յերկու յերեխա ունեյին և մեծ սիրով ու խնամքով դաստիարակում ու մեծացնում եյին նրանց:

Նատալյա Պետրովնայի. զառամած ծնողները մեկը մյուսի հետևից մահացել եյին, վերջին տարին ել ինքը մեռավ քաղցկեղ հիվանդությունից:

Իսկ Լյուբչենկոն դարձել եր հայտնի ճարտարապետ և նշանակվել եր քաղաքի կառուցողական բաժնի պետ:

Ցերբ ճարտարապետ Լյուբչենկոն և դիվիզիայի հրամանատար Վասիլի Ալեքսեյվիչ Իվանովը հանդիպում եյին միմյանց, ուրախանում եյին և վերհիշում իրենց անցյալը, քաղաքացիական կռիվները:

— Հըմ, Արծվի ճուտ, եղ ո՞ւր ես թռռել, դիվիզիայի հրա-

ժանտատոր եմ, դարձել եմ իսկական արծիվ,—ասում էր Լյուբչենկոն զվարթ ձայնով:

— Իսկ դո՞ւ, դու պակաս դիրք ես գրավո՞ւմ,— պատասխանում էր Վասիլի Ալեքսեյեվիչը վոդեվորված:

— Ա՛յ, թե ինչպես ե փոխվում կյանքը և ինչպես են փոխվում նաև մարդիկ...

Ցեվ վաղեմի ընկերները բերկրանքով ժպտում էին:

ՑԱՆԿ

	էջ
1. Արծաթե ժապավեն	3
2. Լապտի պատմածը	8
3. Բնձոր	18
4. Կալխիպան ծպտում է	24
5. Նրա վճիռը	28
6. Բլդան ջուրը	49
7. Թորափի մարդիկ	55
8. Ցերջանիկ Ղահրամանը	66
9. Նախշուն	73
10. Նրանց կամքը	78
11. Ինդալից սրեր	83
12. Լուեցոնց այգում	90
13. Ասորյան	100
14. Հոսող ջրերը	108
15. Կալխիպա	139
16. Եյ, կանաչ սարեր	154
17. Արծվի ճուտը	190

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԸ

Լույս են տեսել Մերուժան Թորգոմյանի հետևյալ գրքերը.

1. *Ժողովածու յերկերի* (*հատոր* I)
2. *Պատմվածքներ* (*հատոր* II)
3. *Ազայի վերջքերը*
4. *Մոայլ որերից*
5. *Հորձանքում*
6. *Կանաչ բարձունքներ*
7. *Ինգուբյուն* (*պատմվածքներ*)
8. *Ժպտացող կյանքը*
9. *Կապուտակ ջրերի մոտ*
10. *Բնության գրկում*
11. *Ածաթել ժպտվին*

Պատ. խմբագիր՝ Ա. Շահինյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալբունյան
Սրբագրիչ՝ Գ. Հակոբյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Թղամիսի չափսը՝ 2—1037. *Հրատ.* 4622.
Պատվեր 27. *Տիրաժ* 4000.
Թուղթ 62×94. *Տպագր. մամ.* 15¾.
Մեկ մամ. 38.400 *նշան.*
Հանձնված է արտադրության 2 *հունվարի* 1939 *թ.*
Ստորագրված է տպագրության համար 21 *դեկտ.* 1939 *թ.*

Գետհրատարի I տպարան, Երևան, Լենինի 65

Ա5351

ՀՀ Ազգային գրադարան
NL0331756

31609